

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
11 (1)**

Երևան 2023

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոդյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անուսյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաթեսյան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոն, Չիկագոյի
համալսարան, ԱՄՆ

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան,
Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շեմասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ներքասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'èghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Elke Hartmann, Free University Berlin, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Center for Middle Eastern Studies, University of Chicago, USA

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Цехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный
университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный
университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов,
Армения

Элке Артманн, доктор истории, профессор, Свободный университет Берлина,
Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член Националь-
ной академии наук Республики Армения, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусахаус), Потсдам,
Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в
Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-
Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, Институт истории Национальной
академии наук Республики Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Центр ближневосточных исследований, Чикагский
университет, США

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский
государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցիչ (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide. Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors. *Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI). Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Цехаспанagitakan андес (“Журнал исследований геноцида”) (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом “Музей-институт Геноцида армян” (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян. Статьи, обзоры и другие материалы, опубликованные в “Журнале исследований геноцида,” отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда “Музей-институт Геноцида армян.” Фонд “Музей-институт Геноцида армян” не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами. “Журнал исследований геноцида” индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Արմեն Յ. Մարության

*Մեծ եղեռնի ու Զմյուռնիայի հայ և հույն բնակչության զանգվածային կոտորածների համեմատական վերլուծություն.....*9

Վերժինե Գ. Սվազլյան

*Զմյուռնիայի աղետը և ժողովրդի պատմական հիշողությունը.....*21

Դորա Գ. Սաքայան

*Փաստաթուղթ, թե՛ գրական գործ. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը Զմյուռնիայի աղետի մասին*35

Արծուի Հ. Բախչինեան

*Զմյուռնիայի աղետը հայ դերասանների յուշերում.....*50

Աննա Կ. Կարապետյան

*Զմյուռնիան և Մեծ աղետը չեխական աղբյուրներում.....*62

Մայա Հ. Գրիգորյան

*Զմյուռնիայի հայկական տպարանների գործունեությունը 19-րդ դարի երկրորդ կեսին.....*77

Էլինա Զ. Միրզոյան

*Թուրք կանանց ներգրավվածությունը Զմյուռնիայի համար թուրքական հանրահավաքներում.....*90

Նաիրա Հ. Պողոսյան

*«Գայի մորթով գառները». հույներին հրեշազնելու գործընթացը թուրքական քարոզչական տիրույթում.....*103

Ֆելիքս Վ. Մովսիսյան

*Զմյուռնիահայ «Արշալոյս Արարատեան» թերթը Համազգյաց ընկերության մասին.....*115

*Էթիկայի կանոններ.....*141

*Յուզումներ հեղինակներին.....*142

CONTENT

ARTICLES

Armen Ts. Marukyan

Comparative Analysis of the Armenian Genocide (Mets Yeghern) and the Massacre of the Armenian and Greek Population in Smyrna.....9

Verjiné G. Svazlian

The Izmir Calamity and the Historical Memory of the People.....21

Dora G. Sakayan

Document or Literary Work?

Karapet Hatcherian's Diary about the Smyrna Disaster.....35

Artsvi H. Bakhchinyan

Smyrna Catastrophe in the Memoirs of Armenian Actors.....50

Anna K. Karapetyan

Smyrna and the Great Catastrophe in Czech Sources.....62

Maya H. Grigoryan

The Activity of the Armenian Printing Houses of Smyrna in the Second Half of the 19th Century.....77

Elina Z. Mirzoyan

Involvement of Turkish Women in Turkish Rallies for Smyrna.....90

Naira H. Poghosyan

“The Sheep in Wolf's Clothing”: Demonization of Greeks in Turkish Propaganda.....103

Felix V. Movsisyan

Smyrna Armenian Newspaper “Arshaluys Araratean” about Hamazgeats Society.....115

Ethical Guidelines.....141

Instruction for Authors.....142

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Армен Ц. Марукян <i>Сравнительный анализ Геноцида армян (Мец Егерна) и массовой резни армянского и греческого населения в Смирне.....</i>	9
Вержине Г. Свазлян <i>Катастрофа Измира и историческая память народа.....</i>	21
Дора Г. Сакаян <i>Документ или литературное произведение? Дневник доктора Карапета Хачеряна о катастрофе в Смирне.....</i>	35
Арцви Г. Бахчинян <i>Смирнская катастрофа в воспоминаниях армянских актеров.....</i>	50
Анна К. Карапетян <i>Смирна и Великая катастрофа в чешских источниках.....</i>	62
Майя О. Григорян <i>Деятельность армянских типографий в Смирне во второй половине 19-го века.....</i>	77
Элина З. Мирзоян <i>Участие турецких женщин в турецких митингах за Смирну.....</i>	90
Наира А. Погосян <i>“Овцы в волчьей шкуре”: демонизация греков в турецкой пропаганде.....</i>	103
Феликс В. Мовсисян <i>Измирская армянская газета “Аршалуйс Араратян” об Обществе Амазгеац.....</i>	115
<i>Правила этики.....</i>	141
<i>Руководство для авторов.....</i>	142

**ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈՒ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅ ԵՎ ՀՈՒՅՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Արմեն Յ. Մարուքյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունը և իշխանությունից երիտթուրքերի հեռացումը որևէ կերպ չթեթևացրեց ոչ թուրք ժողովուրդների վիճակը, որոնք շարունակում էին ցեղասպանության և էթնիկ զտումների ենթարկվել: Հանցավոր քաղաքականության ցեղասպանական բնույթն արձանագրելու տեսակետից անհրաժեշտություն է առաջանում հայերի և հույների դեմ Առաջին աշխարհամարտի ընթացքում երիտթուրքերի կատարած ոճրագործությունները համեմատել պատերազմից հետո քեմալականների կատարած հանցագործությունների հետ՝ համադրելով դրանց փուլերը, ներգրավված ուժերը և մեթոդները:

Բանալի բառեր՝ Օսմանյան կայսրություն, Արևմտյան Հայաստան, Հայոց ցեղասպանություն, Մեծ եղեռն, Զմյուռնիա, հայ և հույն բնակչության զանգվածային կոտորածներ:

Հոդվածը ներկայացվել է՝ 25.10.2022: Ընդունվել է տպագրության՝ 05.04.2023:

The article was submitted on 25.10.2022 and accepted for publication on 05.04.2023.

Статья поступила 25.10.2022 и была принята к публикации 05.04.2023.

Ինչպես հղել՝ Արմեն Յ. Մարուքյան, «Մեծ եղեռնի ու Զմյուռնիայի հայ և հույն բնակչության զանգվածային կոտորածների համեմատական վերլուծություն», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 9-20:

How to cite: Armen Ts. Marukyan, “Comparative Analysis of the Armenian Genocide (Mets Yeghern) and the Massacre of the Armenian and Greek Population in Smyrna,” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 9-20.

Как сослаться: Армен Ц. Марукян, “Сравнительный анализ Геноцида армян (Мец Егерна) и массовой резни армянского и греческого населения в Смирне,” *Цехаспанagitakan андес* 11, no. 1 (2023), 9-20.



Ինչպես Առաջին աշխարհամարտի ընթացքում, այնպես էլ դրանից հետո հայ և հույն բնակչության զանգվածային կոտորածներից առաջ թուրքական վարչակարգերը հոգեբանական և քարոզչական բնույթի հիմքեր էին նախապատրաստում, որոնք հետագայում պիտի օգտագործվեին ծրագրված հանցավոր քաղաքականությունը «հիմնավորելու» և/կամ «արդարացնելու» համար¹: Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասյան բանակի հաջողություններն ու առաջախաղացումն Արևմտյան Հայաստանում թուրքերին մղում էին իրենց պարտությունների վրեժը լուծելու հայ բնակչությունից՝ իրագործելով զանգվածային կոտորածներ: Նույն կերպ հունական բանակի ռազմական գործողությունները քեմալականների համար պատրվակ դարձան, որ Զմյուռնիան և շրջակա տարածքները հույն բնակչությունից «մաքրագրվելու» գործընթացն արագացնեն՝ ռազմական գործողություններին զուգընթաց, իսկ շատ դեպքերում՝ դրանցից անկախ: Այս առումով հատկանշական է, որ Զմյուռնիայից հունական զորքի հեռանալուց հետո թուրքերը քաղաքում սուրհանդակների միջոցով հունարեն թոուցիկներ էին տարածում, որոնցում նշված էր, որ հնարավոր սպանությունների և կոտորածների համար Անկարայի կառավարությունը պատասխանատու չէ²: Այս փաստն ինքնին վկայում է քեմալականների հանցագործությունների կանխամտածված լինելու մասին:

Սեպտեմբերի 9-ի առավոտյան թուրքական զորքերը Նուրեդդին փաշայի գլխավորությամբ մտնում են Զմյուռնիա: Ռուսների պայթյունից թուրք զինվորի վիրավորվելու համար մեղադրվում են հայերը³, ինչն առիթ է դառնում, որ թուրքական զորքերն ու մահմեդականների զինված ոչ կանոնավոր խմբերը սկսեն քաղաքի քրիստոնյա բնակչության սպանություններն ու կողոպուտը⁴: Քաղաք մտնելու հաջորդ օրը՝ առավոտյան, թուրք զինվորներն ու տեղի մահմեդականները հայկական թաղամասում առևանգում են կանանց ու աղջիկներին⁵: Սեպտեմբերի 11-ին, Նուրեդդին փաշայի հրամանով, թուրք զինվորները տուն առ տուն փնտրում էին հայերին և սպանում: Հայկական թաղամասում հայերի հսկողության տակ էին մնացել միայն

1 Ցեղասպանագիտության մեջ այս երևույթը կոչվում է «վիկտիմիզացիա» կամ «զոհաբերություն», որի միջոցով հանցավոր վարչակարգը թիրախավորում է էթնիկ, կրոնական կամ ազգային պատկանելությամբ տարբերվող զոհ խմբին՝ քարոզչության միջոցով նրան ներկայացնելով որպես պետության համար սպառնալիք և դրանով հասարակությանը նախատրամադրելով տվյալ խմբի բնաջնջման ոչ միայն անխուսափելիությանը, այլև անհրաժեշտությանը: Տե՛ս Harf B., “Rescuing Endangered Peoples: Missed Opportunities,” *Social Research* (New York: 1995), vol. 62, no. 1 (Spring), 25-41.

2 Տե՛ս Գևորգ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012), 127:

3 George Horton, *Report on Turkey: USA Consular Documents* (Athens: Journalists' Union of the Athens Daily Newspaper, 1985), 20-21.

4 «Զմիռնահայ կեանքը զինադադարէն յետոյ, Ահաւոր փլուզումը», *Նոր օր* (Աթէնք), 1924, թիւ 3, 29:

5 Դորա Սարգսյան, *Զմյուռնիա 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* (Երևան, Նահապետ, 2005), 67:

թուրքերի պաշարած Սբ Ստեփանոս եկեղեցին, առաջնորդարանն ու շրջակա մի քանի տուն, որտեղ ապաստանել էր շուրջ 2 000 հոգի (հիմնականում՝ կանայք և երեխաներ): Թուրքերը գիշերները ռումբեր էին նետում եկեղեցու բակ⁶:

Երբ մահմեդականների անկանոն խմբերը սկսում են հարձակում գործել Առաջնորդարանի վրա, Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը ցանկանում է ներկայանալ Ջնյոտնիայում գինվորական կառավարչի պարտականությունները կատարող Նուրեդդին փաշային և գթություն աղերսել հոտի համար, սակայն, փողոցներում բազմաթիվ սպանված քրիստոնյաների դիակները տեսնելուց հետո հրաժարվում է այդ մտքից⁷:

Մեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը հայկական թաղամասում հազարավոր հայեր են կոտորվում: Սպանությունները շարունակվում են երեք օր ու գիշեր: Ողջ մնացած հայերը թաքնվում են նկուղներում, խուսափում տեղաշարժվել, որպեսզի թուրք զինվորների ձեռքը չընկնեն: Քաղաքի փողոցներում, ինչպես նաև գյուղեր տասնող ճանապարհներին տարածվել էր անթաղ մարմինների գարշահոտությունը⁸:

Ինչպես Մեծ եղեռնի, այնպես էլ Ջնյոտնիայի հայ և հույն բնակչության կոտորածների ընթացքում նախ և առաջ թիրախավորվում էին մտավորականները և հոգևորականները, որոնց ցուցադրաբար և առանձնակի դաժանությամբ էին սպանում. 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդ մի քանի օրերին նախապես կազմված ցուցակներով Կ.Պոլսում կալանավորվում և աքսորի ճանապարհին դաժանաբար սպանվում էր ավելի քան 800 հայ մտավորական: Այդ գործընթացը միայն մայրաքաղաքով չի սահմանափակվում, այլ կատարվում է նաև Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ այլ նահանգներում: Ամբողջ կայսրությունում ձերբակալված հայ երևելիների թիվը կարճ ժամանակում հասնում է 2 345-ի⁹:

Նույն կերպ Ջնյոտնիայում բազմաթիվ հույն նշանավոր գործիչներ «վտանգավոր տարր» են հայտարարվում և բանտ նետվում: Հայրենակցական միության հետ կապ ունենալու համար քեմալականների «սև ցուցակում» հայտնված հույն գործարար Սոկրատես Օնասիսի եղբայր Ալեքսանդրին հրապարակայնորեն կախաղան են բարձրացնում, իսկ նրա քրոջ ընտանիքի անդամներին ողջակիզում եկեղեցում¹⁰: Դաժան սպանության զոհ են դառնում նաև հույն լրագրող Մ. Ճորոքօղլին, նշանավոր փաստաբան Հերկուլես Բոստանձօղլուն և ուրիշներ¹¹: Հետապնդումներ են սկսվում

6 Բիզանդ Ճամպագեան, *Պատանի կեսնքի մը պատմությունը* (Լիբանան, Կաթողիկոսության Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960), 45:

7 Մինաս Տէր Սարգիսեան, *Իզմիրի անկումը եւ այլ էջեր* (Պէյրոս, Արագ, 1975), 108:

8 Lysimachos Oeconomos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom. A File of Overwhelming Evidence, Denouncing the Misdeeds of the Turks in Asia Minor and showing their Responsibility for the Horrors of Smyrna* (London: George Allen and Unwin, 1922), 79.

9 Տէ՛ս Arthur Beylerian, *Les Grandes Puissances, L' Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises: 1914-1918* (Paris: Sorbonne, 1983), 21: Տէ՛ս Կուս Կուս Կուս, *Die Armenien frage* (Klagenfurt-Wien-Ljubljana-Sarajevo, 2006), 60.

10 Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922: The Destruction of a City* (New York: Newmark, 1998), 151-152.

11 Oeconomos, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 123.

նաև Չմյուռնիայի նշանավոր հայ գործիչների դեմ. սպանվում է ուսուցիչ Հայկ Թադիկյանը, կնոջ աչքերի առաջ փաստաբան Կարապետ Դարբինյանի հետ դաժան հաշվեհարդար են տեսնում¹², իսկ իրավաբան Նազարեթ Ներսեսյանին և նրա ընտանիքի բոլոր անդամներին սպանում¹³:

Չմյուռնիայի քրիստոնյա բնակչության համար այդ ճակատագրական պահին հայ և հույն հոգևոր առաջնորդները, հավատարիմ մնալով իրենց առաքելությանը, գերադասում են մնալ իրենց հոտի հետ¹⁴: ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնը հիշում է, որ ողբերգական դեպքերից առաջ իրեն այցելած հայ և հույն հոգևոր առաջնորդներ Ղևոնդ Դուրյանը և Խրիստատոմոս Կալաֆատիսը մտահոգված էին ոչ թե իրենց, այլ Չմյուռնիայի հայ և հույն բնակչության ճակատագրով¹⁵:

Քենալականները Կալաֆատիսին ատում էին այն բանի համար, որ դեռևս 1914 թ. եվրոպացի դիվանագետների ուշադրությանն է ներկայացրել շուրջ 120 000 հույն գաղթականների վիճակը¹⁶: Դաժան հաշվեհարդար տեսնելու նպատակով Նուրեդդին փաշան կարգադրում է, որ Չմյուռնիայի հույն մետրոպոլիտին հանձնեն մահմեդական ամբոխին¹⁷: Այս փաստերն անատարկելիորեն ապացուցում են, որ Չմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջումը նախապես ծրագրված, հատուկ դիտավորությամբ կատարված հանցագործություն էր:

Հնարավոր դիմադրությունը բացառելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով ինչպես Մեծ եղեռնի, այնպես էլ Չմյուռնիայի կոտորածների ժամանակ տղամարդկանց առանձնացնում էին ընտանիքներից և բնաջնջում: Գործընթացը դյուրացնելու նպատակով Մեծ եղեռնի առաջին փուլում օսմանյան բանակ զորակոչելու անվան տակ մեկուսացվում, ապա բնաջնջվում է հայ տղամարդկանց զգալի մասը¹⁸: Չորսհավաքի սկզբնական փուլում օսմանյան բանակ է զորակոչվում 18-45 տարեկան ավելի քան 60 000 հայ¹⁹: Այն հայ տղամարդիկ, որոնք բանվորական գումարտակներում՝ անմարդկային պայմաններում, ֆիզիկական ծանր աշխատանք կատարելուց հետո ողջ էին մնացել, թուրք սպանների հրամանով, 80-100 մարդուց բաղկացած խմբերով տարվում էին խուլ վայրեր և գնդակահարում²⁰: Նույն գործընթացը տեղի էր ունենում օսմանյան բանակ զորակոչված հույն տղամարդկանց հետ:

12 Գերսամ Ահարոսեան, *Յուշամատենան Մեծ եղեռնի* (Պէլրոթ, Ատլաս, 1965), 890:

13 ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 748, թթ. 4-7:

14 Charis Tsirikididis, *The Red River... The Tragedy of Hellenism of Anatolia 1908-1923, A Historical Tale*, (Thessaloniki, Kyriakidi Afoi, 1999), 283.

15 George Horton, *The Blight of Asia: An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers; With the True Story of the Burning of Smyrna* (Indianapolis: The Bobbs-Merrill Company, 1926), 135-136:

16 Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը*, 127:

17 Տե՛ս Ռենե Պրոտ, *Չմյուռնիայի վախճանը* (Երևան, ՀՅԹԻ, 2001), 90:

18 Армен Марукян, *Проблема Геноцида армян в современной геноцидологии* (Ереван, 2010), 32.

19 Տե՛ս Ռուբեն Սահակյան, Կոնստանդին Խոտալվերդյան, *Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո* (Երևան, 1995), 23:

20 *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու*, կազմ. Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, խմբ.՝ Մ. Գ. Ներսիսյան (Երևան, 1991), 470:

1922 թ. սեպտեմբերի 16-ի թուրքական իշխանությունների հրամանով՝ Չմյուռնիայի 18-45 տարեկան հույն և հայ տղամարդիկ ռազմագերի են հայտարարվում. նրանց արգելված էր հեռանալ քաղաքից, մինչդեռ քրիստոնյա բնակչությանը կարգադրված էր լքել երկիրը մինչև հոկտեմբերի 1-ը²¹: Ականատեսների վկայությամբ՝ շուրջ երկու հարյուր հույն և հայ տղամարդ դուրս է բերվում քաղաքից և դաժանաբար սպանվում²²:

Ինչպես Արևմտյան Հայաստանում ու կայսրության այլ բնակավայրերում հայերի զանգվածային կոտորածները, այնպես էլ Չմյուռնիայի քրիստոնյաների բնաջնջումն ուղեկցվում էր նաև կանանց ու աղջիկների զանգվածային բռնաբարություններով: Առաջին աշխարհամարտի տարիներին կայսրությունում լայնորեն տարածված էր թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին հայ աղջիկներին «նվեր մատուցելու» պրակտիկան. ստեղծվել էին հասարակաց տներ, որտեղ պաշտոնյաներին և զինվորականներին մատուցում էին գեղեցիկ հայ աղջիկներ: Այդ մասին օսմանյան խորհրդարանի 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստում բարձրաձայնեց Հալեպից ընտրված հայ պատգամավոր Արթին Պոշկեզենյանը²³: Նույնիսկ թուրքական ռազմական տրիբունալներում են անդրադարձել այդ դեպքերին, որոնց հիման վրա երիտթուրք որոշ գործիչների մեղադրանք է ներկայացվել: Տրապիզոնի դատավարության ընթացքում նման մեղադրանք է առաջադրվել նահանգապետ Ջեմալ Ազմիրին²⁴:

Ինչպես Մեծ եղեռնի ընթացքում, այնպես էլ Չմյուռնիայում հայ և հույն կանանց թուրքերը բռնաբարում էին իրենց ամուսինների ներկայությամբ (ամուսիններին սպանում էին միջամտության փորձի դեպքում)²⁵: Ականատեսների վկայությամբ՝ թուրք զինված հրոսակները, ներխուժելով աղջիկների որբանոց, երեք կնոջ կողոպտելուց ու բռնաբարելուց հետո սպանում են: Այս դեպքի մասին անգամ բրիտանացի ծովակալն է տեղեկացնում Քյազիմ փաշային²⁶: Հորթոնի վկայությամբ՝ Չմյուռնիայում քրիստոնյա աղջիկների բռնաբարությունները զանգվածային բնույթ էին կրում²⁷:

Հասկանալի պատճառներով Չմյուռնիայում կտրուկ աճել էին ինքնասպանությունների դեպքերը: Ականատեսների նկարագրած բազմաթիվ դեպքեր նմանություններ ունեին Մեծ եղեռնի ընթացքում Արևմտյան Հայաստանում և կայսրության այլ

21 J. Murat, *The Great Extermination of Hellenism and Christianity in Asia Minor, the Historic and Systematic Deception of World Opinion Concerning the Hideous Christianity's Uprooting of 1922* (Miami-Florida, 1999), 155.

22 Տե՛ս Edward Hale Bierstadt, *The Great Betrayal, A Survey of the Near East Problem* (N. Y., R. M. McBride & Company, 1924), 25.

23 Վահագն Տատրեան, *Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով* (Մասաչուսեթս, Պայքար, 1995), 94:

24 Թ-աներ Արչամ, *Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում* (Երևան, 2015), 386:

25 Տե՛ս Պյոտ, *Չմյուռնիայի վախճանը*, 82:

26 Oeconomus, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom 77*; նույնի, *The Tragedy of the Christian Near East*; Charles Dobson, *The Smyrna Holocaust* (London, The Anglo-Hellenic League, 1923), 5-6.

27 Horton, *The Blight of Asia*, 164-165.

բնակավայրերում հայ կանանց և աղջիկների ինքնասպանություններին (սարսափահար իրենց նետում էին ջուրը՝ անկախ այն բանից լողալ գիտեին, թե՛ ոչ)²⁸:

Զմյուռնիայի հայ և հույն բնակչության զանգվածային կոտորածներից հետո սեպտեմբերի 13-ին հրկիզվում է Հայնոցը. կրակը բռնկվում է հայկական թաղամասի ծայրամասում և արագ տարածվում: Ականատեսները պատմում են, որ ջրի փոխարեն բենզինով կամ նավթով լցված ջրցան մեքենաներ էին օգտագործվում հայկական թաղամասի հրդեհը տարածելու համար²⁹: Հայնոցը հրկիզելուց հետո թուրքերը կրակի են մատնում նաև Զմյուռնիայի հունական և եվրոպական թաղամասերը՝ մոխրի վերածելով շուրջ 4 500 տուն և խանութ³⁰:

Ռենե Պյոտոն նշում է, որ թուրքերն իրենց կատարած հանցագործությունների հետքերը վերացնելու նպատակով հրկիզում են հայկական, հունական և եվրոպական թաղամասերը³¹: Ֆրանսիացի լրագրողի այս պնդումը հաստատվում է նրանով, որ թուրքական իշխանությունները ոչինչ չէին ձեռնարկում³²: Հրդեհի մարման ցանկացած փորձ կանխվում էր (երբ հույն հրշեջները փորձում են որոշ տեղերում մարել հրդեհի օջախները, սակայն թուրքերը նրանց արգելում են, ավելին՝ վնասում ջրի խողովակները): Պատահական չէ, որ Անգլիայի և Ֆրանսիայի հյուպատոսները պաշտոնապես մեղադրել են թուրքերին քաղաքը հրկիզելու համար³³:

Թուրքական իշխանություններն ամեն կերպ փորձում էին արդարացնել Զմյուռնիայի աղետը՝ ջանալով Զմյուռնիայում բռնկված հրդեհի պատասխանատվությունը բարդել հանցագործության զոհ դարձած հայ և հույն բնակչության վրա՝ պնդելով, որ դա նրանց սաղրանքի հետևանքն է³⁴: Հորթոնը կեղծիք է համարում Մուստաֆա Քեմալի այն արդարացումը, թե Զմյուռնիայի աղետը տեղի է ունեցել այն պատճառով, որ քաղաք մտած թուրքական գործն իբր դուրս էր եկել վերահսկողությունից: ԱՄՆ հյուպատոսը համոզմունք է հայտնում, որ կոտորածներն իրագործվել են թուրքական իշխանությունների հրամանով³⁵: Ականատեսների տեղեկությունների հիման վրա՝ Ռենե Պյոտոն համոզմունք է հայտնում, որ իրականում տեղի է ունեցել ճիշտ հակառակը. Մուստաֆա Քեմալն է Զմյուռնիա մտած թուրքական գործերին վերահսկողության տակ պահելու նպատակով թույլ տվել վայրագություններ գործել քաղաքի քրիստոնյաների դեմ³⁶:

Քրիստոնյա բնակչության զանգվածային սպանություններից հետո բնակավայրե-

28 Oeconomus, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 127.

29 Տե՛ս Պյոտոն, *Զմյուռնիայի վախճանը*, 22:

30 Horton, *The Blight of Asia*, 114 -116.

31 Oeconomus, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 77.

32 Տե՛ս Պյոտոն, *Զմյուռնիայի վախճանը*, 12-13:

33 Oeconomus, *The Tragedy of the Christian Near East*, 3.

34 Giles Milton, *Paradise Lost: Smyrna 1922 - The Destruction of Islam's City of Tolerance* (London, Sceptre, 2008), 307.

35 Horton, *Report on Turkey*, 24.

36 Տե՛ս Պյոտոն, *Զմյուռնիայի վախճանը*, 81:

րը հրկիզելն ու պատասխանատվությունը գոհերի վրա բարդելը թուրքերի համար ավանդական դարձած գործելակերպ էր: Այս կապակցությամբ բժիշկ Կարապետ Խաչերյանն իր հուշերում գրում է, որ եթե հայերը նման մտադրություն ունենային ապա հունական գորքերի հեռանալուց առաջ կամ հետո կիրդեհեին հենց թուրքական թաղերը³⁷: Հատկանշական է, որ կրակից գերծ են մնում միայն քաղաքի հրեական և թուրքական թաղամասերը³⁸:

Այսպիսով, ի տարբերություն հայերի և հույների, թուրքերը քաղաքը հրկիզելու հստակ դրդապատճառ ունեին. այդկերպ նրանք փորձում էին թաքցնել չորս օր տևած զանգվածային կոտորածի, կողոպուտի, բռնաբարությունների և այլ հանցագործությունների հետքերը³⁹, ինչպես նաև անհնարին դարձնել սպանվածների թվի ճշգրտումը:

Հարկ է նշել, որ դեռևս Առաջին աշխարհամարտի ընթացքում էին երիտթուրքերը ծրագրել Պազոս լեռան վրա տեղադրված թնդանոթներով Չմյունիայի քրիստոնյա թաղերը քարոքանդ անել, եթե դաշնակիցների զրահանավերին հաջողվեր մտնել ծովախորշ: Երիտթուրքերի չիրագործված այդ ծրագիրը փաստորեն տարիներ անց կյանքի են կոչում քեմալականները⁴⁰:

Ըստ Էդուարդ Բիերստադտի, Չմյունիայի աղետին գոհ է դառնում շուրջ 100 000 մարդ⁴¹: Հորթոնը հավաստում է, որ գոհերի ընդհանուր թիվը 100 000-120 000 է⁴²:

Ինչպես Մեծ եղեռնի ընթացքում, այնպես էլ Չմյունիայի աղետի ժամանակ այնպիսի վիճակ է ստեղծվում, որի հետևանքով շատերը մահանում են: Արևմտյան Հայաստանից ու կայսրության այլ նահանգներից թուրքական իշխանությունները հայերի «մահվան քարավանները» միտումնավոր քշում էին Սիրիայի և Միջագետքի անապատներ, որտեղ նրանք դատապարտված էին մահվան: Չմյունիայի քրիստոնյա թաղամասերը հրդեհելուց հետո հայերին ու հույներին բռնությամբ քշում են նավահանգիստ, որտեղ նրանք մնում են առանց գոյության միջոցների: Քաղցից ու ծարավից մեռնող մարդիկ ապարդյուն օգնություն էին խնդրում նավահանգստում խարիսխ գցած եվրոպական երկրների ռազմասավերից: Նավահանգստում և ծովափին խմբված էր քաղցից հյուծվող մարդկանց մեծ բազմություն⁴³: Ականատեսները վկայում են, որ Էգեյան ծովը ծածկված էր հայերի և հույների դիերով⁴⁴:

Մեծ եղեռնի հետ Չմյունիայի աղետի ընդհանրություններից կարելի է առանձնա-

37 Սաքայան, *Չմյունիա* 1922, 81:

38 Oeconomus, *The Martyrdom of Smyrna and Eastern Christendom*, 136.

39 Bierstadt, *The Great Betrayal*, 35.

40 Horton, *The Blight of Asia*, 82.

41 Bierstadt, *The Great Betrayal*, 36. Տե՛ս նաև D. M. Lang, *The Armenians: A People in Exile* (London, 1981), 37.

42 Horton, *Report on Turkey*, 173-174.

43 Նույն տեղում, 22:

44 Thea Halo, *Not Even My Name* (N.Y., 2000), 122. Տե՛ս նաև Housepian Dobkin, *Smyrna 1922, the Destruction of a City*, 133.

ցնել զանգվածային կոտորածներին զուգահեռ զոհերի ունեցվածքի կողոպուտը: Մեծ եղեռնի ընթացքում իրենց բնակավայրերից հեռանալուց անմիջապես հետո հայերի տների, խանութների, արհեստանոցների շարժական գույքն անմիջապես կողոպուտվում էր, իսկ անշարժ գույքը՝ բռնագավթվում⁴⁵: Չմյուռնիայի հայկական թաղամասում կողոպուտվում են Պարբձյան, Սիվրիսարյան, Իփլիքձյան, Ազնավորյան, Շիքոթյան, Գոձամանյան, Թոփալյան և այլ վաճառատներ, որոնց կարողությունը գնահատվում էր 200 000-300 000 անգլիական ոսկի: Կողոպուտվում են նաև հույների վաճառատները, որոնց նյութական կարողությունները չէին զիջում հայերի վաճառատներին⁴⁶: Ականատեսների վկայությամբ՝ Չմյուռնիայի հայկական թաղամասի խանութները, շուկաներն ու տները 1922 թ. սեպտեմբերի 12-ին ամբողջությամբ դատարկված էին, իսկ կողոպուտված ապրանքը վագոններով տեղափոխվում էր երկրի խորքերը⁴⁷:

Ինչպես Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերի և Արևմտյան Հայաստանի, այնպես էլ Չմյուռնիայի քրիստոնյաների կոտորածներն իրագործում էր թուրքական կանոնավոր բանակը ոչ կանոնավոր զինված խմբերի աջակցությամբ: Չմյուռնիային քեմալական ուժերի մոտենալու մասին իմանալով՝ 1922 թ. սեպտեմբերի 9-ի առավոտյան մահմեդականների զինված խմբերը շուկայում հարձակվում են քրիստոնյաների վրա, որոնցից շատերը վիրավորվում կամ խոշտանգումներից մահանում են: Քեմալական ուժերի մուտքը քաղաք ավելի է ոգևորում մահմեդական զինված խմբերին, որոնք սկսում են կրակել հայկական թաղամասի ուղղությամբ⁴⁸:

Մեծ եղեռնի ու Չմյուռնիայում հայ և հույն բնակչության կոտորածների թերևս ամենախիստ տարբերությունն այն էր, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում երիտթուրքական կառավարությունը ձեռնպահ էր մնում կայսրության արևմտյան խոշոր քաղաքներում հայերին բնաջնջելուց այն մտավախությամբ, որ Կ.Պոլսում, Չմյուռնիայում և այլ քաղաքներում գտնվող օտարերկրյա չեզոք պետությունների դիվանագետներն ականատես չդառնան այդ հանցագործություններին: Դրան հակառակ՝ քեմալականների և մահմեդական խառնամբոխի վրա ոչ մի ազդեցություն չի ունենում Չմյուռնիայի ծովածոցում խարխիս գցած եվրոպական տերությունների ռազմանավերի առկայությունը, որոնք չեն կանխում իրենց աչքի առաջ կատարվող ոճրագործությունները: Մուստաֆա Քեմալը Չմյուռնիայում ֆրանսիական, իտալական, բրիտանական և ամերիկյան ներկայացուցչություններին հավաստիացրել էր, որ քրիստոնյաների կոտորած տեղի չի ունենա. տեսնելով մեծ տերությունների անտարբերությունը՝ թուրքական իշխանություններն ավելի մեծ ծայրահեղությունների են դիմում: Փաստորեն կոտորածները շարունակվում էին եվրոպական տերությունների թողստվությամբ⁴⁹: Թուրքերի գործողություններում նկատվող նման փոխակեր-

45 Անահիտ Աստոյան, *Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.* (Երևան, Նաիրի, 2013), 36-37:

46 ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 748, թթ. 4-7:

47 E. Grantham, "The Betrayal of Our Faith in the Near East," *Asia*, February, 1923, 120.

48 ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 748, թ. 3:

49 Horton, *Report on Turkey*, 23-25:

պումների գլխավոր պատճառ պետք է համարել անպատժելիության այն մթնոլորտը, որ ստեղծվել էր Առաջին աշխարհամարտի ավարտից հետո:

Ներկայացված փաստերի համադրությունից ակնհայտ է դառնում, որ Զմյուռնիայի հայ և հույն բնակչության զանգվածային բնաջնջման հանցավոր ծրագիրը քեմալականներն իրագործել են ցեղասպան քաղաքականության փուլերի նույն հաջորդականությամբ ու մեթոդաբանությամբ, ինչ երիտթուրքերը՝ Արևմտյան Հայաստանում և կայսրության հայաբնակ այլ տարածքներում:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք արձանագրել, որ Զմյուռնիայի հայերի ու հույների մասնակի տեղահանությունը և բնաջնջումը, եկեղեցիներում ապաստանածների ողջակիզումը և հանցավոր գործողությունների մեթոդներում նկատվող բազմաթիվ այլ նմանություններ վկայում են այն, որ ինչպես երիտթուրքերի, այնպես էլ քեմալականների վարչակարգերը հայերի և ոչ մահմեդական մյուս ժողովուրդների դեմ վարել են ֆիզիկական բնաջնջման և էթնիկ զտումների միևնույն քաղաքականությունը: Քեմալականները, երիտթուրքերից այդ հանցավոր գործելաոճը ժառանգելով, ըստ էության, հետևողականորեն շարունակել են նրանց ցեղասպան քաղաքականությունը:

COMPARATIVE ANALYSIS OF THE ARMENIAN GENOCIDE (METS YEGHERN) AND THE MASSACRE OF THE ARMENIAN AND GREEK POPULATION IN SMYRNA

Armen Ts. Marukyan

Institute of History of National Academy of Sciences, Armenia

SUMMARY

The defeat of the Ottoman Empire in World War I and the removal of the Young Turks from power in no way alleviated the plight of non-Turkish peoples, who continued to be subjected to genocide and ethnic cleansing. From the point of view of ascertaining the genocidal nature of the criminal policy pursued by the Turkish authorities, it becomes necessary to compare the genocidal acts committed by the Young Turks against Armenians and Greeks during the First World War with the mass massacres committed by the Kemalists after the war, by conducting a comparative analysis of the stages and methods, as well as those involved in these crimes of forces.

A comparative analysis of these crimes leads to the conclusion that both during and after the First World War, immediately before the organization of the massacres of the Armenian and Greek populations, the Turkish regimes prepared the psychological and propaganda grounds for this, pursuing the goal of “justifying” and/or “substantiating necessity” of a planned criminal policy towards victim groups.

The eviction and subsequent extermination of male victims from their places of residence, the subsequent massacres of defenseless women, children and the elderly, the

burning of those who had taken refuge in churches, and many other similarities in the methods of the Young Turks and Kemalists indicate that these Turkish regimes in relation to non-Muslim and non-Turkish peoples carried out a unified policy of physical extermination and ethnic cleansing. The Kemalists consistently continued the genocidal policy of the Young Turks against the Armenian and Greek population, which is confirmed by the massacre of Armenians in Cilicia in 1921, as well as the mass extermination of the Armenian and Greek population of Smyrna in 1922.

Key words: Ottoman Empire, Western Armenia, Armenian Genocide, Mets Yeghern, Smyrna, massacres of the Armenian and Greek population.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ГЕНОЦИДА АРМЯН (МЕЦ ЕГЕРНА) И МАССОВОЙ РЕЗНИ АРМЯНСКОГО И ГРЕЧЕСКОГО НАСЕЛЕНИЯ В СМИРНЕ

Армен Ц. Марукян

Институт истории Национальной академии наук Армении

РЕЗЮМЕ

Поражение Османской империи в Первой мировой войне и отстранение от власти младотурок никоим образом не облегчило положение нетурецких народов, которые продолжали подвергаться геноциду и этническим чисткам. С точки зрения констатации геноцидного характера проводимой турецкими властями преступной политики возникает необходимость сопоставления геноцидных действий, совершенных младотурками в отношении армян и греков в годы Первой мировой войны с массовыми погромами, совершенными уже кемалистами после войны, проведя сравнительный анализ этапов и методов, а также задействованных в этих преступлениях сил.

Сравнительный анализ этих преступлений приводит к заключению, что как во время, так и после Первой мировой войны, непосредственно перед организацией массовых убийств армянского и греческого населения, турецкие режимы подготавливали психологическую и пропагандистскую почву для этого, преследуя цель “оправдать” и/или “обосновать необходимость” спланированной преступной политики в отношении групп-жертв.

Выселение и последующее истребление мужчин групп-жертв из их мест проживания, последующие после этого массовые убийства оставшихся беззащитными женщин, детей и стариков, сожжение укрывшихся в церквях и многие другие сходства в методах младотурок и кемалистов свидетельствуют о том, что эти турецкие режимы в отношении немусульманских и нетурецких народов осуществляли единую политику физического истребления и этнических чисток. Кемалисты последовательно

продолжили геноцидную политику младотурок в отношении армянского и греческого населения, подтверждением чего являются массовая резня армян в Киликии в 1921 г., а также массовое истребление армянского и греческого населения Смирны в 1922 г.

Ключевые слова: Османская империя, Западная Армения, Геноцид армян, Мец Егерн, Смирна, массовые убийства армянского и греческого населения.

REFERENCES

- Aharonian, Gersam. *Յուշամատենան Մեծ եղեռնի* [Memorial Book of Mets Yeghern]. Beirut: Atlas, 1965;
- Astoyan, Anahit. *Դարի կողոպուտը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914–1923 թթ.* [The Robbery of the Century. The Dispossession of Armenians in the Ottoman Empire in 1914-1923]. Yerevan: Nairi, 2013;
- Chambazean, Buzand. *Պատանի կեանքի մը պատմությունը* [The Story of a Young Life]. Lebanon: The Armenian Catholicosate of the Great House of Cilicia, 1960;
- Dadrian, Vahagn. *Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներով* [The Armenian Genocide in Parliamentary and Historiographical Discussions]. Massachusetts: Paiglar, 1995;
- Marukyan, Armen. *Проблема Геноцида армян в современной геноцидологии* [The Problem of the Armenian Genocide in Modern Genocidology]. Yerevan: Russian-Armenian University, 2010;
- Puaux, René. *Զվրուռնիայի վախճանը* [End of Smyrna]. Yerevan: AGMI, 2001;
- Sahakyan, Ruben and Khudaverdyan, Konstantin. *Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո* [The Armenian Genocide in the Light of Decades]. Yerevan: Hakob Meghapart, 1995;
- Sakayan, Dora. *Զվրուռնիա 1922: Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* [Smyrna 1922. Armenian Doctor Garabed Hatcherian's Diary]. Yerevan: Nahapet, 2005;
- Taner, Akçam. *Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում* [The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire]. Yerevan: Tigran Mets, 2015;
- Ter Sargisean, Minas. *Իզմիրի անկումը և այլ էջեր* [The Fall of Izmir and Other Pages]. Beirut: Araz, 1975;
- Vardanyan, Gevorg. *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը, 1914-1923 թթ.* [The Greek Population in the Ottoman Empire and the Asia Minor Disaster, 1914-1923]. Yerevan: Collage, 2012;
- Զվրուռնահայ կեանքը զինադադարէն յետոյ, Ահաւոր փլուզումը* [The Life of Armenians of Smyrna after the Armistice. The Terrible Collapse]. Nor or (Athens), 1924 (3);
- Nersisyan, Mkrtich and Melqonyan, Ruben (comp.). *Հայերի ցեղասպանությունը*

Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու [The Armenian Genocide in the Ottoman Empire: A Collection of Documents and Materials]. Yerevan: Hayastan, 1991.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Արմեն Յ. Մարուքյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության» բաժնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայաստանի նոր և նորագույն պատմություն, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներ:

Էլ. փոստի հասցե՝ mararmts@yahoo.com

Armen Ts. Marukyan, Doctor of Sciences in History, Professor, Leading Researcher, Head of the “Armenian Question and Armenian Genocide History” Department of Institute of History, National Academy of Sciences, Armenia.

Research fields – new and recent history of Armenia, history of Armenian Question and Armenian Genocide, the problems of overcoming the consequences of the Armenian Genocide.

E-mail: mararmts@yahoo.com

Армен Ц. Марукян, доктор исторических наук, профессор, ведущий научный сотрудник, заведующий отделом “Истории Армянского вопроса и Геноцида армян” Института истории Национальной академии наук Республики Армения.

Область исследований – новая и новейшая история Армении, история Армянского вопроса и Геноцида армян, проблемы преодоления последствий Геноцида армян.

Эл. почта: mararmts@yahoo.com

**ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԱՂԵՏԸ ԵՎ
ԺՈՂՈՎՐԳԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Վերժինե Գ. Սվազլյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Հայաստան

1915-1923 թթ. Հայոց ցեղասպանության մասին տարբեր լեզուներով լույս են տեսել բազմաթիվ ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ, քաղաքագետների և հասարակական գործիչների ասույթներ, գեղարվեստական տարբեր ժանրերի ստեղծագործություններ, սակայն հրատարակված այդ հսկայական գրականության մեջ հաճախ բացակայել է ժողովրդի ձայնը՝ պատմական հիշյալ իրադարձություններից անմիջական տպավորություններ ստացած ականատես-վկա վերապրողների պատմած հուշերն ու հաղորդած ժողովրդական երգերը, որոնք ևս պատմաճանաչողական, փաստավավերական և սկզբնաղբյուրային կարևոր արժեք են ներկայացնում: Եվ ինչպես ամեն մի հանցագործություն բացահայտելիս որոշիչ են վկաների ցուցմունքները, նույնպես և Զմյուռնիայի աղետի ուսումնասիրման պարագայում պետք է հենվել նաև ականատես վերապրողների վկայությունների վրա, որոնք օբյեկտիվորեն ներկայացնում են հայերի և հույների այդ զանգվածային ողբերգության մանրամասները, և որոնցից յուրաքանչյուրն իրավական տեսակետից ապացուցողական նշանակություն ունի Հայկական հարցի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, ականատես, վկա, Զմյուռնիա, աղետ, Քեմալ, ազգայնական, թուրք, հայրենազրկում, Լոզան, Սիյուրք:

Հոդվածը ներկայացվել է՝ 01.12.2022: Ընդունվել է տպագրության՝ 12.04.2023:

The article was submitted on 01.12.2022 and accepted for publication on 12.04.2023.

Статья поступила 01.12.2022 и была принята к публикации 12.04.2023.

Ինչպես հղել՝ Վերժինե Գ. Սվազլյան, «Զմյուռնիայի աղետը և ժողովրդի պատմական հիշողությունը», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 21-34:

How to cite: Verjiné G. Svazlian, “The Izmir Calamity and the Historical Memory of the People” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 21-34.

Как сослаться: Вержине Г. Свазлян, “Катастрофа Измира и историческая память народа,” *Цехаспанагитакан андес* 11, no. 1 (2023), 21-34.



Տակավին 1955 թվականից, ես՝ Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանողս, գիտակցելով ժողովրդական բանավոր ավանդության այդ կարգի նյութերի պատմագիտական և փաստավավերական արժեքը, սկզբում՝ անձնական նախաձեռնությամբ, իսկ 1960 թվականից՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հովանու ներքո, գիտական այլ աշխատանքներին զուգահեռ, Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված ականատես-վկաներին որոնել-գտնելով, գրի եմ առել (նաև՝ ձայնագրել) նրանց պատմած սահմնկեցուցիչ հուշերը, տպավորիչ զրույցներն ու պատմական տարաբնույթ երգերը: Հետագայում, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենության հրավերով և ընձեռած հնարավորություններով, շարունակել եմ այդ աշխատանքները ոչ միայն գրառելով, ձայնագրելով, այլև տեսագրելով (օպերատոր՝ Գալուստ Հալաջյան) վերապրող ականատես-վկաների պատմած հուշ-վկայություններն ու պատմական բնույթի երգերը (հայերեն և թուրքերեն): Բառ առ բառ վերծանելով՝ ընդգրկել եմ նաև ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի արխիվի ձեռագիր հուշագրությունների, օրագրությունների, ձայնագրությունների և տեսագրությունների ֆոնդերում պահվող ականատես-վկա վերապրողների հուշերը: Ավելի քան 65 տարիների ընթացքում ինչպես Հայաստանի տարբեր շրջաններում, ապա նաև Սիլիոնքում կատարած անձնական կամ գիտաժողովային կարճատև ուղևորություններին ընթացքում մշտապես որոնել, հայտնաբերել եմ Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողների, հարցազրույցներ եմ վերցրել նրանցից:

Ականատես-վկա վերապրողների պատմած հարյուրավոր վկայությունները հնարավորություն են տալիս գիտական վերլուծության ենթարկել նաև այդ կարգի նյութերի ժանրային և տիպաբանական առանձնահատկությունները¹:

Ինտրո առարկա հուշերը ենթարկելով քանակական ու որակական մանրակրկիտ գիտական վերլուծության՝ պարզվել է, որ, ինչպես առանց հիշողության մարդ չկա, նույնպես և *առանց հիշողության չկա ժողովուրդ*, քանի որ հիշողությունը մարդու կամ ժողովրդի ապրած տարիների կյանքն է, նրա անցյալը, նրա պատմությունը: Նույնանման պատմական հիշողություն ունեն նաև հույները, հրեաները, գնչուները և այլ տուժված ժողովուրդներ²:

Հայոց ցեղասպանությունը, որն իրագործվել է 20-րդ դարասկզբին, *անջնջելիորեն տպավորվել է* ականատեսների հիշողության մեջ: Այդ անձնական հուշապատկերները նրանք կրել են իրենց ողջ կյանքի ընթացքում՝ չկարողանալով ազատագրվել ճնշող մղձավանջից: Եվ քանի որ *վերապրողների պատմած հուշերը* ներկայացնում

1 Իմ գիտական կարևորագույն հրապարակումների գրեթե ամբողջական ցուցակն առկա է այստեղ. https://iae.am/sites/default/files/Verjine_Svazlian_CV%28ARM%29_0.pdf

2 *Genocide and Human Rights. A Global Anthology*. Ed.: Jack Nusan Porter (Langham, New York, London: University Press of America, 1982).

են արևմտահայերին վիճակված պատմական յուրահատուկ իրադարձությունների անմիջական տպավորությունները, ուստի *հազեցած են խոր պատմականությունը*:

Առարկայորեն վերարտադրելով տվյալ ժամանակաշրջանի կյանքը, նիստ ու կացը, բարքերը, քաղաքական-հասարակական հարաբերությունները, *վերապրողների հաղորդած հուշերն անմիջական են, ճշմարտացի, վավերական և ունեն հավաստի վկայությունների արժեք*:

Հետագա ամբողջ կյանքի ընթացքում ականատես վերապրողների մեկ առ մեկ հաշված, կետ առ կետ վերլուծած այդ փաստացի վկայությունները, պատմական իրադրությունների հետ համադրելիս, դույզն իսկ կասկածի տեղիք չեն տալիս: Նրանք գրեթե միշտ իրենց պատմած հուշի մեջ հիշատակում են իրենց գերդաստանի ավագներին՝ ծոռներին, ընտանիքի մյուս անդամներին, մոտիկ ազգականներին՝ հաճախ նշելով նրանց անուններն ու ծննդյան թվերը: Հետևաբար, նրանց հաղորդած տվյալներն այնքան են ստույգ ու հավաստի, որ նույնիսկ ցեղասպանության թո՛հ ու բո՛հի մեջ իրար կորցրած հարազատները, իմ գրքերում գետեղված հուշերն ընթերցելով, տասնյակ տարիներ անց, աշխարհի տարբեր ցամաքամասերից հաճախ գտնում են միմյանց:

Միաժամանակ, *վերապրողների պատմած հուշերը՝ նաև համանման են*: Քանի որ տարբեր վայրերում, սեռատարիքային տարբեր խմբերի (տղամարդ, կին, ավագ, միջին, կրտսեր սերունդներ) պատմած հուշերն իրարից անկախ, գրեթե նույնությամբ նկարագրում են պատմական միևնույն ժամանակաշրջանի իրադարձությունները, պատմական համանման դեպքերն ու դեմքերը, իրենց տեսած ու զգացած նույն սարսափազդու տեսարաններն ու դաժանությունները, որոնք, համադրվելով, գալիս են միմյանց հաստատելու, միմյանց շարունակելու, լրացնելու և ամբողջացնելու՝ *միտվելով անձնականից ու առարկայականից դեպի համընդհանուրն ու համազգայինը*: Այդ հանգամանքն է նկատի ունեցել վերապրող *Տիգրան Օհանյանը* (ծնվ. 1902 թ., Կամախ), երբ իր պատմած հուշն ամփոփել է հետևյալ խոսքերով. «...Իմ անցյալը իմ անցյալը չէ միայն, այլ նաև՝ իմ ժողովրդի անցյալն է»³: Հետևաբար, ականատեսների հուշերն իրենց ներքին բովանդակությամբ բնութագրում են ոչ միայն տվյալ անհատին ու նրա միջավայրը, այլև ողջ հավաքականությանը՝ դառնալով հայ ժողովրդի հավաքական պատմական հիշողությունը:

1915-1923 թթ. Հայոց ցեղասպանությունից վերապրած ականատես-վկաները, որոնք այլևս չկան, իմ գրառումների ընթացքում ամենայն մանրամասնությամբ հիշում էին ոչ միայն 20-րդ դարում իրագործված առաջին ցեղասպանության պատմաքաղաքական հանգամանքները՝ ընդհուպ մինչև Զմյուռնիայի աղետը, այլև այնտեղ բնակվող հայության երբեմնի ինքնաբավ կենսապայմանները:⁴

Ականատես-վկա *Սաթենիկ Գույումջյանը* (ծնվ. 1902 թ., Կոնիա) 1984 թ. Հրազդան

3 Վերծինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011), Վկայություն [այսուհետև՝ Վկ.] 97, 237:

4 Ականատեսների վկայությունները այսուհետև կմեջբերվեն «Հայոց ցեղասպանություն. ականատեսների վկայություններ» 700 վկայություն պարունակող մեր ստվար գրքից, որը լույս է տեսել Երևանում 2011 թ.՝ հայերեն և անգլերեն, իսկ Ստամբուլում 2013 թ.՝ թուրքերեն:

քաղաքում վերհիշել է. «...1915-ի Մեծ ջարդին ժամանակ իմ ծնողքը նահատակված ըլլալուն, 1918-են մինչև 1922 թիվը ես եղած եմ Իզմիրի հայկական որբանոցը: Հոն հայ որբուհիները ինձի գորգ գործել սորվեցուցին, անոնց հետ կաշխատեի, անոնց հետ տխուր երգեր կերգեինք և միասին հեն կուլայինք, հեն կգործեինք: Անոնք կպատմեին, որ անցյալում, երբ Խորհմյան Հայրիկը Իզմիր եկած էր և տեսած, որ հայերը տնտեսապես բավական լավ վիճակի են, քանի որ ոսկիի շուկան և ուրիշ շատ բաներ հայերուն ձեռքն էր, ան քարոզ կարդացած էր և ըսած. «Սիրելի հայրենակիցներ, դուք Թուրքիայի հողին վրա կապրիք, անոր համար ալ միշտ պետք է ուշադիր ըլլաք, որ ձեր հավատքը և լեզուն պահեք, ձեր ունեցած-չունեցածը պահեք, որ ուրիշները չտիրանան: Անոր համար ինձմե ձեզ խրատ՝ մարույի պես մի բացվիք, այլ՝ կաղամբի պես գոցվեցեք: Այսինքն՝ ամեն ունեցած-չունեցած հարստություննիդ՝ մի ցուցնեք թուրքերուն», – այնուհետև վերապրողը եզրակացրել է, – Իզմիրի հայերը շատ լավ դիրք ունեին, ճոխ կյանքով կապրեին: Բայց թուրքերը նախանձեցին հայերուն ունեցվածքին, ուզեցին իրենք տիրանալ անոնց ամեն ինչին՝ և՛ զարդերուն, և՛ հողերուն, և՛ տուներուն, ամեն ինչերուն: Ես շատ քաղաքներ եղած եմ, բայց Իզմիրի զարդերուն պես ո՛չ մի տեղ չեմ տեսած: Հայերը ոսկերիչներ էին մեծ մասամբ: Գեղեցիկ զարդեր կշինեին, զարմանալի գեղեցիկ: Այնտեղի ճոխությունը, հարստությունը ես ո՛չ մի տեղ տեսած չեմ...»⁵:

Այնպես որ, նախքան աղետը Զմյուռնիայի հայության վիճակը եղել է ոչ միայն բարվոք, այլև նախանձելի: Զմյուռնիայի և շրջակայքի հայության ճոխ կենսապայմանների մասին է վկայել նաև *Հովհաննես Պարոնյանը* (ծնվ. 1890 թ., Էսքիշեհիր) 1979 թ. Նոր Բույթնիայում. «...Հայերը հարուստ էին մեր կողմերը: Ամենալավ տունը, ամենալավ խանութը հայերունն էր: Թուրքերը ուզեցին հայերուն տեղահանել, որ հայերի ունեցած-չունեցածը իրենց վերցնեն...»: Այնուհետև, անդրադառնալով Զմյուռնիայի աղետին, ավելացրել է. «...Հույնը գրավեց Էսքիշեհիրը, բայց բոլշևիկ ռուսը թուրքին զենք ու ոսկի տվավ: Հույները ինչ պիտի ընեին՝ կոտորվեցան: Հունաստան փախողները՝ ազատվան: Իզմիրը հույների կողմից գրավված էր, բայց թուրքերը կրակի տվին...»⁶:

Ականատես-վկա վերապրող *Մուշեղ Հակոբյանը* (ծնվ. 1890 թ., Նիկոմեդիա, Արմաշ) 1998 թ. Սարի թաղում ներկայացրել է այդ քաղաքական իրադարձության մանրամասները. «...Հետո հույնի-թուրքի կռիվը սկսավ: Հույները կառավարական զինվորներով եկան Իզմիրի վրայով, Բուրսայի վրայով հարձակվեցան, առաջ անցան: Հույներուն հետ հայ կամավորներ ալ կային՝ Թորգոմ փաշայի ղեկավարությամբ: Քեմալը մտավ Իզմիր, ահագին հույն, հայ կոտորեցին: Քեմալի ժամանակ ինձ թուրքի բանակ տարին: Բանակում խիստ էր»⁷:

Ականատես-վկա *Սարգիս Եթարյանը* (ծնվ. 1907 թ., Աֆիոն-Գարահիսար) 1996 թ. Նոր Արաբկիրում ևս հաստատել է նույն փաստը. «...Իզմիրի աղետը 1922-ին եղավ:

5 Նույն տեղում, Վկ. 191, 386:

6 Նույն տեղում, Վկ. 203, 402:

7 Նույն տեղում, Վկ. 228, 425:

Քեմալականները Անատոլիայից Իզմիր եկան, խուժանը լցվեց քաղաքը: Առաջ՝ Հայնոցը՝ Հայ թաղը [կրակի տվին]...»⁸:

Իսկ ականատես վերապրող *Աշոտ Օհանյանը* (ծնվ. 1905 թ., Բուրսա, Մեծ Նոր գյուղ) 1998 թ. Վարդաշենում նույնիսկ հիշել է թե ինչպես քեմալականները մուտք գործեցին Իզմիր. «...1922 թվին, երբ հույն կառավարությունը Իզմիրի պատերազմը կորսնցուց, քեմալական զորքերը մտան Իզմիր, երգելով.

*«Իզմիր դաղլարընդա,
Չիչէքլէր աչար,
Քյաֆիր յունան ասքէր
Ել գիրի դաչար»:*

*«Զմյուռնիայի լեռներում
Ծաղիկներն են բացվում,
Անաստված հույնի զինվորը
Քամու պես է փախչում»:*

Թուրքերը էդ երգելով սկսան Իզմիրը թալանել ...»⁹:

Հրազդանում ապրող *Սարթենիկ Գույումջյանը* (ծնվ. 1902 թ., Կոնիա) 1984 թ. իր վկայության վերջում նկարագրել է այդ ողբերգական իրադարձությունը. «...Երբ Քեմալը եկավ, մեր որբանոցն ալ ցրվեցավ... Քեմալը եկավ նե հայերուն, հույներուն, բոլոր քրիստոնյաներուն ծովը թափեց, Իզմիրը կրակի տվին: Կրակը կուտեր մարդկանց, չոջուխները խոնդախի մեջ գետինները նետված վրաները կկոխկրտեին, խոնդախի չոջուխները ծովը կնետեին, ծովին վրա անոնք սալամիշ կըլլային...»¹⁰:

Ականատես-վկա *Հայկուհի Ագարյանը* (ծնվ. 1908 թ., Ադաբազար) 1988 թ. Երևանում հետևյալ կերպ է բնութագրել նոր թափ առած քեմալականներին. «... Հազիվ ինքզինքնիս գտանք, միլիջիները եկան: Միլիջիները ազգայնականներն էին՝ զինված: Մենք զարմացանք: Այլևս անցյալի խեղճ ու կրակ թուրքը չէր, որ պատերազմից պարտված էր դուրս եկել: Մինչև ատամները զինված միլիջիները եկան, սկսեցին իրենց գործը: Քեմալը կազմակերպել էր հայերին, հույներին, ովքեր մահմեդական չէին՝ քշել...»¹¹:

Իսկ ականատես-վկա *Ավետիս Նորիկյանը* (ծնվ. 1909 թ., Բուրսա, Եսիջե գյուղ) 1999 թ. Երևանում իր կարծիքով է կիսվել մեծ տերությունների քաղաքականության մասին և ներկայցրել է Զմյուռնիայի հայության դժվարին կացությունը. «...Հետո, երբ թուրք-հունական պատերազմը սկսավ, մեր Եսիջե գյուղը ճակատամարտի մեջտեղը մնաց: Հույները Իզմիրին տիրացել էին, թուրքերը պաշարված էին, բայց մեծ տերությունները օգնեցին թուրքերուն, և հույները պարտվեցին: Մենք ամեն ինչ թողինք՝ մեր այգին, մեր ունեցվածքը, մեր տունը-տեղը և փախուստի դիմեցինք: Երբ հույները պարտվում էին, մեր գյուղից Բուրսա գնացինք, այնինչ պետք է գնայինք մի որևէ նավահանգիստ՝ կամ Մուտանիա, կամ Գեմլիք: Դրա համար էլ անկանոն եղավ մեր գնալը:

8 Նույն տեղում, Վկ. 196, 393:

9 Նույն տեղում, Վկ. 212, 410:

10 Նույն տեղում, Վկ. 191, 386:

11 Նույն տեղում, Վկ. 221, 420:

Մեր գնալու ժամանակ թուրքերը լուսամուտներից կրակում էին մեզ վրա: Ծովափը արդեն լիքն էր գաղթականներով: Բոլորն ալ սպասում էին, որ նավ նստին: Էդ ժամանակ հունական բանակը հանձնվեց թուրքերին: Նավահանգստում հավաքված բնակչությունը շատ զոհ տվեց: Մենք յոթը հոգի էինք: Ամեն մեկը գլուխն առած՝ փախչում էր: Մեկ կողմը ծովն էր, մեկ կողմը՝ անտառ: Էդ ժամանակ ես հիվանդ էի, սոված էի ու հոգնած: Բայց ստիպված բոլորի հետ քարշ գալով գնացինք՝ Գեմլիք նավահանգստից մինչև Մուտանիա ոտքով: Գնում էինք գյուղերու միջով: Թուրքերը մեզ հետապնդում էին և հասնողին սպանում: Ովքեր փոքր երեխաներ ունեին, երեխաներին չէին կարող տանել, թողնում էին ճամփին, որոնք էլ մեռնում էին: Մեզնից առաջ գնացողները գետնին թողել էին երեխաներին ու վրաները քթոցներ էին ծածկել, որ գոնե օդ առնեն. էդ խեղճ մանուկները լաց էին լինում՝ անտեր-անտիրական մնացած: Մենք լսում էինք նրանց լացը, բայց չէինք կարողանում օգնել, քանի որ ուլիկների պես հազիվ մագլցելով բարձրանում էինք ժայռերի վրայով: Ով որ սայթաքեր՝ կընկներ ծովը: Ուրիշ ճամփա չկար: Վերջապես հասանք Մուտանիայի նավահանգիստը: Շատերը իրար կորցրել էին: Ես հորս հետ էի: Բուրսայի ամբողջ հայությունը էդտեղ էր կուտակված: Ովքեր կարողացան՝ փախան, ովքեր մնացին, երբ հունական բանակը քաշվեց, թուրքերը եկան ու բոլորին կոտորեցին...»¹²:

Այնուհետև *Հովհաննես Գասպարյանը* (ծնվ. 1902 թ., Էսքիշեհիր, Յալլա գյուղ) 1973 թ. Շենգավիթում նկարագրել է քեմալականների գործադրած դաժանությունները. «...1922 թ. ամառվա վերջին և աշնան սկզբին թուրքական զորքերը ճեղքեցին հունական ռազմաճակատը, վաթսուն հազար հույն զինվոր ոչնչացրին և շատ գերի վերցրին, որոնց Անկարայի փողոցներով անցկացրին որպես հաղթանակի ցույց: Թուրքական սահմաններից դուրս քշեցին հույն զինվորներին, որոնց մի մասը ծովը թափվեց Իզմիրի, Բալիքքետերի և Մուտանիայի ափերին...»¹³:

Ականատես-վկա *Բյուզանդ Մորուքյանը* (ծնվ. 1904 թ., Կեսարիա) 1972 թ. Նոր Մալաթիայում պատմել է, որ ինքը 15 ամիս թուրքական գերության մեջ է եղել Այդըն քաղաքում: Նա նկարագրել է Իզմիրի աղետը և քրիստոնյաների նկատմամբ թուրքերի դաժանությունները. «...Հազիվ տեղավորվել էինք, երբ 1922 թվին սկսվեց Իզմիրի տեղահանությունը և մեծ հրդեհը: Այն ժամանակ ես տասնութ տարեկան էի և ինձ գերի վերցրեցին (գերության ժամանակվա իմ միակ հիշատակը՝ իմ դաստակին ամրացված մետաղյա համարանիշը, ինչպես նաև իմ գերությունից ազատվելու հրամանը մինչև օրս պահում եմ), և տասներկու օր անընդհատ քայլելով մի մեծ խմբի հետ ճանապարհ ընկանք անհայտ ուղղությամբ: Ճամփին մեծահասակ տղամարդիկ ընկնում էին ուժասպառ: Ովքեր չէին կարողանում շարունակել ճամփան, թուրք սակյարների կողմից սպանվում էին տեղում: Տասնհինգ ամիս տևեց իմ գերությունը...»¹⁴:

Թուրք զինվորները սաստիկ դաժանությամբ են վարվել հայ և հույն քրիստոնյա բնակչության հետ: Այդ սահմոկեցուցիչ տեսարաններն է վերհիշել նաև ականատես-

12 Նույն տեղում, Վկ. 215, 414:

13 Նույն տեղում, Վկ. 206, 406:

14 Նույն տեղում, Վկ. 185, 380:

վկա *Սևբյուլ Բերբերյանը* (ծնվ. 1909 թ., Աֆիոն-Գարահիսար) 1989 թ. Այգեստանում. «...Հետո ուրիշ թուրք զինվորներ եկան, մեզ գտան: Բոլորիս կանգնեցրին, երկու մարդու առանձնացրին մեզվից, պառկեցուցին գետնին, սկսան անոնց կաշիները քերթել և խնդալով ըսել. «Կո՛վ ենք մորթում»: Մարդոց կաշին դժվարությամբ հանեցին: Էդ խեղճ մարդիկ ողջ-ողջ կտանջվեին, էդ ինչ ձայն էր, ինչ բորչըղուք. մարդիկ բանգըր-բանգըր կբռռային: Վերջապես անոնց մաշկահաս արեցին և ըսին. – Քանի որ դուք՝ գյավուրներ, հայտնել եք թուրք չեթեներուն տեղը, ձեր արժանի պատիժը ան է:

Մենք բոլորս ալ կուլանք, կողբանք, վախերնես կողողանք: Ես հագիվ փախա, ոտքով սկսա քալել քանի մը հոգիներու հետ: Մեզի գերի բռնեցին. չեն թողնում ոչ մի տեղ էրթալ: ...Երբ թուրքերը տեսան իրենց տանկը վառվեց, «գյավուր գէլդի» ըսելով փախան: Թուրք զինվոր մը ինձի ուզեց իր հետը տանիլ: Բայց քովիս հույն զինվորը չթողեց, ինձ ըսավ. – Մի՛ գնա, քո մամայիդ պես քեզ ալ կվառեն: Ես ան ատենը հասկցա, որ այդ հույն զինվորը տեսել էր մորս վառվիլը...»¹⁵:

Եվ փոքրիկ աղջնակը վշտից ողբ էր հյուսել իր վաղամեռիկ մոր մասին ու խոր ծերության մեջ անգամ երգում էր աղի արցունքներով ու հառաչանքներով.

*«Աֆիոնեն»¹⁶ դուրս էկանք,
Իզմիր քաղաքը մտանք,
Ազիզ մորս չգտա.
Հոնկու՛ր-հոնկու՛ր լաց էղա:*

*Ա՛խ, մամն ջան, խարեցին,
Ինձի քեզնից բաժնեցին,
Քեզ ալ կրակը նետեցին.
Չըթըր-չըթըր այրեցին...»¹⁷:*

Բացի հայ կանանցից ու մանուկներից, թուրքերն անխնա կրակի մեջ են շարտել նաև հայերեն գրքեր ու ձեռագիր մատյաններ: Ինչպես վկայել է ականատես վերապրող *Մինան Մինանյանը* (ծնվ. 1912 թ., Էսքիշեհիր, Մուրադչայ գյուղ) 1989 թ. Երևանում. «...Եկեղեցու գավիթում թուրքերը լցրել էին հայկական գրքերը, որ այրեն...»¹⁸:

Զմյուռնիայի աղետի այդ թոհ ու բոհի մասին ականատեսի իր տպավորություններն է պատմել նաև *Արշակուհի Պետրոսյանը* (ծնվ. 1903 թ., Յոզղատ) 1989 թ. Նոր Մա-րաշում. «...Աֆիոնեն, Կոնիայեն, բոլոր տեղերեն մարդիկ եկել էին Իզմիր: Եկեղեցին բերնեբերան լիքն էր: Առաջնորդը մորուքը ածիլել փախել էր: Առաջնորդարանի հինգ դռներուն առջևը թուրք զաբիթներ կեցած էին, եկեղեցիներուն քամբանաները (զանգ)

15 Նույն տեղում, Վկ. 198, 394-395:

16 Աֆիոն-Գարահիսար քաղաքը:

17 Նույն տեղում, Վկ. 563, 606:

18 Նույն տեղում, Վկ. 210, 408:

կգարնեն կոր. օգնություն՝ կկանչեն ամեն կողմեն: Հինգ աղջիկներ՝ անգլիացի, ֆրանսիացի, իտալացի, ամերիկացի, դանիացի, ճակատնին Կարմիր խաչի նշան կապած, մայրերուն, չոջուխներուն, վիրավորներուն կօգնեն: Ժողովուրդը ինչ ընելը չէր գիտեր:

Իզմիրը վառվում էր... Ծովեզերքը վառվում էր ալեֆներուն (բոց - թուրք.) մեջը...: Մարդիկ ինչ ընելին շվարած էին...: Աղջիկներին տոպրակներու մեջ էին դնում, որ չփայցնեն...: Անս - բաբա գյունի (թոհուրոհ - թուրք.) էր: Թուրքը մի բան տեսավ՝ կուզեր ձեռքեղ առնել, թալանել: Մեկը էկավ մատնիս ուզեց խլել: Ես հեմեն բուլդուրի տոպրակը կռնակս առի, մամասա ալ մանչուն՝ Միհրանին գրկեց, յալլա, գնացինք մտանք ֆրանսիական դպրոցը, քիչ մը շունչ առինք...: Ժողովուրդին քշել էին նավահանգստի կողմը: Նավահանգստի մոտ ոմանք ջուրն էին նետվում, լողալով գնում հասնում օտար շոգենավերուն շուլլվում-պըլլվում, վեր էին բարձրանում, որ հոգինին ազատեն, ուրիշ երկիր հասնեն...: Իսկ ովքեր ջուրը ինկած էին, կողային, ցամաքեն անոնց վրա եռացած ջուր էին բաց թողնում: Վերջը կրակը եկավ մեր կեցած ֆրանսական դպրոցն ալ լափեց, անտեղեն դուրս վազեցինք... ո՞ր վազենք... ամեն կողմ կրակներու մեջն էր...»¹⁹:

Ակնատես-վկա *Վազգեն Սադաթյանը* (ծնվ. 1907 թ., Ադաբազար) 1997 թ. Երևանում մանրամասնել է պատմական այդ իրադարձությունը. «...[Իզմիրի] ամենագլխավոր եկեղեցիին մեջ հայերը հավաքվել էին՝ մոտ մի քանի հազար հայ: Բոլորը սպասում էին, որ թուրքերը կարող են գալ և մեզ ջարդել: Դրա համար փող հավաքեցին, նամակ գրեցին ֆրանսերենով, թե մեզ սպասում է ջարդ: Մի տղա թուրքերեն խոսելով՝ հասնում է ֆրանսական դեսպանատուն: Դեսպանը ֆրանսական դրոշակով և իր խմբով եկավ, եկեղեցու մեջ գտնված հայերին տարավ նավահանգիստ, ուր լիքը հայեր ու հույներ էին: Հեռվում կանգնած էին ֆրանսական, իտալական, անգլիական զրահանավեր, մեկ-մեկ զինվորներ էին դուրս գալիս նավերից, որ մեզ թուրքերը չկոտորեն: Բայց զիշերները թուրքերը գալիս էին աղջիկ փախցնելու, սկսվում էր աղմուկ, իրարանցում: Նավերից պրոժեկտորները (լուսարձակ - ֆր.) զցում էին, որ նրանք վախճան ու փախին...»²⁰:

1990 թ. երևանաբնակ զբոսաշրջիկ *Սահակ Թոփալյանից* Լոս Անջելեսում (ծնվ. 1941 թ., Նոր Ամասիա) գրի եմ առել իր զմյուռնիացի հորից լսած թուրքալեզու երգի պատատիկը.

*«Իզմիրըն խայրխայրը,
Դէօրիլիօր եսիրահլարը,
Մավզեր, ֆիշէնք փաթըլլօր՝
Էվլեր, ջանլար եսքըլլօր»:*

*«Զմյուռնիայի մակույկները,
Թափվում են տերևները,
Մաուզեր, փանփուշտ պայթում են՝
Տներ, մարդիկ վառվում են»²¹:*

19 Նույն տեղում, Վկ. 175, 363:

20 Նույն տեղում, Վկ. 220, 417:

21 Վերծինե Սվազլյան, *Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովույթում. The Oral Tradition of the Armenian-Americans in the Course of Time* (Երևան, Գիտություն, 2021), Վկ. 427, 546:

Արիփինե Բարթիկյանը (ծնվ. 1903 թ., Աֆիոն-Գարահիսար) նույնպես ականատես է եղել և 1990 թ. Նոր Կիլիկիայում վկայել է. «...Մեյ մըն ալ սկսավ քեմալականների շարժումը: Իզմիրը կրակի տվին: Առաջին կրակը Հայնոցը տվին: Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին: Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն: Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք: Ծովին վրա լինքը դիակներ էին օրորվում...: Հետո մեզի տարան ԲալչոՎա: Ծովուն եզերքը փայտե բարաքներ կային, հոն լեցուցին: Սկսան մեզի աչքե անցնել: Սիրուն աղջիկներուն բռնում, քաշում, քաշքշում, տանում էին: Ես մանր-մունր պզտիկ աղջիկ էի, փեշերուն տակը պահվտեցա: Մեր Մարիին երեսը մուր քսած էին ու մազերը խուզել էին. այլանդակ տեսք մը առած էր, նայեցին, չհավնեցան. – Եարամազ (անպետք - թուրք.), – ըսին, ձգեցին, այսինքն՝ գործի չի գար, ոչ մեկին պետքը չէ: Անդին կլավեին թուրքերուն ձայները, որ դանակները սրում էին, որ մեզի մորթեն: Հայ աղջիկ մը տեսավ, որ հերթը իրեն պիտի գա, ինքզինքը պատուհանեն վար նետեց, բայց չմեռավ. վարը ուրիշ թուրք զինվորներ կան եղեր՝ առին, տարին: Քանի մը օրեն ետքը բերին արդեն անճանաչելի վիճակի մեջ...»: Ապա ականատես-վկան պատմել է ամերիկացիների օգնության փորձերի մասին. «...Ամերիկացին շոգենավեր էր բերել, որ մեզի Հունաստան փոխադրեն: Քանի որ Քեմալը ըսեր էր. «Թուրքիան թուրքինն է, ո՛չ մի քրիստոնյա չպիտի մսա»...»²²:

Արժանահիշատակ հայրս՝ *Գառնիկ Մարկոսի Սվազլյանը*, նույնպես Զմյուռնիայի աղետից հրաշքով փրկված ականատես-վկա էր: Նա ծնվել է 1904 թ. Կեսարիայում, հետո ընտանիքով տեղափոխվել են Զմյուռնիա, որն ավելի ապահով էր հունական տիրապետության ներքո:

Հայրս պատմում էր, որ 1922 թ. ինքը 18 տարեկան էր և նոր էր ավարտել տեղի հայտնի Մեսրոպյան վարժարանը, երբ քեմալականները Զմյուռնիայի հայկական թաղամասը՝ Հայնոցը, կրակի էին տվել. բոցերը կլանել էին նաև հայրական տունը, տնեցիները սարսափահար դուրս էին վազել և շտապել ծովափ: Ծովափում հայրս տեսել է շատ մակույկներ, լսել թուրք մակույկավարների բացականչությունները. «...Գլավուրներ, տվեք ձեր ոսկիներն ու զարդերը, մենք ձեզ կհասցնենք հեռվում խարիսխ գցած եվրոպական շոգենավերին, և դուք կփրկվեք»²³: Հուսահատ հայերը, այլ ելք չունենալով, նրանց էին հանձնում իրենց վերջին ունեցվածքը և տեղավորվում մակույկների մեջ: Հայրս նկատում է, որ մակույկավարները, ափից հեռանալով, գաղտնի բացում են մակույկի հատակի անցքը, ջուրը լցվում է մակույկի մեջ, և, հավասարակշռությունը կորցնելով, շրջվում, և, մեծ ու փոքր, բոլորը հայտնվում են ծովում, ջրամույն լինում: Ծովի վրա անթիվ ոռած մարմիններ էին տարուբերվում:

Հայրս, որ այդ թոհուրոհի մեջ արդեն կորցրել էր իր հարազատներին, տեսնելով այդ համատարած ողբերգությունը, արհամարհելով մահը, նետվում է ծովը և մաքառելով ալիքների դեմ, հասնում հեռվում խարիսխ գցած հունական մի ռազմանավի և պլլվելով խարիսխի շղթայից՝ մագլցում է վեր, պատսպարվում ծխնելույզի մեջ, որ տաքանա:

Ռազմանավը հույն զինվորներին և հորս հասցնում է հունական Պիրեա նավա-

22 Վերժինե Սվազլյան, *Հայոց ճեղասպանություն*, Վկ. 195, 392:

23 Նույն տեղում, Վկ. 385, 566:

հանգիստը, և քանի որ կամքի ուժ ուներ, իսկույն մի հարմար աշխատանք է գտնում և սկսում փողոցից փողոց քույուրիա (քունջութով օղակաձև հաց - հուն.) վաճառել և իր գոյությունը պահել: Հետո փոխադրվում է Եգիպտոս՝ Ալեքսանդրիա:

Այդ օրերին է հյուսվել նաև ժողովրդական հետևյալ երգի պատատիկը.

*«Անկե փախանք Հունաստան,
Շատ շատերն ալ Ֆրանսա,
Մեկայները՝ Եգիպտոս.
Սապես ցրվանք ամեն կողմ»²⁴:*

Ալեքսանդրիայում հայրս զբաղվել է ոսկերչությամբ: Եվ քանի որ Զմյուռնիայի հայ վարպետ ոսկերիչների մոտ նա արդեն հմտացել էր այդ արհեստում, իր նուրբ ճաշակն ու փայլուն երևակայությունը մեծ համբավ են բերում նրան: 1946-1948 թթ., երբ իրականություն դարձավ զանգվածային հայրենադարձությունը, Գ. Սվազլյանը 1947 թ. Եգիպտոսից առաջին իսկ քարավանով իր յոթ հոգուց բաղկացած ընտանիքով եկել և հանգրվանել է Երևանում:

Ամփոփելով նշենք, որ Օսմանյան կայսրությունից բռնի արտաքսված ականատես-վկաները ոչ միայն պատմել են իրենց տեսածն ու զգացածը, այլև հանգել են որոշակի քաղաքական եզրակացությունների: Այսպես, այնթապցի *Պարզև Մակարյանը* (ծնվ. 1915 թ.) եզրակացրել է. «...Մեծ տերությունները հայերուն խաբեցին՝ Կիլիկիան թուրքին տվին. Զեյթունը, Ադանան, Սիսը, Մարաշը, Քիլիսը, Այնթապը, Ուրֆան, Կարմունջը և այլ քաղաքներ ամբողջապես հայաթափվեցան: Մեզի ստիպեցին, որ Կիլիկիայեն դուրս ելլանք: Մենք ստիպված մեր հայրենիքը լքեցինք:

1922 թ. ալ Իզմիրի աղետը սարքեցին. հայերն ու հույները կրակներուն մեջեն փախան, ծովը նետվեցան. ով կրցավ ինքզինքն ազատել՝ ուրիշ երկիր անցավ: Այսպիսով, Թուրքիան «մաքրեցին» քրիստոնյաներեն: Թուրքիան մնաց թուրքերուն, Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան ալ հետը»²⁵:

Ի լրումն այդ բոլորի, 1923 թ. Լոզանի պայմանագրով, դաշնակից տերությունները ճանաչեցին Մուստաֆա Քեմալի՝ Անկարայի կառավարությունը և նրա իրավունքը Արևելյան Թրակիայի, Իզմիրի, Կիլիկիայի, ինչպես նաև բոլոր այն տարածքների նկատմամբ, որոնք, Սևրի հաշտության պայմանագրով, պիտի անցնեին Հայաստանին: Բացի այդ, նրանք ճանաչեցին Թուրքիայի նոր սահմանները, որոնք ընդգրկում էին նաև Արևելյան Հայաստանի նախկին շրջանները՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն: Իսկ Պատմական Հայաստանի մի փոքրիկ մասը՝ 1/10-ը, շարունակեց գոյություն ունենալ որպես Հայաստանի Հանրապետություն, մինչդեռ հայրենագրված և ունեզրկված հայ ժողովրդի մեծագույն մասը սփռվեց աշխարհի տարբեր երկրներով՝ ստեղծելով Հայ սփյուռքը:

24 Նույն տեղում:

25 Նույն տեղում, Վկ. 272, 470:

ԱԿՆԱՏԵՍ ՎԵՐԱԴՐՈՂՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ



Մարիցա Փափազյան
(ծնվ. 1874 թ., Մամսուն)



Մուշեղ Հակոբյան
(ծնվ. 1890 թ., Նիկոմեդիա,
Արմաշ)



Հովհաննես Գարոնյան
(ծնվ. 1890 թ., Էսֆիշեհիր)



Հովհաննես Գասպարյան
(ծնվ. 1902 թ., Էսֆիշեհիր)




Տիգրան Օհանյան
(ծնվ. 1902 թ., Կամախ)



Արփիհեն Բարթիկյան
(ծնվ. 1903 թ., Աֆիոն-
Գարսահիսար)



Արշակունի Գետրոյան
(ծնվ. 1903 թ., Յոզղատ)




Բյուզանդ Միրոյան
(ծնվ. 1904 թ., Կեսարիա)



Գառնիկ Սվազյան
(ծնվ. 1904 թ., Կեսարիա)

Վերջինս Գ. Սվազյան



Աշոտ Օհանյան
(ծնվ. 1905 թ., Բուրսա)



Սարգիս Եթարյան
(ծնվ. 1907 թ., Աֆին-
Գարահիսար)



Վազգեն Սարգսյան
(ծնվ. 1907 թ., Ադաբազար)



Հայկուիի Ագարյան
(ծնվ. 1908 թ., Ադաբազար)



Ավետիս Երիկյան
(ծնվ. 1909 թ., Բուրսա)



Սիհան Սիհանյան
(ծնվ. 1912 թ., Էսքիշեհիր)

THE IZMIR CALAMITY AND THE HISTORICAL MEMORY OF THE PEOPLE

Verjiné G. Svazlian,

Institute of Archaeology & Ethnography, National Academy of Sciences, Armenia

SUMMARY

The greatest witness of the Armenian Genocide is the Armenian people, inasmuch as the Armenians themselves have endured all those unspeakable sufferings, consequently, the nation itself is the object of that massive political crime. And, as in the elucidation of every crime, the testimonies of the witnesses are decisive, similarly, in the case of studying the Izmir calamity as well, we take as a basis the testimonies (memories and songs) of 15 eyewitness survivors, which objectively present the details of that mass tragedy of the Armenians and Greeks.

Key words: Armenian Genocide, eye-witness, survivor, Izmir, calamity, Kemal, nationalistic, Turk, homeland-deprived, Lausanne, Diaspora.

КАТАСТРОФА ИЗМИРА И ИСТОРИЧЕСКАЯ ПАМЯТЬ НАРОДА

Вержине Г. Свазлян,

Институт археологии и этнографии Национальной академии наук, Армения

РЕЗЮМЕ

Самым главным свидетелем Геноцида армян является армянский народ, так как он стал объектом данного массового политического преступления. Известно, что при раскрытии любого преступления решающую роль играют показания свидетелей. Именно поэтому при изучении катастрофы Измира мы основывались на свидетельствах (воспоминания и песни) 15-и очевидцев-свидетелей, которые объективно представляют подробности той массовой трагедии армян и греков.

Ключевые слова: Геноцид армян, очевидец, свидетель, Измир, катастрофа, Кемаль, националистический, турок, лишение родины, Лозанна, диаспора.

REFERENCES

- Svazlian, Garnik. *Հայրենիքիս համար* [For My Fatherland]. Yerevan: Hayastan, 1965;
- Svazlian, Verjiné. *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերասպրողների վկայություններ* [The Armenian Genocide: Testimonies of the Eyewitness Survivors], Second completed edition. Yerevan: Gitutyun, 2011;
- Svazlian, Verjiné. *Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովույթում* [The Oral Tradition of the Armenian-Americans in the Course of Time]. Yerevan: Gitutyun, 2021.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Վերծինե Գ. Սվազլյան, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, բանագետ, բանահավաք, ժողովրդագետ, ցեղասպանագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հայ ժողովրդական բանահյուսության տեսության և պատմության բաժնի առաջատար գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ արևմտահայոց բանավոր ավանդույթը և պատմական հիշողությունը:

Էլ. փոստի հասցե՝ vsvaz333@yahoo.com

Verjiné G. Svazlian, Honored Scholar of the Republic of Armenia, Doctor of Sciences (Philology), folklorist, ethnographer, collector of oral folk tradition, genocide scholar, Leading Researcher of the Department of Theory and History of the Armenian Popular Folklore at the Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Republic of Armenia.

Research fields – the oral folklore and the historical memory of the Western Armenians.

E-mail: vsvaz333@yahoo.com

Вержине Г. Свазлян, Заслуженный деятель науки Республики Армения, доктор филологических наук, фольклорист, народовед, собиратель устного народного творчества, геноцидолог, ведущий научный сотрудник Отдела теории и истории армянского народного фольклора Института археологии и этнографии Национальной академии наук Республики Армения.

Область исследований – устное народное творчество и историческая память западных армян.

Эл. почта: vsvaz333@yahoo.com

**ՓԱՍՏԱԹՈՒՂԹ, ԹԵ՛ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ. ԲԺԻՇԿ ԿԱՐԱՊԵՏ ԽԱՉԵՐՅԱՆԻ
ՕՐԱԳԻՐԸ ԶՄՅՈՒՆԻԱՅԻ ԱՂԵՏԻ ՄԱՍԻՆ
(խորհրդածություններ գրախոսականների և օրագրի
գրականագիտական արժեքների շուրջ)**

Դորա Գ. Սաքայան
ՄաքԳիլի համալսարան, Կանադա

Հոդվածում հեղինակը, որ բժիշկ Կարապետ Խաչերյանի՝ Զմյուռնիայի աղետի մասին մեզ թողած օրագրի հայտնաբերողն է, հրատարակիչն ու տարածողը, դիտարկում է այդ գրվածքի շուրջ առկա գնահատականները: Երեք տասնամյակի ընթացքում օրագիրը երկար ճանապարհ է անցել: Երկու անգամ հայերեն (բնագիր արևմտահայերեն և արևելահայերեն) հրատարակվելուց հետո օրագիրը մինչև օրս աշխարհին ներկայացել է յոթ լեզուներով, որոնց շտրիիվ այն Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված աղբյուրների մեջ հայտնի է դարձել որպես ամենից շատ թարգմանված գործերից մեկը:

Հոդվածում բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի մասին կարծիքներ են մեջբերվում փորձագետների գրախոսականներից, նամակներից և ելույթներից: Դրանց մեջ գլխավորապես նշվում է օրագրի բացառիկ արժեքը՝ որպես պատմական փաստաթուղթ և սկզբնաղբյուր: Հաճախ է շեշտվել նաև օրագրի գրական արժեքը, սակայն այդ տեսանկյունից երբեք չի վերլուծվել: Նման փորձ՝ օրագրից ընտրած երկու հատվածի հիման վրա, առաջին անգամ կատարում է հոդվածի հեղինակը՝ ի հայտ բերելով գրող Կարապետ Խաչերյանի հատուկ կարողությունը՝ կիրառելու գրական հնարքներ և վարպետորեն օգտագործելու հայոց լեզվի հարուստ բառապաշարն ու բառաձևերը:

Բանալի բառեր՝ օրագիր, բնագիր, ձեռագիր, թարգմանություն, վավերագրություն, սկզբնաղբյուր, փաստաթուղթ, գրական գործ, գրականագիտական վերլուծություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 15.01.2023: Ընդունվել է տպագրության՝ 02.05.2023:
The article was submitted on 15.01.2023 and accepted for publication on 02.05.2023.
Статья поступила 15.01.2023 и была принята к публикации 02.05.2023.

Ինչպես հղել՝ Դորա Գ. Սաքայան, «Փաստաթուղթ, թե՛ գրական գործ. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը Զմյուռնիայի աղետի մասին (խորհրդածություններ գրախոսականների և օրագրի գրականագիտական արժեքների շուրջ)», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 35-49:

How to cite: Dora G. Sakayan, “Document or Literary Work? Doctor Karapet Hatcherian’s Diary about the Smyrna Disaster (Reflections on Reviews and Literary Values of the Diary),” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 35-49.

Как ссылаться: Дора Г. Сакаян “Документ или литературное произведение? Дневник доктора Карапета Хачеряна о катастрофе в Смирне (размышления об отзывах и о литературных ценностях дневника),” *Цехаспанагитакан андес* 11, no. 1 (2023), 35-49.

Նախաբան

Զմյուռնիայի աղետի 100-ամյա տարելիցի օրերին հաճախ է հիշատակվում մեծ հորս՝ բժիշկ Կարապետ Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» վերնագրով օրագիրը, որն այժմ նույնպես 100 տարվա պատմություն ունի: Որպես այդ օրագրի հայտնաբերման, հրատարակման և տարածման պատասխանատու անձ՝ պարտքս եմ համարում, նախքան բուն նյութին անցնելը, մի փոքրիկ հաշվետվություն տալ այն մասին, թե ինչ ճանապարհ է անցել այդ կարևոր ձեռագիրը իմ ձեռքն անցնելուց հետո:

Օրագրի գոյության մասին տեղեկացել եմ բավական ուշ՝ 1992 թ., իսկ ձեռագրի պատճենը հասել է ինձ մեկ տարի անց, այսինքն՝ 30 տարի առաջ¹: Գնահատելով օրագրի պատմական արժեքը և գիտակցելով, որ այն միայն մեր ընտանիքին չի պատկանում՝ ես անմիջապես ձեռնամուխ եղա ձեռագրի ամբողջական վերծանման և արևմտահայերեն բնագրի հրատարակման գործին: Պատրաստեցի վերլուծական մի ներածություն, ինչպես նաև Կարապետ Խաչերյանի կենսագրությունը՝ օգտվելով նրա ծննդավայր Պարտիզակի մասին առկա հայրենական գրականությունից²:

Օրագիրը լույս տեսավ բազմաթիվ լեզուներով՝ արևմտահայերեն ու արևելահայերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, հունարեն, թուրքերեն և ռուսերեն, գերմաներեն³: Այդկերպ այն դարձավ Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական գործերի մեջ ամենից շատ թարգմանված գրքերից մեկը:

Օրագրի անգլերեն տարբերակն աչքի ընկավ նաև գրախոսականների ամենամեծ թվով, որոնք, սկսած 1997 թվականից, իրար հետևից լույս տեսան կանադահայ և ամերիկահայ լրատվամիջոցներում: Ամենից ողջունելին, սակայն, մի գրախոսական էր, որ տպված էր Մոնրեալի «The Gazette» անգլալեզու օրաթերթում: Այնտեղ՝ «Գրքեր» բաժնում (Section “Books”), մի ծավալուն հոդված էր տեղադրել ու բավականին «հանդուգ» խոսքեր էր ասում հայտնի կանադացի գրող և լրագրող Էլեն Քելման Նեյվալ (Elaine Kalman Naves): Երջանիկ պատահականությամբ այդ հրաշալի հոդվածը լույս տեսավ 1997 թ. հոկտեմբերի 4-ին՝ «Chapters» գրախոսություն տեղի ունեցած աղմկալի շնորհանդեսին հաջորդող օրը: Ահա դրա վերնագիրը՝ «Մեծարանք մեծ հայրիկին՝ գիրքը հավերժության հանձնելու միտումով... Ջարդերի ականատեսի վկայություններն արձանագրված»: Ստորև բերում եմ այդ գրախոսությունից երկու կարճ պարբերություն:

«Զմյուռնիայի ջարդերը տեղի ունեցան 1915 թ. մեծ ողբերգությունից յոթ տարի անց, երբ մեկուկես միլիոնից ավելի հայեր կոտորվեցին

1 Օրագրի՝ ձեռքս անցնելու հանգամանքներն ավելի մանրամասնորեն ներկայացրել եմ և՛ հայերեն, և՛ այլալեզու հրատարակությունների ներածությունների մեջ:

2 Ասատուր Մակարեան, *Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու* (Սելանիկ, տպ. Հորիզոն օրաթերթի, 1929), Գրիգոր Մխալեան, *Պարտիզակն ու պարտիզակցին* (Գահիրե, Սահակ-Մեսրոպ, 1938), Յակոբ Տէր-Յակոբեան, *Պարտիզակը խառնուտիկ* (Փարիզ, Յակոբ Տէր-Հակոբեան, 1960):

3 Հրատարակությունների ցանկը տես. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%B8%D6%80%D5%A1%D5%8D%D5%A1%D6%84%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6>

կամ սովամահ եղան, մինչ վտարվում էին Թուրքիայից: Այդ երևույթը այժմ դիտվում է որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Ասում են, որ աշխարհի լռությունն ու անտարբերությունն ի դեմս այս ոճրագործությունների խրախուսել է Ադոլֆ Հիտլերին, երբ վերջինս ծրագրում էր հրեաների հարցի վերջնական լուծումը»:

«Նրա գրքի հզորությունը գալիս է զսպաստության և պարզության մեջ է: Ինչպես վերապրողների բոլոր վկայությունները, գիրքը մատուցում է հազարավոր չգրված պատմություններ: Հարություն տալով բժիշկ Խաչերյանի օրագրին՝ Սաքայանը պատկերում է ոչ միայն տանջանքի ու կորստի, այլև պայքարի և վերածննդի մի ամբողջ աշխարհ: Նա նաև սիրո տուրք է մատուցում իր պաշտելի պապիկին և իր ժողովրդին»⁴:

Հիշողությանս մեջ անջնջելի է մնացել մի կարևոր հավաքույթ-շնորհանդես, որը տեղի ունեցավ Երևանում Մեծ եղեռնի 90-րդ տարելիցի կապակցությամբ ձեռնարկվող միջոցառումների շարքում Հայաստանի գրողների տանը: Շնորհանդեսը 2005 թ. ապրիլի 27-ին կազմակերպել էին Հայաստանի գրողների միությունը (ՀԳՄ) և ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Հայտնի գերմանացի ցեղասպանագետ Թեաս Հոֆմանի և մեծ թվով հայ գրողների ներկայությամբ առաջին անգամ ներկայացվեցին բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի հրատարակությունները միանգամից երեք լեզվով՝ թուրքերեն, ռուսերեն և արևելահայերեն փոխադրությունը:

Գրողների տանը մեծ նշանակություն տրվեց ներկայացվող թուրքերեն տարբերակին, որը նոր էր լույս տեսել Թուրքիայում և արժանացել հանրության անսխալադեպ ընդունելությանը: Դրա մասին ես տեղեկացա մեր հայրենակցից՝ արժանահիշատակ Հրանտ Դինքից, որ մի քանի օր առաջ ծամանել էր Երևան՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցին նվիրված միջազգային երկօրյա համաժողովին: Ես գիտեի, թե որքան բարձր էր Հրանտ Դինքը գնահատում Կարապետ Խաչերյանի օրագիրը: Մինչ այդ մենք նամակներ էինք գրում իրար, և ես փոստով նրան ուղարկել էի օրագրի առաջին հրատարակությունները: Երբ մենք համաժողովի օրերին հանդիպեցինք, նա շտապեց ինձ աչքալուսանք տալ՝ ասելով. «Ձեր մեծ հոր օրագիրը Թուրքիոյ մէջ տաք հացի պէս կ'երթայ»: Ավանդ, դա մեր առաջին ու վերջին հանդիպումն էր:

Հայտնի է, որ Կարապետ Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» օրագիրը պատմաբանները և այլ մտավորականներ համարում են կարևոր փաստաթուղթ: Որպես Զմյուռնիայի աղետի վերաբերյալ հավաստի և իր տեսակի մեջ միակ, այսօր օրագիրը Զմյուռնիայի աղետի պատմության համար առաջնային և կարևոր սկզբնաղբյուր

4 Տե՛ս Elaine Kalman Naves-ի ամբողջ գրախոսականի թարգմանությունը անգլերենից արևելահայերենի. Դորա Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* (Երևան, ՀՅԹԻ, 2005), 149-152:

է: Եղել են շատ գրախոսողներ, բայց բնականաբար ես եմ առաջինն այն մանրակրիտ վերլուծել անդրանիկ հրատարակության ներածության մեջ: Ամենուրեք ընթերցողի ուշադրությունը հրավիրել եմ Կարապետ Խաչերյանի արձակ գրվածքի դասական ոճի վրա, որի մեջ գերիշխում է հեղինակի՝ որպես պայծառ մտքի և լայն հորիզոնի տեր մտավորականի ուղղադատությունը և անաչառությունը: Օրագրի դրվագները հակիրճ փաստագրություններ են և հաճախ կարդացվում են որպես բժշկական գեկույցներ կամ օրաթերթի հոդվածներ՝ հավաստիություն ներշնչելով ընթերցողներին: Ականատեսի նրա վկայությունները հաճախ են ներածվում «տեսնում եմ», «նկատում եմ», «լսում եմ» և նման այլ արտահայտություններով:

Գրախոսողները հատկապես գնահատում են օրագրի մեջ բերված տվյալների համընկնումը Զմյուռնիայի աղետի վերաբերյալ գոյություն ունեցող գրականության և հատկապես Ռենե Պյուոյի⁵, Ջորջ Հորթոնի⁶ և Մարջորի Հուսեփյանի⁷ գործերի հետ: Դեռ ավելին՝ Կարապետ Խաչերյանի օրագրի մեջ այդ հեղինակների գրքերի մեջ բերված տեղեկությունները էլ ավելի են մասնավորվում իրենց անձնատմություններով, տեղանուններով և կարևոր դեպքերի ժամանակագրություններով: Այդ իմաստով օրագրի մասին հատուկ գնահատանքով է խոսում Մարջորի Դոբկին Հուսեփյանը իր ծավալուն նամակում, որտեղ նա ինձ մասնավորապես գրում է. «Այս գիրքը անկասկած շատ կարևոր փաստաթուղթ է: Շնորհավորում եմ Ձեզ և ինձ համար պատիվ եմ համարում, որ այժմ Ձեր մեծ հոր օրագրի նման առաջնային աղբյուրը հաստատում է այն ամենը, ինչ ես էի իմ գրքի համար հայթայթել այստեղից այնտեղից: ... Շնորհակալ եմ այն հսկայական աշխատանքի համար, որ ստանձնել էք այս անգին աղբյուրը թարգմանելու, ինչպես նաև մանրակրկիտ կերպով մշակելու ու փաստերով հիմնավորելու ուղղությամբ»⁸:

Իր նամակում Մարջորի Հուսեփյանն ինձ հայտնում է, թե ինչպես է նա ոգևորվել, երբ բժիշկ Խաչերյանի օրագրում գտել է բազմաթիվ ծանոթ անուններ: Իր խոսքերով՝ այնտեղ նրա համար լուսաբանվել են շատ առեղծվածներ: Նշանակալից է, որ, բացի այն, որ նա որոշ անմիջական տեղեկություններ է ստացել իր ազգական Զարեհ Քավեգյանի ու լավ բարեկամներ Նավասարդյան երեք քույրերի մասին, տիկին Հուսեփյանը օրագրի միջոցով իրազեկ է դարձել իր մայրական կողմի մեծ հոր՝ Գրիգոր Աշճյանի մահվան մանրամասներին: Վերջինիս թուրքերը սպանել են այն պահին, երբ փրկարար նավին հասնելու համար մնացել էր մի քանի մետր: Ահա թե ինչ է գրում ինձ Մարջորին. «Ես երբեք մեծ հորս չեմ ճանաչել. ո՛չ էլ ինձ երբևէ, առանց ինքս պրպտելու, որևէ մեկն ասել է, թե ինչ է նրա հետ պատահել, իսկ մայրս դժվարանում

5 Stéu René Puaux, *Les derniers jours de Smyrne* (Paris, 1923).

6 Stéu George Horton, *The Blight of Asia. An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers; with a True Story of the Burning of Smyrna* (Indianapolis, 1926).

7 Stéu Housepian Dobkin, *Smyrna 1922. The Destruction of a City*.

8 Մարջորի Հուսեփյան-Դոբկինի ինձ ուղղված ամբողջ նամակի թարգմանությունը անգլերենից արևելահայերենի՝ Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 164-168:

էր ասել, թե ինչպես է եղել իր հոր վախճանը, քանի որ մորս համար շատ դժվար է եղել խոսել հոր կյանքի վերջավորության մասին: ...Երբ Ձեր պապիկի օրագրի էջերում հանդիպեցի մեծ հորս և տեղեկացա, որ նրանք ընկերներ են եղել, մեծ հայրս զարմանալիորեն կարծես ինձ համար վերակենդանացավ»⁹:

Ստորև ներկայացնում եմ հատվածներ բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի վերաբերյալ փորձագետների գրախոսականներից, ելույթներից և կամ ինձ ուղղված նամակներից: Դրանք բոլորը վկայում են, որ Խաչերյանի օրագրի վերաբերյալ փորձագետները համակարծիք են. օրագիրն ունի փաստաթղթային արժեք:

Թեսսա Հոֆմանն. «Այս օրագիրն ականատեսի կարևորագույն գեկույց է, և ինչպես ֆրանսիացիներն են ասում, un document humain, այսինքն՝ մարդկային մի վկայություն տասնամյակներ շարունակ անպատիժ մնացած ցեղասպանությունների վերջին փուլի մասին»¹⁰:

Վերժինե Սվազլյան. «Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը հատուկ փաստագրական-պատմական արժեք ունի, քանի որ այն անգնահատելի պատկերացում է տալիս Չմյոտնիայի աղետի արհավիրքի մասին՝ հենց վերապրողի տեսանկյունից՝ փաստագրված օրը օրին և ժամը ժամին: ...Իմ կարծիքով՝ նրա բանտարկության հինգ օրերի 20-էջանոց նկարագրությունը պատմության համար ամենանշանակալիցն է»¹¹:

Վահագն Տադրյան. «Հիացումով հաստատեցի ճշմարտությունը նախաբանիդ մեջ արտայայտած այն դատումներով, որ մեծ հայրդ ունի «չափի գզացում», եւ որ հոգեկան ծայրահեղություններու նկարագրման ժամանակ ալ, գերադրականներն ու չափազանցությունները խիստ սակաւ են, ...անոր խօսքը զուսպ է եւ հետեւաբար համոզիչ ու արժանահատ: Շատ տեղին քննադատումներ: Այս իմաստով օրագիրն ունի թէ՛ գրական և թէ՛ պատմագրական արժեք: Հայերէնի 18-րդ եւ 26-րդ էջերէն անգամ մը ևս կը հաստատուի, որ թուրքերն էին, որ հրկիզեցին Չմիտնիան»¹²:

Ռիչարդ Հովհաննիսյան. «Դա բացառիկ մի փաստաթուղթ է՝ լի խիստ արժեքավոր տեղեկություններով. դրա արժեքը ավելի է մեծանում նրանով, որ նրա մեջ ողբերգական եղելությունները նկարագրվում են մեղմացող և նույնիսկ դեպքերի ուժգնությունը նսեմացնող գույներով»¹³:

Արքեպիսկոպոս Յակովոս. «Սա Չմյոտնիայի մասին միակ օրագիրն է, որով դուք՝ հայերդ, կարող եք հպարտանալ, և այժմ [օրագրի հունարեն հրատարակությունից հետո – Դ. Ս.] մենք՝ հույներս էլ կարող ենք Ձեզ միանալ: Դեպքերը վերապրող Խաչերյանը անաչառությամբ, բայց և ցնցող մանրամասներով նկարագրում է այն մեծ

9 Նույն տեղում, 168:

10 *Թեսսա Հոֆմանն* (Tessa Hofmann), գերմանացի գիտնական, ցեղասպանագետ, սոցիոլոգ: Հատված 2005 թ. ապրիլի 27-ին՝ Հայաստանի գրողների տանը կայացած շտրիսհալտսին իր ունեցած ելույթից:

11 *Վերժինե Սվազլյան*, հայ բանագետ, ցեղասպանագետ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր:

12 *Վահագն Տադրյան* (Vahagn Dadrian), ամերիկահայ սոցիոլոգ, իրավագետ, պատմաբան, ցեղասպանագետ: Հատված փոստով ինձ առաքած բացիկից, հոկտ. 30, 1997:

13 *Ռիչարդ Հովհաննիսյան* (Richard Hovannisian), ամերիկահայ պատմաբան: Հատված փոստով ինձ առաքած նամակից, հուլիս 15, 1997: Թարգմանությունը՝ անգլերենից:

ողբերգությունը, որ տարիներ անց ուրիշ գրողներ բազմիցս ջանացել են նկարագրել իր իսկական գույներով, բայց չեն կարողացել...»¹⁴:

Իոաննիս Իսախոտիս. «Անչափ գոհ եմ, որ այժմ իմ մայրենի լեզվով էլ լույս տեսավ այս արժեքավոր և իր տեսակի մեջ միակ պատմական վկայությունը, և սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ որպես հրատարակչի և խմբագրի: Համոզված եմ, որ հույն հասարակությունն ամենուր մեծ ոգևորությամբ է ընդունելու փաստաթղթի արժեք ունեցող և միաժամանակ մեծ հետաքրքրությամբ ընթերցվող այս գիրքը»¹⁵:

Յուստինի Տրանգույի. «Կ. Իսաչեռյանի օրագիրը կատարյալ վավերագրություն է այն մասին, թե ինչպես մի քաղաք ենթարկվեց վայրագության, տմարդության և ապա՝ կործանման: Նա [Իսաչեռյանը – Դ. Ս.] հազվագյուտ մարդկանցից է, որոնց հաջողվել է նախ փրկվել և ապա նկարագրել այն եղերական օրերը, երբ հույներն ու հայերը գերբնական ճիգեր էին գործադրում՝ ազատվելու այդ անիծյալ վայրերից ու ապաստանելու «Ավետյաց երկրում», որը նրանց համար Հունաստանն էր»¹⁶:

Թեդ Վիտաս. «Նոր էի սկսել Չմյունիայի աղետի պատմությանը ծանոթանալ Marjorie Housepian Dobkin-ի գրքից, երբ AHEPA-ի (American Hellenic Educational Progressive Association) միջոցով տեղեկացա նաև Սաքայանի գրքի մասին: Անմիջապես այն ձեռք բերեցի, և երկու գրքերի զուգահեռ ընթերցումն ինձ շատ օգնեց ամբողջացնել Չմյունիայի աղետի իրական պատկերը, քանի որ այդ երկու գրքերի մեջ գտա կանոնավոր համապատասխանություններ: Եթե Marjorie Housepian Dobkin-ի գիրքն ինձ ամբողջական գաղափար տվեց Չմյունիայի հարցի պատմության մասին, ապա Իսաչեռյանի ապրած օրերի նկարագրությունն ինձ տեղադրեց իրադարձությունների դաշտ: Վերջիններս ինձ այնքան իրական թվացին, կարծես թե ես էի դրանք ապրողը: Բոլոր նրանց համար, ովքեր ուզում են իսկապես հասկանալ Չմյունիայի աղետի դրդապատճառները, այդ օրերին դաշնակիցների վարքագիծը և մինչ օրս հունական մամուլում չպարզաբանված բազմաթիվ այլ հարցեր, շատ հանձնարարելի է, որ կարդան գոնե այս երկու հայ հեղինակների գրքերը»¹⁷:

Առանձնահատուկ էր օրագրի գերմաներեն թարգմանության ընդունելությունը: Այն լույս ընծայեց Ավստրիայի «Kitab» հրատարակչությունը 2006 թ. և ապա կրկին՝ 2012 թ.: Գիրքն անմիջապես տարածվեց գերմանախոս երկրներում: Իրար հաջոր-

14 *Արքեպիսկոպոս Յակովոս* (Archbishop Iakovos), Ամերիկայի հյուսիսային և հարավային թեմերի առաջնորդ: Հատված 2001 թ. դեկտեմբերի 1-ին ինձ առաքած նամակից: Թարգմանություն՝ հունարենից:

15 *Իոաննիս Իսախոտիս* (Ioannis Hassiotis), Սպունիկի Արիստոտելի անվան համալսարանի պրոֆեսոր: Հատված 2002 թ. մարտ 23-ին ինձ առաքած էլեկտրոնային նամակից: Թարգմանությունը՝ հունարենից:

16 *Յուստինի Տրանգույի* (Ιουστίνη Φραγγούλη), Մոնրեալում հայտնի հույն լրագրող: Հատված Կանադայում լույս տեսնող «Տախիդրոմոս» (Նամակաբեր) հունարեն ամսագրում տպագրված գրախոսականից, հոկտ. 25, 2001: Թարգմանությունը՝ հունարենից:

17 *Թեդ Վիտաս* (Ted Vittas), Ամերիկայի հելլենական կրթական առաջադեմ ընկերության՝ AHEPA-ի (American Hellenic Educational Progressive Association) նախագահ: Հատված 2002 թ. ապրիլի 7-ին էլեկտրոնային փոստով AHEPA-ի անդամներին ուղղած նամակից: Թարգմանությունը՝ անգլերենից: Տե՛ս Ted Vittas-ի ամբողջ նամակի թարգմանությունը անգլերենից արևելահայերենի տե՛ս Սաքայան, *Չմյունիս 1922. Բժիշկ Կարապետ Իսաչեռյանի օրագիրը*, 175-177:

դեցին օրագրի մասին դրական գրախոսականները, ինչպես նաև գրքից արտատպված հատվածների հրապարակումները գերմանագիր մամուլում: Իսկ համար ամենատրախալին այն փաստն է, որ Կարապետ Խաչերյանի անունն ու նրա կենսագրությունն անմիջապես տեղադրվեցին «BBKL»-ում, այսինքն՝ «Bautz»-ի գերմանական կենսամատենագիտական հանրագիտարանում, որն ընդգրկում է եկեղեցու պատմության, փիլիսոփայության և գրականության հետ առնչվող հանրահայտ անձանց կենսագրությունները¹⁸:

Դժվար է մեկ հոդվածում անդրադառնալ գերմանագիր պատմաբանների ու գիտնականների բոլոր հրապարակումներին: 2006 թ. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի գերմաներեն տարբերակի մասին ամենաձավալուն հոդվածը՝ 20 էջից բաղկացած մի գրքույկ, փաստորեն գրել է գերմանացի հայտնի հասարակագետ և հոգեբան, ինչպես նաև ցեղասպանագետ, դոկտոր, պրոֆեսոր Ռիխարդ Ալբրեխտը: Նա ողջունում է այն փաստը, որ Զմյուռնիայի ողջակիզմանը նվիրված երեք հիմնական գրքերն այժմ լրացվել են պատմագրական շատ կարևոր նշանակություն ունեցող՝ բժիշկ Խաչերյանի օրագրով¹⁹:

Քրիստինա Լանգգարտներ. «Որպես ականատեսի ժամանակագրություն՝ Կարապետ Խաչերյանի օրագիրը կարևոր փաստաթուղթ է, վկայություն, որ Թուրքիայում տեղի ունեցած իրադարձությունները հայերի հնարած պատմությունները չեն: Օրագիրը հայոց պատմության համար մեծ ներդրում է: Իր անհողող փաստականությամբ այս օրագիրը անցյալը փաստագրող կարևոր ազդակ է»²⁰:

Ռոբերտ Շեդիվի. «Ահա մի գիրք, որն այսօր էլ այժմեական է և խիստ քաղաքական. ականատեսի վկայությունն է հայ բժշկի, որը 1922-ին՝ հույն-թրքական պատերազմի ավարտին, վերապրել է Զմյուռնիայի գրավման և նրա քրիստոնյա բնակչության ոչնչացման ու արտաքսման ողբերգությունը: Խմբագիրը և թարգմանիչը նրա թոռնուհին է՝ գերմանագետ Դորա Սաքայանը, որի կյանքի ուղին Սելանիկից, Երևանից և Մոսկվայից հասել է Մոնրեալի ՄակԳիլ համալսարան, և որն իր պապի տպավորիչ կերպարին հիշատակի հուզիչ խոսքեր է նվիրաբերում: ...Կարապետ Խաչերյանը՝ 1922 թ. սեպտեմբերի 8-ի հունական զորքերի անկարգ դուրսբերումից հետո զանգվածային սպանությունների և քրիստոնեական թաղամասերի հրկիզման ականատեսը, հանդես է գալիս որպես անաչառ դիտորդ, որը հաղորդում է նաև «այրվող հողի» տակտիկայի մասին, որ արևմտյան Ասատուլիայում կիրառում էին նահանջող հույները»²¹:

18 BBKL – Biographisch-Bibliographisches Kirchenlexikon, Band XXVII, 2006 [Կենսամատենագիտական եկեղեցական բառարան, հատոր XXVII, 2006] <http://www.bautz.de/bbkl>, դիտվել է՝ 15.02.2023:

19 *Ռիխարդ Ալբրեխտ* (Richard Albrecht), «Dies hätte nie geschehen dürfen». Das Smyrna Tagebuch von Garabed Hatcherian [«Դա երբեք չպետք է տեղի ունենար». Զմյուռնիայի մասին Կարապետ Խաչերյանի օրագիրը] (München, GRIN Verlag, 2006), <https://www.grin.com/document/110255>, դիտվել է՝ 15.02.2023:

20 *Քրիստինա Լանգգարտներ* (Christina Langgartner), ավստրիացի իրավաբան-պատմաբան: Հատված Կ. Խաչերյանի օրագրի մասին գրախոսականից: Տե՛ս «Ավստրիական պատմության ինստիտուտի հաղորդումներ», հատոր 116, պրակ 1–2, 207–208:

21 *Ռոբերտ Շեդիվի* (Robert Schediwy), պրոֆեսոր, հասարակագետ և հրապարակախոս: Հատված

Հանս Ջաութեր. «Օրագրի տեքստը, որն առաջին անգամ է այստեղ հրատարակվում գերմաներենով, արժարժում է հարցեր, որոնք պատմությունից դասեր քաղելու առումով 80 տարի անց էլ արդիական են: Այսպես՝

- մեծ տերությունների դերը հակամարտությունների ժամանակ.
- լրատվական միջոցների վերաբերմունքն ու ազդեցությունը.
- փոքրամասնությունների պաշտպանությունը.
- կրոնի դերն ու գնահատումը.
- հարգանք մշակութային և սոցիալական արժեքների նկատմամբ.
- վերաբերմունք մերձավորների նկատմամբ»²²:

Բայց միթե փաստաթղթային իր բնույթով էլ սպառվում է Կարապետ Խաչերյանի օրագրի արժեքը: Ո՛չ, ամենևին: Գիտենք, որ շատ գրախոսողներ նկատել են նաև գրող Խաչերյանի խոսքի գեղարվեստական արտահայտչականությունը, բառերի և դարձվածքների ճիշտ ընտրությունը, նրա զուսպ, բայց և այնքան ազդեցիկ տոնը, որ «հափշտակում է ընթերցողին ու գամում նրան իր տեղում մինչև ընթերցումը վերջացնելը»²³:

ՄակԳիլ համալսարանի իմ գործընկերներից պրոֆեսոր Սոլոմոն Լիպը օրագրի ընթերցումից հետո ինձ ուղղած իր շնորհակալական նամակում զուգահեռներ է անցկացնում Կարապետ Խաչերյանի օրագրի և ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի հանրածանոթ ստեղծագործության միջև. «Կարդացի Ձեր *An Armenian Doctor in Turkey* հրաշալի գիրքը և տարվեցի նրա մանրամասներով ու ամբողջականությամբ: Ընթերցանությունը որքան գրավիչ, այնքան էլ սրտահույզ էր, և մտաբերեցի մի գիրք, որը կարդացել եմ մի քանի տասնամյակ առաջ: Դա Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գիրքն է»²⁴: Ի դեպ, կան և այլ ընթերցողներ, որոնք Կարապետ Խաչերյանի օրագիրը համեմատել են Ֆրանց Վերֆելի գլուխգործոցի հետ:

Ուշագրավ է Քյոլնի համալսարանի նորագույն պատմության դոկտոր, պրոֆեսոր Սաբինե Մանգոլդի՝ 2007 թ. մտքի թռիչքը, երբ նա գրում է. «Ինչպես հնում Այնեսարը (Aineias) իր հոր հետ այրվող Տրոյայից, այնպես էլ Կարապետ Խաչերյանը փախչում էր Մուստաֆա Քեմալի ազգայնամուլ ջոկատների կողմից զավթված Զմյուռնիայից՝ դուստրերից մեկին գրկած: Դա հալածյալ գաղթականի կատարյալ տիպարն է, որ գրականության մեջ այս անգամ ներկայանում է հայ բժշկի կերպարով, որը փախչում

գրախոսականից, որը լույս է տեսել 2006 թ. «Bücherschau»-ում («Bücherschau»-ն լրատվամիջոցների ու գրադարանների համար գրախոսականների գերմանական կայքէջ է) <https://www.muenschner-buecherschau.de/>, դիտվել է՝ 15.02.2023:

22 Հանս Ջաութեր (Hanns Sauter), պատմաբան, գրախոս. հատված գրախոսականից BN-ում (Online-Bibliotheksnachrichten) [Առցանց գրադարանային նորություններ], 2006, <https://www.biblio.at/literatur/bn/bnonline.html>, դիտվել է՝ 18.02.2023:

23 Ted Vittas, *ibidem*.

24 Սոլոմոն Լիպ (Solomon Lipp), 1998 թ. հոկտ. 30-ին փոստով առաքված նամակից: Թարգմանությունը՝ անգլերենից:

է, մինչև նրան հաջողվում է հասնել ամերիկյան նավ և Թուրքիայից հեռանալ երբեք այլևս չվերադառնալու որոշումով»²⁵:

Հայ գրողների տանը 2005 թ. ապրիլի 27-ի շնորհանդեսի ժամանակ է, որ Կարապետ Խաչերյանի օրագիրը կարծես իր հարազատ միջավայրում էր քննարկվում: Ներկաները միաբերան նշեցին գրվածքի գրական արժանիքները: Ահա այդ արժևորման ամփոփումը՝ հրապարակախոս և լրագրող Մարգո Ղուկասյանի խոսքերով. «Իր այս առանձնահատուկ օրագրով բժիշկ Խաչերյանն իրեն որոշակիորեն հաստատել է որպես լիիրավ գրող»:

Այս բոլորով հանդերձ՝ օրագրի գրական արժեքը դեռևս երբեք չի քննարկվել, ոչ էլ վերլուծվել են նրա գրվածքի այն հատվածները, որոնք, ինչպես շեշտեց վերոհիշյալ շնորհանդեսի բացման խոսքում ՀԳՄ նախագահ Լևոն Անանյանը, «կարդացվում են որպես արվեստի գործ»²⁶:

Վերջերս նպատակադրված ձևով ես մեկ անգամ ևս սուզվեցի մեծ հորս օրագրի մեջ և մեկ անգամ ևս համոզվեցի, որ դա զարմանահրաշ մի գրություն է, քանի որ իր մեջ պարփակում է գրական թաքնված գանձեր: Եվ ահա թե ինչ գտա առաջին իսկ էջի վրա՝ առաջին իսկ պարբերության մեջ, որը, ինչպես ամեն նոր օրվա նկարագրություն, սկսվում է տվյալ օրվա, ամսաթվի և երբեմն էլ նույնիսկ տարեթվի նշումով: Այստեղ կարդում ենք՝ 1922, օգոստոսի 28, երկուշաբթի: Ի հակադրություն օրագրի մնացած էջերի, մեր աչքի առաջ մի պահ կարծես վարդագույն երանգներով մի շատ լավատեսական պատկեր է բացվում: Գործողության վայրը Չմյուռնիան է, որտեղ բժիշկ Խաչերյանը գոհունակությամբ է ամփոփում վերջին երեք տարում իր ձեռք բերած հաջողությունները Չմյուռնիայի հայոց հիվանդանոցում և քաղաքի հայկական համայնքում: Իր տիկնոջ՝ Էլիզայի, և իրենց մեկուկես տարեկան աղջկա՝ Վարդուհու հետ բժիշկ Խաչերյանը գտնվում է Չմյուռնիայի Չալկըճը Բաշը փողոցի իրենց ընդարձակ և հանգստավետ տան մեջ: Նրանք ուրախ են ու երջանիկ: Նրանց մյուս չորս զավակները՝ Խաչերեսը (13 տ.), Սիրարփին (11 տ.), այսինքն՝ մայրս, Գրիգորը (9 տ.) և Հովհաննեսը (7 տ.), իրենց հետ չեն, քանի որ նրանք, ինչպես ամեն ամառ, իրենց դպրոցական արձակուրդն անցկացնում են Չմյուռնիայից մոտ 80 կմ հյուսիսարևելքում գտնվող Ակ-Հիսար կոչվող գյուղաքաղաքում: Այնտեղ՝ իրենց կավածքում է բնակվում նրանց մայրական կողմի՝ Կոստանյանների բարեկեցիկ գերդաստանը, որը մեծ եկամուտներ է ստանում ձիթապտղի, թզի չրի ու չամչի արտադրությունից:

Եվ ահա այդ նույն օրագրի առաջին էջում, կարծես հատուկ դիտավորությամբ՝ որպես շարունակությունը իր չորս երեխաների անունների, մեծ հայրս թվարկում է անունները սիրելիների մի այլ խմբի: Դրանք Կոստանյան և Խաչերյան ընտանիքների անդամներն են՝ իր երեխաների մայրական և հայրական տատիկներն ու նրանց հարազատները: Կոստանյանները ակհիսարցի բնիկներ են, Խաչերյանները՝ պարտիզակցի եկվորներ: Ընթերցողը դեռ չգիտի, որ շուտով Ակ-Հիսարում գտնվող և՛

25 *Սաբինե Մանգոլդ* (Sabine Mangold), պրոֆեսոր, պատմաբան. հատված նրա գրախոսականից, *Das Historisch-politische Buch*, 55, 2007, 25 [Պատմաքաղաքական գիրք, հատոր 55, 2007, 25]:

26 Լևոն Անանյան, ՀԳՄ նախագահ (2001–2011):

Կոստանյաններից, և Իսաչեռյաններից տասը հարազատները պիտի նահատակվեն Ակ-Հիսար ներխուժող թուրք բանակի և տեղական ամբոխի կողմից: Օրագիրը գրելիս մեծհայրս դա գիտի, և ես ուզում եմ հավատալ, որ նա այստեղ որոշում է առանց բառերի ստեղծաբանել՝ կատարելով մի սրբազան պարտականություն: Օրը 1922 թ. օգոստոսի 28-ն է՝ Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնի երկուշաբթի օրը և, ինչպես հայտնի է, Հայ եկեղեցու տաղավար հինգ մեծ տոներին հաջորդող երկուշաբթի օրերը՝ ննջեցյալների հիշատակին նվիրված օրեր են, այսինքն՝ մեռելոց օրեր: Եվ ասես որպես հոգեհանգստյան աղոթք, «Տէր, ողորմե՛ս» կամ «Ռեքվիեմ», օրագրի հենց սկզբում մեծ հայրս մեկ առ մեկ հիշատակում է մեր ընտանիքի նահատակների անունները՝ նշելով իր ազգակցական կապը նրանց հետ: Եվ կարծես այստեղ մեծ հայրս ընթերցողին ևս կոչ է անում աղոթել նրա հետ զոհվածների հոգիների համար: Հնչում են մեկ առ մեկ զոհված Իսաչեռյանների անունները. *մայրս՝ Վարդենի, եղբայրս՝ Նշան, իր կինը՝ Արմենուհի, և որդին՝ Հովհաննես*: Հետո լավում են իր կնոջ հարազատներից՝ Կոստանյան ընտանիքից նահատակվածների անունները. *գոթանչս՝ Զարուհի Կոստանյան, իր քույրը՝ Գյուլիզար, գոթանչի երկու որդիներից Հակոբը, նրա կինը և զավակները*²⁷: Սրանք, ավանդ, այն տասը սիրելիներն են, որ ուշացել են և չեն կարողացել խուսափել թուրքի սրից: Այստեղ մի անգամ ևս անհրաժեշտ եմ համարում հիշատակել, որ մեծ հորս անմիջական հարազատները՝ այդ օրերին Ակ-Հիսարում գտնվող Իսաչեռյանները՝ մայրը, եղբայրը, եղբոր կինն ու նրանց որդին, Ակ-Հիսարի բնիկները չէին: Նրանք միայն չորս ամիս առաջ էին փրկվել իրենց ծննդավայր Պարտիզակում տեղի ունեցած ջարդերից և ապաստանել իրենց խնամիների՝ Ակ-Հիսարի կավածքում: Արժե հիշատակել, որ Պարտիզակից մազապուրծ եղած այդ ընտանիքի ողբերգական վախճանն Ակ-Հիսարում հաստատում է հայերի այն համոզմունքը, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում իրենց համար երբևէ թուրքի յաթաղանից փրկություն չկար:

Օրագրի առաջին պատկերը եզրափակվում է տագնապալի իրազեկությամբ. «Երեկոյան շշուկներ են տարածվում, թե թուրքերը հարձակում են գործել Աֆիոն Գարահիսարի ճակատում և փոքր հաջողության հասել»: Այդ պահից սկսվում են աղետալի օրերը Կարապետ Իսաչեռյանի ընտանիքի և ամբողջ հայ ու հույն բնակչության համար, որն իրեն ի վերջո գտնում է անելանելի վիճակում՝ «հրի, սրի և ջրի միջև»:

Օգոստոսի վերջին երկու-երեք օրերը շատ տագնապալից են, իսկ սեպտեմբերի 1-ին քաղաքը խուճապի է մատնված: Բոլոր շրջապատող վայրերից փախչող գաղթականները անանցանելի են դարձրել փողոցները: Բժիշկ Կարապետ Իսաչեռյանը խիստ մտահոգված է, բայց ընթերցողը միայն տողերի արանքում է ընկալում իր մտատանջությունը:

Հարց է ծագում. ինչո՞ւ է բժիշկ Իսաչեռյանն իր օրագրի առաջին էջում համատեղ թվարկում Ակ-Հիսարի իր բոլոր սիրելիների՝ թե՛ փրկված իր չորս զավակների և

²⁷ Կոստանյանների ավագ որդին՝ Կոստանը և նրա կինը կարողանում են ժամանակին Ակ-Հիսարից փախուստ տալ: Դրա մասին տե՛ս հոդվածի շարունակությունը:

թե՛ տասը զոհված հարազատների անունները: Ես վստահ եմ, որ դա Կարապետ Խաչերյանի գրական հնարքներից է: Ես դրանում համոզվեցի, երբ օրագրի սեպտեմբերի 1-ի գրառման մեջ կարդացի նրա մտահոգությունը քեմալականների առաջխաղացման մասին. «Տունին մեջ մենք ալ անհանգիստ եղած ենք և կը խորհինք միջոց մը գտնել մերինները ժամ առաջ մեր մոտ բերելու համար»²⁸:

Որոշակի չէ, թե ովքեր են «մերինները»: Համոզված եմ սակայն, որ նա նկատի ունի բոլոր հարազատներին՝ և՛ իր չորս զավակներին, և՛ մնացած տասին, որոնք այդ ժամանակ Ակ-Հիսարում էին: Նա թողնում է ընթերցողին կռահելու, թե իր չորս զավակները նույնպես որքան մոտ են եղել ոչնչացման վտանգին:

Վերջապես սեպտեմբերի 2-ի գրառման մեջ կարդում ենք. «Իրիկունը կայարան կ'երթամ, հրապարակը լեցուած է վիրաւոր զինուորներու ինքնաշարժերով... Սոմայի կառախումբը կը հասնի եւ մեծ ուրախութեամբ կը տեսնեն զաւակներուս վերադարձը ընկերակցութեամբ Կոստանի և իր կնոջ Մարիի: Աճապարանքով տուն կ'երթանք»²⁹: Մենք հետո տեղեկանում ենք, որ դա Ակ-Հիսարից Չմյոտնիա մեկնող վերջին գնացքներից էր:

Եթե երեխաների ավագ քեռի Կոստանն այդ օրը չմեկներ և իր նախաձեռնությամբ մեծհորս չորս երեխաներին էլ ինքնագլուխ Չմյոտնիա չտեղափոխեր, բժիշկ Խաչերյանը տասը զոհված հարազատների հետ պիտի կորցներ նաև իր երեխաներին: Այսինքն՝ մայրս և իր երեք եղբայրները հրաշքով են ազատվել թրքական ջարդերից:

Շատ են օրագրում հատվածները, որոնք ուշադրություն են գրավում իրենց հուզիչ նկարագրություններով, տրամաբանական հանգույցներով և դրանց գեղագիտական լուծումներով: Անդրադառնանք մեկ այլ շատ հուզիչ ու ցնցող հատվածի:

Քանի՞ մարդ այս աշխարհում կարող է ասել, որ ականա վկա է դարձել մանկամարդ կնոջ բռնաբարության՝ որպես ունկնդրող: Եվ եթե նույնիսկ նման մարդիկ լինեին, ո՞վ պիտի կարողանար մեկ էջի կամ մեկ պարբերության մեջ կատարյալ պատկերավորությամբ նկարագրել լսածը՝ այն էլ նման զսպվածությամբ, ինչպես բժիշկ Խաչերյանը: Ո՞ւմ պիտի հաջողվեր գտնել բառերն ու արտահայտչական միջոցները այդպես սրտահույզ ձևով ներկայացնելու դեռատի կնոջ ողբերգությունը, որը լլկվում է շուրջ տասներկու «թուրք բորենիներու կողմէ»՝ այն էլ մոր կամ սկեսրոջ և երեքից չորս տարեկան մանկան ներկայությամբ³⁰:

28 Տօքթ. Կարապետ Խաչերեան, *Զմիւռնիական արկածներս 1922-ին*, 3:

29 Նույն տեղում, 3-4:

30 «Կէս գիշերէն ետք, երբ մտածումներուս մէջ թաղուած էի, ուշադրութիւնս կը գրաւէ կնոջական ձայն մը աղերսական, որ վարի յարկէն կը լսուի: Ատոր կը խառնուի թուրք զինուորի մը ձայնը սպառնալից, յետոյ 3-4 տարեկան մանուկի մը ճիչը յալագին: Կինը՝ որու ձայնէն կը հասկցուի մանկամարդ կին մ'ըլլալը, կը խնդրէ զինուորէն, որ իր պատիւին խնայէ: Իսկ զինուորը սպառնագին կը հրամայէ, որ յանձնուի առանց ձայնի: Պզտիկը կը ճչէ: Կինը կը պաղատի, թուրքը անողոր կը մնայ: Կը լսուի նաև ձայնը տարիքոտ կնոջ մը, որ թուրքին գուրջ կ'ուզէ շարժել «պատիւը փատիշահինն է» ըսելով: Թուրքը պառտաին կը հրամայէ որ լռէ, եթէ չ'ուզեր անմիջապէս դիակի վերածուիլ: Պատարը կը լռէ: Մանուկը կը շարունակէ լալ: Թուրքը կը սպառնայ, եւ իր գագանային նպատակին հասած է արդէն, որչափ որ կարելի է հասկնալ քանի մը վայրկեան տեւող լռութենէն: Ատոր կը հաջորդէ ցաւատանց հառաչանք մը ու աղերսական աղաղակ մը, որ կը գոչէ «բաւական է այլես...»: Լլկուած կնոջ

Բժիշկ Խաչերյանն այստեղ ընտրել է թատրոնի բառապաշարը, նկարագրելու համար ահավոր ողբերգության սրտաճմլիկ դրվագները: Եվ վարագույրը բարձրանում ու իջնում է ամեն անգամ, երբ մի նոր թուրք զինվոր է «բեմ» խուժում ու գնում թշվառ որսի մոտ՝ իր գազանային կիրքը բավարարելու: Գրության հեղինակի հենարանն այստեղ բառամիջոցների տիրապետումն է, ինչպես նաև նրա հիանալի կարողությունը՝ իմաստավորելու փոփոխվող ձայների ու լռության հաջորդականությունը: Նա «շունչը բռնած» լսում է և ընթերցողին էլ պարզորոշ լսել է տալիս «կնոջական ձայնն աղերսական», «թուրք զինուորի մը ձայնը սպառնալից», «3-4 տարեկան մանուկի մը ճիչը լալագին», «ձայնը տարիքոտ կնոջ մը, որ թուրքին գուրթը կ'ուզէ շարժել»:

Այդ գարշելի իրականության մեջ լռությունն էլ է իմաստավորվում: Եվ կարդում ենք. «Թուրքը... իր գազանային նպատակին հասած է արդեն, որչափ որ կարելի է հասկնալ քանի մը վայրկեան տեւող լռութենէն»:

Հեղինակը սիրում է հակիրճությունը և վարպետորեն օգտագործում է մեծաքանակ հայոց լեզուն: Եվ երբ երկրորդ թուրք զինվորն է հայտնվում, ու պատկերը կրկնվում է, նա դիմում է լեզվական միջոցների ավելի խնայողական օգտագործման: Նկարագրական նախադասություններն այստեղ փոխարինվում են բայական գոյականներով կամ անվանական նախադասություններով: Այսպես. «Ողբերգական ներկայացումի մը վարագոյրը կը կրկնուի նոյնութեամբ. կնոջական պաղատանք, սպառնական աղաղակ, մանկական ճիչեր, ցաւագին հեծկլտութեւր, պառաւական միջամտութեան անօգուտ փորձեր»:

Եվ այսպես շարունակ, լսվում են նորանոր թուրք զինվորների ձայներ «մինչեւ արշալոյսի ծագումը, երբ կնոջ մարտիրոսութիւնը վերջ կը գտնէ»: Աստիճանաբար նվազում են նկարագրությունները, և հեղինակը հետևում է «Less is more» (Նվազը առավել է) մինիմալիստական կարգախոսին: Բայց ընթերցողի ականջն էլ արդեն զգայնացած է և ղյուրությամբ է հանգում իր եզրակացություններին:

Ուշագրավ է նաև վերոհիշյալ պարբերության հմուտ եզրափակումը, երբ «կը լսեմ» ներածականը փոխարինվում է «կը տեսնեմ»-ով: Այստեղ Խաչերյանն արդեն դեպքերի իրական ականատեսն է: Տեսնելու համար այն, ինչ տեսել է բժիշկ Խաչերյանը, բավական է կարդալ այդ սրտաճմլիկ պարբերության վերջին չորս տողը:

Այս օրագիրն անշուշտ դեռևս կարոտ է գրականագիտական ուսումնասիրության՝ նրա գեղարվեստական կատարելությունը բացահայտելու նպատակով:

լալագին աղաչանքն ու մանուկին սուր ճիչերն անգոր են թուրքին գազանային բնագորը մեղմացնելու: Ան իր ճանկերուն մէջ առած, պէտք է յազուրդ տայ իր մոլեգին զգացումներուն: Շունչս բռնած՝ կը հետելիմ տխուր ողբերգութեան մը յուզումնալից դրուագներուն, որոնց կը յաջորդէ խոր լռութիւն մը... Քառորդ մը հազիւ անցած է, երբ կը լսեմ ուրիշ թուրքի մը ձայնը թշուառ որսին քովէն: Ողբերգական ներկայացումի մը վարագոյրը կը կրկնուի նոյնութեամբ. կնոջական պաղատանք, սպառնական աղաղակ, մանկական ճիչեր, ցաւագին հեծկլտութեւր, պառաւական միջամտութեան անօգուտ փորձեր: Քիչ յետոյ երրորդ զինուորի մը ձայնը, եւ այսպէս շարունակ մինչեւ արշալոյսի ծագումը, երբ կնոջ մարտիրոսութիւնը վերջ կը գտնէ: Առաւօտ է, պահակ զինուորին հրամանով վար կ'իջնեն բնական պէտքի համար եւ կը տեսնեմ վարի յարկը քարերուն վրայ նստած մանկամարդ կին մը եւ պառաւ մը 3-4 տարեկան մանուկ մը գրկած: Պառաւը՝ որ այդ դժբախտ երիտասարդուհին մայրը կամ կետորն է, հանդիսատեսը կ'ըլլայ իր աղջկան կամ հարսին լլկումին երկոտասնեակ մը թուրք բորենիներու կողմէ»: Տե՛ս Տօթթ. Կարապետ Խաչերեան, *Ձմիւննիսկան արկածներս 1922-ին*, 31-32:

**DOCUMENT OR LITERARY WORK? KARAPET HATCHERIAN'S DIARY
ABOUT THE SMYRNA DISASTER
(Reflections on Reviews and Literary Values of the Diary)**

*Dora G. Sakayan
McGill University, Canada*

SUMMARY

The author of the article, who is the discoverer, publisher and distributor of Doctor Karapet Hatcherian's diary about the Smyrna disaster, revisits one more time this valuable writing. She first renders an account about the journey the diary has made since it passed into her hands 30 years ago. After being published twice in Armenian (in its Western Armenian original and in Eastern Armenian), the diary has been presented to the world in seven foreign languages, becoming known in the Armenian Genocide literature as one of the most translated works. Depending on the language, book presentations have been organized in different countries of the world where the book has had always a positive reception.

The article quotes opinions about Doctor Karapet Hatcherian's diary from expert reviews, letters and speeches. Among them, the exceptional value of the diary as a historical document and primary source of information is stressed. The literary value of the diary has been also often indicated, but the writing has never been analyzed from that point of view. Such an experiment is performed here for the first time by the author of the present article, who based on the analysis of two passages from the diary, highlights writer Karapet Hatcherian's special artistic ability to apply various literary techniques of expressiveness, as well as to masterfully use the rich vocabulary and idioms of Armenian language.

Key words: diary, original, manuscript, translation, document, primary source, literary work, literary analysis.

**ДОКУМЕНТ ИЛИ ЛИТЕРАТУРНОЕ ПРОИЗВЕДЕНИЕ? ДНЕВНИК ДОКТОРА
КАРАПЕТА ХАЧЕРЯНА О КАТАСТРОФЕ В СМИРНЕ
(размышления об отзывах и о литературных ценностях дневника)**

РЕЗЮМЕ

*Дора Г. Сакаян
Университет МакГилла, Канада*

Автор статьи, которая является первооткрывателем, издателем и распространителем дневника доктора Карапета Хачеряна о катастрофе в Смирне, по-новому пересматривает это ценное произведение. Сначала она указывает на путь, пройденный дневником с тех

пор, как он попал ей в руки 30 лет назад. Изданный дважды на армянском языке (на западноармянском оригинале и на восточноармянском варианте языка), дневник был переведен и представлен миру на семи иностранных языках, чем он в литературе, посвященной истории Геноцида армян, стал известен как одно из наиболее часто переведенных произведений. В зависимости от языка, презентации книг были организованы в разных странах мира, где дневник был всегда встречен с большим энтузиазмом.

В статье приводятся мнения о дневнике доктора Карапета Хачеряна из экспертных обзоров, писем и выступлений. В них подчеркивается исключительная ценность дневника как исторического документа и первоисточника. Нередко указывается и литературная ценность работы, но с этой точки зрения дневник никогда не подвергался анализу. Подобный эксперимент впервые проводится в настоящей статье, где на основе анализа двух отрывков из дневника автор статьи указывает на особое художественное умение писателя Карапета Хачеряна применять литературные приемы выразительности, а также умело использовать богатый словарный запас и идиомы армянского языка.

REFERENCES

Makaryan, Asatur. *Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու* [Memory Book of the Armenian Colonies of Thrace and Macedonia]. Selanik: Horizon, 1929;

Mkhalean, Grigor. *Պարտիզակն ու պարտիզակցին* [Partizak and partizakts'i]. Cairo: Sahak-Mesrop, 1938;

Ter-Hakobean, Hakob. *Պարտիզակը խառնուտիկ* [Partizak Dandelion]. Paris: Ter-Hakobean Hakob, 1960;

Տօրթ. Կարապետ Խաչերեանի օրագիրը՝ *Զմյուռնիական արկածներու 1922-ին* [Doctor Hatcherian's Diary. My Smyrna Ordeal of 1922]. Montreal, 1995.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Դորա Գ. Սաքայան, բանասիրական գիտությունների թեկնածու, լեզվաբան, գերմանագետ, հայագետ, ՄաքԳիլ համալսարանի թոշակառու պրոֆեսոր, ԵՊՀ պատվավոր դոկտոր:

Ուսումնասիրությունների ոլորտը՝ զուգադրական լեզվաբանություն, օտար լեզուների դասավանդում, թարգմանության տեսություն:

Էլ. փոստի հասցե՝ Dora.sakayan@mcgill.ca

Dora G. Sakayan, PhD in Philology, linguist, Germanologist, Armenologist, retired professor of McGill University, honorary professor of Yerevan State University.

Research fields – comparative linguistics, teaching foreign languages, translation theory.

E-mail: Dora.sakayan@mcgill.ca

Дора Г. Сакаян, кандидат филологических наук, лингвист, германист, арменовед, профессор Университета МакГилла на пенсии, почетный профессор Ереванского государственного университета.

Область исследований – сравнительное языкознание, преподавание иностранных языков, теория перевода.

Эл. почта: Dora.sakayan@mcgill.ca

ԶՄԻՒՆԻԱՅԻ ԱՂԷՏԸ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՅՈՒՇԵՐՈՒՄ

Արծուի Հ. Բախչինյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

1922 թ. Զմիռնիայի աղէտի վերաբերեալ բազմազան վկայութիւններ առկայ են նաեւ հայ թատերական յուշագրական գրականութեան մէջ: Հետաքրքիր զուգադիպութեամբ՝ քաղաքում այդ աղէտալի իրադարձութեան ժամանակ գտնուել են արեւելահայ թատրոնի գործիչներ, որոնք եւ որոնց ժառանգներն իրենց յուշագրութիւններում «առաջին աղբիւրից» գրաւոր վկայութիւններ են թողել աղէտի մասին: Արեւելահայ բեմի առնուազն վեց գործիչ ականատես է եղել եւ վերապրել Զմիռնիայի աղէտը: Նրանց յայտնուելն օսմանեան այդ նաւահանգստային քաղաքում պատահական էր, սակայն ոչ անսպասելի. հայ մշակոյթի կենտրոններից մէկը՝ Զմիռնիան, միշտ ունեցել է այցելու հայ մտատրականներ եւ արուեստագէտներ: Անսպասելի թերեւս հայ դերասանների որպէս ռուսահպատակ ներկայանալու իրողութիւնն է, որի շնորհիւ էլ նրանք ազատուել են մահից:

Սոյն հրապարակման մէջ ներկայացուած են այդ յուշագրութիւնների համապատասխան հատուածները՝ Հայկ եւ Էմմա Արծիւների «Աշխարհով մեկ» (Երեւան, 1964), Մարիկա Աբելեանի «Իմ հօր՝ Յովհաննէս Աբելեանի մասին» (Երեւան, 2000, ռուսերէն) եւ Եւգենեա Արիստակեանի «Յուշեր գաղութահայ կեանքից» (Կահիրէ, 2019) հատորներից: Բոլոր յուշագիրներն էլ հաստատում են ծանօթ իրողութիւնները՝ հայերի եւ յոյների յուսահատ ինքնապաշտպանութիւնը, թուրքերի՝ հայկական թաղի թալանն ու հրկիզումը, օտարերկրեայ նաւերի դեկավարների՝ աղքատ աղէտեալներին փրկութիւնը մերժելը, մինչդեռ հարուստներին դրամով ընդունելը եւ այլն:

Թէեւ այդ յուշագրութիւններն արդէն հրատարակուած են, սակայն լինելով ոչ այնքան դիրամատչելի (եւ անծանօթ), անելորդ չէ դրանց վերարձարծումը սոյն համարնագրում՝ մատչելի դարձնելու համար պատմաբաններին եւ ցեղասպանագէտներին եւ լրացուցիչ մանրամասներ հաղորդելու տուեալ իրադարձութեան վերաբերեալ:

Բանալի բառեր՝ Զմիռնիայի աղէտ, արեւելահայ դերասաններ, ականատեսի վկայութիւններ, Յովհաննէս Աբելեան, Եւգենեա Արիստակեան, Սուրաբեաններ, Հայկ Արծիւ:

Հոդվածը ներկայացվել է՝ 10.12.2022: Ընդունվել է տպագրության՝ 05.02.2023:

The article was submitted on 10.12.2022 and accepted for publication on 05.02.2023.

Статья поступила 10.12.2022 и была принята к публикации 05.02.2023.

Ինչպէս հղել՝ Արծուի Հ. Բախչինյան, «Զմիռնիայի աղէտը հայ դերասանների յուշերում», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 50-61:

How to cite: Artsvi H. Bakhchinyan, “Smyrna Catastrophe in the Memoirs of Armenian Actors” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 50-61.

Как сослаться: Арцви Г. Бахчинян, “Смирнская катастрофа в воспоминаниях армянских актеров,” *Цехаспаназитакан андес* 11, no. 1 (2023), 50-61.

Ներածություն

1922 թ. Ջմիռնիայի աղետի վերաբերեալ վկայությունները բազմազան են: Դրանք թողել են ամենատարբեր մարդիկ՝ սկսած այդ տարիներին ամերիկեան մամուլի թղթակից Էռնեստ Հեմինգուեյից մինչև բազմաթիվ շարքային վերապրածներ: Սակայն անսպասելի էր այդ իրադարձության վերաբերեալ առաջին աղբիւրի վկայություններ գտնել հայ թատերական յուզագրական գրականության մէջ: Հետաքրքիր զուգադիպություններ՝ Ջմիռնիայի աղետի ժամանակ քաղաքում են գտնուել արեւելահայ թատրոնի որոշ գործիչներ, որոնք եւ որոնց ժառանգներն իրենց յուզագրություններում նոյնպէս գրատր վկայություններ են թողել աղետի մասին:

Սոյն հրապարակման մէջ ներկայացնում ենք այդ յուզագրությունների համապատասխան հատուածները: Դրանք արդէն հրատարակուած են, երկուսը՝ Սփիւռքում, մէկը՝ 1960-ական թթ. Խորհրդային Հայաստանում, ասել է թէ՛ այնքան էլ դիրամատչելի չեն, ուստի եւ անլորդ չենք համարում դրանց վերաբժարծումը տուեալ համաբնագրում՝ մատչելի դարձնելով պատմաբաններին եւ ցեղասպանագէտներին:

Յովհաննէս Արեւեան

Ջմիռնիայի աղետի օրերին քաղաքում է գտնուել հայ բեմի ականաւոր դերասան Յովհաննէս Արեւեանը (1865–1936) հիւրախաղերի նպատակով: Ըստ նոյն քաղաքում գտնուող դերասան Հայկ Արծիւի՝ Արեւեանը Ջմիռնիայում մտադիր է եղել ներկայացնել ժամանակին տարածում գտած թատերախաղերից մէկը՝ Գ. Գէի «Տրիլբին», եւ ապա մեկնել Եւրոպա: Սակայն Արեւեանը Ջմիռնիայում հանդիպել է դժուարությունների, չի կարողացել գտնել անհրաժեշտ դերակատարների եւ մի կազմակերպություն, որ կարողանար իրացնել ներկայացման տոմսերը: Նրան օգնության է հասել Հայկ Արծիւն, որը գտել է դերակատարներ, եւ Արեւեանը «Տրիլբին» ներկայացրել է մեծ յաջողութեամբ¹:

Արեւեանի՝ Ջմիռնիայում ունեցած փորձառութեան մասին գրել է դերասանի դուստրը՝ Մարիկան, ինչպէս նաեւ իր անուշահամ յիշողություններում: Յուզագրությունն առաջին անգամ լոյս է տեսել 2000 թ., իսկ մեր հայերէն թարգմանութեամբ՝ լիբանանահայ մի ամսագրում, 2000-ական թթ. (ցաւօք, ամսագրի համարը մեր ձեռքին չէ):

Ստորեւ ներկայացնում ենք Մարիկա Արեւեանի յուզագրութեան՝ Ջմիռնիայի աղետի վերաբերեալ հատուածը.

«Հայրիկին հրաիւրեցին հիւրախաղերի Իգմիր (Ջմիռնիա): Ջմիռնիացի հայերը մեզ պատմեցին, թէ ինչպէս էր Արեւեանը կարօտում ընտանիքին: Այդ ժամանակ սկսուեց յոյների պատերազմը թուրքերի դէմ: Մենք ապրում էինք հիւրանոցում, որ գտնուում էր քաղաքի հայկական մասում՝ ասիից հեռու: Տեսնելով ամենքի եւ ամէն ինչի տարհանումը՝ մենք հասկացանք, որ քաղաքը վտանգի մէջ է, եւ որ շուտով թուրքերը

1 Հայկ Արծիւ, Էմմա Արծիւ, *Սջիսարհով մէկ* (Երևան, Հայպետհրատ, 1964), 27-28:

կը մտնեն: Եւ իսկապէս այդպէս էլ պատահեց: Այրում էր քաղաքի հայկական մասը, թորքերը ձերբակալում էին հայերին եւ յոյներին: Բոլոր մարդիկ ծովափ թափուեցին: Մեզ մնում էր հետեւել նրանց օրինակին եւ նոյնպէս դուրս վազել առանց իրերի՝ փրկելով միայն մեր կեանքը: ...Ծովափին բաբելոնեան խառնաշփոթ էր: Բոլորն օգնութիւն էին սպասում օտարերկրեայ նաւերից: Անսովոր մի գոռոց կար, երբեմն լսում էին իրենց գաւակներին կանչող մայրերի ձայները: Խեղճ ժողովուրդը մեջքին դրած տանում էր իր կարասիները, շատ փոքրիկ երեխաներին՝ լաթերի մեջ փաթաթած, հիւանդանոցից դուրս էին եկել խալաթաւոր հիւանդները եւ, ոտքերը հագլի շարժելով, գնում էին ամբոխի հետ. պատահում էին եւ կոյրեր, որոնք, ձեռքերը տարածելով, գնում էին ամբոխի միջով՝ չհասկանալով, թէ ինչ է կատարում: Իրենց այրուող հիւանդանոցները լքեցին նաեւ հոգեկան հիւանդները: Հարուստ հայերը եւ յոյները մեծ գումարներով բարձրանում էին նաւեր, որ մեկնելու էին Եւրոպայի տարբեր քաղաքներ. իսկ չքաւորներն ո՞ր գնային: Երբեմն աղջիկները լողում էին դէպի նաւերը, որ հերթի էին կանգնած: Զմիւռնիայի յոյն եւ հայ աղջիկները շատ լաւ էին լողում եւ կարող էին երկար մնալ ջրի վրայ: Նրանք լողալով մօտենում էին նաւերին եւ, բռնելով ճոպաններից, խնդրում էին նաւաստիներին տախտակամած բարձրացնել իրենց: Անխիղճ օտարերկրացիները կտրում էին ճոպանները, որպէսզի աղջիկները չկարողանան լողալ իրենց մօտ:

Մենք գնացինք այնտեղ, որտեղ կանգնած էին թորքական իշխանութիւնները՝ Քեմալ փաշայի ղեկավարութեամբ: Յոգնած, քաղցած՝ մենք սարսափելի տեսք ունէինք, սակայն գլխատորը չսկատուելու վախն էր: Մայրիկը հայրիկին մի գլուխ վալերիան էր տալիս, իսկ մենք գլխարկներն այնպէս էինք խոթել գլուխներս, որ մեր աչքերը չէին երեւում. դա նրա համար էր, որ ազատուէինք տեղական բաշիբոզուկներից, որոնք անօրինութիւններ էին կատարում, տանում էին աղջիկներին: Առաւօտուայ կողմ մենք սարսափելի պատկերի ակնատես եղանք: Թորքերի շտաբ էին բերում մերթ յոյների, մերթ հայերի, իսկ մեր կողքին տեղաւորուած էր մի հայ ընտանիք՝ ամուսինը, կինը եւ որդին: Ամուսինն ուսուցիչ էր: Յանկարծ նրան մօտեցան, բռնեցին եւ սկսեցին քարշ տալ դէպի շտաբ: Նա առանց երկար մտածելու դուրս պրծաւ, նետուեց ծովը եւ լողաց: Ժամապահները սկսեցին կրակել, եւ մի ակնթարթում ջուրը կարմրեց այդ խեղճ ուսուցչի արիւնից: Կնոջ եւ որդու աչքի առաջ նա սկսեց խեղդուել, իսկ նրանք նոյնիսկ լաց լինել չկարողացան՝ վախենալով ժամապահներից: Այդ տեսարանը ծանր ազդեց Արեւեանի վրայ: Նա նոյնիսկ ասաց. «Գնամ շտաբ եւ ասեմ, որ ես էլ հայ եմ»: Մայրիկը նրան հանգստացրեց եւ խնդրեց շեշտել այն, որ մենք պատահաբար ենք Զմիւռնիայում, որ մենք ռուսաստանցի դերասաններ ենք եւ այլն: Այդ ժամանակ մի ինքնաշարժ անցաւ, որտեղ նստած էր Քեմալ փաշան, որ ուշադիր նայեց մեզ: Դա գեղեցիկ, կամային դէմքով մարդ էր: Պէտք է որոշէինք ինչ ձեռնարկել: Հայրիկը որոշեց գնալ Քեմալ փաշայի մօտ: Մենք դուրսն էինք կանգնած եւ տեսնում էինք ամէն բան, որ կատարում էր շտաբի շէնքում: Ահա հայրիկը հանեց իր անգլիական գլխարկը, բարի աչքերը դարձրեց դէպի քաղաքի պարէտ Քեազիմ բէյը: Արեւեանը գերազանց էր խօսում թորքերէն: Ես վախով նայում էի իմ սիրելի հայրիկին եւ մտածում էի, որ

յանկարծ նրան էլ կարող են բռնել, ինչպես այն խեղճ ուսուցչին: Բայց տեսնում եմ, որ հայրիկը երկար խօսում է, իսկ այդ ժամանակ մի երիտասարդ հայուհի, գրկին երեխայ, մօտենում է սեղանին եւ ինչ-որ բան է ասում Քեազիմ բէյին: Սա հայրիկին թողթ է տալիս, եւ վերջինս դուրս է գալիս սենեակից: Մօտենալով մեզ՝ հայրիկն ասաց, որ մեզ օթեան են տալիս թուրքական հիրանոցում: Չմիտնիայում թուրքերն ապրում են սարի վրայ, եւ հրդեհն այնտեղ չէր հասնում. քաղաքի գրեթե ողջ թուրքական մասը չէր վնասուել: Հիրանոցում կեղտը սարսափելի էր, մեծ քանակությամբ լուեր կային, սակայն մեր դրութեան մէջ անյարմարութիւնները նկատելը չափազանց մեծ ճոխութիւն կը լինէր: Մեզ անձնագիր տուցին, որ մենք ռուս դերասաններ ենք, եւ մեր ազգանունն էլ ռուսական ձեռով էր՝ Արելով:

....Մենք որոշեցինք մեկնել Սալոնիկ:գնացինք փնտրելու Իտալիայի հիպատոսին, քանի որ նաւը, որով պիտի մեկնէինք, իտալական էր: Քանի որ քաղաքի եւրոպական մասն այրում էր, հիպատոսը նստել էր ծովի ափին եւ մուտքի արտօնագրեր էր տալիս:[Արելեանը] սկսեց պատմել, որ երբ նա կանգնած էր Քեազիմ բէյի մօտ եւ բացատրում էր նրան, որ մենք ռուսաստանցի դերասաններ ենք, որ պատահաբար ենք ընկել Չմիտնիա, հէնց այդ ժամանակ մի երիտասարդ հայուհի, մանկիկը ձեռքին, մօտեցել է սեղանին եւ ասել. «Այո՛, ես գիտեմ՝ նրանք ռուսներ են»: «Ահա ինչպիսի հերոսութեան է ընդունակ հայուհին»,– հիացած ասաց հայրիկը: Այդ հայուհին փրկում էր որպէս հայ բանտ նետուած ամուսնուն, սակայն նրա մէջ համարձակութիւն եղաւ օգնել հայրենակիցներին: «Այդ հայուհին իսկական Ժաննա դ'Արկ է»,– ասաց նա: Մեր կենսախիւղ տրամադրութիւնը յամենայն դէպս չկարողացաւ կոտրել Արելեանի տխրութիւնը, որին տանջում էր անարդարութեան մասին միտքը, թե բոլոր երկրների քաղաքագէտները, մեծ քաղաքականությամբ զբաղուելով, կործանում են փոքր ժողովուրդներին, իսկ եւրոպացիները նաւերից շարժանկարի նկարահանումներ են կատարում՝ փոխանակ օգնելու զոհուողներին: Թուրքահայերի ողբերգութիւնը չէր դադարում: Անսովոր խոր, զգայուն եւ բարի մարդ լինելով՝ նա չէր կարող պատկերացնել, որ քաղաքակիրթ եւրոպացիները կարող էին այդպէս դաժան վարուել յոյների եւ հայերի հետ՝ քաղաքը հեշտությամբ թողնելով փորձանքի մէջ եւ իրենց նաւերով հեռանալով»²:

Արիստակեաններ եւ Սուրաբեաններ

Բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ Ռուսաստանից Կ.Պոլիս տարագրուած ծնունդով թիֆլիսեցի թատերական-երաժշտական գործիչ, բեմադրիչ Գերասիմ Արիստակեանը (–1925) 1922 թ., ընտանեկան պարագաների բերումով, Կ.Պոլսից ընտանիքով մեկնել է Չմիտնիա թոքախտաւոր որդուն բուժելու նպատակով: Սակայն Արիստակեանները Չմիտնիայում ոչ միայն կորցրել են իրենց որդուն, այլեւ ականատես եղել քաղաքին պատուհասած աղէտին: Այս մասին իր յիշողութիւններում վկայել է Գերասիմ Արիստակեանի դուստրը՝ պարուհի, երաժիշտ Եւգենեա Արիստակեանը (1890–1970):

2 Марика Абелян, *О моем отце Ованесе Абеляне* (Ереван, Зангак-97, 2000), 27-31.

Այդ յուշերը հրատարակութեան ենք պատրաստել եւ հրատարակել Կահիրէում³ սահմանափակ տպաքանակով⁴:

1922 թ. օգոստոսին զմիտնիացի մի քանի հայ վաճառական, տեսնելով Եւզենեայի պարերը, նրան խնդրել է ելոյթներով հանդէս գալ Միտիլի կղզում: Արիստակեանը վկայել է. «Չնայած որ այնտեղ երկու-երեք հայ ընտանիք կար միմիայն, նրանք իրենց խոստումը լիովին կատարեցին, եւ կարող եմ ասել, որ դրանով փրկեցին եւ մեր կեանքը: Իզմիրի վրայ թուրքերի սկսած արշաւը քիչ վերջը ով գիտի մեզ ինչ դժուարութիւնների պիտի մատնէր, եթէ մենք եւս այնտեղ լինէինք:

...Ընթրիքից յետոյ մեզ հրաւիրող պարոնները կամաց նախագգուշացրին մայրս եւ ինձ, որպէսզի որքան կարելի է՝ շուտ մեկնենք Աթէնք, առանց Իզմիր իջնելու, որովհետև ստացած վերջին լուրի համաձայն, տաճիկ զօրքերը Իզմիր մտնելու մօտ են: Մենք միւս առաւօտ իսկ մեկնեցինք՝ հեռագրելով հօրս, որ նա միանայ մեզ Իզմիրի նաւահանգիստում:

Երբէք չեմ մոռանայ այն տեսարանը, որ պատկերացաւ մեզ նաւը Իզմիր կանգնելուց յետոյ: Դա մի անսկարագրելի պանիկա էր: Իզմիրի նաւահանգիստը այն առաւելութիւն ունի, որ նաւերը մօտենում են անմիջապէս քարափին, եւ քանի որ այդ քարափը քաղաքի ամենագլխաւոր փողոցներից մէկն է, ուստի նաւն էլ կարծես թէ մտնում է ուղղակի քաղաք: Իսելքը կորցրածների պէս մարդիկ շտապում էին նա՛ գոռալով, լալով, ճչալով: Մէկ կողմից նաւ էին բարձրացնում փախչողների գոյքերը, դաշնակ ու անկողինները, զինուորականները բաժանում էին իրենց ընտանիքներից, աչքերը լի արտասուքով, կիները ողբում էին, այնպիսի մի աղմուկ, մի իրարանցում էր տիրում շուրջը, կարծես թէ թշնամին արդէն մտած էր քաղաք: Մենք չգիտէինք, բայց իրականութեան մէջ նա արդէն մօտեցել էր քաղաքին եւ յոյն զօրքերը կռում էին, բայց իզուր, քաղաքը պաշտպանելու համար:

Հայրս, որ եկած էր նաւահանգիստ, ասեց, որ չի պիտի կարողանայ մեզ ընկերանայ, որովհետև ճամփորդութեան վիզան տիրող խճողումի պատճառով դեռ չի ստացած: Մենք շատ մտահոգուած ու տխրած՝ ստիպուած եղանք մեկնել մենակ Աթէնք, ուր 15 օր անցրինք լալով, մինչև որ հայրս մեզ միացաւ: Իզմիրից եկած լուրերը սարսափելի էին: Քաղաքն անցել էր տաճիկների ձեռքը, ամէնուր սպանութիւններ եւ հրդեհ էր, եւ իմ հայրը հրաշքով ազատած էր: Նա աղաչեց մի ռուս նաւի նաւապետին, որպէսզի նրան առնեն նաւի մէջ: Իր՝ ռուսերէն լեզուն իմանալը փրկեց նորան: Նաւապետը խղճաց ոչ միայն հօրս, այլ իր հետ միացած եւ Հայկ Արծիւր ու մէկ ուրիշ հայ երիտասարդ: Նրանց պատմելով՝ թուրքերը թալանել ու այրել են ամբողջ հայ թաղը՝ այդ կողմից մտնելով քաղաք: Իսկ այն սիրուն թատրոնը, որ քարափի վրայ էր եւ ուր ես այնքան ծափահարութիւններ էի ստացած, օդը ցնդել էր կրակների մէջ»⁵:

3 Եւզենեա Արիստակեան, «Յուշեր գաղութահայ կեանքից», տեքստի կազմող, առաջաբանի եւ ծանօթագրութիւնների հեղինակ՝ Արծուի Բախչինեան, *Ջահակիր* շաբաթաթերթ (Գահիրէ), 2019, յատկութեամբ ԻԵ:

4 Արիստակեան, «Յուշեր գաղութահայ կեանքից», <https://pubhtml5.com/aawx/jyin/basic>, դիտուել է՝ 21.02.2023:

5 Արիստակեան, «Յուշեր գաղութահայ կեանքից», 107-109:

Երգենեա Արիստակեանը վկայել է նաեւ, որ նոյն ժամանակ Չմիտնիայում են գտնուել Սեդրակ եւ Մաշա Սուրաբեաններն իրենց թատերախմբով: «Սուրաբեանների խումբը, Աբելեանի հետ միասին, որ նոր էր ժամանել Իզմիր, պատասխարուել էր այդ թատրոնում, բայց հրդեհը սկսուելու ժամանակ դուրս են վազում եւ ձերբակալում են թուրք ոստիկանութեան կողմից: Նրանց էլ ազատում է իրենց՝ ռուսերէն լեզուն խօսելը: Նրանք ձեւանում են ռուս դերասաններ եւ նոյնպէս մի նախ մէջ գցելով իրենց՝ մեծ դժուարութիւններով գալիս են Աթէնք, որտեղից քիչ յետոյ մեկնում են Ամերիկա»⁶:

Հայկ Արծիւ

Երգիչ, դերասան Հայկ Արծիւը (Սարգսեան, 1897, Ալսալքալաքի Գոմա գիւղ - 1969, անդ) 1918 թուականից շրջել է Օսմանեան կայսրութեան տարբեր քաղաքներում, 1922 թ., ինչպէս նշուեց, նոյնպէս եղել է Չմիտնիայում: Երկրէ երկիր թափառելուց յետոյ նա ի վերջոյ հայրենադարձուել է, Խորհրդային Հայաստանում գրի առել եւ հրատարակել իր յուշերը: Չմիտնիայի աղէտի մասին նա գրել է հետեւեալը.

«Եւ ահա այդ ժամանակներում սկսում է Իզմիրի ողբերգութիւնը: Լսում են վայնասունի ձայներ: Թուրք զինուորները շրջապատած են քաղաքը եւ առաջանում են դէպի Կորդոն ծովափը, իսկ յոյն զինուորները առանց դիմադրութեան փախուստի էին դիմում: Ցաւում էի եւ զարմանում, միեւնոյն ժամանակ զայրանում, թէ ինչպէ՞ս կարելի է մի բանակ առանց դիմադրութեան թողնի սեփական հողը, իր հարազատ ժողովուրդը եւ լքելով ամէն ինչ, նոյնիսկ իր ձեռքի հրացանը, փախուստի դիմէ: Թուրքական զօրքերը հրդեհի տալով գրաւեցին Իզմիրը: Կրակի բոցերը հասել էին երկինք, այրում էր ամէն ինչ, սեւ ամպերը ծածկել էին հորիզոնը, լսում էին լաց ու կոծի ձայներ. գնդակների շառաչիւնը սաստկանում էր, անվերջ սոսկումի ձայներ, աղաղակներ... Մի խումբ պանդուխտ հայեր՝ զինուած թեթեւ զէնքներով, դիմում էին ճակատ՝ պաշտպանելու անտէր մնացած ամբոխին: Գեներալ Հաճիմեակիի կառավարութիւնը փախուստի ճամփան էր բռնել իր կեանքը ազատելու համար: Հայ կտրիճներու անվեհեր դիմադրութեան շնորհիւ շատ-շատերը ազատագրուեցան եւ լցուելով նաւերը՝ մեկնեցան դէպի Աթէնք: Հայոց սուրբ Ստեփաննոս եկեղեցին շրջապատուած էր տաճիկ զինուորներով, իսկ պարիսպներու մէջ հայ երիտասարդները զինուած, դիրքաւորուած կրում էին եւ սպասում դրսից օգնութեան: Իզմիրի հայ ազգային խորհուրդը մեկնած էր քաղաքից: Երոպացի բարձր աստիճանատր հոգեւորականների եւ դեսպանների միջոցով ազդարարուեց, որ եկեղեցու պաշտպանները զէնքերը վար դնեն, իրենք պիտի պաշտպանեն քրիստոնեայ ժողովրդին եւ ազգապատկան հիմնարկութիւնները: Մինչդեռ աւելորդ յուսադրութիւն էր այդ: Սկզբում հայ մարտիկները չէին համաձայնում, բայց վերջ ի վերջոյ վստահանալով երոպացիների կեղծ խոստումներին, յանձնուեցին:

Վերջաւորութիւնը եղաւ խիստ ճակատագրական. ոմանց արքորեցին անյայտ ուղղութեամբ, մնացեալներին էլ գնդակահարեցին: Մի խումբ հայ կտրիճներ որոշած

6 Նոյն տեղում, 109:

էին ջանձնուել. մինչեւ վերջին փամփուշտը կռում էին հերոսաբար եւ սարսափի մատնում տաճիկ զօրքերին, ազատում հարիւրաւոր կեանքեր: Հայ պատանիները եւ օրիորդները գնդակների տարափի տակ հասնում էին օգնութեան, վիրաւորներին փոխադրում էին հիւանդանոց: Կրակի բոցերը տարածուել էին ամէն կողմ: Չարիւորելի տեսարան էր, իսկ անգութ անգլիացիները եւ ամերիկացիները իրենց մարտնասերով եկած էին թամաշայի, եւ օգտուելով առիթից, կինոյի յատուկ պատկերներ էին վերցնում: Նրանք հրճում էին եւ հեռադիտակներով նայում, ուրախանում... Անսիրտ, չար ոգիներ. մարդկային ցաւի ձայնը նրանց չէր ազդում. սաքսոնական վատասիրտ հրէշները սառնասարտութեամբ նայում էին այդ սոսկալի տեսարանին, ներքնապէս ուրախանում ուրիշների թշուառութիւնը տեսնելով, կարծես որոշ գոհունակութիւն էին զգում: Այդ օրը մի քանի ընկերներով փախուստի դիմեցինք եւ պատապարուեցինք «Իզմիր» կոչուող թատրոնի վերնահարկում: Սարսափելի դրութեան մէջ սպասում էինք մեր ճակատագրի որոշումին: Ես ունէի մի ռուս արտիստ բարեկամ, որին կոչում էին Կոնստանտին Սեմեոնովիչ: Նա կապեր ունէր ռուսական դեսպանատան հետ. նրա միջոցով տեղեկացրինք, որ մի քանի ռուսահպատակներ օգնութեան կկարօտեն, քաղցած, անապահով դրութեան մէջ կգտնուեն: Դեսպանատան կողմից ստացանք սնունդ եւ մի փոքր ապահովութիւն: Սակայն այդ երկար չտեւեց, թուրքերը սկսեցին հետապնդել մեզ. վատ էր մեր դրութիւնը, կարող էինք ծուղակ ընկնել. մտածում էինք մի ելք որոնել եւ չէինք կարողանում, ուզում էինք Իզմիրից փախչել, հեռանալ, բայց ո՞ր եւ ինչպէ՞ս, երբ քաղաքը շղթայի մէջ էր առնուած: Հեռուից լսում էին աղաղակի ձայներ եւ երբեմն էլ պայթուցիկների ուժգին որոտ: Յոյն զինուորները բոլորովին բարոյալքուած, թողնելով քաղաքը, հեռանում էին: Թուրք հրէշները չէին խնայում ո՛չ ծերին, ո՛չ մանուկին, անգթօրէն կոտորում էին ամէնքին եւ թալանում ամէն ինչ: Երբ մթնշաղը հասաւ, երեք ընկերներով դուրս եկանք վերնահարկից եւ մխրճուեցանք ամբոյսի մէջ, զգուշութեամբ անցանք քարափը, մի ակնթարթում նետուեցինք ծով: Նախընտրեցինք ծովի ալիքներին յանձնուել, քան թէ տաճիկ մարդակերներին:

Կեանքում փոքրիկ լուրորդներ էինք, բայց այդ գիշեր դարձել էինք կատարեալ լուրորդներ: Ճեղքելով ծովի ալիքները՝ գնդակների շառաչիւնի տակ շարժում էինք առաջ: Յանկարծ հեռում նկատեցինք ավից բաւական հեռու կանգնած մի նաւ: Մեր փրկութեան խարիսխը այդ նաւն էր լինելու մտածելով՝ ուժ տուեցինք մեր բազուկներին: Մեր յոյն ընկերը, որը ուղեցոյց էր մեզ, վիրաւորուեց ճանապարհին եւ մենք սոսկալի դրութեան մէջ՝ նետուեցինք նաւը: Այն տեղից չէր շարժում. պատմում էին, որ երկար տարիներ Իզմիրի քարափում մնացել էր ծովի մէջ անշարժ: Երկու-երեք օր մնացինք նաւի մէջ, հեռուից տեսնում էինք քաղաքը կրակի մէջ: Յերեկը թաքնուում էինք նաւի նկողում, իսկ գիշերները դուրս գալիս ձայն տալիս անցնող նաւերին, որ մեզ ազատեն: Բայց դժբախտաբար մեր ձայնը լսող չկար: Վերջապէս տեսանք մի անգլիական զրահանաւ, որը մեզ շատ մօտ էր: Նետուեցանք ծովը, մօտեցանք նաւին եւ խնդրեցինք, որ մեզ ազատեն. անկարելի եղաւ: Փոխանակ մարդասիրութեան, տաք ջրով մեզ պատապանեցին: Ստիպուեցանք կրկին վերադառնալ մեր տեղը, բայց չգիտեմ ինչու ուրախ էինք: Կարծես մի լաւ բան էր սպասում մեզ: Այո, ազատուած էինք

Իզմիրի հրոյ ճարակից, ուրեմն իրաւոնք ունէինք ապրելու: Այդ յոյսով մխիթարում էինք, երբ երեւաց մի ուրիշ նաւ՝ ամերիկեան դրօշակով: Ամերիկացիները մարդասերի անուն են հանել. մտածում ենք՝ մեզ կօգնեն: Ձեռքով նշան արեցինք, փրկութիւն աղերսեցինք, բայց իզուր: Նրանք էլ, անգլիացիների պէս, մեզ երես դարձրին:

Դարձեալ նաւի նկուղումն ենք, բայց յոյսներս չկտրած: Եւ յանկարծ հեռուից նկատեցինք մի փոքրիկ նաւ՝ յունական դրօշակով: Յոյն ընկերս ուրախացած բացականչեց. «հայրենակիցներ, օգնեցէք մեզ»: Նաւը մօտեցաւ, ընդունեց: Ուրախութիւնից փաթաթուեցանք նաւաստիներին եւ համբուրեցինք նրանց: Սաստիկ ծարաւ էինք եւ քաղցած: Նաւաստիները մեզ հիւրասիրեցին: Վերջապէս փրկուած էինք եւ երախտապարտ յոյն նաւապետին...»⁷:

Հայկին եւ նրա ընկերօքը յունական նաւն իջեցրել է Միտիլի կղզում, որտեղ նրանք որոշ ժամանակ քաղցած գոյութիւն են քարշ տուել, սակայն ուրախ, որ ազատուել են Իզմիրի աղէտից:

Եզրակացութիւն

Այսպիսով, արեւելահայ բեմի առնուազն վեց գործիչ ականատեսն է եղել եւ վերապրել Զմիւռնիայի աղէտը: Նրանց յայտնուելը օսմանեան այդ նաւահանգստային քաղաքում պատահական էր, սակայն ոչ անսպասելի. հայ մշակոյթի կենտրոններից մէկը՝ Զմիւռնիան, միշտ ունեցել է այցելու հայ մտաւորականներ եւ արուեստագէտներ: Անսպասելին թերեւս հայ դերասանների որպէս ռուսահպատակ ներկայանալու իրողութիւնն է, որի շնորհիւ էլ նրանք ազատուել են մահից:

Թատերական գործիչներից երեքը հանդէս են եկել յուշագրութեամբ՝ թողնելով Զմիւռնիայի աղէտի վերաբերեալ երեք սկզբնաղբիւր (երկուսը՝ արեւելահայերեն, մէկը՝ ռուսերէն): Նրանց վկայութիւնները հիմնականում լրացնում եւ ամրապնդում են անկաջ իրողութիւնները.

ա) Հրդեհն իրականացրել են թուրքերը հայկական եւ յունական թաղամասերում. թուրքական թաղամասը մնացել է անվնաս:

բ) Երոպացիները նաւերի վրայից անտարբեր դիտել են հրդեհը, ատելին՝ խոչընդոտել իրենցից փրկութիւն հայցողներին:

Այդ վկայութիւնները նաեւ տրամադրում են քիչ ծանօթ փաստեր.

գ) Թուրքական իշխանութիւնները խնայել են ռուսահպատակներին:

դ) Հայերը ցոյց են տուել ինքնապաշտպանութիւն:

Որպէս վերջաբան

Ինչպէս վերոնշեալ մէջբերումներն են վկայում, Զմիւռնիայի աղէտի տեսարանների ականատես երոպացիներից ոմանք նկարահանել են կինոխցիկով, որոնք յետագայում մուտք են գործել հայ ժողովրդին նուիրուած առնուազն երկու կինոնկարում: 1930

7 Հայկ Արծիվ, Էմմա Արծիվ, *Աշխարհով մեկ*, 28-32:

թ. Փարիզում ստեղծուած «Հայաստանի մեղեդին» (բեմադրիչ՝ Նիկոլայ Կորգանով) կինոնկարի առաջին մասում ընդգրկուել են Չմիտնիայի հրդեհը պատկերող դրուագներ, որոնցում ներկայացուել են նաև քաղաքից դէպի յունական կղզիները փախչող հայ բնակիչներ: Նոյն դրուագները տեղ են գտել նաև Կալիֆոռնիայի հայ կինոյի հիմնադրամի ստեղծած «Ժառանգութիւն» վաերագրական ֆիլմում: Նշուած դրուագներն է դիտել Կոստան Զարեանը՝ այդ մասին գրելով իր «Բանկօօպը եւ մամուլի ոսկորները» վէպում: Կինոէկրանին Հոռմի, Բենարէսի, Ուէսթմինսթերի տեսարաններին յաջորդել է Չմիտնիայի հրդեհը, որը Զարեանը համարել է «Հայ ժողովուրդի ողբերգութեան վերջին գործողութիւնը: Ծովից առնուած այդ տեսարանը ասիւոր էր: Քարափը իր ամբողջ երկայնութեամբ կորել էր բոցերի եւ քուլայ-քուլայ բարձրացող ծուխի մէջ: Ինչ էր կատարում այդ հրէշային վարագոյրի ետեւ...

Մինչ սարսափով նայում էի, մօտս նստած ֆրանսիացի կինը հարցնում էր իր ամուսինին.

– Ո՞ր տեղ է այդ քաղաքը...

– Կարծեմ Փոքր Ասիայում,– հանգիստ ձայնով եւ անտարբերօրէն ուները վեր առնելով պատասխանեց մարդը:

Ապա ներկայացրին նախապատերազմեան շրջանի մի գաւեշտ եւ ամենքը աղմուկով ծիծաղեցին: Հին բաներ, հին պատմութիւններ, հին դէպքեր եւ զգեստներ, որոնք այսօր մեզ թւում են անելի հեռու, քան մութ մտած դարերը: Կեանքը սուկայիօրէն արագ է ընթանում: Արտաքին բոլոր ձեւերը փոխում են: Այսօրը խեղդում է երեկը: Տեմպը արագանում է, մեքենան երկու տարուց անելի չէ դիմանում, ժամը մոռանում է ժամին եւ սելիւօիդի այդ քաղաքակրթութիւնը մաշում է անելի արագ, քան գրպանի թաշկինակը:

Մեզ համար Իզմիրը շարունակում է այրուել»⁸:

Թէ՛ ականատեսների վկայութիւնները, թէ՛ նկարահանուած նիւթերը աշխարհին տրամադրում են անվիճելի փաստեր եւ ապացոյցներ մարդկութեանը պատուհասած տարբեր կարգի ողբերգութիւնների վերաբերեալ, նաև այնպիսին, ինչպիսին Չմիտնիայի աննախադէպ աղէտն էր: Սակայն հայ եւ յոյն ժողովուրդները տակաւին չունեցան իրենց Նիտնբերգը, և յայտնի չէ, թէ՛ դեռ որքան ժամանակ մեզ համար Իզմիրը կշարունակվի այրուել:

8 Կոստան Զարեան, *Բանկօօպը եւ մամուլի ոսկորները* (Անթիլիաս, Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, 1987), 510-511:

SMYRNA CATASTROPHE IN THE MEMOIRS OF ARMENIAN ACTORS

Artsvi H. Bakhchinyan

Institute of History of National Academy of Sciences, Armenia

SUMMARY

Various testimonies about the Smyrna catastrophe of 1922 are also found in Armenian theatrical memoirs. By an interesting coincidence, several Eastern Armenian theatre figures were in the city during that catastrophic event. Some of them and their descendants left “first-hand” evidence of the catastrophe in their memoirs. No less than six figures of the Eastern Armenian theatre, professionals and amateurs, witnessed and survived the catastrophe in Smyrna. Their appearance in this Ottoman port city was accidental, but not unexpected: Smyrna, one of the Armenian cultural centres, has always been visited by Armenian cultural figures. Perhaps the most unexpected is the fact that the Armenian actors presented themselves to the Ottoman authorities as Russians, thanks to which they were saved from death.

This publication presents relevant excerpts from the following sources: “Around the World” by Hayk and Emma Artsiv (Yerevan, 1964), “About My Father Hovhannes Abelyan” by Marika Abelyan (Yerevan, 2000, in Russian), and “Memoirs of Armenian Community Life” by Yevgenia Aristakyan (Cairo, 2019). All memoirs confirm well-known facts: the desperate self-defence of the Armenians and Greeks, the looting and burning of the Armenian quarter by the Turks, the refusal of the captains of foreign ships to save the insolvent, but at the same time accepting the rich, etc.

Although these memoirs have already been published, however, being less accessible and little known, they are presented in this context, making them available to historians and genocide scholars, also providing additional details about the event.

Keywords: Smyrna catastrophe, Eastern Armenian theatre actors, eyewitness accounts, Hovhannes Abelian, Yevgenia Aristakyan, Surabyans, Hayk Artsiv.

СМИРНСКАЯ КАТАСТРОФА В ВОСПОМИНАНИЯХ АРМЯНСКИХ АКТЕРОВ

Արշվի Գ. Բախչինյան

Институт истории Национальной академии наук, Армения

РЕЗЮМЕ

Различные свидетельства о Смирнской катастрофе 1922 года встречаются и в армянских театральном мемуарах. По интересному стечению обстоятельств, во время

того катастрофического события в городе находились несколько деятелей восточноармянского театра, некоторые из них и их потомки оставили в своих мемуарах свидетельства о катастрофе из «первоисточника». Не менее шести деятелей восточноармянской сцены, профессионалы и любители, стали свидетелями и пережили катастрофу в Смирне. Их появление в этом османском портовом городе было случайным, но не неожиданным: Смирну, один из центров армянской культуры, всегда посещали армянские деятели культуры. Пожалуй, самым неожиданным является факт, что армянские актеры представились османским властям русскими, благодаря чему спаслись от смерти.

В настоящей публикации представлены соответствующие отрывки из следующих источников: «По всему миру» Айка и Эммы Арцив (Ереван, 1964), «О моем отце Ованесе Абеяне» Марики Абеян (Ереван, 2000, на русском языке) и «Мемуары из армянской колониальной жизни» Евгении Аристамян (Каир, 2019). Все мемуары подтверждают общеизвестные факты: отчаянная самооборона армян и греков, разграбление и сожжение армянского квартала турками, отказ капитанов иностранных кораблей спасти неплатежеспособных, но принимая при этом богатых и т.д.

Хотя эти мемуары уже опубликованы, однако, будучи менее доступными и малоизвестными, представлены в данном контексте, сделав их доступными для историков и геноцидоведов, представив также дополнительные подробности о событии.

Ключевые слова: Смирнская катастрофа, восточноармянские театральные актеры, свидетельства очевидцев, Ованес Абеян, Евгения Аристамян, Сурабяны, Айка Арцив.

REFERENCES

Aristakean, Ewgenea. *Յուշեր գաղութական կեանքից* [Memoirs from Armenian Community Life]. Cairo: Jahakir Weekly, Supplement 15, 2019;

Artsiv, Hayk. Artsiv, Emma. *Աշխարհով և՛ էլ* [Around the World]. Yerevan: Haypethrat, 1964;

Zarean, Kostan. *Բանկոօպը և մամուրի ոսկորները* [Bancoop and the Bones of the Mammoth]. Antelias-Lebanon: Printing House of Armenian Catholicosate of the Great House of Cilicia, 1987;

Abelian, Marika. *Օ մоем отце Ованесе Абеяне* [About my Father Hovhannes Abelian]. Ереван: Зангак-97, 2000.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Արծվի Հ. Բախչինյան, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ հայ գաղթավայրեր և Սփյուռք, մշակույթի պատմություն, հայազգի ականավոր գործիչներ:

Էլ. փոստի հասցե՝ artsvi@yahoo.com

Artsvi H. Bakhchinyan, PhD in Philology, Senior Researcher, Institute of History, National Academy of Sciences, Armenia.

Research fields – history of Armenian communities and Diaspora, history of art, eminent figures of Armenian origin.

E-mail: artsvi@yahoo.com

Арцви Г. Бахчинян, кандидат филологических наук, старший научный сотрудник Института истории Национальной академии наук Республики Армения.

Область исследований – история армянских общин и диаспоры, история искусства, знаменитые деятели армянского происхождения.

Эл. почта: artsvi@yahoo.co

ԶՄՅՈՒՌՆԻԱՆ ԵՎ ՄԵԾ ԱՂԵՏԸ ՉԵԽԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Աննա Կ. Կարապետյան

Պրահայի Կարլի համալսարան, Չեխիա

Չեխերեն գրավոր աղբյուրներում 19-րդ դարի վերջի Չմյուռնիայի, ապա նաև 1922 թ. սեպտեմբերին քաղաքում բռնկված աղետալի հրդեհի մասին ուշադրության արժանի տեղեկություններ կան: Դրանք սակայն երբևէ գիտական առանձնակի ուսումնասիրության և վերլուծության նյութ չեն դարձել ոչ միայն հայկական գիտական շրջանակներում, այլև Չեխոսլովակիայում, որտեղ Հունաստանում բռնկված քաղաքացիական պատերազմից հետո ապաստանած մեծաքանակ հունական համայնքը կարող էր հետաքրքրության ալիք բարձրացնել: Մինչդեռ Չմյուռնիայի մասին չեխերեն հրատարակումներ կան և՛ պարզ ուղեգրություններում, և՛ ազգագրական ու աշխարհագրական հետազոտություններում, և՛ ավաղ քաղաքական հստակ ուղղվածությամբ արևելագիտական մենագրություններում: Օսմանյան կայսրության դաշնակից Ավստրո-Հունգարիայի մաս լինելու փաստը նախ պարտադրյալ, ապա նաև սովորության ինքնագներ է հաղորդել չեխական և չեխոսլովակյան լրատվությանը, ինչի դեմ արդեն նորանկախ Չեխոսլովակիայում հանդես է եկել գրող և ճանապարհորդ Կարել Հանսան:

Հոդվածում ներկայացվող օրինակները կարևոր, իսկ երբեմն էլ եզակի են իբրև թեմայի մասին նոր աղբյուրներ:

Բանալի բառեր՝ Չմյուռնիա, Օսմանյան կայսրություն, Մեծ աղետ, ցեղասպանություն, Չեխիա, Չեխոսլովակիա, Կարել Հանսա, ուղեգրություններ:

Հոդվածը ներկայացվել է՝ 05.01.2023: Ընդունվել է տպագրության՝ 25.04.2023:

The article was submitted on 05.01.2023 and accepted for publication on 25.04.2023.

Статья поступила 05.01.2023 и была принята к публикации 25.04.2023.

Ինչպես հղել՝ Աննա Կ. Կարապետյան, «Չմյուռնիան և Մեծ աղետը չեխական աղբյուրներում», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 62-76:

How to cite: Anna K. Karapetyan, “Smyrna and the Great Catastrophe in Czech Sources,” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 62-76.

Как сослаться: Анна К. Карапетян, “Смирна и Великая катастрофа в чешских источниках,” *Цехаспанагитакан андес* 11, no. 1 (2023), 62-76.



Եթե ուզում եք գեղեցիկ հույն կանանց տեսնել, պետք է Ջմյունոնիա գնաք, որտեղ հանդիպածդ ամեն մի աղջիկ մի ծաղիկ է¹, նման խորհուրդ էր տալիս նշանավոր չեխ գրող Յան Երուդան, սակայն չեխ ճանապարհորդները սոսկ գեղեցիկ հույն կանանց տեսնելու համար չէ, որ ուղղություն էին վերցնում դեպի չքնաղ ու հնագույն այս քաղաք:

Եթե 15-18-րդ դարերում չեխները ճանապարհ էին ընկնում հիմնականում դեպի Սուրբ երկիր՝ ուխտի, ապա արդեն 19-րդ դարից չափազանց տարածված են դառնում ուղևորությունները Մերձավոր Արևելք, Առաջավոր Ասիա: Ըստ որում՝ ճամփորդում էին ոչ միայն գործարարները, ոչ միայն տարածաշրջանի պատմությունը, աշխարհագրությունը կամ ազգագրությունն ուսումնասիրող գիտնականներն ու գրող-լրագրողները, որոնց ճամփորդությունները սովորաբար որևէ մեկենաս էր ֆինանսավորում², այլև պարզ հետաքրքրասերները, որ հնարավորություն ունեին վճարելու ոչ այնքան մատչելի շրջագայության համար:

Այդպիսի ճանապարհորդներից էր Պրահայի քաղաքային խորհրդի անդամ, փայտագործ վարպետ Անտոնին Պացովսկին³, որ շրջագայությունը սկսել էր երկու հոգու ընկերակցությամբ, որոնց մանրամասն ներկայացնում է 1886 թ. հրատարակած «Ուղևորություն Պրահայից Արևելք» գրքում: Ջմյունոնիայի մասին նոթագրություններում նա նշում է, որ այն 150 հազար բնակչով, մեկ կամ երկհարկանի տներով քաղաք է, բեռները տեղափոխում են 8-12 միայնակ կապված ուղտերը, փողոցները նեղ են՝ նախատեսված մեկ կառքի համար, սալարկված են, սակայն փոսերի մեջ չընկնելու համար պետք է ուշադիր նայել ոտքերի տակ:

Նա հայտնում է, որ Ջմյունոնիայում նոր ծովափ կա՝ «կես ժամ երկարությամբ», որի ողջ երկայնքով երթնելում է ֆրանսիացիների կառուցած տրամվայր: Այստեղ մեկ քառակուսի մետր հողատարածքը 1 000 ֆրանկ արժե, և միայն հարուստ հույները կարող են տուն կառուցել⁴: Մելես գետի վրայի հնագույն կամրջից վեր, բարձունքից տեսանելի է ողջ քաղաքը, և երբ իջնում ես բարձունքից, նախ անցնում ես հայկական թաղամասով, ապա՝ թուրքական, հունական ու նաև հրեից թաղամասերով: «Քաղաքից մենակ դուրս գալը ո՛չ նպատակահարմար է, ո՛չ էլ՝ անվտանգ», – զգուշացնում է հեղինակն ու անգամ հիշեցնում, որ մի քանի տարի առաջ Ջմյունոնիայում թուրքերը սպանել են գերմանացի հյուպատոսին: «Քաղաքից ոչ շատ հեռու հինգ ռազմանավ է խարսխված՝ ամերիկյան, ֆրանսիական, իտալական, ռուսական, մյուսը, չգիտեմ,

1 Jan Neruda, *Obrazy z ciziny* (Dr Grégr a Ferd. Dattel, V Praze, 1879), 80.

2 Այդպես, օրինակ, հայոց լեզվով ու արվեստով տարված մեծ նորարար, մեկենաս Վոյտեկ Նապրստեկը ֆինանսավորել էր աշխարհագրագետ Յոզեֆ Վյունշի ճանապարհորդությունն Արևմտյան Հայաստան, ինչի արդյունքում վերջինս քարտեզագրել է բավական մեծ տարածք և հայտնաբերել Տիգրիսի ակունքները:

3 Alena Frolíková, "Pana Antonína Pacovského Cesta Na Východ (Malá Poznámka k Šaldovu Zápisníku)," *Česká Literatura*, roč. 46, číslo. 3, 1998, 323-325.

4 Antonín Pacovský, *Cesta z Prahy na východ* (Praha: Jos. R. Vilímek, 1886), 24.

որտեղից էր, ու եթե որևէ երկրի սոր նավ է մոտենում, մյուսն անմիջապես հեռանում է»⁵:

Պացովսկու գրածն ընդամենը ճանաչողական, ուղեցուցային է և հետաքրքիր է գուտ այդ իմաստով: Ավելի ուշ՝ 1896 թ., դոկտոր Յիրի Գուլթը⁶ գրում է, որ թեև Չմյոտնիան քաղաքական իմաստով հունական չէ, սակայն լեզվական առումով և վարքուրարքով հունական է⁷: Չմյոտնիան ներկայացվում է իբրև Եվրոպայից Ասիա լայնարձակ մայրուղու ամենամեծ առևտրական կենտրոն, որ շրջանը կապում է Պարսկաստանին ու Հնդկաստանին և լի է մեծ ու փոքր սրճարաններով, և որտեղ խոսում են աշխարհի բազում լեզուներով, ու «եթե չլինեին հայկական ու թուրքական բազմազան տարազները, Ֆրանսիական փողոցն այլ տեսք չէր ունենա, քան նմանատիպ որևէ փողոց Իտալիայում, կամ Աթենքում ու Մարսելում»⁸. «Չմյոտնիան հագնում է ֆրանսիական ու ավստրիական կոշիկներ, բուրում է ֆրանսիական օժանելիքով, բժշկվում գերմանական դեղերով, որսի է գնում բելգիական հրացաններով ու կրակում անգլիական արճիճով: [...] իրենց նամակները գրում են թղթի վրա, որ Հունաստանով բերում է ավստրիական Լյոնդ ընկերությունը, գերմանական թանաքով ու վիեննական գրիչներով, մի սեղանի վրա, որ ամենայն հավանականությամբ փարիզյան է. դրա վրա հավանաբար ընկնում է շվեյցարական ժամացույցի, ինչպես նաև այն ճրագի ստվերը, որ լցված է ռուսական նավթով: Եթե նաև հաշվի առնենք, որ Ռուսաստանը մեծ քանակությամբ հաց ու խավիար է մատակարարում, Ֆրանսիան՝ կարտոֆիլ, Պրահան՝ ապուխտ, Պարսկաստանը՝ թեյ, Շվեյցարիան և Իտալիան՝ պանիր, Եգիպտոսը՝ սխտոր, կարող ենք եզրակացնել, որ Չմյոտնիան աշխարհի շիացած զավակն է»⁹:

Չեխոսլովակիայի առաջին նախագահ Տոմաշ Գարիկ Մասարիկի արարողակարգի պատասխանատու, ապա նաև նորանկախ Չեխոսլովակիայի օլիմպիական կառույցի հիմնադիր-ղեկավար Յիրի Գուլթը¹⁰ հրաշալիորեն ներկայացրել է բազմազգ, բազմամշակույթ ու բազմակրոն սուլթանությունում դեռևս պահպանվող նրբերանգներ ու առանձնահատկություններ, որ վերանալու էին ազատության, եղբայրության ու հավասարության հեղափոխականների տարիներին, ավարտական փուլի հասնելով քեմալականների օրոք. «Շատ գեղեցիկ ու մաքուր են հունական և հատկապես հայկական թաղամասերը, որտեղ երեկոյան կանայք և աղջիկները դուրս են գալիս, հովանալու համար նստում տաղավարներում: [...] հայ կանայք զվարթ են և ծիծաղում

5 Նույն տեղում, 21-25:

6 Այսպես էր կարճ ստորագրում Յիրի Ստանիսլավ Գուլթ-Յարկովկին՝ գրող, ազգագրագետ և թարգմանիչ: Չեխ հանրությունը նրա միջոցով է ծանոթացել Օտորե դը Բալզակի, Պիեռ Լոտիի, Էմիլ Զոլայի, Գի դը Մոպասանի, Ժյուլ Վեռնի և մի շարք այլ ֆրանսագիր հեղինակների գործերին: Ստեղծագործել է չորս կեղծանուններով ու անգամ գիրք է հրատարակել սեղանի շուրջ ճիշտ նստելու և բարեկիրթ սովելու կանոնների մասին:

7 Jiří Stanislav Guth-Jarkovský, *Letem přes řecký kraj: feuilletony z cest* (V Praze: Bačkovský, 1896), չեչակավված նախաբան:

8 Նույն տեղում, 142:

9 Նույն տեղում, 143:

10 František Kolář, *Jiří Stanislav Guth-Jarkovský*, 1. vyd. (Praha: Český olympijský výbor v nakl. Olympia, 2011).

են ձեզ վրա, եթե փոքր-ինչ անպատշաճորեն եք հիանում նրանց գեղեցկությամբ, ինչպես մենք՝ զբոսաշրջիկներս մեզ թույլ ենք տալիս»¹¹:

Զմյուռնիայում Ավստրո-Հունգարիայի փոխհյուպատոս բարոն դը Չոնլայթները մեկ օրվա մեջ հաջողում է կազմակերպել դոկտոր Գուրթի հանդիպումն Այդընի վալիի՝ Հասան Ֆեհմի փաշայի հետ: Փաշան ակնհայտորեն ցանկացել է, որ հյուրը լավ տպավորություններով հեռանա Զմյուռնիայից ու սահուն ֆրանսերեն ասել է, որ բնական է՝ Եվրոպայում թուրքերին իբրև բարբարոս են ընկալում, սակայն դա սխալ է, ու հարցրել, թե նա արդյոք որևէ բռնության ականատես է եղել իր այցի ընթացքում. «Այն ժամանակ ես դեռ չէի կարող նահանգապետին հակաճառել հայերի օրինակով», – նշում է հեղինակը¹²: Դժվար է ասել, այն պատճառով, որ իրեն սիրալիք էին ընդունել կամ, զանազան անձնական ու միջպետական նկատառումներից ելնելով, թե պարզապես հետո՞ արդեն Պրահայում գիրքը շարադրելիս է Յիրի Գուրթ տեղեկացել համիդյան ջարդերի մասին:

Երբ արդեն Ադանայի կոտորածն էլ էր եղել, համիդյան ջարդերին 1909 թ. անդրադարձել է Բոհդան Կամինսկին¹³ Օսմանյան կայսրություն կատարած ուղևորության մասին «Այցով հիվանդ մարդու մոտ» գրքում¹⁴: Ներկայացնելով թուրքերի բնավորությունն ու նրանց հետ ապրելու առանձնահատկությունները, Կամինսկին գրում է նաև, որ դեռ Զմյուռնիա չհասած, ծովից արդեն կարելի է տեսնել քաղաքի հունական, կաթոլիկ, հայկական ու բողոքական եկեղեցիների գմբեթները, սակայն Զմյուռնիայի եվրոպական թաղամասերից հետո մարդ հայտնվում է ծուռումուռ ու անսալարկ փողոցներով թուրքական հատվածում. «Իրապես թուրքական: [...] Ամեն պահ թվում է, որ այդ խարխուլ ու քայքայված տներից մեկն ինքնասպան լինելու նպատակով իրեն կնետի մեքենայի անիվների տակ՝ կամովին վերջ դնելու իր թշվառ ու անհույս մաշվածության տառապանքին»¹⁵:

Աշխարհագրագետ Յոզեֆ Բազլն իր ծավալուն ու արժեքավոր «Ասիա» մենագրության մեջ, դեռևս 1908 թ. ներկայացնելով Զմյուռնիան, գրում է, որ այստեղ երկրակեղևը չի հանգստանում, ավերը դեռևս վերջնական տեսք չեն ստացել շարունակական երկրաշարժերի պատճառով. «Սակայն որևէ ժամանակվա երկրաշարժերի ավերածությունները հնարավոր չէ հավասարեցնել մարդկային կրքերի և ազգային սահվոր պայքարի ավերածությունների հետ: Եվ ամեն անգամ, երբ աշխատանքի պտուղներն ավերակների են վերածվում, մշտապես կրկին գյուղեր ու քաղաքներ են հառնում, նոր կյանք է կրկին թագավորում ծովախորշերում, և նոր մարդիկ են սկսում ապրել հների գերեզմանների վրա...»¹⁶:

11 Guth-Jarkovský, *Letem přes řecký kraj*, 150.

12 Նույն տեղում, 158:

13 Բանաստեղծ, գրող և թարգմանիչ Բոհդան Կամինսկին «Լումիր» հեղինակավոր պարբերականի խմբագիրն է եղել:

14 Bohdan Kaminský, *Návštěvou u chorého muže: causerie zcesty* (V Praze: Jos. R. Vilímek, 1909), 61.

15 Նույն տեղում, 180:

16 Josef Basl, *Asie* (V Praze: I.L. Kober, 1908), 29.

Նույնն է եղել անշուշտ հերթական, այս անգամ արդեն աշխարհագրագետի գրածից 14 տարի անց տեղի ունեցած սեպտեմբերյան աղետալի հրդեհից հետո: Չմյուռնիան Օսմանյան կայսրության ամենահարուստ շրջաններից մեկն է եղել: Վերը նկարագրված թշվառ տներում ապրող մահմեդականները բնականաբար պետք է նախանձով ու ատելությամբ լցվեին ծովեզերքի և եվրոպական բարեկարգ թաղամասերի բնակիչների նկատմամբ, ուստիև քրիստոնյաների դեմ բռնություններ հրահրելու պետական ծրագիրը դժվար չէր իրականացնել նրանց շրջանում:

Այս տեսակետից հետաքրքրական է 1915 թ. մայիսին Պրահայի «Սվիետոզոր» (Աշխարհայացք) չեխական պարբերականի մի հրապարակում: Է. Շ. Լոխովիցկի ստորագրությամբ տպագրված է դեպի Չմյուռնիա ճամփորդության մասին մի հուշագրություն, որը սկսվում է իրենց նավի «մի բուռ» ուղևորներին տարօրինակ ձևով դիմավորելու փաստի արձանագրմամբ: Նախ հիշեցնելով տարիներ առաջ Կրետե կղզու շուրջ բորբոքված կրքերը՝ հեղինակը նկարագրում է պատկառելի տարիքի սպիտակամորուս տղամարդկանցից մինչև 16 տարեկանից էլ ցածր մի քանի հարյուր թուրքերի ներկայությունը նավամատույցում՝ կարմիր ֆեսերով ու դեղնած տուրբաններով մի խառնամբոխի, որ «դիրքավորված, դժոխային աղմուկով ու սուլոցներով» «դիմավորում էր» իրենց հարևանությամբ խարիսխ ձգած հունական նավը: Մահմեդական մաքսավորներից, բանվորներից, բեռնակիրներից որևէ մեկը չէր մոտենում խարիսխ զցած հունական նավերին՝ ո՛չ ուղևորներին ընդունելու, ո՛չ էլ բեռները դատարկելու. «Եթե հնարավորություն ունենար, ամբողջ գորամիավորման հետիոտնի նման կգրավեր նավը, սակայն տվյալ պարագայում անհնար էր. ծովը խորն էր»¹⁷:

Հայ մտավորականության ձերբակալությունները Կ.Պոլսում դեռևս առջևում էին. հայերի զանգվածային տեղահանումներն ու նոր թափով ծավալվելիք կոտորածները դեռ պիտի հաջորդեին, սակայն օտարականի համար արդեն տեսանելի է եղել վերաբերմունքը քրիստոնյաների, տվյալ պարագայում՝ հույների նկատմամբ:

Բավկանյան պատերազմների հետևանքով 1913 թ. Օսմանյան կայսրությունը հողային զիջումներ կատարեց Հունաստանի թագավորությանը (Մակեդոնիա, Կրետե, Էգեյան ծովի մի շարք կղզիներ ևն). համաշխարհային պատերազմի ընթացքում երիտթուրքերն այդ կորուստները վերադարձնելու հույս ունեին: 1915 թ. Չմյուռնիա այցելած հրապարակագիրը փոխանցում է, որ մահմեդականները «ծանր էին տանում» անգամ հույների առևտրական գործունեությունը, և մի համեմատություն ներկայացնում. «...Մինչ թուրք կամ արաբ խանությանը կամ վաճառողն իր կրպակում ապրանքի կույտով շրջապատված, անտարբեր նստած նարգիլե է ծխում, հայ կամ հույն վաճառականը պատեհությունը բաց չի թողնի, որպեսզի անցնող օտարերկրացուն ուղղակիորեն սարդի նման գցի իր ոստայնը՝ վախեցած ու ապարդյուն անհանգստացող ճանճի պես: Իսկ եթե ո՛չ թուրքերեն, ո՛չ հայերեն, ո՛չ հունարեն չես խոսո՞ւմ. հետո ի՛նչ: Պարոն Պապադոպուլոսը կամ Բաբաջանը գիտի անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, ռուսերեն, գերմաներեն, իսպաներեն, և Աստված գիտի՝ էլ

17 E. Š. Lochovický, “Vzpomínka na Smyrnu”. *Světozor: světová kronika současná slovem i obrazem: časopis pro zábavu i poučení*. Praha: J. Otto, 07.05.1915, 15(34), 172.

ինչ լեզու»¹⁸: Հեղինակը, նման հետաքրքիր մանրամասն պատկերելով, ավելացնում է, որ առևտրում հաջողելու համար հայը կամ հույնը հաճախորդին նախ սև սուրճ կիրամցնի, կխոսի քո հայրենիքի մասին, հազար ու մի սպրանք կներկայացնի, անգամ կառաջարկի գնումդ փոստով ուղարկել: Սակայն հեղինակն առերևույթ բնականոն այս կյանքը նկարագրելիս զգում է, որ այն խաթարված է, և ինքն իրեն հարց է տալիս, թե ինչ է լինելու այս քաղաքի վիճակը, որտեղ «Ժամանակին Հոմերոսն է իր երկերը հյուսել, որ դարերի ընթացքում ձեռքից ձեռք է անցել և 1424 թվականից դարձել Օսմանյան կայսրության մարգարիտներից մեկը»¹⁹:

Նյութը հրապարակվել է, երբ Առաջին աշխարհամարտն արդեն սկսվել էր: Չեխիան այդ տարիներին Օսմանյան կայսրության դաշնակից Ավստրո-Հունգարիայի մաս էր²⁰, ուստի հրապարակվող նյութերը խստորեն համապատասխանեցվում էին կենտրոնի քաղաքականությանը: Այս իմաստով «Սվիետոզոր»-ում տպագրված նման հուշագրությունը եզակի նյութերից է: Հուշագիր Լոխովիցկիի Չմյուռնիա էր ժամանել ավստրիական «Լլոյդ» ընկերությանը²¹ պատկանող նավով, այդ իսկ պատճառով հանգիստ ափ էր իջել: Գրող և ճանապարհորդ Կարել Հանսայի համաձայն՝ նախապատերազմյան շրջանում հենց «Լլոյդ» ընկերության 180 շոգենավեր ամեն տարի եվրոպական արտադրանքը հասցնում էին Չմյուռնիա, իսկ այնտեղից էլ արևելյան պտուղներ ու սպրանքներ բերում կենտրոնական Եվրոպայի շուկաներ²²:

Քրիստոնյաների դեմ դաժան բռնությունները նախքան Առաջին աշխարհամարտն էլ շարունակական ու համակարգված բնույթ էին կրում. երիտթուրքական կառավարությունը ծրագրել էր միատարր թուրք բնակչությանը պետություն կառուցել: Ադանայի հայերի կոտորածներին հետևեցին Թրակիայից հույն բնակչության արտաքսումները: 1914 թ. հունիսին հակահունական խռովություններ հրահրվեցին Չմյուռնիայում ու մոտակա գյուղերում. բազում զոհերի մեջ էր նաև մի հույն հոգևորական²³, մինչդեռ Շելյա Մուսա ար Ռուվելիլի անունը ստացած ամենահայտնի չեխ արևելագետ Ալոիս Մուսիլը «Կամուրջ դեպի Արևելք. նոր Թուրքիա» մենագրության մեջ գրում է, որ «Թուրքիայում հույների մազն անգամ չի ծովել մինչև հույն զինվորների մուտքը Չմյուռնիա՝ 1919 թ. մայիս», ինչից հետո Թուրքիան հասկացել է, որ «պետք է ազատվի այդ փոքրամասնությունից», և որ բնակչությունների փոխանակմամբ պաշտոնական Անկարան միայն 90 000 հույների սպրեղու իրավունքը ճանաչեց Կ.

18 Նույն տեղում, 173:

19 Նույն տեղում, 174:

20 Թեև պաշտոնական Վիեննան չեխ երիտասարդներին բանակ էր զորակոչում, բազմաթիվ չեխ կամավորական զորամիավորումներ, հանուն իրենց անկախության պայքարի, միացել էին Ռուսաստանի, Իտալիայի և Ֆրանսիայի բանակներին:

21 «Լլոյդ»-ի օրինակով 1833 թ. հիմնված Ավստրո-հունգարական շոգենավային մեծ ընկերություն:

22 Կարել Հանսա, *Արևելքի արհավիրքները*, չեխերեն բնագրի քննական թարգմանությունը և ծանոթագրությունները Աննա Կարապետյանի (Պրահա, Օրեր մատենաշար 1, 2022), 70:

23 Tessa Hofmann, “The Great Fire of Smyrna: The End of the Ottoman Genocide Against Christians”, *Asiatica: Труды по философии и культуре Востока*, том 16, номер 1, 2022, 8.

Պոլսում²⁴: Ապա նա գրում է, որ «թուրքերն առում էին հույներին և արհամարհանքով էին վերաբերվում նրանց»՝ իբրև իրենց գերակայության տակ գտնվողների²⁵: Գիրքը հրատարակվել է Երկրորդ աշխարհամարտի ժամանակ՝ 1941 թ., երբ նացիստներն արդեն բռնազավթել էին չեխական հողերը՝ Բոհեմիան ու Մորավան:

Աստվածաբանության դոկտոր Մուսիլը, արաբական երկրներում համարձակ ճամփորդ լինելուց բացի, Պրահայում հայտնի էր նաև իբրև Հաբսբուրգների կայսերական ընտանիքի հետ սերտ հարաբերություններ ունեցող մեկը, այդ իսկ պատճառով նրան հապաղում էին աշխատանքի ընդունել Պրահայի Կարլի համալսարան²⁶:

Երան, ի թիվս այլոց, Արևելք ճամփորդելիս միանում էր Ավստրո-Հունգարիայի վերջին կայսրուհի Ցիսայի եղբայրը՝ Բուրբոն Պարմայի արքայազն Սիբստոս Ֆերդինանդը, որը 1917 թ. Ավստրո-Հունգարիան պատերազմից դուրս բերելու նպատակով Դաշնակից ուժերի հետ սեպարատ պայմանագիր ստորագրելու ձախողված փորձ կատարեց: Ավստրո-Հունգարիայի փոխֆելդմարշալ²⁷ գինվորական կոչումով ու բազում շքանշաններ ստացած Մուսիլը կայսրուհու հատուկ հանձնարարականներով մեկնում էր Արևելք: Ուղևորություններից մեկի ժամանակ հանդիպել է Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էսվեր փաշային²⁸: Ավստրո-Հունգարիայի կայսերական ընտանիքի հետ կապերը, ինչպես նաև երկար ժամանակ Մերձավոր Արևելքում անցկացրած տարիները չէին նպաստել, որպեսզի նա անաչառ գիտնական մնա: Մուսիլի աշխատություններում մեծապես նկատելի են Մերձավոր Արևելքում ավստրո-հունգարական, գերմանական ու թուրքական շահերին համապատասխանող տեսակետները, «անհարմար» փաստերը մշուշապատ ներկայացնելու կամ հարթելու միտումը, բոլոր իրադարձությունները կայսերական կենտրոնի հայացքով դիտարկելու ձեռագիրը: Միտումնավոր անհասցեականությամբ է արևելագետը գրում նաև Զմյուռնիայի հրդեհի մասին. «Սեպտեմբերի 9-ի երեկոյան թուրքերը ներխուժեցին քաղաք, իսկ 13-ին Մուստաֆա Քեմալն արդեն հաղթանակած բանակն էր տեսնում: Դժբախտաբար, այս հարուստ քաղաքը մոխրի վերածվեց նույն օրը, երբ ողջունում էր Մուստաֆա Քեմալին: Կեսօրից հետո հրդեհ բռնկվեց հայկական թաղամասում, ուժեղ քամին կրակը տարածեց շրջակայքում, բնակչության մեջ արթնացան կոպիտ կրքերը, սկսվեց կողոպուտ, արյունահեղություն և արտոնված ավեր ու հրդեհում»²⁹:

24 Alois Musil, *Most do Asie: Nové Turecko* (V Praze: Melantrich, 1941), 160.

25 Նույն տեղում, 160:

26 Oldřich Klobas, *Alois Musil zvaný Músa ar Rueili* (Akademické nakladatelství CERM, Brno, 2003), 222.

27 Գերմաներեն՝ Feldmarschallleutnant, չեխերեն՝ Polní podmaršál(ek), որ կարճ ժամանակ նաև ցարական բանակ մուտք գործած գեներալ-ֆելդմարշալ լեյտենանտի կոչումն է, որն, ըստ էության, դիվիզիայի հրամանատար գեներալն է: Մուսիլն այս կարգավիճակով է 1917 թ. էրցհերցոգ Հուրերտ Սավլատոր Ավստրիացու հետ հատուկ առաքելությամբ գործուղվել Արևելք՝ Թուրքիայի դեմ արաբների ապստամբություն հրահրելու, ինչի դեմ հաջողությամբ աշխատում էր բրիտանացի Լորդենս Արաբացին:

28 Karel Jordán, *Dobrodružství jménem Orient: Karel May, Alois Musil, T.E. Lawrence - snílci, vědci, bojovníci*. 1. vydání (V Brně: CPress, 2018), 12-14, 99-126.

29 Alois Musil, *Most do Asie*, 169.

Կարլի համալսարան նոր ընդունված ուսանող, հետագայում նույն համալսարանի դոկտոր Նշան Մարտիրոսյանը, որ Խարբերդի նահանգի Խոունավիլ գյուղից էր և Կ.Պոլսի պատրիարք Եղիշե Դուրյանի հորդորով Պրահա էր ժամանել ուսանելու և 1922 թ. հանդիմանական նամակ է ուղարկում Մուսիլին և նույն թվականի դեկտեմբերի 23-ով թվագրված պատասխան ստանում: Վերջինս, ի թիվս Թուրքիային արդարացնող տարբեր հանգամանքների, նշում է. «Թուրքիան պետք է լեզու գտնի իր փոքրամասնությունների հետ: Քանի որ մենք չենք կարող թույլատրել, որ մեր փոքրամասնություններին արտասահմանից որևէ մեկը հեղափոխության հրահրի: Եվ ինչպես մենք չենք ուզում թողնել, որ մեր փոքրամասնությունները հրահրվեն արտասահմանից, այդպես էլ Թուրքիան չի թույլատրի: [...] Ձեզ համար Լյուդ Ջորջը մեծ քաղաքական գործիչ է: Ես չեմ կարող նրան այդ բնորոշումը տալ, որովհետև ես տեսնում եմ, որ նա հայ և հույն ժողովուրդների դժբախտության պատճառն է»³⁰:

Հայոց ցեղասպանության և վերապրողների մասին ականատեսի իր վկայություններով չեխերեն ամենավաղ աղբյուրի՝ «Արևելքի արհավիրքները» գրքի հեղինակ Կարել Հանսան էլ, թեև առանց անուն նշելու, ակնարկել է արևելագետ Մուսիլի ոչ գիտական պահվածքի մասին: Իր գրական առաջին և լուրջ այս վավերագրից անմիջապես հետո՝ 1925 թ., Հանսան հեղինակել է նաև դեպի Արևելք 1922 թ. հուլիսից վեցամսյա իր ճամփորդության մանրամասների մասին «Դեգերումներ Արևելքով կամ հարեմները ճշմարտության լույսի ներքո» գիրքը:

Պրահայից Կ.Պոլիս գրողի ճանապարհին անցել է ընդամենը 3-4 տարի առաջ միմյանց դեմ պատերազմող պետություններով, ուստի ամենուր զգացել է մարդկանց փոխադարձ անվստահությունն ու ակնհայտ թշնամանքը: Հանսային հանդիպած առաջին հույներն Ադրիանապոլիս (Էդիրնե) զինվորականներն էին: Նա արձանագրում է, որ այս մարդկանց համար Առաջին համաշխարհային ավարտված չէ: Գնացքում իրեն հրահանգել են տեղից չշարժվել, պատուհաններին չմոտենալ, իսկ թուրք սահմանապահը կայարանում փորձել է հարցերի միջոցով անհրաժեշտ տեղեկություն կորզել Հանսայից, ինչին ապագա գրողը պատասխանել է, որ քնած է եղել ողջ ճանապարհին և ոչինչ չի տեսել: Հույն զինվորներից մեկը, որ 12 տարի շարունակ ծառայության մեջ էր եղել, նախկին զինվոր Հանսային ասում է. «Բոլորիս հույսն այն է, որ Կ.Պոլիսը կընկնի, և բոլորս կգնանք տուն»³¹:

Հուլիսի կեսին Հանսան Կ.Պոլսից ուղևորվում է Չմյունխա: Այստեղ, հունական «Հիպերոլիսի» նավի վրա առաջին անգամ հույն գաղթական ընտանիքներ է տեսնում, որ ստիպված էին հեռանալ քաղաքից՝ Թրակիայում ռազմական վերջին գործողությունների հետևանքով կրկնապատկված բռնաճնշումների պատճառով: Նավ բարձվող ամեն ինչ, անգամ ճանապարհի համար անհրաժեշտ սնունդը, թուրքական ծովային ուժերը մանրակրկիտ ստուգում էին: Հանսան նշում է, որ նավում մեկը մյուսի

30 «Ձեխ հոգեբանի նամակը հայ արևելագետին. հայ ժողովրդի ամենամեծ թշնամիները մեծ պետություններն են», *Օրեր համակոչության ամսագիր*, Պրահա, մարտ-ապրիլ, 3-4, 2000, 18.

31 Karel Hansa, *Z potulek Orientem a haremy ve světle pravdy* (V Č. Budějovicích: nákladem vlastním, 1925), 40:

կողքին կիսաշրջանով նստած, ուղևորների անձնագրերը ստուգում էին չորս անգամ. նախ՝ թուրքական իշխանությունների ներկայացուցիչը, ապա՝ ֆրանսիացի և հույն պաշտոնյաները, իսկ վերջում՝ նավապետը: Հանսան ոչ միայն սեղաններին կնիքների ու փաստաթղթերի գույացող կույտերն է նկատում, այլ նաև նավամատույցում խարխիս գցած ռազմանավերը³²:

Ուղևորներով «Հիպերոլիս» նավը երեկոյան 5-ին հարկադիր խարխիս է գցում Միտիլինիում, քանի որ հաշվարկված էր, որ պետք է Ջմյունիա շարժվի ոչ շուտ, քան կեսգիշերը, որպեսզի տեղ հասնի առավոտյան 8-ին, երբ լուսանա, և հնարավոր լինի խուսանավել ծովի ջրերում առատորեն լողացող ականներից: Հանսան Ջմյունիայում մի ամբողջ օր չի մնում. շտապում է նավահանգստից ոչ շատ հեռու Տրիանդա Ֆիլիդիս փողոցում գտնվող Չեխոսլովակիայի հյուպատոսարան՝ կարգավորելու դեպի Բելյուրթ և Հալեպ ճանապարհը շարունակելու արտոնությունը: Սակայն այդ կարճ ժամանակահատվածում, Առաջին համաշխարհայինի բռնկված անցած Հանսան նկատում է, որ արևելքից արևմուտք ընկած առևտրական այս հանգույց-քաղաքը մեծ աղետի շեմին է:

Հանսան Ջմյունիայում հուլիսի կեսին է եղել: Նա վկայում է, որ հունական գլխավոր հրամանատարությունից մեծ ջանքեր էին պահանջվում քաղաքում կարգ ու կանոն պահպանելու համար, որտեղ մահմեդականների մեծ մասը և նաև այլ ազգերի ներկայացուցիչներ հազիվ էին զսպում իրենց դժգոհությունը հույներից, որոնք Ջմյունիան «իրենց միացնելու խոստումներից և հույսից կուրացած, ըստ էության, միայն այրվող շագանակներ էին հասնում Մերձավոր Արևելքում մյուս պետությունների այսպես կոչված արևելյան քաղաքականությունից: Սարսափելի աղետը, որ վրա հասավ քաղաքին և 1922 թ. սեպտեմբերին հազարավոր քաղաքացիների զոհվելու պատճառ դարձավ, դամոկլյան սրի նման արդեն կախված էր օդում»³³:

Ջմյունիայի աղետի մասին արդեն հինգ տարի անկախացած Պրահայում 2-3 տողանոց լուրեր էին հրապարակվում՝ ընդհանուր պատերազմական, Ազգերի լիգայի ու խաղաղության խորհրդաժողովների լուրերի հետ մեկտեղ: Հիմնականում բոլոր թերթերը հրապարակում էին պաշտոնական «ՉՏԿ» լրատվականի նույն հակիրճ լուրերը՝ ֆրանսիական «Հավաս» գործակալության հղումով: Բնակչությունը դարձյալ տեղեկություն չէր ստանում նախկին դաշնակից Թուրքիայի տարածքում շարունակվող պատերազմի ամբողջական փաստերից ու պատկերներից: Օրինակ՝ «Չաս» (Ժամ) օրաթերթը սեպտեմբերի 11-ին «Հույն-թուրքական պատերազմ» ընդհանուր խորագրով իրարահաջորդ լուրերից առաջինով, որ սեպտեմբերի 10-ով է թվագրված, տեղեկացնում է, որ Փոքր Ասիայից նահանջող հունական առաջին զորամիավորումները, որ պետք է ավի հանվեին Էգեյանի մի կղզում, պահանջել են իրենց հասցնել Պիրելոս նավահանգիստ: Հաջորդ լուրը հայտնում է, որ զինվորներն Աթենքի փողոցներում խռովություն են բարձրացրել՝ թագավորից դժգոհություն հայտնելով: Դրան հաջորդում է նույնքան հակիրճ մի լուր, որ թուրքերի հեծելազոր

32 Նույն տեղում, 84:

33 Նույն տեղում, 99:

դիվիզիան մտել է Ջմյունիա: Սեպտեմբերի 11-ով թվագրված լուրով հաղորդվում է, որ թուրքերը գերեվարել են քաղաքում տեղակայված հունական բանակը, և հույներին չի հասցողվել պահպանել կուտակված ռազմամթերքը, իսկ Քեմալը հասել է Ջմյունիա³⁴:

«Նովա դոբա» (Նոր ժամանակ) օրաթերթը «Պայքար Արևելքի համար» խորագրով լուրերի հատվածում սեպտեմբերի 14-ին հաղորդում է, որ սարսափելի հրդեհ է բռնկվել Ջմյունիայի հունական և հայկական թաղամասերում, և որ իտալական նավերն իրենց քաղաքացիներին հեռացնում են քաղաքից: Արդեն սեպտեմբերի 15-ի թվագրությամբ հաղորդվում է, որ քաղաքի եվրոպական ողջ հատվածը հրո ճարակ է դարձել, և որ ֆրանսիական նավերը 5 000 փախստականների՝ հիմնականում ֆրանսիացիների, տարհանել են քաղաքից³⁵:

Այսպիսին էին Չեխոսլովակիայում հրապարակվող լուրերի սեղմ ու զուսպ հաղորդագրությունները: Առավել ուշադիր ընթերցողը կնկատեր, որ իտալական նավերը տարհանում էին իտալացիներին, ֆրանսիականները՝ հիմնականում ֆրանսիացիներին: Հույն և հայ բնակչությունը մնում էր քաղաքում՝ գազազած ամբոխի հարձակումների ու հաշվեհարդարի թիրախում: Չեխոսլովակիայում հանրությունը ներկայացվող լուրերից չէր կարող հասկանալ, որ իրականում Թուրքիայում ավարտին է հասցվում երկրի քրիստոնյա բնակչության ցեղասպանությունը, թեև «Վեչեռ» (Երեկո) թերթը սեպտեմբերի 18-ի մի լուրով՝ «Մարտերի արձագանքներն ու նորերի սկիզբը», հայտնում է, որ Հունաստանը բողոքի ձայն է բարձրացրել Ազգերի լիգայում, քանի որ գեներալ Գետրոդիսի 7 000 գերեվարված հույն զինվորներին քեմալականները սպանում էին³⁶: Մինչդեռ հենց հրդեհի բռնկման օրը նույն թերթը «Ինչ է սպասում Ջմյունիային» լուրով հույս էր հայտնում, որ անգլիացիներն իբրև ազատ գոտի և պրոտեկտորատ իրենց վերահսկողության տակ կվերցնեն քաղաքը Գդանսկի կամ Եգիպտոսի պես³⁷:

Պատահական չէ, որ Մերձավոր Արևելքից վերադարձած Կարել Հանսայի դասախոսությունները միշտ անցնում էին լեցուն սրահներում, և ունկնդիրները միշտ բազմաթիվ հարցեր էին ուղղում նրան անգամ մանրամասն դասախոսությունից և լուսանկարների ցուցադրումից հետո: Պատահական չէ, որ «Արևելքի արհավիրքները» գիրքը ներառում է նաև Չեխոսլովակիայի մամուլի սինդիկատին Աթենքի մամուլի միության հեռագիրը, որ 1922 թ. հոկտեմբերին 26-ին հրապարակել է «Նարոդնի պոլիտիկա» (Ազգային քաղաքականություն) թերթը. «Փոխանցելով թուրքական բռնակալության տակ թողնված ողջ հույն ժողովրդի և քրիստոնյա բնակչության մրմուռն ու ցավը, հունական մամուլի միությունը բոլոր երկրների լրագրողների ուշադրությունն է հրավիրում աննախադեպ գազանությունների, սպանությունների, ավերածությունների և այլնայլ հրեշտությունների վրա, որ իրագործում են թուրքական հրոսակալամբերը

34 ČTK (Havas). “Řecko-turecká válka”, *Čas. V Praze*: Jan Herben, 11.09.1922, 32 (203), 1.

35 ČTK. (Havas). “Boj o orient”, *Nová doba: Orgán lidu pracujícího*. Plzeň: František Unger, 16.9.1922, 28 (255), 1.

36 “Dozvuky bojů a počátky nových,” *Večer: lidový deník*. Praha: Roln. tiskárna, 18.09.1922, 9 (211), 1.

37 “Co bude se Smyrnou?,” *Večer: lidový deník*. Praha: Roln. tiskárna, 13.09.1922, 9 (207), 1.

Փոքր Ասիայի անպաշտպան քրիստոնյա բնակչության՝ այդ թվում նաև հոգևորականների նկատմամբ, որոնց փողոցներում հրապարակայնորեն կոտորում են: Մինևույն ժամանակ հունական մամուլը բողոքի խստագույն ձայն է բարձրացնում այն վայրագությունների դեմ, որոնք սև բիծ են մարդկության վրա և անարգանք համայն քրիստոնեության համար, ինչպես նաև ընդդեմ բոլոր հրեշտությունների, որոնք կատարվել են գերտերությունների պաշտոնական ներկայացուցիչների առաջ: Համոզված լինելով, որ այս բողոքը քաղաքակիրթ բոլոր ազգերի հույզերի արտացոլումն է, ենթադրում ենք, որ մեղավորներին պատժելն ու ապագայի համար պաշտպանական միջոցառումների ձեռնարկումը նույնպես քաղաքակրթության թելադրանքն են»³⁸:

Հանսան գրում է, որ Չմյունխայի ահասարստ աղետի ժամանակ Մերձավոր Արևելքի նպաստամատույցը միակն էր, որ կարողացավ փոքրասիական այս ափերից հարյուրհազարավոր բռնագաղթյալների օգնություն ցուցաբերել և ապահով շրջաններ տարհանել³⁹: Նա ոչ միայն ականատես էր եղել կառույցի աշխատանքներին, այլև Հալեպում եղած ժամանակ՝ 1922 թ. հոկտեմբեր - նոյեմբերին, մասնակցել Նպաստամատույցի աշխատանքներին և Թուրքիայի տարածքից Ջարարուլուս կայարանով հայ որբերին Սիրիա և Լիբանան տեղափոխելու ծրագրերին⁴⁰: Նույն թվականի դեկտեմբերին Հանսան, իբրև իր ճամփորդության և առաքելության ավարտական մի մեծ քայլ, իտալական «Մարետե» նավով Բեյրութից 896 հույն որբի ուղեկցել է Պիրեյոս նավահանգիստ: Տեղեկություններ չկան՝ արդյոք նրանցից քանիսն են Չմյունխայի աղետի պատճառով որբացած եղել, կամ քանիսն էին, ամիսներ շարունակ կացարանից կացարան անցնելով, ի վերջո հայտնվել երեխաներին Հունաստան տեղափոխող այս նավի մեջ: Հանսան նշում է. «Չմյունխայի սեպտեմբերյան աղետից հետո տարբեր գաղթավայրերում պատասպարված հայ արքայալ բեկորների թիվն ավելացավ Փոքր Ասիայից մեկ միլիոն կին, երեխա և տարեց բռնագաղթյալներով: Աստանդական այս դեգերումները հետագայում պատմաբանները դեռևս կանվանեն քրիստոնյաների ամենամեծ փախուստ, որ հայտնի է մարդկության պատմությանը»⁴¹:

Բեյրութից Պիրեյոս ճանապարհին ծովային ավելոծությունների, զրկանքների, հյուծվածության ու սկարության պատճառով 896 որբերից երկուսը մահանում են: Միայն Պրահայում է Հանսան եզրահանգում, թե որքան հաջող է անցել երեխաների շատ դժվարին, բայց իրականում հաջող տեղափոխությունը, քանի որ կարողացել և իր գրքում էլ ընդգրկել է «Նարոդնի պոլիտիկա» հեղինակավոր թերթի 1923 թ. հունվարի 23-ի «Մահվան նավը» վերնագրով լուրը. «Չմյունխայից Աթենքի Պիրեյոս

38 Կարել Հանսա, *Արևելքի արհավիրքները*, 280:

39 Նույն տեղում, 221:

40 Anna Karapetyan, "Karel Hansa: A Journey of Development and Self-Creation. A complete View," *Parrésia: revue pro východní křesťanství = a journal of Eastern Christian studies*. Červený Kostelec: Pavel Mervart ve spolupráci s Orthodoxyí a Ústavem východního křesťanství Husitské teologické fakulty Univerzity Karlovy v Praze, 15 (2021), 221-274.

41 Կարել Հանսա, *Արևելքի արհավիրքները*, 190:

նավահանգիստ ժամանեց Փոքր Ասիայից 1 600 հույն բռնագաղթյալներով նավը: Նավարկության ընթացքում նավի վրա բռնկվել են վարակիչ հիվանդություններ՝ խոլերա, տիֆ և ծաղիկ, որոնք գաղթականներին հնձում են տասնյակներով: Դիակներն այրում են, առ այսօր այրվել է 35 դիակ, բազմաթիվ հիվանդներ մահամերձ են: Նավը մեկուսացված է, և ոչ ոք իրավունք չունի լքել այն»⁴²:

Հանսան անդրադառնում է, որ մեկ ամիս առաջ իրենց Պիրեյոս հասցրած «Մարետե»-ի հարևանությամբ էլ Կ.Պոլսից ժամանած հայ և հույն բռնագաղթյալներով «Կառնարո» շոգենավում բազմաթիվ երեխաներ են մահացել համաճարակից, զրկանքներից, բացօթյա ուղևորությունից ու ճանապարհի բարդություններից: Հանսան, որ նաև հույն-թուրքական պատերազմի հետևանքների ակասատեսն է եղել՝ Փոքր Ասիայում հույների պատմական ներկայության ավարտին, իր երկու գրքերով որոշ մանրամասներ է ավելացնում Զմյուռնիայի աղետի մասին առկա պատմագիտական նյութին:

Երբ թուրք սահմանապահին նա որևէ տեղեկություն չէր հայտնել քսած լինելու պատճառաբանությամբ. թուրք պաշտոնյան եզրահանգել էր. «Դե, դուք՝ չեխերդ, բոլորդ սիրում եք հույներին»⁴³: Շատ դժվար է համաձայնել նման ընդհանրացման հետ, սակայն ակնհայտ է, որ չեխերի մի ստվար զանգված համակրանքով էր նայում Օսմանյան կայսրության դեմ հանուն ազատության ու անկախության մարտնչող ժողովուրդներին, քանի որ իրենք ևս մեծ ուժեր էին ներդրել Ավստրո-Հունգարիայից անկախանալու պայքարի զոհասեղանին: 1923 թ. սկզբից «Վենկով» (Գավառ) թերթն իրարահաջորդ համարներում հրատարակում է հանրահայտ չեխ ճանապարհորդ Յոզեֆ Կորենսկիի հոդվածաշարը, որը հաջորդ տարի արդեն հրատարակվում է «Թուրքիայով դեպի Ասիայի ծայրերը» գրքով:

Հեղինակը վկայաբերում է չեխական մամուլում դեռևս 1920 թ. հրատարակված մի հոդված: Այն փաստում էր, որ «ծանր հիվանդի» կյանքը երկարել է, ապա ավելացնում. «սակայն անկասկած կմտնի: Թուրքիայից վրեժխնդիր կլինեն իր մեղքերը»⁴⁴: Երեք տարի անց Կորենսկին արձանագրում է, որ «Թուրքիան սրբազան պատերազմ հայտարարեց և իր ձեռքն առավ իր ճակատագիրը: Հիվանդն ինքն իր մահը բերեց», «Հայաստանը, թեև թղթի վրա, ի վերջո արժանացավ նոր և անկախ պետություն ունենալու պատվին», «խելացի կանխատեսողները սխալվել էին իրենց ակտորոշմամբ»⁴⁵: 1922 թվականից եվրոպական բոլոր թերթերն ամեն օր գրում էին Անգորայի ու Քեմալի մասին, դրա քաղաքական, ռազմական, գործարար շրջանակներից մինչև քաղաքի կատուները, որ «հայկական Վանա կատուներ»⁴⁶ էին: Թուրքիայի բազում ոճրագործություններին Զմյուռնիայի մեղքն էլ ավելացավ, սակայն «ծանր հիվանդը» հառնեց և ամրացավ:

42 Նույն տեղում, 278-279:

43 Karel Hansa, *Z potulek Orientem*, 61-62:

44 Josef Kořenský. "Vzkříšení tureckých žen," *Venkov: orgán České strany agrární*. Praha: Tiskařské a vydavatelské družstvo rolnické, 15.02.1923, 18 (37), 4.

45 Josef Kořenský, *Tureckem do asijských dólav* (V Praze: F. Topič, 1924), 30-31.

46 Նույն տեղում, 10:

Անկախության հռչակումից հետո Չեխոսլովակիան հայրենադարձության մեծ ծրագիր էր սկսել: 1921 թ. մարտի 9-ից Հունաստանի կառավարությունն ընդունել էր Չմյունխայում Չեխոսլովակիայի հյուպատոս Զդենեկ Վրբկայի հավատարմագիրը⁴⁷: Համաձայն Չեխոսլովակիայի արտգործնախարարության արխիվների՝ քեմալականների ներխուժումից հետո հյուպատոս Վրբկան փորձում է ապահովել իր երկրի քաղաքացիների անվտանգ ելքը քաղաքից: Սեպտեմբերի 12-ին նա հանդիպում է քեմալականների ներկայացուցչի հետ, համայնքի և իր անձի ապահովության խոստում ստանում, սակայն քաղաքի հրդեհից այրվում է հյուպատոսությունը: Կապը հյուպատոսի հետ կորչում է: Միայն մեկ շաբաթ անց Վրբկան անձամբ Քեմալի հետ հանդիպելուց հետո, ֆրանսիական նավի վրայից կարողանում է հայտնել, որ ողջ է: Սեպտեմբերի 29-ին նա վերադառնում է Չմյունխի, նոր հավատարմագիր ստանում արդեն քեմալականներից, կազմակերպում և ավարտին է հասցնում չեխոսլովակների հայրենադարձությունը Չմյունխայից:

SMYRNA AND THE GREAT CATASTROPHE IN CZECH SOURCES

Anna K. Karapetian

Charles University, Prague

Czech written sources contain noteworthy information about Smyrna at the end of the 19th century, as well as about the subsequent Great Fire that broke out in the city in September 1922. Nevertheless, neither of these timeframes have been thoroughly researched, nor analysed, whether in Armenian academic circles or even in Czechoslovakia, where a large Greek community – who took refuge there after the Greek Civil War – could have raised a wave of interest.

Meanwhile, there are extracts about Smyrna in ordinary Czech travelogues, in ethnographic and geographical studies, in addition to oriental monographs, which unfortunately sometimes carry a clear political connotation. Having been a part of the Austro-Hungarian Empire-an ally of the Ottoman Empire-meant that Czech and Czechoslovak media had a forced and subsequently customary tone respectively, against which the writer and traveler Karel Hansa spoke out in the newly-independent Czechoslovakia.

The examples presented in this article are significant and in certain cases unique new sources on the topic.

Key words: Smyrna, Ottoman Empire, Great Fire of Smyrna, genocide, Czech Republic, Czechoslovakia, Karel Hansa, travelogues.

47 AMZV ČR Praha; I. sekce, Konzuláty I/1,2, kart. 128, č. 22026.

СМИРНА И ВЕЛИКАЯ КАТАСТРОФА В ЧЕШСКИХ ИСТОЧНИКАХ

Анна К. Карапетян

Чешский Карлов университет

Чешские письменные источники содержат заслуживающие внимания сведения о Смирне конца 19-го века, а также о катастрофическом пожаре, вспыхнувшем в городе в сентябре 1922 года. Однако они никогда не становились темами для отдельных научных исследований и анализа не только в армянских научных кругах, но даже в Чехословакии, где обосновавшаяся после разразившейся в Греции гражданской войны большая греческая община могла бы вызвать волну интереса.

Публикации о Смирне на чешском языке есть и в простых рассказах о путешествиях, и в этнографических и географических исследованиях, и в востоковедческих монографиях, но иногда с явной политической направленностью. Факт нахождения в составе Австро-Венгрии, союзницы Османской империи, придал чешской прессе сначала вынужденный, а затем и привычный тон, против которого уже в независимой Чехословакии выступил писатель и путешественник Карел Ганса.

Представленные в этой статье примеры важны, а иногда и уникальны как новые источники по теме.

Ключевые слова: Смирна, Османская империя, Великий пожар Смирны, геноцид, Чехия, Чехословакия, Карел Ганса, литература о путешествиях.

REFERENCES

Hansa, Karel. *Արևելքի արհաւիրքները* [The Horrors of the East]. Prague, 2022.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Աննա Կ. Կարապետյան, Պրահայի Կարլի համալսարանի պատմական գիտությունների դոկտորի թեկնածու: «Կովկաս-Արևելյան Եվրոպա» լրատվական կենտրոնի և «Օրեր» համաներկայական անկախ ամսագրի համահիմնադիրն է, վերջինի լրատվական կայքէջի գլխավոր խմբագիրը:

Ուսումնասիրության ոլորտը՝ հայ-չեխական պատմամշակութային կապերը:

Էլ. հասցե՝ editor@orer.eu

Anna K. Karapetyan, PhD candidate of the Charles University, Prague. She is the co-founder of the “Caucasus-Eastern Europe” information center and the pan-European independent magazine “Orer”, the editor-in-chief of the latter’s website.

Research fields – Armenian-Czech historical and cultural ties.

E-mail: editor@orer.eu

Анна К. Карапетян, Кандидат доктора исторических наук Карлова университета в Праге. Она является сооснователем информационного центра “Кавказ-Восточная Европа” и общеевропейского независимого журнала “Орер,” главным редактором новостного сайта последнего.

Область исследований – Армяно-чешские исторические и культурные связи.

Эл. почта: editor@orer.eu

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Մայա Հ. Գրիգորյան

ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարան, Հայաստան

Հոդվածում քննության նյութ է դարձել Չմյուռնիայի հայկական տպագրության պատմական շրջափուլերից մեկը՝ 19-րդ դարի երկրորդ կեսը: Թեմայի վերաբերյալ հրապարակումները բազմաթիվ են, բայց դրանց մեջ ավելի շատ ներկայացվում են տարբեր ժամանակներում Չմյուռնիայում գործած առանձին տպարանները, մինչդեռ 19-րդ դարի երկրորդ կեսի Չմյուռնիահայ տպագրությունը՝ որպես հայ տպագրության պատմության կարևոր մի օղակ, դեռևս ամբողջական ուսումնասիրության չի ենթարկվել:

Թեման ներկայացվում է հետևյալ ուղղություններով. ինչ գործոններ են նպաստել Չմյուռնիայում հայկական տպագրության զարգացմանը, ինչ ուղղություններով է ընթացել այդ զարգացումը, ինչպես են լուծվել տպագրական սարքավորումների, առանձին տպարանների ֆինանսական խնդիրները, ինչ սահմաններ է ընդգրկել գրավաճառ ցանցը և արդյո՞ք ազդել է Չմյուռնիահայ տպագրության կայացման վրա, ինչ խնդիրներ են առաջացել օսմանյան գրաքննության պատճառով և այլն:

Բանալի բառեր՝ Չմյուռնիայի հայկական տպագրությունը, տպարաններ, տպագրիչներ, տպագրական սարքավորումներ, Չմյուռնիահայ տպագրական արվեստ, գրավաճառ ցանց, օսմանյան գրաքննություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 12.11.2022: Ընդունվել է տպագրության՝ 29.03.2023:
The article was submitted on 12.11.2022 and accepted for publication on 29.03.2023.
Статья поступила 12.11.2022 и была принята к публикации 29.03.2023.

Ինչպես հղել՝ Մայա Հ. Գրիգորյան, «Չմյուռնիայի հայկական տպարանների գործունեությունը 19-րդ դարի երկրորդ կեսին», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 77-89:

How to cite: Maya H. Grigoryan “The Activity of the Armenian Printing Houses of Smyrna in the Second Half of the 19th Century,” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 77-89.

Как сослаться: Майя О. Григорян, “Деятельность армянских типографий в Смирне во второй половине 19-го века,” *Цехаспаназитакан андес* 11, no. 1 (2023), 77-89.

Զմյուռնիայի հայկական տպագրությունը և գարգացմանը նպաստող գործոնները

Զմյուռնիայի տպագրական օջախը միշտ գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Դա են փաստում սույն հետազոտական աշխատանքի համար հիմք դարձած ուսումնասիրությունները: Սակայն պարբերաբար կատարվող մատենագիտական փնտրտուքներն ու սկզբնաղբյուրներն ի հայտ են բերում նոր տվյալներ, որոնք հիմք են դառնում տարաբնույթ տեսակետների և վարկածների առաջադրման համար:

Կ.Պոլսից հետո Զմյուռնիան համարվել է երկրորդ խոշոր հայկական տպագրավայրը Թուրքիայում՝ իրեն բնորոշ բարձրակարգ արվեստով և բովանդակային բազմազանությամբ: Առաջին տպարանն այստեղ հիմնադրվել է 1759 թ. Մահտեսի Մարկոսի ջանքերով, և տպագրվել է ընդամենը երեք գիրք¹: Մի տևական շրջան՝ մինչև 1830-ական թթ. Զմյուռնիայում հայկական այլ տպարան չի գործել: Զմյուռնիահայ տպագրության հաջորդ փուլը ներառում է 1830-1850-ական թթ., երբ, իրար հաջորդելով, գործունեություն են ծավալում Ամերիկյան մարդասիրական ընկերության (հայտնի է նաև «Գուլիելմո Գրֆֆիտի», «Հոման Հալլոկի» անուններով), Արագածունյաց ընկերության, Մեսրոպյան վարժարանի, Խաչատուր Մելիքսեղևյանցի և այլ տպարաններ²: Այս փուլում ավարտելով ձևավորման և կայացման գործընթացը՝ տպագրությունը Զմյուռնիայում թևակոխում է ակտիվ գործունեության ժամանակաշրջան, որը սկսվում է 19-րդ դարի կեսերից և հասնում մինչև 20-րդ դարի առաջին քառորդը՝ մինչև 1922 թ., երբ Զմյուռնիայում Թուրքիայի վարած ցեղասպան քաղաքականության պատճառով ընդհատվում է մշակութային կյանքը:

Զմյուռնիահայ տպագրության գարգացման ակտիվ շրջանը հաջորդում է 1845 թ. այստեղ բռնկված հրդեհին, ինչից տեղի բնակչությունը, հոգևոր-մշակութային կյանքը, այդ թվում՝ տպարանները, նյութական և բարոյական ծանր վնասներ էին կրել³: Այդ հրդեհի պատճառով որոշ տպարաններ նույնիսկ ամբողջովին ոչնչացվել էին: Սակայն 1850-ական թթ. հետո ստեղծված նպաստավոր պայմանները կամ նախադրյալները հիմք են դառնում տպագրական գործը գարգացնելու համար: Որո՞նք էին այդ գործոնները.

ա. Զմյուռնիայի աշխարհագրական դիրքը, որի շնորհիվ այն դարձել էր առևտրական խոշոր կենտրոն: Տեղի բնակչության մեջ մեծ թիվ կազմող հայերը ներգրավված էին առևտրի տարբեր ուղղություններում, ունեին ազդեցիկ դիրք և խոսք⁴: Այլ երկրների

1 Ռաֆայել Իշխանյան, *Հայ գիրքը 1512-1920* (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1981), 82:

2 Արշակ Ալոյսյանցան, *Տպագրության արուեստը և Հայք* (Երևան, Նաիրի, 2013), 414-420:

3 Ալբերտ Խառատյան, «Հայ գրատպությունը Կ.Պոլսում և Զմյուռնիայում (1567-1860-ական թթ.)», *Լրաբեր հասարակական գիտությունների* 4 (2012), 9:

4 Պետրոս Սիմոնեան, *Յուշամատեն, Հայկական Զմիռնիան*, հրատարակություն Զմիռնիոյ եւ շրջաններու հայրենակցական վերաշինաց միության (Փարիզ, Արաքս, 1936), 14-16: Հ. Յակոբ վ. Քոսեան, *Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս*, հատոր Ա., Զմիռնիա եւ Հայք (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1899), 270:

հետ առևտրական կապերի շտրիիվ նրանք արագ տեղեկանում էին տարբեր ոլորտների տրարարություններին և յուրացնում դրանք: Եվրոպական գրաստպության նրբությունների յուրացումը բացառություն չէր⁵:

բ. Ֆինանսական միջոցների առկայությունը. յուրաքանչյուր տպարանի հիմնադրում և գործունեություն ենթադրում է ֆինանսական ներդրում և շրջանառություն: Զմյուռնիայում նոր տպարանների ստեղծումը հնարավոր էր, քանի որ տեղի հայ վաճառական դասն ուներ հնարավորություններ և առևտրական կապեր⁶: Հակոբ վրդ. Քոսյանը փաստում է, որ տեղի վաճառական հայերի համար արվեստի և արհեստի տարբեր ճյուղերի հովանավորումը խիստ կարևոր էր, սակայն ոչ բոլոր ճյուղերին էին ուշադրություն դարձնում⁷: Տպագրությունը գտնվում էր նրանց անմիջական հետաքրքրությունների կենտրոնում, քանի որ վաճառականները քաջ գիտակցում էին, որ տպարանների հիմնադրումը, տպագրական գործի զարգացումը կունենա նաև ֆինանսական եկամուտ:

գ. Զմյուռնիայի հոգևոր-մշակութային դաշտի ընդլայնումն ու զարգացումը. սա կապված էր նաև Թուրքիայում սկսված կրթական և մշակութային նոր շարժման հետ: Արշակ Ալպոյաճյանը փաստում է, որ, 19-րդ դարի առաջին կեսից սկսած, Թուրքիայում կրթության որակի փոփոխության խնդիրն առաջնահերթություն էր դարձել իշխանությունների համար⁸: 1839 թ. Թուրքիայի սահմանադրական փոփոխությունների կետերից մեկը կրթական կյանքի զարգացումն էր, հանրային կրթության ոլորտում բարեփոխումները⁹: Հայերը լիովին օգտվում էին այս բարեփոխումներից՝ շտրիիվ բարերարների առատաձեռն նվիրատվությունների: 19-րդ դարի երկրորդ կեսին Զմյուռնիայում կրթամշակութային կյանքը հաջողություններ է գրանցում¹⁰: Այս շրջանում գործում էին բազմաթիվ վարժարաններ (գլխավորապես՝ Մեսրոպյան, Հռիփսիմյան), նախակրթարաններ, գրախանութներ, ընթերցարաններ, հասարակական և բարեգործական տարբեր կազմակերպություններ են: Այս ամենը նպաստում էր տպարանների, տպագիր նյութերի անունների և տպաքանակի ավելացմանը: Տեղի հայ բնակչությունն ամեն ինչ անում էր՝ պահելու ազգային դիմագիծը և մշակույթը, իսկ տպագրության զարգացումը լավագույն միջոցներից մեկն էր:

դ. Գրավաճառ ցանցի ընդլայնումը. 19-րդ դարի երկրորդ կեսին Զմյուռնիայում

5 Արշակ Ալպոյաճյան, «Զմյուռնիո տպարանները», *Պատմա-քանասիրական հանդես* 2 (1964), 68:

6 Նույն տեղում:

7 Քոսյան, *Հայքի Զմյուռնիա եւ ի շրջակայս*, 288:

8 Ալպոյաճյան, «Զմյուռնիո տպարանները», 76:

9 «Ազգային սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը: Դ. Հանրային կրթութեան զարգացումը եւ մտաւորականութեան ազդեցութիւնը: (Յիսսամեայ տարեդարձի առթիւ)», *Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց 1910* (Կ.Պոլիս, տպ. Տէր-Մինասեան, [1909]), 190, 205:

10 Միմոնեան, *Հայկական Զմյուռնիան*, 18: Համանման վկայություններ ունեն Հակոբ վրդ. Քոսյանը, Արշակ Ալպոյաճյանը, Ենոկ Արմենը և ժամանակի մի շարք գործիչներ: Տե՛ս Քոսյան, *Հայքի Զմյուռնիա եւ ի շրջակայս*, 116-270: Ենոկ Արմեն, *Թրքա-հայ գրականութիւնը մամուլի ազատութեան թականին*, (Կ.Պոլիս, Շանթ, 1909), 46-48: Ալպոյաճյան, «Զմյուռնիո տպարանները», 76: Մ. Ն. Հակոբյան, «Զմյուռնահայ մշակութային կյանքը 1800-1850-ական թվականներին», *Լրաբեր հասարակական գիտությունների* 9 (1972): 19:

գործում էր գրավաճառ ակտիվ ցանց: Շրջանառության մեջ էին դրվում ոչ միայն տեղում տպագրված նյութերը, այլև հայաբնակ այլ վայրերում, հատկապես Կ.Պոլսում տպագրված գրքերն ու պարբերականները: Գրավաճառ ցանցի արդյունավետ գործունեության շնորհիվ ընդլայնվում էին նաև զմյուռնիահայ տպագրության արդյունքների սպառման շրջանակները: Այստեղ տպագրված գրքերը վաճառվում էին Կ.Պոլսի գրավաճառանոցներում, Արևմտյան և Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում և եվրոպական մի շարք երկրներում: Բացի գործող գրավաճառանոցներից՝ գրքերը և պարբերականները հնարավոր էր գնել հենց տպարաններից՝ արժեքի որոշակի տարբերությամբ: Տպագիր նյութերի, բաժանորդագրության պայմանների մասին հայտարարությունները տպագրվում էին առաջին հերթին նորաստիպ գրքի կամ հանդեսի կազմի դարձերեսին, վերջին էջին, վերջերեսին կամ մամուլում¹¹: Գրքի կամ պարբերականի բաժանորդագրությունն ապահովելու համար հաճախ հայտարարությունը տպագրվում էր նախապես՝ ազդարարելով տվյալ նյութի տպագրությունը: Բոլոր հայտարարությունների մեջ նշվում էին բովանդակությունը, արժեքը և հասցեն՝ որտեղից կարող են ձեռք բերել հրատարակությունը: Գրավաճառանոցների, տպարանների միջև ուժեղ մրցակցություն կար, բայց նրանց գործունեության արդյունավետությունը գլխավորապես կախված էր փոխհամագործակցությունից:

Զմյուռնիահայ տպարանները և Օսմանյան կայսրության օրենսդրությունը (19-րդ դարի երկրորդ կես)

Թուրքիայի տարածքում հայկական տպարանները գործում էին Օսմանյան կայսրության գրաքննական օրենքների շրջանակում: Ի տարբերություն նախորդ կիսամյակի՝ 19-րդ դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության ողջ տարածքում գրաքննությունն ավելի էր խստացել, ինչը բարդություններ էր ստեղծում տպարանների համար: Ալպոյաճյանը վկայում է, որ 1830-ական թթ. Զմյուռնիայի ամերիկյան ընկերության տպարանի վրա չեն տարածվել թուրքական գրաքննության օրենքները, քանի որ Ամերիկայի քաղաքացիների իրավունքներն անձեռնմխելի էին, ինչը հնարավորություն էր տալիս անկաշկանդ զբաղվել գրահրատարակչությամբ¹²: Նույն աղբյուրը նաև հավաստում է, որ 19-րդ դարի երկրորդ կեսին գրաքննությունը գավառներում խիստ չի եղել¹³: Ենովք Արմենը, սակայն, փաստում է, որ Թուրքիայում գրաքննությունն ավերիչ ազդեցություն է ունեցել ընդհանրապես թուրքահայ գրական կյանքի վրա՝ կաշկանդելով և ճնշելով ազատամիտ հայացքներն ու գաղափարները¹⁴: Ըստ Ալբերտ Խառատյանի՝ գրաքննությունը, անկախ իր դրսևորումներից, հանդես

11 Ներկայացնենք միայն մեկ օրինակ. «Վռամ և Մարի կամ սրտի գոհեր» գրքույկի վաճառքի հայտարարության մեջ նշվում է, որ այն կարելի է ձեռք բերել նաև Մամուրյան տպարանից: Տե՛ս Յայտարարութիւն, *Արևելյան մամուլ* (Զմյուռնիա), 15 դեկտեմբեր 1894, կազմի դարձերես:

12 Ալպոյաճյան, «Զմյուռնիո տպարանները», 75:

13 Նույն տեղում, 84:

14 Արմեն, *Թրքա-հայ գրականությունը*, 8:

էր գալիս իբրև սուլթանական վարչակարգի հովանավոր, դրա դեմ մղվող ցանկացած գաղափար ճնշող գործոն: Այն սրբագրում էր բռնակալական իրավունքները¹⁵:

1857 թ. փետրվարի 15-ից Թուրքիայում սկսում է գործել «Տպարանների մասին» օրենքը, ըստ որի՝ ոստիկանությանը թույլ էր տրվում անհրաժեշտության դեպքում բռնագրավել «վնասակար» գրքերը, փակել տպարանները, քրեական գործ հարուցել օրինազանցների դեմ¹⁶: Այս օրենքի շրջանակում ազգային գործունեությունը, ազգային-ազատագրական գաղափարների տարածումը, հակաօսմանյան տարրի առկայությունը համարվում էին անընդունելի երևույթներ. դա ընդգծվում է հատկապես համիդյան իշխանության տարիներին: Ի տարբերություն ցարական Ռուսաստանի գրաքննական կանոնների, որ մինչև 1905 թ. բոլոր տպագրությունները նախապես էին գրաքննվում, դա արտացոլվում էր տպագիր գրքերի, հանդեսների տիտղոսաթերթերի դարձերեսներին: Զմյուռնիայում 1851-1900 թթ. տպագրված գրքերի վրա նման նշումներ առկա չեն: Սակայն նշված ժամանակահատվածում Թուրքիայում գրաքննությունը կատարվել է տպագրությունից առաջ և հետո՝ համապատասխան մարմինների վերահսկողության ներքո¹⁷: Հատկապես տպագրությունից հետո կատարված գրաքննությունը թույլ է տվել բռնագրավել ամբողջ տպաքանակը կամ դադարեցնել ամսագրերի, թերթերի կամ տպարանի գործունեությունը: Ասվածի վերաբերյալ բազմաթիվ փաստեր կան: Մատթեոս Մամուրյանն ազդարարում է նոր տպարանի հիմնումը և նշում. «Հրատարակել ինչ որ Տէրութեան տպագրական դիւանը կ'արտօնէ»¹⁸, այսինքն՝ կանխորոշված է եղել տպագրության թույլատրելի թեմաների շրջանակը: Թեոդիկը վկայում է, որ Գրիգոր Մսերյանի տպարանը փակվել է համիդյան վարչակարգի տարիներին՝ նրա ազատասիրական, հայրենասիրական ձգտումների պատճառով¹⁹: 1860 թ. հուլիսին ժամանակավորապես փակվում է Տետեյան տպարանը՝ «Միութին» հանդեսն առանց արտոնագրի հրատարակելու մեղադրանքով: Ահա թե ինչու մատենագիտական ցանկերում Տետեյան տպարանի 1860 թվագրությամբ որևէ գիրք չկա: Տպարանի լիարժեք վերագործարկումը հնարավոր է դառնում 1861 թ. սկզբին²⁰:

19-րդ դարի երկրորդ կեսին Զմյուռնիայում ցանկացած տպարանի հիմնում հնարավոր է եղել միայն պատկան մարմինների թույլտվության պարագայում: Բացառություն են կազմում 1850-ական թթ. ինքնաշեն տպարանները, որոնք շատ կարճ կյանք են ունեցել՝ աչքի չընկնելով տպագիր արտադրանքի որակով ու քանակով: Արտոնագիր ստանալու և տպագրությունը սկսելու գործընթացը կարող էր

15 Ալբերտ Խառատյան, «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1870-90-ական թթ.)», *Պատմա-քանասիրական հանդես* 4 (1985), 103:

16 Ալբերտ Խառատյան, *Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908 թթ.)* (Երևան, ՀԽՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, 1989), 38:

17 Նույն տեղում, 103-106:

18 Յայտարարություն, *Արևելեան մամուլ հանդես* (Զմիտնիա), no. 5 (1883), 210:

19 Թեոդիկ, *Տիպ ու տառ*: «Գիր»ին ծագման եւ միջազգային ու հայկական տպագրութեան վրայ ձգտած ակնարկ մը (Կ.Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1912), 138:

20 Խառատյան, *Արևմտահայ պարբերական մամուլը*, 37-38:

տարիներ տևել, ինչը լրացուցիչ բարդություն էր տպարանատերերի համար: Օրինակ՝ Հարություն Տետեյանը հրաման-թույլտվություն ստանալու համար 1850 թ. դիմել է կառավարությանը: Արտոնագիրը տրվել է 1851 թ., որից հետո հայկական թաղամասում կարողացել է հիմնել իր տպարանը (առաջին գիրքը տպագրվել է ավելի ուշ՝ 1853 թ.)²¹: Մամուրյանին արտոնվել է 1871 թ. հունվարից հրատարակել «Արևելեան մամուլ» ամսագիրը²²: Նույն թվականին նա դիմել է նաև սեփական տպարանը բացելու թույլտվություն ստանալու համար, սակայն արտոնագիրը նրան տրվել է շատ ավելի ուշ²³: Ահա թե ինչու է ամսագիրը սկզբում տպագրվել Տետեյան տպարանում: 1877 թ. դեկտեմբերի համարում խմբագրությունը զգուշացնում է, որ բաժանորդների պակասի, ֆինանսական դժվարությունների պատճառով ժամանակավորապես դադարեցնում է ամսագրի հրատարակությունը: Նույն թվականի վերջին Գ. Մսերյանը օգտվել է Մամուրյանի արտոնագրից, բացել իր տպարանը և 1878 թ. մայիսից ամսագրի տպագրությունը շարունակել մինչև հոկտեմբեր²⁴: Ներքին հակասությունների պատճառով 1878 թ. հոկտեմբերից ամսագիրը տպագրվել է «Մամուրեան» տպարանում: 1880 թ. Մսերյանն ու Մամուրյանը դիմել են պատկան մարմիններին՝ առանձին արտոնագրեր ձեռք բերելու համար: Մսերյանն այն ձեռք է բերել նույն թվականին, իսկ Մամուրյանը՝ 1883 թ. սկզբին²⁵: Տպարանի գործարկումը հնարավոր է դարձել 1883 թ. մայիսի 1-ից՝ հովանավորների աջակցության շնորհիվ՝ ազդարարելով, որ այսուհետ իր թերթը հրատարակվելու է նոր տպարանում, որի պաշտոնական արտոնագիրը վաղուց ստացվել էր, սակայն տարբեր պատճառներով (հիմնականում՝ ֆինանսական) չէր կարողացել միանգամից սկսել գործունեությունը²⁶:

Նշված բոլոր փաստերը վկայում են, որ տպարանի հիմնադրումը ողջ Օսմանյան կայսրությունում, այդ թվում՝ Զմյուռնիայում, պահանջել է ֆինանսական, բարոյական ներդրում և համբերություն:

Զմյուռնիահայ տպարանների զարգացման առանցքային ուղղությունները

Պետք է տարբերակել 19-րդ դարի առաջին կեսին հիմնված տպարանները (Ամերիկյան մարդասիրական ընկերության, «Արշալոյս Արարատեան» թերթի տպարանները, Պոդոս և Պետրոս Թադիկյանների վիմագրատունը), 19-րդ դարի երկրորդ կեսին կազմավորված տպարանները (Գրիգոր Մսերյանի, Տետեյան եղբայրների, Թուրակ Հայկազյանի, Երկասերի, Վարդովյան) և 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի առաջին քառորդը գործած տպարանները (օրինակ՝ «Մամուրեան» տպարանը):

21 Քութան, *Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս*, 273:

22 Նպատակ, *Արևելեան մամուլ հանդէս* (Զմիռնիա), no. 1 (1871), 1:

23 Քութան, *Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս*, 281:

24 Ազդ, *Արևելեան մամուլ հանդէս* (Զմիռնիա), no. 4 (1879), կազմի վերջերես:

25 Քութան, *Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս*, 281:

26 Յայտարարություն, 209-210:

Կան նաև գրքեր, որոնց վրա տպարանը նշված չէ. մատենագիտական ցանկերում պահպանվել են միայն դրանց անունները:

Ռ-աֆայել Իշխանյանը նշում է, որ Զմյուռնիայում գործել է 20 տպարան²⁷. այս թիվը հարաբերական և վիճելի է (19-րդ դարի երկրորդ կեսին Զմյուռնիայում հայկական տպարանների թիվն աճել է):

Ժամանակակիցները փաստում են, որ 1850-1860 թթ. Զմյուռնիայում տպագրության նկատմամբ հետաքրքրությունը մեծ ոգևորություն է առաջացրել բնակչության, հատկապես՝ պատանիների շրջանում: Ալպոյաճյանը գրում է, որ ստեղծվել են բազմաթիվ ինքնաշեն տպարաններ, որոնցից հիշատակում է «Թութակ Հայկազեան»-ի և «Երկասեր»-ի տպարանները²⁸: Աշակերտական այս թերթերի տպարանները գործել են 1854 թվականից: Մ. Նուպարեանը նշում է, որ Մեսրոպյան վարժարանի աշակերտները բաժանվում են երկու խմբի և տեսուչ Անդրեաս Փափազյանի աջակցությամբ տպարաններ հիմնում²⁹: Առաջին խումբը հրատարակում է «Երկասեր»-ը, երկրորդը՝ «Թութակ Հայկազեան»-ը: Այդ տպարանները խղճով հաստատություններ էին՝ տեղակայված քաղաքի մի խուլ անկյունում: Տպագրական մամուլը հեռու էր իսկական տպարանին բնորոշ մամուլից, քանի որ աշակերտները դրամ չունեին, բնականաբար չէին կարող կատարելագործել սարքավորումները: Մեսրոպ Նուպարյանը գրում է, որ «Երկասեր»-ի մամուլիչը հարևան ատաղձագործի մոտ պատրաստել է տվել հայրը, իսկ տառերը տրամադրել է Հարություն Տետյանը. դրանք Մյուհենտիայան տպարանի տառերն էին, որոնք ժամանակին բերել էր Կ.Պոլսից³⁰: Գրաշարը եղել է հենց ինքը Նուպարյանը: Քանի որ տառերը հնամաշ էին, իսկ սարքավորումները՝ ինքնաշեն ու փայտյա, տպագրությունը միանգամից չէր ստացվում, այլ մի քանի փորձից հետո: Որակը շատ ցածր է եղել: Այս երկու տպարաններում տպագրվել են միայն համանուն թերթերը. գրքեր չեն հրատարակվել: Թերթերի գնորդները հիմնականում աշակերտների ծնողները կամ բարեկամներն են եղել, իսկ ստացված եկամուտը ներդրվել է տպարանին անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու համար:

Այս երկու տպարանների մասին մեզ հասել են միայն հուշեր, սակայն Թեոդիկն առանձնացնում է աշակերտական բազմաթիվ փոքր տպարաններ³¹, օրինակ՝ «Բողբոջ» աշակերտական թերթիկը, որը ներառված է նաև Ա. Կիրակոսյանի կազմած մամուլի համահավաք մատենագիտական ցանկում³²: Հայտնի է, որ աշակերտական այս թերթիկը տպագրվել է 1862 թ. Մեսրոպյան վարժարանի սաների ջանքերով,

27 Իշխանյան, *Հայ գիրքը*, 134:

28 Ալպոյաճյան, «Զմյուռնիո տպարանները», 88:

29 Մեսրոպ Նուպարեան, «Իմ մանկական յիշատակներէս», *Արեւելեան մամուլ թերթ* (Զմյուռնիա), 15 նոյեմբերի 1894, 703:

30 Նույն տեղում:

31 Թեոդիկ, *Տիպ ու տառ*, 136:

32 Նույն տեղում: Տե՛ս նաև *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ*, կազմ.՝ Ա. Կիրակոսյան (Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 1967), 264:

հավանաբար նույնպես ինքնաշեն տպարանում: Բացի սրանից՝ 19-րդ դարի երկրորդ կեսին հիշատակվում է Վարդովյան տպարանը, որի մասին տվյալներ չկան: Միայն գիտենք, որ այստեղ է տպագրվել «Մէտեղորա» ամսագրի 1881 թ. 3-րդ համարը:

19-րդ դարի երկրորդ կեսին հայ տպագրության զարգացման գործում վճռորոշ դեր են ունենում Տետեյան եղբայրների, Գրիգոր Մսերյանի, Մատթեոս Մամուրյանի տպարանները: Հատկապես Տետեյան եղբայրների տպարանի գործունեության շնորհիվ այս շրջանը բնորոշվել է որպես զմյուռնիահայ տպագրության ոսկեդար³³:

Ինչո՞վ էր առանձնանում զմյուռնիահայ տպագրության այս շրջանը. տպագրական նոր սարքավորումներ են ներդրվում, որոնք հնարավորություն են տալիս արագացնելու տպագրական գործընթացը և բարելավելու որակը: Օրինակ՝ Տետեյան եղբայրները Վենետիկից, Վիեննայից և Կ.Պոլսից (Մյուհենտիպյան գրեր) անհրաժեշտ սարքավորումներ են բերում և պատվիրում գործիքներ, նոր տառատեսակներ, զարդագրեր, զարդագծեր³⁴:

Պետրոս Թադիկյանը 1864 թ. Եվրոպայից Զմյուռնիա է բերում նոր սարքավորումներ, արագատիպ մամուլ, վիմագրական պատկերներ և բազմառոճ, տարբեր լեզուների տպագրության համար նախատեսված տառատեսակներ, ինչը հնարավորություն է տալիս տպաքանակներն ավելացնելու և եվրոպական տպագրության չափանիշներին համընթաց գործելու³⁵:

Անհրաժեշտ սարքավորումների ներմուծման շնորհիվ տպարանները հրատարակչական պատվերներ են ընդունում: Մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը Զմյուռնիայում (ինչպես հայկական այլ տպագրավայրերում) առավելապես գրքեր, թերթեր, ամսագրեր, հետագայում նաև հայտարարություններ, կոչեր, ազդագրեր, հրավիրատուներ են տպագրվում³⁶: Թադիկյանի վիմագրատունը 1864 թ. ստեղծում է հրատարակչական հատուկ բաժին՝ ընդլայնելով պատվերների շրջանակը (հրատարակությունները հիմնականում օտար լեզուներով էին)³⁷: Գրիգոր Մսերյանի տպարանում հրատարակված «Ընթերցարան»-ի (Զմյուռնիա, 1878) կազմի վրա նշված է. «Նորահաստատ տպարանս պատրաստ է խիստ աժան գիներով և մաքուր տպագրությամբ ամեն տեսակ գիրք, պարբերական թերթեր և յայտարարություններ, հարսանիքի և յուղարկատրութեան ծանուցագիրներ եւս տպելու»: Քոսյանը պնդում է, որ Մսերյանի տպարանում տպագրվել են նաև տեղեկագրեր, աննշան տետրեր³⁸: Նշված օրինակները փաստում են, որ մանր տպագրությունները հրատարակչական

33 Սիմոնեան, *Հայկական Զմյուռնիան*, 35:

34 Քօսեան, *Հայք ի Զմյուռնիա եւ ի շրջակայս*, 274:

35 Նույն տեղում, 279:

36 Համո Սուքիասյան, Ստյոպա Պետոյան, «XIX դարի վերջին քառորդի և XX դարի սկզբի արևելահայ «մանր տպագրությունների» աղբյուրագիտական արժեքը», *Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828-1920 թվականներին* (հոդվածների ժողովածու) (Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2021), 154:

37 «Ազգային սահմանադրությունը», 190:

38 Քօսեան, *Հայք ի Զմյուռնիա եւ ի շրջակայս*, 279:

գործի բաղկացուցիչ մաս են եղել, որ հնարավորություն են տվել լուծելու ֆինանսական առաջնահերթ խնդիրները:

Պետրոս Միմոնյանը գրում է, որ Տետեյան տպարանի հրատարակություններով ողողված էին ոչ միայն Չմյունխայի և Կ.Պոլսի, այլև արտասահմանի գրավաճառանոցները³⁹:

Չմյունխայի տպարաններում 19-րդ դարի երկրորդ կեսին հրատարակվում էին հայերեն, հայաստա թուրքերեն, հունարեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, թուրքերեն, եբրայերեն գրքեր և պարբերականներ: Օտար լեզուների տառատեսակները Եվրոպայից Չմյունխա էր բերել Թադիկյանը⁴⁰:

Տպագիր նյութերը բազմաբովանդակ էին. թարգմանական գրականության հիմքում կանգնած էր Տետեյան տպարանը, որի շնորհիվ թարգմանական գրականությունը լայն տարածում է գտնում Օսմանյան կայսրությունում: Թարգմանիչները Մեսրոպյան վարժարանի սաներն էին:

Հայտնի է, որ Եգիպտոսի փոխարքայի գործակատար Պետրոս Յուսուֆյանը 1835 թ. մեծ գումար էր կտակել Մեսրոպյան վարժարանին ֆրանսերենի և անգլերենի ուսուցման համար: Այդ շրջանից սկսած՝ վարժարանում ձևավորվում և հասունանում է այն սերունդը, որի շնորհիվ 19-րդ դարի երկրորդ կեսին թարգմանական գրականությունը Չմյունխայում ապրում է անսխառն գարգացում: Տետեյանը, Մսերյանը, Մամուրյանը, քաջ գիտակցելով արտասահմանյան դասականների գործերի թարգմանության և տարածման կարևորությունը, այս ուղղությունը դարձնում են իրենց գործունեության առաջնահերթություն (Տետեյանը վճարում էր թարգմանիչներին. մի բան, որ նախկինում ընդունված չէր):

Դժվար է ամբողջացնել այս շրջանի տպագիր գրքերի, պարբերականների անունները և քանակը: Մատենագիտական հետազոտությունները փաստում են, որ կան անուններ, որոնք մինչ օրս անհայտ են:

2021 թ. դրամաշնորհային ծրագրի շրջանակում կատարված ուսումնասիրությունից պարզվում է, որ Ստամբուլի քաղաքապետարանի գրադարանն ունի հայերեն գրքերի ու պարբերականների հարուստ հավաքածու⁴¹: Գրքային հավաքածուն ուսումնասիրելիս առանձնացվել է 185 անուն գիրք (դրանք մատենագիտական ցանկերում հիշատակված չեն եղել, կամ հայտնի են եղել միայն անունները): Այդ հավաքածուն ներառում է Չմյունխայում տպագրված 95 անուն գիրք, որոնցից, օրինակ, Շատոբրիանի «Վերջին Աբենստերաժի արկածները» (Տետեյան տպարան, 1869) վեպի հայաստա թուրքերեն թարգմանությունն անհայտ է ուսումնասիրողներին:

Վերջին տարիների թվայնացման գործընթացը մատենագետներին հնարավորություն տվեց ուսումնասիրելու աշխարհի ամենամեծ գրքային պահոցները: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում նաև Չմյունխայի հրատարակությունները: Թուրքիայի

39 Միմոնեան, *Հայկական Չմյունխան*, 35:

40 Քոստան, *Հայք ի Չմյունխա եւ ի շրջակայս*, 279:

41 *Հայ գիրքը Թուրքիայում: Պրակ Ա. Հայերեն և հայաստա թուրքերեն գրքերի մատենագիտություն*. Ստամբուլ, կազմ. Աստղիկ Վարդանյան (Երևան, Անտարես, 2022), XXI:

գրադարանները մինչ օրս փակ են հայ ուսումնասիրողների համար, մինչդեռ Չմյուռնիայում տպագրված գրքերի և պարբերականների ամբողջական հավաքածուները սպասում են իրենց ուսումնասիրողներին:

THE ACTIVITY OF THE ARMENIAN PRINTING HOUSES OF SMYRNA IN THE SECOND HALF OF THE 19TH CENTURY

Maya H. Grigoryan

Fundamental Scientific Library of National Academy of Sciences, Armenia

SUMMARY

The article studies the Armenian printing in Smyrna in the second half of the 19th century. There are a great number of publications on this subject but the accessible research mostly represents particular printing houses from various periods, whereas the Armenian printing in Smyrna in the second half of the 19th century, as an important historical unit of Armenian printing, has not been fully investigated.

The theme is represented in the following directions: what factors contributed to the development of the Armenian printing in Smyrna; what directions did this development head in; how were the issues of the printing equipment and finances of certain printing houses solved; what are the borders of booksellers' network; whether they affected on the establishment of Armenian printing in Smyrna; what challenges did they face because of Ottoman censorship, etc.

Several political, economic and social factors contributed to the development of Armenian printing in Smyrna. Due to its geographical location, they were able to quickly adopt the traditions of European printing houses. Armenian printing houses in Smyrna functioned in the framework of Ottoman Empire censorship, according to the requirements of its legislative and juridical standards. Books, magazines, newspapers, collections, bulletins, posters, statements etc. were published in Armenian and other languages in Smyrna at the time of interest. The number of Armenian printing houses as well as printed materials has been growing, but it is too early to speak of a certain amount as it has only been partly investigated. We believe it is necessary to continue bibliographic research and the investigations of the origins in order to make the printing history of this location complete.

Keywords: Armenian printing in Smyrna, printing houses, printers, printing equipment, Armenian printing art in Smyrna, bookseller network, Ottoman censorship.

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ ТИПОГРАФИЙ В СМИРНЕ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 19-ГО ВЕКА

Մայր Օ. Գրիգորյան

Փунդամենտալնայա նաւանա քիպլիոթեքա Նաւանոնալնայա աքադեմիա նաւան, Արմենիա

ՔԵՅՅՈՄԵ

Յտաթեքա քրեդմեթոմ իսսևեդանայա սթալ իսթորիքսկիյ քերիոդ արմանքոքո քնիքոքեթանայա Տմիրնայ – վթորայ քոլոնայա 19-քո վեքա. Քսբլիքանայա նա էթսա տեքսա մնոքոքսևննայա, նո վ ճոսթսբնայա նա մ իսսևեդանայա վոլքսե քրեդսթաևնայա օթևեղնայա տիքոքրաֆիայա, ճեյսթոսվանայա վ ճաննայա քերիոդսա վրեմենայա Տմիրնե, տոքսա կաք արմանքայա տիքոքրաֆիայա վթորայ քոլոնայա 19-քո վեքա, կաք վաքնոք ճեքոնայա իսթորիայա արմանքոքո քնիքոքեթանայա, էքսե նե քոլոնայա ճեքոնայա իսսևեդանայա.

Տեքսա քրեդսթաևնայա քո նեսքոլքնայա նաքրաևնայաքս: կաքնայա քաթոքսթոսվանայա ճեքոնայա ճեքոնայա արմանքոքո քեթանայա Տմիրնե, քո կաքնայա նաքրաևնայաքս քրոթեքալո էթո ճեքոնայա, կաք ճեքալանայա քոնայա վրոթեքոնայա քեթանայա օբորսդոսանայա, օթևեղնայա տիքոքրաֆսկիյ քրեդքրիայաքս, կաքնայա քրաևնայա օքսվաթալո սեթնայա կնիքոտորքոքեթանայա քո վոլնայա ճեքոնայա արմանքոքո քեթանայա Տմիրնե, կաքնայա վրոթեքոնայա օքսմանայա ճեքոնայա և տ. ճ.

Ճեքոնայա արմանքոքո տիքոքրաֆիայա Տմիրնայ քոնօթոսթոսվանայա ճեքոնայա վոլնայա քոլոնայա քեթանայա օքսմանայա քոլոնայա քեթանայա արմանքոքո Տմիրնայ ճեյսթոսվանայա ճեքոնայա օքսմանայա Տմիրնայ իմքերիայա ի ճեքոնայա ճեքոնայա և վրոթեքոնայա նորմայա և տրեքոնայաքս. Յ ինթերսսևեդանայա նաքրաևնայաքս ճեքոնայա քեթանայա արմանքոքո և ինօթրաննայա կնիքոքս, ճեքոնայա, ճեքոնայա, սբորնայա, քոլոնայա, աֆիշայա, օքսվաթանայա և տ. ճ. Յ վթորայ քոլոնայա 19-քո վեքա քնիքո արմանքոքո տիքոքրաֆիայա Տմիրնե, ա տաքսե քեթանայա մաթերիալոս վեքոնայաքս, օթևեղնայա էքսե ճեքոնայա քոլոնայա օքսմանայա քոլոնայա, տաք քաք էթոս ճեքոնայա քոլոնայա ճեքոնայա ճեքոնայա ճեքոնայա. Տքաթեքա, կոքո նեօթոսվանայա քրոթեքոնայա ճեքոնայա քոլոնայա և ճեքոնայա վրոթեքոնայաքս, կոքո ճեքոնայա էթոս ճեքոնայա արմանքոքո տիքոքրաֆիայա վոլնայա քոլոնայա քեթանայա.

Քլոքեյսայա սլոքա: Տմիրնայա արմանքայա տիքոքրաֆիայա, տիքոքրաֆիայա, տիքոքրաֆսկոքո օբորսդոսանայա, Տմիրնայա արմանքոքո վոլնայաքրաֆիքոքո իսսևեդանայա, կնիքոտորքոքայա սեթնայա, օքսմանայա քեթանայա.

REFERENCES

Աղքալնայա սսևեդանայաքրոթեքոնայաքս, իքր ճեքոնայաքս և կիրաևնայաքրոթեքոնայաքս: Գ. Հաննայաքրոթեքոնայա կրոթեքոնայա քրոթեքոնայաքս և ճեքոնայաքրոթեքոնայաքս (Յրոթեքոնայաքս տարևաքրոթեքոնայաքս)

անթի) [The National Constitution, its Origin and Application. 4. The Development of Public Education and the Influence of the Intelligentsia (On the Occasion of the Fiftieth Anniversary)]. Constantinople: Ter-Minasyan Press, 1909;

Ազդ [Notification], *Arevelyan mamul* (Smyrna), no. 4 (1879);

Vardanyan, Astghik (comp.) *Հայ գիրքը Թուրքիայում: Պրակ Ա. Հայերեն և հայաստան թուրքերեն գրքերի մատենագիտություն* [Armenian Book in Turkey. Vol. 1. Bibliography of Armenian and Armeno-Turkish Books]. Yerevan: Antares, 2022;

Kirakosyan, A. (comp.) *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)* [Bibliography of Armenian Periodical Press (1794-1967)]. Yerevan: Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 1967;

Յայտարարություն [Statement], *Arevelyan mamul* (Smyrna), 15 December (1894);

Յայտարարություն [Statement], *Arevelyan mamul* (Smyrna), no. 5 (1883), 210;

Նպատակ [Purpose], *Arevelyan mamul* (Smyrna), no. 1 (1871), 1;

Alpoyachyan, Arshak. «Զմյուռնիո տպարանները» [The Printing Houses of Smyrna], *Historical-Philological Journal* 2 (1964), 68;

Alpoyachyan, Arshak. *Տպագրության արուեստը և Հայք* [The Art of Printing and Armenians], Yerevan: Nairi, 2013;

Enovk, Armen. *Թրքա-հայ գրականությունը մամուլի ազատության թուականին* [Turkish-Armenian Literature in the Year of Press Freedom]. Constantinople: Shant Press, 1909;

Hakobyan, M. N. «Զմյուռնահայ մշակութային կյանքը 1800-1850-ական թվականներին» [The Armenian Cultural Life in Smyrna in 1800-1850], *Herald of Social Sciences* 9 (1972): 19;

Ishkhanyan, Rafayel. *Հայ գիրքը 1512-1920* [The Armenian Book 1512-1800], Yerevan: USSR Academy of Science, 1981;

Kharatyan, Albert. *Արևմտահայ պարբերական մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում (1857-1908)* [Western Armenian Periodical Press and Censorship in Ottoman Turkey (1857-1908)]. Yerevan: USSR Academy of Sciences of Armenian SSR, Institute of History, 1989;

Kharatyan, Albert. «Հայ գրատպությունը Կ.Պոլսում և Զմյուռնիայում (1567-1860-ական թթ.)» [The Armenian Printing Press in Constantinople and Smyrna (1567-1860 ss.)], *Herald of Social Sciences* 4 (2012), 25-43;

Kharatyan, Albert. «Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը (1870-90-ական թթ.)» [Ottoman Censorship and the Western Armenian Press (1870-90 ss.)], *Historical-Philological Journal* 4 (1985), 103;

Kosyan, Hakob. *Հայքի Զմիրոնիս և ի շրջակայս, հ. Ա., Զմիրոնիս և Հայք* [Armenians in and around Smyrna. Vol. 1. Smyrna and Armenians]. Wien: Mkhitarian Press, 1899;

Nubaryan, Mesrop. «Իմ մանկական յիշատակներէս» [From my Childhood Memories], *Arevelyan mamul* (Smyrna), 15 November (1894), 703;

Simonyan, Petros. *Հայկական Զմիրոնիս: Յուշամատեն* [Armenian Smyrna. Memory Book]. Paris: Araqs Press, 1936;

Suqiasyan, Hamo and Petoyan, Styopa. «XIX դարի վերջին քառորդի և XX դարի սկզբի արևելահայ «մանր տպագրությունների» աղբյուրագիտական արժեքը», *Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828-1920 թվականներին* (հոդվածների ժողովածու) [Source Value of Eastern Armenian “Small Prints” of the Last Quarter of the 19th Century and the Beginning of the 20th Century], *Printing in Eastern Armenia in 1828-1920* (Collection of Articles). Yerevan: Institute of History, National Academy of Sciences, Armenia, 2021;

Teodik. *Տիպ ու տառ* [Type and Letter]. Constantinople: V.&H. Ter-Nersesyan, 1912.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Մայա Հ. Գրիգորյան, բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի տնօրեն:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ հայ գրականություն (19-20-րդ դարեր), հայ գրատպության պատմություն:

Էլ հասցե՝ m.grigoryan@sci.am

Maya H. Grigoryan, PhD in Philology, Fundamental Scientific Library of National Academy of Sciences, Armenia.

Research fields – Armenian literature (19th - 20th centuries), history of Armenian printing.

E-mail: m.grigoryan@sci.am

Майя О. Григорян, кандидат филологических наук, директор Фундаментальной научной библиотеки Национальной академии наук Республики Армения.

Область исследований – армянская литература (19-20 вв.), история армянского книгопечатания.

Эл. почта: m.grigoryan@sci.am

**ԹՈՒՐԻՔ ԿԱՆԱՆՅ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԶՄՅՈՒՆՆԻԱՅԻ ՀԱՄԱՐ
ԹՈՒՐԻՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔՆԵՐՈՒՄ¹**

Էլինա Զ. Միրզոյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Մուրթուսի զինադադարից հետո Թուրքիայի ողջ տարածքով կազմակերպվում են հանրահավաքներ, հանդիպումներ, բողոքի ցույցեր, որոնց մասնակցել են և՛ թուրք կանայք, և՛ տղամարդիկ: Սակայն Զմյուռնիայի գրավումը 1919 թ. մայիսի 15-ին պատճառ, կարելի է ասել, պատրվակ է դառնում, որ թուրք կանայք ոչ միայն մասնակցեն բացօթյա հանրահավաքներին, այլև նախաձեռնեն դրանք: Այդ հանրահավաքները կազմակերպվում են որպես Զմյուռնիայի «հունական օկուպացիայի դեմ պայքար», որոնք սկսվում են առաջադեմ քաղաքներից, հրապարակներից, թաղամասներից, ապա լայնամասշտաբ և զանգվածային են դառնում Թուրքիայի ողջ տարածքով: Հատուկ դրանց կազմակերպման և այդ գործընթացը վարելու ուղղությամբ Մուսթաֆա Բենալի (1934 թվականից՝ Աթաթյուրք) նախաձեռնությամբ ստեղծվում են կազմակերպություններ, ասոցիացաներ, հիմնադրամների մասնաճյուղեր, ինչպես նաև «Հավգա» շրջաբերականը:

Բանալի բառեր՝ թուրք կանայք, «Հավգա» շրջաբերական, Զմյուռնիա, «Ասրի» կանանց ասոցիացիա, «Ինաս» դարուֆյունուն, Հալիդե Էդիփ Ադըվար:

Հոդվածը ներկայացվել է՝ 25.12.2022: Ընդունվել է տպագրության՝ 02.04.2023:

The article was submitted on 25.12.2022 and accepted for publication on 02.04.2023.

Статья поступила 25.12.2022 и была принята к публикации 02.04.2023.

Ինչպես հղել՝ Էլինա Զ. Միրզոյան, «Թուրք կանանց ներգրավվածությունը Զմյուռնիայի համար թուրքական հանրահավաքներում», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 90-102:

How to cite: Elina Z. Mirzoyan, “Involvement of Turkish Women in Turkish Rallies for Smyrna” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 90-102.

Как сослаться: Элина З. Мирзоян, “Участие турецких женщин в турецких митингах за Смирну,” *Цехаспанагитакан андес* 11, no. 1 (2023), 90-102.

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (թեմայի ծածկագիր՝ 22YR-6A042) դրամաշնորհային ծրագրի շրջանակում:



1919 թ. մայիսի 15-ին հույների՝ Զմյուռնիան թուրքերից ազատագրելը պատրվակ է դառնում թուրք կանանց հանրային հարթակներում առաջին պլան բերելու համար. Կ.Պոլսի (Ստամբուլ) տարբեր թաղամասերում անցկացվող հանրահավաքներում տղամարդկանց հետևանքով և նրանց կողքին առաջին անգամ թուրք կանայք բարձրանում են ամբիոններ: Հանրահավաքների կազմակերպման աստիճանաբար լայնածավալ դարձող ողջ գործընթացը ղեկավարում էին Թուրքական օջախները (թուրք.՝ Türk Ocaklari), Ազգային կոնգրեսի կոմիտեն (թուրք.՝ Milli Kongre Cemiyeti), իրավունքների պաշտպանության ասոցիացիաները², դարուլֆյունունի³/համալսարանի դասախոսները, դպրոցների ուսուցիչներն ու ուսուցչուհիները, բարձր առաջադիմությամբ ուսանողուհիները, ինչպես նաև կանանց այլ կոմիտեներ, կազմակերպություններ, ինչպիսիք են՝ «Ասրի» կանանց ասոցիացիան (թուրք.՝ Asri Kadınlar Cemiyeti), «Անատոլիայի կանանց՝ հայրենիքի պաշտպանության կոմիտեն» (թուրք.՝ Anadolu Kadınları Müdafaa-i Vatan Cemiyeti⁴) և իզական ուղղվածությամբ դպրոցները⁵, մեր հակիրճ ձևակերպմամբ և դիտարկմամբ՝ ինտելեկտուալ կանայք, որոնք հիմնականում կամ բժշկության, կամ իրավաբանության ոլորտի ներկայացուցիչներ էին, ինչպես նաև գրող-իրապարակախոսներ: Կարելի է ասել, որ նրանք պետական կառավարման ներքին համայնքն էին ներկայացնում, այսինքն՝ պետական պաշտոն զբաղեցնողների կամ կանայք էին, կամ քույրերը, կամ էլ՝ ազգականները, այսինքն հիմնականում ներկայացնում էին մտավորականների էլիտան: Այս են փաստում այն կանանց մասին տեղեկատվությունները, որոնք մասնակից են եղել այդ հանրահավաքներին և դրանց կազմակերպչական աշխատանքներին: Ինչպես նաև հաճախ թվարկված կին ներկայացուցիչներն առաջին պլան էին բերում նաև առաջադիմությամբ աչքի ընկնող ուսանողուհիներին՝ հետագայում վերջիններիս ուղղությամբ ունենալով իրենց հաշվարկային նկրտումները: Այս նպատակով հատուկ մասնաճյուղեր էին

2 Serpil Çakir, *Osmanlı Kadın Hareketi* (İstanbul, Metis Yayınları, 2011), 102.

3 Թուրք.՝ Darülfünun (կամ՝ Dar-ül Fünun): Արաբերեն գիտություն և տուն արմատներից կազմված այս բառը ժամանակակից թուրքերենում կիրառվում է որպես համալսարան: Թ-են այս բառն օգտագործվում էր օսմաներենում, սակայն գործածական է նաև ժամանակակից թուրքերենում՝ շեշտադրելու օսմանյան շրջանի համալսարան լինելու իմաստը: Որպես բարձրագույն ուսումնական հաստատության մոդել այն ստեղծվել է Օսմանյան կայսրության ժամանակ. ի սկզբանե հիմնադրվել է՝ կանխելու բարձրագույն կրթության համար Եվրոպա մեկնող երիտասարդների արտահոսքը Օսմանյան կայսրությունից: Մեղրեւսներից բացի՝ բարձրագույն կրթություն ստանալու համար նմանատիպ հաստատություն բացելու գաղափարն առաջին անգամ առաջ է քաշվել սուլթան Աբդուլ Մեջիդի օրոք: Առաջին դարուլֆյունունը բացվել է 1846 թ. հուլիսի 23-ին՝ այսօրվա համալսարանների օրինակով, և այն հայտնի է որպես Օսմանյան կայսրությունում հիմնադրված առաջին համալսարան: Այն բարեփոխվել է 1933 թ.՝ վերածվելով Ստամբուլի համալսարանի, տե՛ս Darülfünun Nedir? İlk Darülfünun Hangisidir, Ne Zaman Açılmıştır? at <https://www.milliyet.com.tr/egitim/darulfunun-nedir-ilk-darulfunun-hangisidir-ne-zaman-acilmistir-6522714>, դիտվել է՝ 08.25.2023:

4 Bekir Sitki Baykal, “Millî Mücadele’de Anadolu Kadınları Müdafaa-i Vatan Cemiyeti,” *Atatürk Araştırma Merkezi Dergisi*, 1(1) (1984): 108-126.

5 Nuray Özdemir, “Millî Mücadele Dönemi Mitinglerinde Türk Kadını,” *Belgi Dergisi*, 21(1) (2021): 4.

բացում ժամանակի առաջատար կազմակերպությունները, ինչպես, օրինակ՝ օսման-յան «Կարմիր մահիկի» կանանց կենտրոնի ստամբուլյան մասնաճյուղը⁶, որը հատուկ կոմիտե էր կազմավորել «Իզմիրի հունական օկուպացիայից տուժածներին օժանդակելու համար»⁷:

Փողոցային ցույցեր, հանրահավաքներ, որոնց մասնակցում էին հազարավոր տղամարդիկ և կանայք, անցկացվում են ոչ միայն Կ.Պոլսի մեծ հրապարակներում, թաղամասերում, այլև Թուրքիայի փոքրասիական գրեթե բոլոր քաղաքներում: Սկզբնական շրջանում ցույցերին մասնակցում էին ն կանայք ն տղամարդիկ, իսկ Մուլլայում, Անկարայում, Սեբաստիայում, Էդիրնեում, Կաստամունում, Կոնիայում ցույցերն անցկացվում են միայն կանանց մասնակցությամբ, և որոշումներ կայացրել են միայն նրանք⁸: Այս հանրահավաքներին ելույթ ունեցողների մեծ մասը կին ուսուցիչներն էին, որոնց շրջանում մեծամասնություն էին կազմում «Ինաս» դարուլֆյունունի/համալսարանի⁹ ուսանողները, որոշ կոմիտեներին անդամակցող¹⁰, գլխավորապես՝ մտավորական կանայք:

Հալիդե Էդիսի Ադըվարն իր ելույթներով դառնում է թուրքական ազգայնական շարժման հանրահավաքների խորհրդանիշը¹¹:

Աթաթյուրքի հանձնարարականով հանրահավաքների կազմակերպչական աշխատանքները համակարգում էր «Հավա» շրջաբերականը (թուրք.՝ Havza Genelgesi), որը լույս էր տեսել 1919 թ. մայիսի 28-ին Սամսունում¹²: Այն, Աթաթյուրքի կարգադրությամբ, ստանձնում է կոնկրետ Զմյուռնիայի համար ամբողջ Թուրքիայի տարածքում հանրահավաքները կազմակերպելու գործառնություն¹³՝ առաջին պլան բերելով թուրք կանանց: «Հավա»-ն, որը թուրքական ազգայնական շարժման ժամանակահատվածում տպագրված առաջին շրջաբերականն էր,¹⁴ նաև հրապարակախոսական քարոզների ձևավորման լայն հարթակ էր, որում առանձին բաժին կար այլակրոնների մասին, ինչպես նաև այն ուղղորդում էր հանրահավաքների խոսքի ուղեգիծը, ծրագրային քայլերը. քարոզչական, հրապարակախոսական, հեռտորական խոսքի, խոսույթների, պատաստների վերնագրերի, արտահայտությունների, ձևակերպումների

6 Թուրք. անվանումը՝ Hilal-i Ahmer Cemiyeti Hanımlar Şubesi:

7 Թուրք. անվանումը՝ İzmir Mazlumin-i Eytam ve Eramiline Muavenet Heyeti:

8 Hülya Yalçın, *Cumhuriyet Dönemi Kadın İmaji İnşası (1928-1938)* (Hacettepe Üniversitesi Atatürk İlkeleri ve İnkılap Tarihi Enstitüsü Basılmamış Yüksek Lisans Tezi, Ankara, 2019), 43.

9 Օսմանյան Թուրքիայի առաջին համալսարանը՝ նախատեսված միայն կանանց համար, որը հիմնադրվել է 1914 թ., տե՛ս Ali Arslan, Özlem Akpınar, “İnas Darülfünunu (1914-1921),” *Osmanlı Bilimi Araştırmaları*, VI/2 (2005), 225-234:

10 Özdemir, “Millî Mücadele Dönemi Mitinglerinde Türk Kadını,” 4.

11 İnci Enginün, Müjgân Cunbur, *Millî Mücadele’de Türk kadını* (Ankara: Türk Ticaret Bankası, 1983), 14.

12 Özdemir, “Millî Mücadele Dönemi Mitinglerinde Türk Kadını,” 4.

13 Նույն տեղում, 4-5:

14 “Havza Genelgesi Millî Mücadele Ruhunun Ete Kemige Bürünmüş Halidir,” <http://samsun.gov.tr/gazi-mustafa-kemal-aturkun-havzaya-gelisinin-100-yili-buyuk-coskuyla-kutlandi>, ղիսվել է՝ 01.11.2023:

ուղղությամբ աշխատում էին հիմնականում այն թուրք կին գրող մտավորականները, որոնք կարող էին մեծ լսարան ձևավորել:

Նպատակադիր և համակարգված աշխատանքների միջոցով աստիճանաբար ավելանում էր այս շրջաբերականով կազմակերպվող հավաքների ու բողոքի հեռագրերի թիվը, որն առանձին ուսումնասիրության ենթաթեմա է:

Այս շրջաբերականը, հանրահավաքային մշակույթ ձևավորելու և վարելու գործունեությամբ առաջին պլան բերելով թուրք կանանց, հայտարարում է, որ թուրք կնոջ դիրքորոշումը լսելն անհրաժեշտություն է ոչ միայն թուրքական հասարակության, այլև ողջ աշխարհի համար¹⁵:

Կանանց ելույթները, այս շրջաբերականին զուգահեռ, տպագրվում են այդօրյա պարբերական մամուլում՝ «Իքդամ» (İkdam), «Թանին» (Tanin), «Թասվիր-ի Էֆքար» (Tasvir-i Efkar) և «Վաքիթ» (Vakit)¹⁶:

Նշված թերթերը կարևորում էին նաև կանանց ելույթների շրջանառումը բոլոր հնարավոր եղանակներով՝ ապահովելով քարոզչության լայն լսարան:

Հանրահավաքները «Հավգա» շրջաբերականի այս աշխատանքների արդյունքում ծավալվում են նախ Կ.Պոլսի՝ տղամարդկանց հետ համակազմակերպված հանրահավաքներում, ապա գրեթե ամբողջ երկրով, բայց արդեն միայն կանանց առաջնորդությամբ և նրանց հանրային ելույթների կազմակերպմամբ:

Կ.Պոլսում կանանց առաջին արձագանքները, հակազդեցությունները

Առաջին բացօթյա հավաք-հանդիպումը, որին մասնակցում էին նաև թուրք կանայք, տեղի է ունեցել 1919 թ. մարտի 19-ին Ֆաթիհի¹⁷ դամբարանի մոտ. այն կազմակերպել էին «Ինաս» համալսարանը և «Ասրի» կանանց ասոցիացիան¹⁸ որպես բողոքի նշան ընդդեմ Մուդրոսի զինադադարի¹⁹:

Հանդիպմանը Ղուրան է ընթերցվում: Աղոթքից հետո դարույֆյունունի գրականության ֆակուլտետի ուսանողուհիներից մեկն ընթերցում է բանաստեղծ, գրող, դրամատուրգ և դիվանագետ Աբդուլհակ Համիտ (Թարհան) Բեյի «Այցելություն Ֆաթիհի գերեզման»²⁰ բանաստեղծությունը, ապա դարույֆյունունի շրջանավարտ Մեդիհա Մուզաֆեր Հանըմն իր «հայրենասիրական ցույցով» է ելույթ ունենում. «Մենք

15 Mehmet Şahingöz, “Millî Mücadelede Protesto ve Mitingler,” *Türkler Ansiklopedisi*, Vol. 15 (Ankara, Yeni Türkiye Yayınları, 2002), 727.

16 Özdemir, “Millî Mücadele Dönemi Mitinglerinde Türk Kadini,” 4.

17 Մեհմեդ II Ֆաթիհը, ով հայտնի է նաև Ֆաթիհ Մեհմեդ Սուլթան անվամբ (կարճ տարբերակով՝ Ֆաթիհ), Օսմանյան կայսրության 7-րդ փառիշահն է, ով կառավարել է 1444-1446 և 1451-1481 թվականներին:

18 «Ասրի» կանանց ասոցիացիան հիմնադրել են «Ինաս» դարույֆյունունի շրջանավարտներն ու ուսանողները 1918 թ. Կ.Պոլսում, տե՛ս “Asri Kadın Cemiyeti,” İnci, 1 Şubat 1919, No 1, 2, Serpil Çakır, *Osmanlı Kadın Hareketi* (İstanbul, Metis Yayınları, 2011), 87-103:

19 Նույն տեղում, տե՛ս նաև Özdemir, “Millî Mücadele Dönemi Mitinglerinde Türk Kadini,” 5.

20 “İstanbul Türk Kalacaktır,” *İkdam*, 20 Mart 1919, 2.

Ստամբուլից չենք գնալու: Չենք գնալու: Չենք գնալու...»,- այս կոչը միաբերան կրկնում են հանդիպմանը ներկա բոլոր տիկիները²¹: Ավելի ուշ «Ասրի» կանանց ասոցիացիայի անունից ելույթ է ունենում Նաջիե Ֆահամ Հանըմը. «Պատերազմի տարիներին առանց ազգի կարծիքը հաշվի առնելու, քաղաքական և վարչական պատճառով՝ հայերի մի մասին տարագրելու (թուրք.՝ *tehcir*) համար ամբողջ անգր պետք է տուժի: Եվ գուցե ռազմական պատճառով է դա եղել, ինչո՞ւ պետք է ամբողջ ազգը պատասխանատվություն կրի դրա համար»²², - ապա շարունակում է, որ ամբողջ ազգը չի կարող պատժվել պատերազմի տարիներին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի վարած քաղաքականության համար²³:

Կ.Պոլսում արդեն ձևավորված ցուցարար կանանց խումբը սկսում է կենտրոնացնել իր ողջ ներուժը՝ արձագանքելու և դատապարտելու Զմյուռնիայի գրավումը: Թուրք կանայք մայիսի 16-ից սկսում են իրենց բողոքի ձայնն արտահայտել Կ.Պոլսի գրեթե բոլոր թաղամասերում: Նրանք, որպես Զմյուռնիայի համար սգի դրսևորում, որոշում են չայցելել ժամանցի վայրեր, կինոթատրոններ և թատրոններ: Կարճ ժամանակով փակվում են նաև դպրոցներն ու աշխատատեղերը: Դասադուլ և գործադուլ է հայտարարվում ամբողջ Կ.Պոլսում²⁴:

Զմյուռնիայի գրավման դեմ թուրքական պայքարի հանրահավաքներին միանում են դարուլֆյունունի/համալսարանի ուսանողները՝ անվանի բժիշկ Բեսիմ Օմեր փաշայի նախագահությամբ՝ 1919 թ. մայիսի 18-ին դարուլֆյունունում կազմակերպելով ժողով: Դասադուլ է հայտարարվում, և յուրաքանչյուր ֆակուլտետից առաջադեմ ներկայացուցիչներ են ընտրվում՝ ժողովների ամբիոններից ելույթ ունենալու համար, որին ակտիվորեն մասնակցում էին դասախոսները և ուսանողները: Հատկապես ընդգծված կերպով նախաձեռնող մասնակցություն են ցուցաբերում իրավաբանության, բժշկագիտության ֆակուլտետների մասնագետները, ինչպես նաև պետական որոշ այրեր: Ելույթների շարքը մեծ լսարան է ձևավորում, գլխավորապես՝ երիտասարդ և արդեն կայացած կանանց ելույթներից հատվածներ են տպագրվում «Թասվիր-ի Էֆքյար» թերթում, օրինակ՝ «Մենք ներկայացնում ենք թուրք երիտասարդությունը: Մենք նույնպես համաձայն ենք բողոքի ձայն բարձրացնելու Զմյուռնիայի համար այս տարբերակով պայքարին. թուրք երիտասարդները միշտ իրենց կողքին կտեսնեն կանանց, այն էլ՝ լուսավոր կանանց: Վստահ եղեք դրանում: Եթե պետք լինի, մենք կգոհվենք երիտասարդության կողքին և հանուն մեր երկրի»²⁵:

Հանդիպման ավարտին համակարգող խորհուրդը որոշում է բողոքի ցույցեր անցկացնել Կ.Պոլսի տարբեր թաղամասերի հրապարակներում: Հանրահավաքներին արդյունավետ ելույթներ են ունենում Թուրքական օջախի այնպիսի առաջատար

21 “Ulvi Bir Tezahür,” *Genç Kadın*, 27 Mart 1919, No 7, 108, “Fatih Cami-i Şerifinde,” *Hadisat*, 20 Mart 1919, 1.

22 “İstanbul Türk Kalacaktır,” *İkdam*, 20 Mart 1919, 2.

23 Özdemir, “*Millî Mücadele Dönemi Mitinglerinde Türk Kadını*,” 5.

24 “İzmir Hadisesinin İstanbul Vilayetindeki Tesirati,” *İkdam*, 19 Mayıs 1919, 1.

25 “Darülfünun’da İçtima ve Tezahüratin Devami,” *Tasvir-i Efkâr*, 19 Mayıs 1919, 1.

գործիչներ, ինչպիսիք են՝ Հալիդե Էդիպի Ադըվար, Համդուլլահ Սուփիի Թ-անրըռյվեր, Մեհմեդ Էմին Յուրդաքուլ և բժիշկ Սաբիթ Բեյ²⁶: Դարուֆյունունի ուսանողուհիները նույնպես կարևոր դեր են ունենում այս հանրահավաքների կազմակերպման գործում. «Ինաս» դարուֆյունունի ուսանողուհիներից Մելիհա Հանըմը²⁷, որի անունը հաճախ է շրջանառվում որպես հանրահավաքներին ազդեցիկ խոսք ունեցողի, ինչպես նաև Հալիդե Էդիպի կողքին գրեթե մշտապես ներկայացող անձի, բարձրանում է ամբիոն՝ ներկայացնելու երիտասարդությունը՝ «ժողովրդին դիմադրության կոչ անելով»²⁸:

Մեծ արձագանք ու լսարան ապահովելուց հետո այս հանրահավաքները՝ ավելի կազմակերպված, շարունակվում են Կ.Պոլսի այլ թաղամասերում և տարբեր հրապարակներում:

Կանայք Ֆաթիհի առաջին բացօթյա հանրահավաքում

Կ.Պոլսում առաջին բացօթյա հավաքը, արդեն հանրահավաքի ձևաչափով՝ ի նշան բողոքի Զմյուռնիայի գրավման, տեղի է ունենում Ֆաթիհի քաղաքապետարանի շենքի դիմաց 1919 թ. մայիսի 19-ին²⁹: Հանրահավաքի օրը Կ.Պոլսի առևտրականներն ու վաճառականները փակում են իրենց խանութները: Կրկին դասադուլ և գործադուլ է հայտարարվում, Ֆաթիհ գրոսայգում տեղի է ունենում մեծ հանրահավաք: Հանրահավաքի հինգ բանախոսից երկուսը կանայք էին՝ Հալիդե Էդիպը և վերոհիշյալ ուսանողուհի Մելիհա Հանըմը: Հալիդե Էդիպը, որ նախկինում ելույթ էր ունեցել բազմաթիվ փակ դահլիճներում, առաջին անգամ հրապարակային խոսքով հանդես է գալիս բացօթյա հանրահավաքի ժամանակ: Այսինքն՝ նա, խախտելով իսլամադավան կնոջ՝ միայն փակ տարածքներում բանախոսելու կարգը, արդեն հանրային խոսքով հրապարակներում ներկայանալու ավանդույթն է ձևավորում: Փաստորեն, Զմյուռնիայի գրավումը թուրք կանանց ստիպում է հերթական քայլը կատարել նաև թուրք կանանց կարգավիճակի փոփոխության հարցում³⁰:

Հալիդե Էդիպը, որ հանրահավաքի առաջին բանախոսն էր, իր «Թուրքի փորձությունը կրակի միջով» (Türkün Ateşle İmtihani) վերնագրով աշխատությունում նկարագրում է այն զգացումները, որոնք ամբիոն բարձրանալիս է ունեցել. «Մարդիկ հավաքվել էին Ֆաթիհի քաղաքապետարանի դիմաց: Պետք է խոսեի պատշգամբից:

26 Mehmet Şahingöz, “Millî Mücadelede Yapılan Mitinglerde Türk Ocaklarının Rolü ve Hamdullah Suphi,” *Hamdullah Suphi ve Gagauzlar*, ed. Mehmet Şahingöz, Alper Alp (Ankara, Türk Yurdu Yayınları, 2016), 34.

27 Leyla Kaplan, *Cemiyetlerde ve Siyasî Teşkilatlarda Türk Kadını (1908-1960)* (Ankara, Atatürk Araştırma Merkezi, 1998), 72-73. St'u 'usul' Kurtuluş ve kuruluşun sembol kenti İzmir, Sempozyumu bildirileri, 26-28 Eylül 2012 (Ankara 2015),/ <https://www.atam.gov.tr/wp-content/uploads/KURULU%C5%9EUN-VE-KURTULU%C5%9EUN-SEMBOL-KENT%C4%B0-%C4%B0ZM%C4%B0R-SEMPOZYUMU-B%C4%B0LD%C4%B0R%C4%B0LER%C4%B0-YEDEK1>, դիտվել է՝ 01.11.2023:

28 Korkud Aydın, “*Millî Mücadele Dönemi İstanbul Öğrenci Hareketleri (1918-1922)*” (Firat Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Basılmamış Yüksek Lisans Tezi, Elâziğ, 2011), 4-5.

29 “Fatih’te İstanbul Ahalisinin Muazzam Mitingi,” *Memleket*, 20 Mayıs 1919, 1, “Sevgili İzmir İçin İstanbul Müslümanlarının Dünkü Tezahürati,” *İkdam*, 20 Mayıs 1919, 1.

30 Zeki Saruhan, *Kurtuluş Savaşı Kadınları* (Ankara, Cem Web Ofset, 2006), 89.

Մինչ ես մտածում էի, թե արդյոք հնարավոր կլինի իմ ձայնը լսելի դարձնել լայնագանգված ներկաներին, մի դրամատիկ իրադարձություն ստիպեց ինձ մոռանալ այս անհանգստությունը: Շենքի վերևում քամուց ծածանվում էին կիսալուսնի ու աստղի կարմիր դրոշները, մինչդեռ ներքևի պատշգամբից սև կտոր էր կախված: Կարծես երկաթե ցանկապատի սև ծածկույթի վրա կանգնած էին մարդիկ՝ ծովի առջև: Հավաքվածների կենտրոնում զինվորներ ու սպաներ էին: Նրանց շուրջը կանայք էին, հիմնականում՝ երիտասարդ՝ սեւ չադրաներով: Նրանք բոլորը սպասում էին իմ ելույթին: Բայց մարդ չի էլ գիտակցում, թե ինչ է կատարվում. նրանց փայլող աչքերը ոգեշնչում ու թելադրում էին այն, ինչ կասվեր...»³¹:

Հալիդե Էդիբը շարունակում է. «Մուսուլմաններ, թուրքեր, թուրքերն ու մահմեդականներն այսօր ապրում են իրենց ամենասև օրերը. գիշեր... մութ գիշեր... Բայց մարդկային կյանքում գիշեր չկա առանց առավոտի: Միգուցե վաղը մի պայծառ առավոտ բարձրանա...: Հրացանն ու թնդանոթն ընկնում են, բայց Հաքն (թուրք.՝ Hak)³² ու Ալլահը մնում են: Միրո ու ազգի զգացում կա մեր սրտերում. երեխաներ ու մայրեր... դուք չեք վախենա, տիկնայք, թուրքեր, մուսուլմաններ: Մենք ապացուցել ենք, որ աշխարհում արժանի ենք ազգ համարվելուն...»:

Հալիդե Էդիբին այս ելույթում կիրառում է քաղաքական, կրոնական թեմատիկ շահարկումներ: Զգալով, որ նպատակային կիրառած իր հնարները մեծ ազդեցություն են ունենում ամբողջված լսարանի վրա, շարունակում է. «Մենք չենք կարող ստիպել նրանց լսել մեր խոսքերը (նկատի ունի, իր ձևակերպմամբ, օկուպացիոն ուժերին՝ Է.Մ.): Մենք կարող ենք ստիպել մեր Փառիշահին³³ լսել մեր խոսքերը: Հիմա մենք մեր տղամարդկանց հետ և նրանց կողքին ուզում ենք պայքարել ոչ միայն ռազմի դաշտում, այլև թիկունքում, ինչը կներկայացնի ազգի սրտից բխող ամենաուժեղ, ամենաազգային և ամենաքաջ ազգը...: Մենք ժողովրդի ապրումները փոխանցում ենք մեր Փառիշահին և ասում, որ ապրում ենք մութ օրեր. այսօր բոլորը լռում են, սակայն կարևորը՝ այսօր թուրքերն ու մուսուլմանները հավաքված են Փառիշահի շուրջը»³⁴:

Այս ելույթը մեծ արձագանք է ստանում ժողովականների շրջանում: Հալիդե Էդիբը դառնում է հանրահավաքների սպասված բանախոսը: Նա այս ելույթով հասարակական լայն շրջանակներին ներարկում է *Զմյոռնիայի գրավման դեմ պայքարի գաղափարը*, և, այդ ելույթը, նրանց գնահատականով, *դառնում է իրենց ազգային ինքնության գիտակցության ձևավորման կարևոր անկյունաքարերից*: Հալիդե Էդիբը, որի անունը գրեթե նույնացվում է թուրքական ազգայնական շարժման հանրահավաքների հետ, մեծ բազմության առջև իր այս ելույթներով փորձում է, ինչպես ինքն է իր նյութերում նշում, վերակենդանացնել թուրքական ոգին, կերտել վերագարթոնքը և ազգային ինքնությունը :

31 Halide Edip Adivar, *Türkün Ateşle İmtihani* (İstanbul, Atlas Kitabevi, 1992), 29.

32 Հաք (թուրք.՝ Hak), 1. Աստծո անուններից մեկը, 2. արդարություն: Տե՛ս Արիստակես Պոհճալեան, *Թրքերենի-հայերէն սոճեռն բառարան* (İstanbul, İpomet Matbaası, 1996), 180:

33 *Փառիշահ*, թագավոր արքա, տե՛ս Պոհճալեան, *Թրքերենի-հայերէն սոճեռն բառարան*, 375:

34 Halide Edib Adivar, *Türkün Ateşle*, 30, “Sevgili İzmir için İstanbul Müslümanlarının Dünkü Tezahürati,” *İkdam*, 20 Mayıs 1919, 1.

Հանրահավաքն ավարտվում է Մելիհա Հանըմի ելույթով. «Մենք խորապես հավատում ենք, որ պիտի ապրենք մեր հայրենիքը փրկելու համար, որ մեր բռնացած իրավունքն անշուշտ պիտի վերականգնվի՝ ապավինելով մեր մեծ Ալլահին»³⁵:

Ավարտին Հալիդեին և երկու երիտասարդ կանանց հանձնարարվում է հեռագիր ուղարկել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին՝ բողոքելով «Թուրքիան բռնագրավելու» դեմ³⁶:

Հանրահավաքները հաջորդաբար շարունակվում են այլ թաղամասերում ևս: Հաջորդ օրը կազմակերպվում է Սկյութարում: Կ.Պոլսում տեղի ունեցած երկրորդ հանրահավաքը տեղի է ունենում Սկյութարում 1919 թ. մայիսի 20-ին³⁷: Սկյութարի ողջ ժողովուրդը շտապում է մասնակից դառնալու այս գանգվածային հանրահավաքին: Ութ բանախոսից երեքը կին էր. նրանցից «Ասրի» կանանց ասոցիացիայի ներկայացուցիչ տիկին Սաբահաթը նշել է. «Մեր աչքի առաջ գունեղ գորգի պես փովել էր հոծ բազմություն: Ոգևորված ժողովուրդը ո՛չ արևին էր նայում, ո՛չ քամուն, անընդհատ ծածանվում էր՝ ամեն պահ մի քիչ ավելի մեծանալով, շատանալով, ծավալվելով»³⁸:

Ապա ելույթը շարունակում է. «...Հույները վերցրին Իզմիրը, որի կյանքն ու հոգին թուրքական է: Միգուցե վաղը նրանք ցանկանան մեր Կոնիան, Բուրսան, և, այո՛, մեր շատ սիրելի Ստամբուլը, որն իր բոլոր գեղեցկություններով գրավում է անգամ չար աչքը»³⁹: Այնուհետև «Ասրի» կանանց ասոցիացիայի անդամ Նաջիե Ֆահամ Հանըմն այս հանրահավաքի շրջանակում Զմյոտնիայի մասին շարունակում է. «Զմյոտնիան չի կարող ջնջվել մեր երկրի պատմությունից և աշխարհագրությունից....

Կեցցե՛ն ողջ ազգը և իսլամական աշխարհը⁴⁰»:

Նա հայտարարում է, որ տղամարդիկ մենակ չեն այս պայքարում, որ նրանց թիկունքում կանգնած են կանայք, շեշտադրելով, որ սա պայքար է թյուրքականության համար, որին պետք է մասնակից դառնան նաև կանայք:

Որպես վերջին կին բանախոս ելույթ է ունենում ֆրանսերենի ուսուցչուհի Զելիհա Հանըմը (հատկանշական է, որ մեծ ուշադրություն էին դարձնում հրապարակախոսական խոսույթներին և ձևակերպումներին. այս ուղղությամբ հատուկ մասնագետների էր հանձնարարվում աշխատանքը): Նա հայտարարում է. «Իզմիրը մերն է, և մերը կմնա: Իզմիրը թուրքերի պատիվն է, արյունն ու հոգին: Թուրքերը չեն կարող ապրել առանց Իզմիրի, Կոնիայի և Ստամբուլի»⁴¹: Հանրահավաքներն ավարտվում էին հստակ որոշումներով. սահմանվում էր հետագա քայլերի հաջորդականությունը: Հատուկ խոսույթներ և ձևակերպումներ մի քանի անգամ կրկնել էին տալիս հանրահավաքի մասնակիցներին, ինչպես, օրինակ՝ ելույթի ավարտին՝ «Իզմիրը մերն է»:

35 Kemal Ariburnu, *Milli Mücadelede İstanbul Mitingleri* (Ankara, Yeni Desen Matbaasi, 1975), 18.

36 Նույն տեղում, 18:

37 “Dün de Üsküdar’da Büyük Bir İctima Akd Edildi,” *Hadisat*, 21 Mayıs 1919, 1.

38 Sabahat Filmer, *Atatürk Yolunda Büyük Adımlar* (İstanbul, Gül Matbaasi, 1983), 49.

39 “İzmir Hadisesi Milletın Kalbine Kök Saldi,” *İkdam*, 21 Mayıs 1919, 1.

40 Նույն տեղում:

41 “Üsküdar’da İkinci Büyük Miting,” *Vakit*, 21 Mayıs 1919, 1-2.

դիտարկմամբ՝ թուրքական լեզվամշակույթում քաղաքական խոսույթը, որպես կանոն, ավանդաբար փոխանցվում է. թուրքական «...մերն է» ձևակերպումը շրջանառության մեջ է դրվում նաև այլ հանրահավաքների ժամանակ: Այն դիտարկում ենք նաև ադրբեջանական այսպես կոչված պայքարի համատեքստում ներդրված «Karabağ bizimdir» (Ղարաբաղը մերն է) լեզվաքարոզչական ձևակերպման նախատիպ:

Ապա հանրահավաք է կազմակերպվում Մաքրըքոյում (Բաքրըքոյ), որին մասնակցում են միայն կանայք: Հանրահավաքին որոշում են պատվիրակություն ձևավորել և հուշագիր ներկայացնել Դաշնակից ուժերին՝ հայտարարելով, որ վճռական են չտալ Իզմիրը»⁴²:

1919 թ. մայիսի 22-ին Քաղըքոյի հրապարակում տեղի է ունենում հանրահավաք, որին, չնայած հորդառատ անձրևին (ինչպես հիշատակվում է մասնագիտական աղբյուրներում), մասնակցում է 20-30 հազար մարդ⁴³: «Ինաս» դարուլֆյունունի աշակերտուհի Մյունեվվեր Սաիմե Հանըմը հայտարարում է. «Եկել է քիչն ասելու և ավելին անելու ժամանակը: Միայն ողբում ենք՝ սիրտ չկա. ո՞վ է մեր հեկեկոցը լսելու...»⁴⁴:

Նա իր ելույթով ժողովրդին պայքարի կոչ է անում, ինչը դաշնակից պետությունների ճնշման ներքո դիտարկում են որպես սադրիչ քայլ և հանրահավաքից հետո փորձում են ձերբակալել նրան: Սակայն նա փախչում է՝ հաստատվելով բանակում և շարունակելով իր պայքարը ռազմաճակատում՝ հիսնապետի կոչումով⁴⁵:

Հետագա հանրահավաքներին Հալիդե Էդիփը և թուրք ժողովրդին, և իսլամական աշխարհին կոչ է անում թուրքական պայքարը շարունակել՝ ավելի մեծ ներուժ գործադրելով⁴⁶: Ելույթներից մեկի վերջում նա հանրահավաքի ներկաներին ստիպում է քանիցս երդվել՝ վկայակոչելով Ալլահին, որ չեն վարանի մեռնել թուրքական դրոշի, թուրքերի իրավունքների ու անկախության համար, չեն խոնարհվի ոչ մի ուժի առաջ: Ներկաներից շատերի շրջանում Էդիփի այս վճռական շեշտադրումները զայրույթ են առաջացնում, և նրա կոչին բացասաբար արձագանքողներ էլ են լի-նում այն համոզումով, որ նա «Ալլահի անունից» ստիպում է ներկաներին հառաչել: Հալիդե Էդիփն այս ելույթով բացահայտորեն դրդում է ժողովրդին գործնական պայքարի, որում նա հիմնականում կիրառում էր ազգայնական և կրոնական խոսույթի հնարներ՝ «խոսելով Ալլահի և ազգի անունից»⁴⁷: Այդ իսկ պատճառով նրա ելույթները ժամանակ առ ժամանակ ենթարկվում էին գրաքննության: Սակայն դրանք թուրքական աղբյուրներում հիշատակվում են որպես զինադադարի հանրահավաքների ամենա-

42 “Makriköy’deki Miting,” *Vakit*, 22 Mayıs 1919, 2, “Makriköy Hanimlarının Mitingi,” *İkdam*, 21 Mayıs 1919, 1.

43 Zekeriya Türkmen, *Milli Mücadele Yıllarında İstanbul Mitingleri* (Ankara, Berikan Yayınevi, 2016), 105.

44 “Kadiköylülerin Dünkü Muazzam Mitingi,” *Vakit*, 23 Mayıs 1919, 1.

45 Leyla Kaplan, *Cemiyetlerde ve Siyasî Teşkilatlarda*, 76, Afet İnan, *Tarih Boyunca Türk Kadınının Hak ve Görevleri* (İstanbul, Milli Eğitim Basımevi, 1975), 106, “Kadiköylülerin Dünkü Muazzam Mitingi,” *Vakit*, 23 Mayıs 1919, 1.

46 Halide Edip Adivar, *Türkün Ateşle*, 31.

47 Kemal Ariburnu, *Milli Mücadelede*, 38.

արդյունավետ ու ամենահիշարժան ելույթներ⁴⁸: Իր ելույթում նաև քննադատում է եվրոպական տերություններին կողմնակալ վերաբերմունքի համար⁴⁹: Դաշնակից տերությունների ճնշման ներքո՝ վերոնշյալ ելույթի պատճառով Հալիդե Էդիփին նույնիսկ ձեռքակալելու հրաման է տրվում. մեղադրանք է առաջադրվում, որ նա կրոնական քարոզչության թաքնված միտումներ է ունեցել՝ այլակրոն ներկաներին ուղղված⁵⁰: Հանրահավաքային ելույթներում նա, թեև աշխարհիկացման ակնհայտ գործընթացներին, ոչ միայն թուրք, այլև ողջ իսլամական աշխարհի ներուժն էր փորձում կենտրոնացնել իր կիրառած խոսքամշակութային հնարներով. գործածում էր կրոնական բառեր, արտահայտչաձևեր, շահարկում կրոնական վախերը:

Քանի որ աստիճանաբար նման զանգվածային ծավալ և ազդեցություն են ստանում հանրահավաքները, նրանց արգելում են բաց տարածքներում ցույցեր կազմակերպել. հավաքներն անցկացվում էին Ազգային ժողովում, արդեն տղամարդկանց միջոցով և մասնակցությամբ:

Սակայն այլ քաղաքներում (Անկարա, Էդիրնե, Սերաստիա, Կաստամոնու, Կոնիա) շարունակվում են ցույցերը Կ.Պոլսի հանրահավաքների բովանդակությամբ և ուղեգծով⁵¹:

1919 թ. մայիսի 22-ին Սիլվանի (Տիգրանակերտ) հանրահավաքի ավարտին «երեսուն հազար կանանց անունից» ֆրանսերեն հեռագիր են հղում Կ.Պոլսում Դաշնակից ուժերի ներկայացուցիչներին և Վուդրո Վիլսոնի կնոջը՝ նշելով, որ «Իզմիրի օկուպացիան մի արարք է, որը լիովին դեմ է մարդկությանն ու արդարությանը»⁵²: Փաստորեն, այս հանրահավաքներով այլ տերությունների առաջնորդների կանանց հետ բանակցելու մշակույթ է նաև ձևավորվում:

Որպես միայն թուրք կանանց մասնակցությամբ և նրանց առաջնորդությամբ հանրահավաք հիշատակվում է Կաստամոնուում 1919 թ. դեկտ. 10-ին կազմակերպած պատմական ցույց-ժողովը⁵³ ոստիկանության տնօրեն Հալիլ Բեյի կին Ջեքիեի Հանրմի գլխավորությամբ: Ավելի քան երեք հազար կին է մասնակցում այս հանրահավաքին: Ըստ որդեգրված սկզբունքների՝ որոշվում է հեռագրեր ուղարկել մեծ տերությունների

48 “İstanbul’un Bütün Müslüman Halkı, Hakkını İstemek, Adaletsizliğe Bağırarak İçin Dün Sultan Ahmet’te Toplandı,” *Hadisat*, 24 Mayıs 1919, 1, “Yüz Bin Müslüman Sultan Ahmet Meydanında Muazzam Bir Miting Akd Eyledi,” *İkdam*, 24 Nisan 1919, 1.

49 “İzmir’in İşgalinin Kalb-i Millette Açtığı Yara...,” *İkdam*, 23 Mayıs 1919, 1, “Kadıköylülerin Dünkü Muazzam Mitingi,” *Vakit*, 23 Mayıs 1919, 1.

50 “İstanbul’un Bütün Müslüman Halkı, Hakkını İstemek, Adaletsizliğe Bağırarak İçin Dün Sultan Ahmet’te Toplandı,” *Hadisat*, 24 Mayıs 1919, 1, “Yüz Bin Müslüman Sultan Ahmet Meydanında Muazzam Bir Miting Akd Eyledi,” *İkdam*, 24 Nisan 1919, 1.

51 İnci Enginün, Müjgân Cunbur, Milli Mücadele’de, 14, Hülya Yalçın, “Cumhuriyet Dönemi Kadın İmajı İnşası (1928-1938),” (Hacettepe Üniversitesi Atatürk İlkeleri ve İnkılap Tarihi Enstitüsü Basılmamış Yüksek Lisans Tezi, Ankara, 2019), 43, Mehmet Şahingöz, “Millî Mücadelede Protesto ve Mitingler,” *Türkler Ansiklopedisi*, Vol.15 (Ankara, Yeni Türkiye Yayınları, 2002):

52 BOA, HR:SYS, 3552-5.

53 Kastamonu’da İlk Kadın Mitingi’nin, 75. Yıldönümü Uluslararası Sempozyumu, 10-11 Aralık 1994, Kastamonu (Ankara, ATAM Yayınları, 1996), 40.

առաջին կանանց: Կաստամոնուի մուսուլման կանանց անունից հանրահավաքի կոմիտեի ստորագրած այս հեռագրերում բողոքարկվում է նաև Ուրֆայի, Մարաշի և Այլթապի, իրենց ձևակերպմամբ, բռնագրավումը՝ հայտնելով, որ իրենք վճռական են տրամադրված և թույլ չեն տա, որ իրենց երկիրը քայքայվի⁵⁴:

Կանանց մյուս ժողովը տեղի է ունենում Կոնիայում 1920 թ. հունվարի 8-ին՝ ընդդեմ Զմյուռնիայում և նրա շրջակայքում «հույների վայրագությունների» և Ադանայի հայերի հետ համագործակցությամբ ֆրանսիացիների իրականացրած «օկուպացիայի» և գործած «անարդարության»⁵⁵:

Փաստորեն, Թուրքիայի փոքրասիական քաղաքներում շարունակում են տեղի ունենալ կանանց ժողովներ⁵⁶:

Այսպես, թուրք կանայք հանրահավաքները սկսում են՝ Զմյուռնիայի՝ հույների գրավման դեմ համաթուրքական և համահիսլամական բողոքի շարժում ձևավորելու նպատակով, սակայն ընթացքում առաջ են քաշում հետևյալ թեմաները՝ բռնությունների և, իրենց ձևակերպմամբ, օկուպացիաների դեմ պայքարի գիտակցման սերմանում, ազգային ինքնագիտակցության կարևորության շեշտադրում, թուրքականություն, իսլամ, մայրություն և նահատակություն, ազգային գաղափարախոսություն, ատելություն:

Կանայք, որոնք իրենց ելույթներում շեշտադրում էին, թե իբր իրենք պատրաստակամ են իրենց կյանքը զոհաբերելու հանուն հայրենիքի, գրավում են հասարակության ուշադրությունը և ավելի մեծ ազդեցություն ունենում. նրանց հաջողվել էր հեշտությամբ ստանալ հասարակության վստահությունը: Կարծում ենք՝ այլ պատճառ ևս կար. պատերազմի հետևանքով տղամարդկանց թիվը զգալիորեն պակասել էր:

Սկզբնական շրջանում հանրահավաքների անցկացման համար ընտրում էին առավել զարգացած կենտրոնական քաղաքները, ապա աստիճանաբար ծավալվում են ողջ երկրով մեկ:

Այսպիսով, Թուրքիայի ողջ տարածքով անցկացված հանրահավաքների միջոցով թուրքական ազգայնական շարժումն իր նպատակային ազդեցությունն է ունենում հասարակական կարծիքի ձևավորման, ինչպես նաև ուժերի կենտրոնացման վրա՝ թուրքական ազգայնական շարժման տարածման և քարոզչության ուղղությամբ:

54 “Hanımlarımızın Mitingi,” Açık Söz, 14 Aralık 1919, 1-2, Mustafa Eski, “İlk Kadın Mitingi,” Kastamonu’da İlk Kadın Mitingi’nin 75. Yıldönümü Uluslararası Sempozyumu, 10-11 Aralık 1994, Kastamonu (Ankara, ATAM Yayınları, 1996), 40.

55 BOA, DH. ŞFR, 643-101, R.25.08.1335, Afet İnan, *Tarih Boyunca Türk Kadınının Hak ve Görevleri* (İstanbul, Milli Eğitim Basımevi, 1975), 108. Ahmet Avanas, *Milli Mücadelede Konya* (Ankara, ATAM Yayınları, 1998), 39-41.

56 Özdemir, “*Milli Mücadele Dönemi Mitinglerinde Türk Kadını*,” 17-18.

INVOLVEMENT OF TURKISH WOMEN IN TURKISH RALLIES FOR SMYRNA

Elina Z. Mirzoyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

After the Armistice of Mudros, rallies, demonstrations and protests were organized throughout Turkey with the participation of Turkish women and men. However, the liberation of Smyrna by the Greeks on 15 May 1919, became an initiator, one might say, a pretext for Turkish women to participate in open-air demonstrations and organize and initiate the organization of these rallies. The rallies were organized as a “fight against the Greek occupation” of Smyrna, which started from the advanced cities, city squares, and districts, and then became large-scale and massive throughout Turkey. Organizations, associations, departments of foundations, as well as the Havza Circular, are created at the initiative of Atatürk specifically to organize these rallies and manage the entire process.

Keywords: Turkish women, Havza Circular, Smyrna, Asri Women’s Association, Inas Darulfunun, Halide Edip Adivar.

УЧАСТИЕ ТУРЕЦКИХ ЖЕНЩИН В ТУРЕЦКИХ МИТИНГАХ ЗА СМИРНУ

Элина З. Мирзоян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

После Мудросского перемирия по всей территории Турции организуются митинги, демонстрации и акции протеста, в которых участвуют как турецкие женщины, так и мужчины. Однако освобождение Смирны греками 15 мая 1919 года становится поводом, можно сказать, предлогом для турецких женщин не только участвовать в уличных митингах, но и самим организовывать и инициировать эти митинги. Митинги организуются как “борьба против греческой оккупации” Смирны, начинаются с передовых городов, городских площадей, районов, а затем становятся ширококомасштабными и массовыми по всей территории Турции. Организации, ассоциации, отделения фондов, а также циркуляр “Хавза” создаются по инициативе Ататюрка специально для организации этих митингов и управления всем этим процессом.

Ключевые слова: турецкие женщины, циркуляр “Хавза,” Смирна, женская ассоциация “Асри,” “Инас,” Дарульфюнун, Халиде Эдип Адывар.

Հեղինակի մասին
About the author
Об авторе

Էլինա Զ. Միրզոյան, բանասիրական գիտությունների թեկնածու, արևելագետ (թյուրքագետ), սփյուռքագետ, բանասեր (հայոց լեզու և գրականություն), ՀՅԹԻ Հուշագրությունների, վավերագրերի և մամուլի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող, ԵՊՀ դասախոս:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թուրքահայ և թուրքական մամուլում Հայոց ցեղասպանության թեմայի ուսումնասիրություն, ազգային ինքնություն, հայկական թեմատիկան թուրքական տպագիր մամուլում:

Էլ. փոստի հասցե՝ elina-mirzoyan@mail.ru

Elina Z. Mirzoyan, Ph.D. in Philology, orientalist, philologist, specialist of Armenian diaspora studies, researcher at the Department of the Armenian Genocide Memoirs, Documents and Press, Armenian Genocide Museum-Institute Foundation, Lecturer at Yerevan State University.

Research fields – the theme of the Armenian Genocide in the Turkish and Armenian-Turkish press, national identity.

E-mail: elina-mirzoyan@mail.ru

Элина З. Мирзоян, кандидат филологических наук, востоковед, филолог, диаспоровед, научный сотрудник Отдела изучения воспоминаний, свидетельств и прессы Фонда “Музей-институт Геноцида армян,” преподаватель Ереванского государственного университета.

Область исследований – вопрос Геноцида армян на страницах турецкой и армяно-турецкой прессы, национальная идентичность, армянская тематика на страницах турецкой прессы.

Эл. почта: elina-mirzoyan@mail.ru

«ԳԱՅԼԻ ՄՈՐԹՈՎ ԳԱՌՆԵՐԸ». ՀՈՒՅՆԵՐԻՆ ՀՐԵՇԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ԹՈՒՐ-ՔԱԿԱՆ ՔԱՐՈՋՉԱԿԱՆ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ
(«ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ ԴՈՒ ԵՍ» ՀԵՌՈՒՍԱՍԵՐԻԱԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Նաիրա Հ. Պողոսյան
Երևանի պետական համալսարան, Հայաստան

«Իզմիրին չեն կարողացել տիրել երկու բան՝ ԱԶԿ-ն ու հույները»²:

2000-ականներից համաշխարհային հեռուստաշուկայում մեծ հանրայնություն վայելող թուրքական սերիալների երևույթը քննության է առնվել և հասարակական-լրագրողական, և ակադեմիական շրջանակներում: Ուսումնասիրողները կարևորում են հեռուստանովելների (մասնավորապես պատմական թեմատիկայով սերիալների)՝ արտաքին լսարանին ուղղված քարոզչական գործառույթը՝ որպես «փափուկ ուժի» գործիք . հեռուստանովելները, միևնույն ժամանակ, թուրք հեռուստադիտողին որոշակի ուղերձներ հասցնելու նպատակ ունեն: Այս համատեքստում քննվում է ռեժիսորներ Յազմուր և Դուրուլ Թալան եղբայրների «Իմ հայրենիքը դու ես» (թուրք.՝ *Vatanım Sensin*) բազմասերիանոց ֆիլմը, որը ներկայացնում է գերության մեջ հայտնված թուրք սպա Ջնդեթի և նրա ընտանիքի պատմությունը: Հեռուստադիտողը հայտնվում է 1919-1922 թթ. պայքարին, քաղաքի թուրք բնակչության գործողություններին: Սերիալի բազմաշերտ սյուժեում միախառնվում են սիրային պատմությունները, հին գաղտնիքներն ու դավաճանությունները, անակնկալ բացահայտումները: Քարոզչական տեսանկյունից հեռուստասերիալն ունի երկու կարևոր առանձնահատկություն՝ ընդգծված հակահունականությունը և քեմալական շարժման գովաբանությունը: Մեր նպատակն է վերհանել հույն և թուրք կերպարների հակադրման հիմնական շերտերը, ներկայացնել հույների հրեշացնելու գործընթացի առանձնահատկություններն ու թուրքերին հերոսացնելու հնարները:

Բանալի բառեր՝ թուրքական սերիալներ, Իզմիր, հույներ, քեմալական շարժում, փափուկ ուժ:

Հոդվածը ներկայացվել է՝ 21.02.2023: Ընդունվել է տպագրության՝ 17.04.2023:
The article was submitted on 21.02.2023 and accepted for publication on 17.04.2023.
Статья поступила 21.02.2023 и была принята к публикации 17.04.2023.

Ինչպես հղել՝ Նաիրա Հ. Պողոսյան ««Գայլի մորթով գառները»․ հույներին հրեշացնելու գործընթացը թուրքական քարոզչական տիրույթում («Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալի օրինակով)», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 103-114:

How to cite: Naira H. Poghosyan, “‘The Sheep in Wolf’s Clothing’: Demonization of Greeks in Turkish Propaganda (Case Study of TV Series “You are My Motherland”),” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 103-114.

Как сослаться: Наира А. Погосян, “‘Овцы в волчьей шкуре’: демонизация греков в турецкой пропаганде (на примере телесериала “Ты моя родина”),” *Цехаспагитакан андес* 11, no. 1 (2023), 103-114.

1 «Արդարություն և զարգացում» կուսակցություն:

2 “Milliyetçilik çok sinsi bir iç dünyadır,” <http://www.agos.com.tr/tr/yazi/23607/milliyetcilik-cok-sinsi-bir-ic-dunyadir>, դիտվել է՝ 20.07.2022:



Թուրքիայի Հանրապետության ստեղծումից ի վեր ազգային քաղաքականության հիմնասյուններից մեկը եղել և այսօր էլ շարունակում է մնալ ոչ մուսուլմանների նկատմամբ խտրական վերաբերմունքը, որը տասնամյակների ընթացքում ունեցել է թե՛ ֆիզիկական, թե՛ տնտեսական, թե՛ հոգեբանական ու սոցիալ-մշակութային դրսևորումներ. այսօր Թուրքիայի հասարակական կյանքում հայերի և հույների ներկայությունը գրեթե չի զգացվում: Ոչ մուսուլման համայնքների թվաքանակի նվազմանը զուգահեռ նրանց դեմ ուղղված «ատելության խոսքը» պետական հոլովությամբ ավելանում է՝ հասարակության շրջանում վառ պահելով այն ընկալումը, որ հայերն ու հույները «օտար», «ուրիշ», «թշնամի» են: Այդ ամենն ընդգծվում է կորոնավիրուսի համավարակի օրերին. «Մրանք են կորոնավիրուսը մեր գլխին բերել» կոչերով հրկիզում են Ստամբուլի Բեյոզլու թաղամասի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դուռը, պոկում Ուսքյուդարի Սբ Մարիամ Աստվածածին եկեղեցու ճաղավանդակի խաչը³:

Միևնույն ժամանակահատվածում՝ 2020 թ. մայիս ամսվա ընթացքում, նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը երկու անգամ անդրադառնում է փոքրամասնություններին. մայիսի 4-ի ելույթում նրանց կոչում է «սրի մնացորդներ»⁴, իսկ մայիսի 11-ին հայկական և հունական լոբբիները «չար ուժեր» որակում՝ զուգահեռներ տանելով նրանց, գյուլենականների և Արաբական ծոցի երկրներից ֆինանսավորվող ահաբեկիչների միջև⁵: Պարզ է, որ Էրդողանի այդպիսի որակումները չէին կարող չզազդել հասարակության տրամադրությունների վրա: Հարկ է նշել, որ Թուրքիայում պետական քարոզչամեթոդն ատելության խոսք է տարածում ոչ միայն ՀԼՄ-ների, այլ նաև ուրիշ միջոցներով, այդ թվում՝ գրականության⁶ և կինոյի:

Եթե գրականության մեջ ոչ մուսուլմանների թիրախավորումը գրեթե հարյուրամյա պատմություն ունի, կինոյում, ավելի կոնկրետ, վերջին 15-20 տարիներին «Թուրքիայի

3 Եկեղեցիներում տեղի ունեցած հարձակումների մասին մանրամասն տե՛ս Kuzguncuk Kilisesi'nin haçi yerinden söküldü <http://www.agos.com.tr/tr/yazi/24079/kuzguncuk-kilisesi-nin-haci-yerinden-sokuldu>, դիտվել է՝ 15.09.2021, ինչպես նաև՝ Bakirköy'deki Ermeni Kilisesi'nin kapisini yakti, “Corona”yi bunlar bela etti” dedi <https://www.sozcu.com.tr/2020/gundem/bakirkoydeki-ermeni-kilisesinin-kapisini-yakti-coronayi-bunlar-bela-etti-dedi-5803418/>, դիտվել է՝ 15.09.2021:

4 Էրդողանի ելույթի տեքստը տե՛ս Cumhurbaşkanlığı İste Mayıs ayı normalleşme planı, <https://www.milliyet.com.tr/siyaset/son-dakika-cumhurbaskani-erdogan-tek-tek-acikladi-iste-mayis-ayi-normallesme-planı-6205190>, դիտվել է՝ 15.09.2021:

5 Էրդողանի ելույթի տեքստը տե՛ս Erdoğan “Ermeni ve Rum lobilerini suçladı,” <http://www.agos.com.tr/tr/yazi/24022/erdogan-ermeni-ve-rum-lobileri-ni-sucladi> դիտվել է՝ 15.09.2021:

6 Ժամանակակից գրականության մեջ հույների կերպարի ընկալումների մասին մանրամասն տե՛ս Hercules Millas, *The Image of the Greek Minority of Istanbul in Turkish Literature: Past and Recent Tendencies* <http://www.herkulmillas.com/en/hm-articles/75-literary-criticism/426-the-image-of-the-greek-minority-of-istanbul-in-turkish-literature-past-and-recent-tendencies.html>, դիտվել է՝ 18.08.2022:

Hercules Millas, *The Contrasting Images of Greeks in Turkish Literature: Fiction Versus Memoirs*, <http://www.herkulmillas.com/en/hm-articles/75-literary-criticism/352-the-contrasting-images-of-greeks-in-turkish-literature-fiction-versus-memoirs.html>, դիտվել է՝ 18.08.2022:

ազգային ապրանքանիշ»⁷ դարձած հեռուստասերիալներում հակահայկական և հակահունական քարոզչությունը համեմատաբար նոր երևույթ է:

2000-ականներից համաշխարհային հեռուստաշուկայում մեծ հանրայնություն վայելող թուրքական սերիալների երևույթը քննության է առնվել և հասարակական-լրագրողական, և՛ ակադեմիական շրջանակներում: Ուսումնասիրողները կարևորում են հեռուստանովելների (մասնավորապես պատմական թեմատիկայով սերիալների)⁸ արտաքին լսարանին ուղղված քարոզչական գործառույթը՝ որպես «փափուկ ուժի»⁸ գործիք. հեռուստանովելները, մինևույն ժամանակ, թուրք հեռուստադիտողին որոշակի ուղերձներ հասցնելու նպատակ ունեն:

Թուրքական իշխանություններն օսմանյան անցյալի վերարժևորման համատեքստում պատմական բնույթի սերիալները դիտարկում են որպես հասարակության մեջ կոնկրետ շեշտադրումներով ձևավորված կարծրատիպերը վերափոխելու հնարավորություն ընձեռող հարթակ: Եթե Օսմանյան կայսրության պատմության վերարժևորման միտումը շատ հստակ է, ապա կայսրության անկման, հանրապետության ստեղծման պատմության շուրջ ընկալումների քննարկումը ինչ-որ առումով դեռ բաց է մնում:

2016-2018 թթ. թուրքական «Kanal D» ալիքով հեռարձակված «Իմ հայրենիքը դու ես» բազմասերիանոց ֆիլմը ներկայացնում է Օսմանյան կայսրության անկումն ու քեմալական շարժումը: Սերիալի սյուժեի կենտրոնում Զմյուռնիայում տեղի ունեցած իրողություններն են (1919-1922), որոնց համատեքստում ներկայացվում է քեմալական շարժումը, քարոզչական մի շարք հնարքներով բացահայտորեն թիրախավորվում են Հունաստանն ու հույները: Հետաքրքիր է ընդգծել, որ Հունաստանը շուրջ 15 տարի թուրքական սերիալների արտահանման առաջնահերթ ուղղություններից մեկն է: 2005 թվականից ի վեր հունական առաջատար հեռուստաընկերությունները ցուցադրել են 50-ից ավել թուրքական սերիալ: Դրանցից առաջինը «Օտար փեսա»-ն (թուրք.՝ *Yabancı damat*) է եղել, որի հումորային սյուժեի հիմքում թրքուհի Նազլի և հույն Նիկոյի սիրո պատմությունն է⁹: Հունաստանում մեծ հաջողության է արժանանում նաև թուրք-հունական համատեղ «Երկու ափ, մեկ Իսմաիլ» (թուրք.՝ *İki Yaka Bir İsmail*) հեռուստասերիալը, որ պատմում է մի տղամարդու մասին, որը թուրք և հույն կին ունի Էգեյանի երկու ափերին¹⁰:

Հունաստանում թուրքական սերիալների հաջողությունը պայմանավորված է, մի կողմից, դրանց բարձր որակով, մյուս կողմից՝ հույն և թուրք հասարակությունների՝ կենցաղավարման, սոցիալական նորմերի և բազմաթիվ այլ ընդհանրություններով:

7 Kübra Özarslan, *Dünyada Türk Dizisi Çilginliği* (İstanbul: Gece Kitaplığı, 2020), 83.

8 Մանրամասն տե՛ս Joseph S. Nye, *Bound to Lead: The Changing Nature of American Power* (New York: Basic Books, 1990).

9 “Rise of Turkish Soap Operas in Greece,” <https://cafebabel.com/en/article/rise-of-turkish-soap-operas-in-greece-5ae00818f723b35a145e2fed/>, դիտվել է՝ 20.08.2022:

10 “Turks and Greeks Come Together, Even if on TV Screens,” <https://www.hurriyetdailynews.com/turks-and-greeks-come-together-even-if-on-tv-screens-33418>, դիտվել է՝ 11.08.2022:

Հունաստանում՝ որոշ շրջանակներում, քննարկվում են թուրքական սերիալների ցուցադրման աննպատակահարմարությանը և դրանց լայն տարածման վտանգներին վերաբերող հարցերը: Նմանօրինակ նախաձեռնությամբ է հանդես եկել օրինակ Հելլենական միջազգային ասոցիացիան¹¹: Ժամանակ առ ժամանակ նմանատիպ կոչեր են հայտնվում նաև սերիալների ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում:

«Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալից առաջ թուրք-հունական առնչությունների (Օսմանյան կայսրության գոյության վերջին հիսնամյակում և անկման նախաշեմին) անդրադարձել են «Հաջողություն, Ռումելիա» (2007-2009)¹² և «Բալկանների վերջին ամառը. 1912» (2012) սերիալները¹³, որոնք սակայն հանրային մեծ ուշադրության չեն արժանացել, իսկ «Բալկանների վերջին ամառը. 1912»-ը չորս սերիալից հետո ցածր վարկանիշի պատճառով դադարեցվել է ցուցադրվել:

«Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալն առանձնանում է թե՛ դերասանական կազմով (գլխավոր դերակատարներն են «Հոյակապ դարաշրջան»-ում¹⁴ սուլթան Սուլեյմանին մարմնավորած Հալիդ Էրգենչը և նրա կինը՝ Բերգյուզար Քորելը, որոնք հայտնի են նաև «Հազար ու մի գիշեր» ֆիլմից¹⁵), թե՛ բավական մեծ բյուջեով:

Հեռուստասերիալի որակի և հանրայնության մասին է վկայում այն փաստը, որ «Ոսկե թիթեռ» 44-րդ մրցանակաբաշխությանը ճանաչվել է «տարվա լավագույն ֆիլմ»¹⁶, իսկ ֆիլմարտադրող «Դոդան» հոլդինգը մրցանակ է շնորհել ռեկորդային վաճառք ապահովելու համար:

2017 թ. սահմանադրական հանրաքվեի նախօրեին սեփական ելույթների վարկանիշը բարձրացնելու նպատակով Էրդողանը մայիսի 28-ին հանդես է գալիս «Չուքուր» բազմասերիանոց ֆիլմից առաջ, իսկ հունիսի 7-ին՝ «Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալի եթերաժամին, ինչը սակայն հանգեցրեց հեռուստադիտողների բողոք-մեկնաբանություններին Թ-վիթերում և սոցիալական այլ կայքերում: Երբեմն ծիծաղելի, երբեմն վիրավորական այդ մեկնաբանություններն ունեն նաև քաղաքական ենթատեքստ, ինչպես այս մեկը. «Մուսթաֆա Քեմալի ֆիլմն ենք ուզում դիտել,

11 “Why Turkish Series Should be Removed from Greek Television,” <https://greekcitytimes.com/2020/05/04/why-turkish-series-should-be-removed-from-greek-television/>, դիտվել է՝ 30.06.2022:

12 Հեռուստասերիալի մասերը հասանելի են <https://www.imdb.com/title/tt1173202/> հղումով, դիտվել է՝ 17.07.2022:

13 Հեռուստասերիալի մասերը հասանելի են <https://www.imdb.com/title/tt2256510/> հղումով, դիտվել է՝ 17.07.2022:

14 2011-2014 թթ. հեռարձակված, Սուլթան Սուլեյմանի և նրա կնոջ Հյուրբեմի պատմությունը ներկայացնող սերիալը մինչ օրս աշխարհում ամենավաճառված թուրքական ֆիլմն է: Հեռուստասերիալի մասերը հասանելի են <https://www.youtube.com/@Muhtesemyuzyl> հղումով, դիտվել է՝ 11.08.2022:

15 Ahmet Rifat Şungar, *Vatanım Sensin'de Vecihi Hürkuş'u oynayacak* (Dizisinin oyuncu kadrosu ve karakter analizleri), https://www.ntv.com.tr/galeri/yasam/ahmet-rifat-sungar-vatanim-sensinde-vecihi-hurkusu-oynayacak-dizisinin-oyuncu,vcHgyCQIDke9djWXqeO5Hg/XwGa5vfdokmir-1Y5_ylew, <https://www.milliyetemlak.com/dergi/vatanim-sensin-nerede-cekiliyor/>, դիտվել է՝ 19.07.2022:

16 “En İyi Dizi: Vatanım Sensin!,” <https://www.youtube.com/watch?v=3VrK8AZILoQ> - En Quality Dizi Ödülünü Vatanım Sensin Aldı, <http://www.o3medya.com/en-quality-dizi-odulunu-vatanim-sensin-aldi/>, դիտվել է՝ 07.07.2022:

Դուք ստիպում եք դառնալ նախագահի կատարած սահմանադրական խախտման ակնհայտ: Դա հանցագործություն է»¹⁷:

Մման մեկնաբանություններն իհարկե արժե դիտարկել երկրում Էրդողան-Քեմալ դեռևս ոչ շատ ակնհայտ հակադրման համատեքստում: Հեռուստասերիալի հասարակական հնչեղության վկայությունն է նաև այն, որ ավարտից երկու տարի անց՝ 2020 թ. մայիսի 19-ին, Բերգյուզար Քորելը, ինստագրամյան էջում տեղադրելով ֆիլմից մի հատված, գրել է. «Այս պահին որպես քաղաքացի, որպես անձ, որպես կին իմ անցած ճանապարհին ձեռք բերած ամեն ինչ քո շնորհիվ է, մեծ հայր, հուսով եմ, տեսնում ես, որ կարողացել ենք քո թողածին տեր կանգնել և քո բացած լուսավոր ճանապարհով շարունակել քայլել, հայրենիքին ու դրոշին անսպառ սիրով ու հարգանքով կապված երեխաներ մեծացնել: Եթե կարողանում ենք դաստիարակել հայրենասեր, լուսավորյալ, գիտությանը, գիտելիքին ու կրթությանը կարևորություն տվող երեխաներ, երիտասարդներ, դա էլ է քո շնորհիվ, քեզնից սովորածի շնորհիվ: Շնորհավոր մայիսի 19-ը՝ Աթաթուրքի հիշատակի, երիտասարդության և սպորտի տոնը»¹⁸:

Հեռուստասերիալի սկզբում նշվում է, որ թեև իրադարձություններն ամբողջովին հորինված են, սակայն կերպարների մի մասն իրական անձինք են եղել: Գլխավոր կերպարի՝ Ջևդեթի նախատիպը Գլավուր Մյումին փաշա անունով հայտնի կապիտան Մուսթաֆա Մյումին Աքսոյն է (1892-1948), որը, Մուսթաֆա Քեմալի հանձնարարությամբ, ընդգրկվել էր հունական գորքերում¹⁹: Հազարապետ Ջևդեթն էլ իր հայրենասիրությամբ հայտնի թուրք սպա է, որին հույները գերեվարում են Բալկանյան պատերազմի ընթացքում Սալոնիկի թուրք հրամանատարության դավաճանության պատճառով: Նա յոթ տարի անց վերադառնում է Զմյուռնիա՝ արդեն հաղթական հունական բանակի գնդապետի կոչումով: Հայրենիքի դավաճան Ջևդեթը երկրի ներքին շրջաններում նոր-նոր ծավալվող քեմալական շարժման նվիրյալներից է, որն իր կյանքի գնով փորձում է խանգարել հունական բանակին: Իրական նախատիպ ունի նաև հեռուստասերիալի առաջին մասում Զմյուռնիա մտած հունական գործի հրամանատարի դեմ մահափորձի ժամանակ սպանվող Հասան Թահսինը: Կերպարների շարքում են նաև Մուսթաֆա Քեմալը, գրող և քաղաքական գործիչ Հալիդե Էդիփը, հայտնի օդաչու Վեջիհի Հյուրքուլը:

Հազարապետ Ջևդեթի, հունական գորքերի հրամանատար Վասիլի և մի քանի ընտանիքի շուրջ ծավալվող բազմաշերտ պլոտում միախառնվում են սիրային պատմությունները, հին գաղտնիքներն ու դավաճանությունները, անակնկալ բացահայտումները: Քարոզչական տեսանկյունից հեռուստասերիալն ունի երկու կարևոր

17 “Vatanım Sensin’e Erdoğan engeli,” <https://odatv4.com/vatanim-sensine-erdogan-engeli--2303171200.html>, դիտվել է՝ 15.08.2022:

18 Դերասանուհի Բ. Քորելի ինստագրամյան էջ, https://www.instagram.com/tv/CAXc4UAJHlU/?utm_source=ig_embed, դիտվել է՝ 17.07.2022:

19 Գլավուր Մյումին փաշայի մասին մանրամասն տե՛ս Hür A., *‘İstiklal Savaşı’nin iki casusu: Gavur Mümin ve Mustafa Sagir*, <http://www.radikal.com.tr/yazarlar/ayse-hur/istiklal-savasinin-iki-casusu-gavur-mumin-ve-mustafa-sagir-1190132/>, դիտվել է՝ 17.07.2022:

առանձնահատկություն՝ ընդգծված հակահունականությունն ու քեմալական շարժման գովարանությունը:

Հեռուստասերիալը ստեղծում է «դաժան», «անմարդկային» հույնի կերպար: Առաջին և երկրորդ մասերում գլխավոր կերպարի՝ Ջնդեթի հուշերի միջոցով հեռուստադիտողը տեսնում է Բալկանյան պատերազմից հետո հունական «աշխատանքային ճամբարներում» հայտնված թուրքերի նկատմամբ հույն ղեկավարության դաժան վերաբերմունքը²⁰: Մանաստիպ տեսարաններ են ներկայացվում նաև հաջորդ սերիաներում, ինչպես՝ հույների հարձակումից մի կերպ փրկված թրքուհու պատմությունը (մաս 7), Զմյուռնիայից ոչ հեռու տեղակայված ճամբարում փախստականների սպանությունը (մաս 27):

Հունական սպայական անձնակազմի դաժանության մարմնացումն է գնդապետ Ստավրոն, որը բանտում հայտնվող մարդկանցից տեղեկություն կորզելու համար կիրառում է էլեկտրական աթոռ հիշեցնող սարք զոհերին կտտանքների է ենթարկում առանց խղճի խայթի, նույնիսկ հաճույքով (մաս 9):

Հունական զորքերի հրամանատար Վասիլին Ստավրոյի պես սադիստ չէ: Սպայի պարտքը նրա համար ընտանիքից, սեփական որդու երջանկությունից վեր է: Գովեստի արժանի և զինվորական միջավայրում ընդունելի համարվող այս մտացումը հեղինակները հակադրում են գնդապետ Ջնդեթի՝ ընտանիք-հայրենիք երկվության մեջ հավասարակշռություն գտնելու կարողությանը՝ ընդգծելով հունական կողմի թուլությունը:

Ֆիլմում ներկայացվող հույն կանանց շարքում ևս դրական կերպարներ չկան: Գեներալ Վասիլիի կինը՝ Վերոնիկան, ավագ որդուն մեկ տարեկանում օսմանյան զինվորների հարձակման հետևանքով կորցրած (սերիալային ոսկե կանոնների համաձայն՝ նրա որդին իրականում չի մահացել. նրան որդեգրել է Ջնդեթի ընտանիքը (մաս 30)) դժբախտ մայր է, որն իր խնդիրների լուծումը փորձում է գտնել գինու և ամուսնու հետ մշտական վեճերի մեջ: Սա հակադրվում է Ջնդեթի կնոջ՝ Ազիզեի կերպարին, որը, ամուսնու «դավաճանությունը», երեք երեխաների խնդիրները մի կողմ դրած, ակտիվորեն պաշտպանում է երկրի շահերը: Նա աշխատում է հիվանդանոցում, անձնվիրաբար օգնում թուրք զինվորներին, իսկ երբ հունական բանտ է ընկնում, լռում է՝ հակառակ բոլոր կտտանքների:

Այդուհանդերձ, սցենարիստները ներկայացրել են Ազիզեի ու Վերոնիկայի այդքան տարբեր կերպարների գլխավոր ընդհանրությունը՝ մայրական անսահման սերն ու նվիրվածությունը և այն, որ «մայր» և «երեխա» հասկացությունների ընկալումը, անկախ ազգային, կրոնական պատկանելությունից, նույնն են: Սակայն, ի հակադրության դրան, հույները Զմյուռնիայի թուրք որբերին ստիպողաբար մկրտում և ուղարկում են Աթենք: Հեռուստասերիալում, ի հակադրություն հույն կանանց, թրքուհիները բարեպաշտ են, աշխատասեր, մարդասեր, օրինակ՝ Հալիդե Էդիփը, Ջնդեթի դուստրեր Հիլալը (կիսալուսին) և Յըլդըզը (աստղ), Քարա (սև) Ֆաթման

20 Հեռուստասերիալի բոլոր մասերը հասանելի են սերիալի պաշտոնական կայքէջում՝ <https://www.kanald.com.tr/vatanim-sensin/bolumler>, դիտվել է՝ 17.07.2022: Այսուհետ կնշենք սերիան, բայց հղում չենք տա:

(Առաջին համաշխարհային պատերազմում կորցրել է ամուսնուն ու որդիներին, զինվորագրվել Քեմալի բանակում):

Փորձելով ցույց տալ, որ հույնը, անկախ սոցիալական դիրքից, պաշտոնից կամ տարիքից, նույնն է, ներկայացվում է Ջևդեթի տասնամյա որդի Ալի Քեմալի և նրա տարեկից Նիկոյի երեխայական կռիվը, որի ընթացքում Նիկոն ասում է. «Շուտով չքվելու եք Սալոնիկից», ինչը զայրացնում է Ալի Քեմալին (մաս 1):

Որոշ հույն կերպարներ հրաժարվում են պայքարել թուրքերի դեմ՝ պատերազմն անարդար համարելով. Վասիլիի որդին՝ Լեոնը, որ ֆիլմի սկզբում երդվյալ թուրքատյաց էր, սիրահարվում է Ջևդեթի աղջկան՝ Հիլալին, և հանուն նրա դավաճանում սեփական բանակին: Հիլալին ուղարկած նամակում Լեոնը գրում է. «Ինձ քո շնորհիվ եմ ճանաչում: Սկզբում չէի ընդունում, որ կարող եմ սիրել անհնարինը, սակայն այժմ քեզ տեսնելիս աննկարագրելի զգացմունքներ եմ ապրում: Իմ չճանաչած երկիրը սիրում, չիմացածս լեզվով խոսում եմ: Ինչքան ճանաչում եմ երկիրդ, այնքան ավելի շատ եմ քեզ սիրում: Հասկանում եմ, թե որտեղից է սերում քո պայքարելու կիրքը, և ամենաշատն էլ այդ կիրքն եմ սիրում: Քո մաշկի գույնը իմ դրոշի սպիտակին եմ նմանեցնում, իսկ աչքերդ՝ կապույտին: Հավատում եմ ձեր դրոշի աստղի հավերժությանը, դրա կարմիրը նմանեցնում եմ ձեր կյանքին, որ առանց մտածելու կգոհաբերեք, և այդ կարմիրի մեջ կորում: Հետո դու ինձ համար վերածվում ես աշխարհի բոլոր ժողովուրդների դրոշներին: Քո մասին մտածելիս սահմանները, մարդկանց գույները, դրոշները վերանում են» (մաս 20):

Լեոնի և Հիլալի պատմությունը սերիալի ամենահուզիչ, ռոմանտիկ և գեղեցիկ պլոտտային գիծն է, որ, միևնույն ժամանակ, քարոզչական կարևոր գործառույթ ունի: Ի տարբերություն Լեոնի՝ Հիլալը երբևէ պետության, հայրենիքի շահը չի ստորադասում Լեոնի անձից, նույնիսկ կրակում է նրա վրա և ծանր վիրավորում:

Ինչպես Հիլալը, այնպես էլ մյուս թուրք կերպարները, ի տարբերություն հույների, հայրենասիրության, անսպառ տոկոսության, մարդասիրության օրինակներ են: Երբեմն այս հատկանիշներն ավելի ընդգծելու համար հեղինակները հույն կամ եվրոպացի կերպարների անունից ծաղրում են թուրքերին ու նրանց կրոնական արժեքների, ընտանիքի նկատմամբ նվիրվածությունը: Գրեթե բոլոր թուրք կերպարները ինչ-որ կերպ կապված են քեմալական շարժման հետ և իրենց գործողություններով փորձում են աջակցել դրան: Ջևդեթի որդի Ալի Քեմալը հրաժարվում է վաշխառու Շտայների մոտ աշխատելուց և ստիպում լքել քաղաքը: Ջևդեթի կին Ազիզեն, դուստրերը՝ Յըլդըզն ու Հիլալը, հիվանդանոցում բուժքույր են և պարբերաբար հայտնվում են հակահունական գործողությունների կիզակետում:

Թուրք կերպարների շարքում իսկապես բացասական դիմագիծ ունի միայն Ջևդեթի մանկության ընկեր Թ-նֆիքը, որը, իր շահից բացի, ոչ մի սրբություն չի ճանաչում: Նա համագործակցում է ն հույների, ն անգլիացիների, ն քեմալականների, ն սուլթանի կողմնակիցների հետ: Թ-նֆիքի կերպարում խտացված են երիտթուրքերի և սուլթանական կառավարությունների վատագույն գծերը, որոնք հակադրվում են ազգայնական շարժմանը մոտ կանգնած ղեկավարների հայրենասիրությանն ու համարձակությանը:

Թուրք-հունական հակադրության մեջ հեղինակները չեն մոռանում նաև ցույց տալ կողք կողքի տարիներ շարունակ ապրած թուրքերի ու հույների բարեկամությունը, որ անասան է մնում նույնիսկ բարդությունների անվերջանալի շղթայի համատեքստում: Հեղինակները, օգտագործելով տեղացի հույների համար թուրքերեն «ոռում», իսկ եկվոր զինվորների համար «յունան» բառերը, որոշակի ջրբաժան են մտցնում «մեր» և «օտար» հույների միջև:

«Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալի առանցքային եզրը, իհարկե, հայրենիքն է, որի մասին Ջևդեթի կրակոտ խոսքերով է սկսվում սերիալը: Բառն այս կամ այն կերպ բազմիցս շեշտվում է բոլոր մասերում՝ ստիպելով նույնիսկ անտարբեր հեռուստադիտողին որոշակի հարգանքով լցվել իրենց երկիրն այդքան սիրող մարդկանց նկատմամբ: Այս տեսանկյունից քարոզչությունը հասնում է իր թիրախին: Հայրենասիրության ամենակարևոր խորհրդանիշը դրոշն է (սա պարզ է դառնում նույնիսկ Ջևդեթի աղջիկների անուններից) . Զմյուռնիա եկող Հունաստանի փոխվարչապետին «ըստ արժանվույն» դիմավորելու համար թուրք երիտասարդները խնդրում են իրենց մայրերին հսկայական դրոշ կարել և իրենց կյանքի գնով բացում են այն հունական դրոշի վրայից ճիշտ և ճիշտ այն պահին, երբ փոխվարչապետը ժամանում է (մաս 15): Որոշ ժամանակ անց անգլիացիների հետ իբր պայման կապելով՝ նրանց զենք վաճառել համաձայնած Էշրեֆ փաշայի ուղարկած սնդուկներում անգլիացի դիվանագետ Համիլթոնը տեսնում է ոչ թե հրացաններ, այլ դրոշներ (մաս 20): 15-րդ մասում ներկայացված պատմությունը հասարակական մեծ արձագանք է առաջացնում. պարզվում է, թե ով և ինչպես է թուրքական դրոշը Զմյուռնիայում կախել: Հեռուստասերիալում հույն նորեկ զինվորականները Զմյուռնիայում իրենց օտար են զգում և ցանկություն ունեն առաջին իսկ հնարավորության դեպքում Հունաստան վերադառնալ:

Խորհրդանշական է նաև, ազգային-քաղաքական պատկանելությունից կախված, քաղաքը «Իզմիր» կամ «Զմյուռնիա» կոչելը: Երբ Վասիլիի որդին՝ Լեոնը, օգտագործում է «Իզմիր» անվանումը, Հիլալը հասկանում է, որ նա վերջնականապես հրաժարվել է հունական ինքնությունից և անցել քեմալական բանակի շարքերը (մաս 26): Հեռուստասերիալն ավարտվում է Զմյուռնիայի՝ թուրքական բանակի գրավմամբ . Ջևդեթն ու Ազիզեն զոհվում են, սակայն նրանց երեխաները շարունակում են ապրել Իզմիրում:

Քաղաքում բռնկված հրդեհի պատմությանն ու հույների հետագա ճակատագրին հեռուստասերիալում անդրադարձ չկա:

«Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալը Թուրքիայում հասարակական քննարկումների առարկա է դառնում: Ստեղծագործական թիմի աշխատանքը, դրականից²¹ բացի, արժանանում է նաև խիստ բացասական գնահատականների²²: 2016 թ. հու-

21 “Bir TV dizisinden öte: Vatanım Sensin,” <https://www.aydinlik.com.tr/haber/bir-tv-dizisinden-ote-vatanim-sensin-cuneyt-akalin-kose-yazilari-mayis-2018>, դիտվել է՝ 09.08.2022:

22 “İstiklal Marşı tartışmasına Vatanım Sensin de mi giriyor,?” <https://www.ulusal.com.tr/istiklal-marsi-tartismasina-vatanim-sensin-de-mi-giriyor-makale,7033.html>, դիտվել է՝ 11.08.2022:

լիսի 15-ի հեղաշրջման փորձի համատեքստում ֆիլմարտադրողը մեղադրվում է քողարկված գյուլենական քարոզչության համար. քննադատության հիմնական թիրախը գյուլենական դպրոցների մասին պատմող սցենարիստ Նաջաի Շահինի մասնակցությունն էր «Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալի ստեղծման աշխատանքներին: Հասարակական ճնշման ներքո նրա անունը հանվում է ենթագրերից: Սրան հակառակ՝ մի շարք լրատվամիջոցներ պնդում են, որ հեղինակները, Աթաթուրքի անունն օգտագործելով, գյուլենականություն են քարոզում²³:

Ըստ լրագրող Սալիհ Թունայի՝ հակահունական շարժման ղեկավարներից Էշրեֆ փաշայի՝ Ջնդեթին ուղղած «Հանուն հայրենիքի հայրենիքի դավաճան կղաւնան» արտահայտությունը²⁴ հիմքեր է ստեղծել, որ հուլիսի 15-ի հեղաշրջման փորձի կազմակերպիչներն ինքնարդարանան: Մեկ այլ լրագրողի՝ Յաշար Աքսոյի գնահատականով՝ հույների դաժանությունը ոչ բավարար չափով է ներկայացված. «Հույները եթե նկարեին այս ֆիլմը, իրենք իրենց այսպիսին ցույց կտային, նման կատակերգություն պատկերացնելն անգամ անհնար է», – նշում է նա²⁵: Ավելին, ըստ Աքսոյի, անհավանական է, որ Իզմիրում հույն զինվորականը քաղաքավարի վերաբերվեր թուրք կնոջը, իսկ սիրահարվելու մասին խոսք լինել անգամ չի կարող: Նույն հեղինակը Ջնդեթի կերպարը կոչել է «Գյավուր Մյումինի սարսափելի նմանակում²⁶»: Լրագրող Յուքսեկ Այթոլն էլ իր հոդվածում գրում է, որ նույնիսկ հույներն իրենք իրենց այսքան դրական չէին կարող ցույց տալ: Մեջբերելով ֆիլմում հույն զինվորների՝ Նազիլիեում թուրքերի վրա կրակելուց հրաժարվելու դրվագը՝ նա նշում է, որ, ըստ այդ տրամաբանության, «հավանաբար Իզմիրն էլ Ներոնն է վառել»²⁷: 2017 թ. սկզբին սերիալի շուրջ կրքերն այնքան են թեժանում, որ լրագրողներ Յեներ Գյունեշն ու Էգե Քըրբաշը ֆիլմի դրական ու բացասական կողմերի մասին հոդվածների «պատերազմ» են սկսում²⁸:

Այսպիսով, «Իմ հայրենիքը դու ես» հեռուստասերիալում հույնի «փոքրոգի» կերպարը հակադրվում է թուրքի «ազնիվ», «արդարամիտ» կերպարին: Թե՛ քաղաքական, թե՛ ռազմական, թե՛ կենցաղային ոլորտներում այուժեի հեղինակները զուգահեռաբար ներկայացնում են հույներին և թուրքերին՝ ցածրացնելով առաջիններին և բարձրացնելով վերջիններին: Թուրքական քարոզչության դասական կանոնին հետևելով՝ հույներին մեղադրում են դաժանության, անմարդկային վերաբերմունքի

23 FETÖ'cü o dizide Atatürk'ün rolü neydi,? <https://www.sabah.com.tr/yazarlar/salih-tuna/2018/11/24/fetocu-o-dizide-ataturkun-rolu-neydi>, դիտվել է՝ 19.08.2022:

24 “Vatanim Sensin” dizisinde tepki çeken sahne,! <https://m.yeniakit.com.tr/haber/vatanim-sensin-dizisinde-tepki-ceken-sahne-253214.html>, դիտվել է՝ 27.08.2022:

25 “ Bu diziyi ancak bir Yunan böyle çekerti,” <https://www.yeniasir.com.tr/yasam/2017/03/24/bu-diziyi-ancak-bir-yunan-boyle-cekerdi>, դիտվել է՝ 27.08.2022:

26 Նույն տեղում:

27 Vatanim Sensin'e şok suçlama: “Yunanlilar çekse ancak bu kadar olur,” <https://www.medyaradar.com/vatanim-sensine-sok-suclama-yunanlilar-cekse-ancak-bu-kadar-olur-haberi-643367>, դիտվել է՝ 09.08.2022:

28 “Aydinlik'ta “Vatanim Sensin” tartışması: Kim, ne yazdi, <https://www.ulusal.com.tr/medya/aydinlikta-vatanim-sensin-tartismasi-kim-ne-yazdi-h141482.html>, դիտվել է՝ 09.08.2022:

համար, միևնույն ժամանակ, լռության մատնում Չմյուռնիայում թուրքերի ոճրագործությունները: Ավելին, թուրքական քարոզչամեքենայի մեկ այլ կանոնի համաձայն, փորձում են Հունաստանում ապրող հույներին տարանջատել թուրքարևակ «հավատարիմ» հույներից, որոնց հունական իշխանություններն իբր մոլորեցնում են:

Այսպիսով, հեռուստասերիալի օրինակով տեսնում ենք, թե ինչպես է նորոյա փաթեթավորմամբ ներկայացվում թուրքական քարոզչությունը, որն անխուսափելիորեն ազդում է ոչ միայն ներքին, այլև արտաքին լսարանի վրա՝ կեղծելով պատմական իրողություններն ու ձևախեղելով հույների կերպարը:

“THE SHEEP IN WOLF’S CLOTHING”: DEMONIZATION OF GREEKS IN TURKISH PROPAGANDA (CASE STUDY OF TV SERIES “YOU ARE MY MOTHERLAND”)

Naira H. Poghosyan

Yerevan State University, Armenia

SUMMARY

The phenomenon of the Turkish TV series that has become more and more popular all over the world since the 2000s has been studied by the public, journalists, and academic circles. Researchers emphasize the propaganda function of telenovelas (especially historical ones) as a tool of “soft power” utilized to influence foreign audiences. However, TV shows play an equally crucial role in conveying certain messages to Turkish TV viewers. One of the best examples of this approach is the film “You Are My Motherland” directed by Yaghmur and Durul Taylan.

Izmir (Smyrna) of 1919-1922, the anti-Turkish policy pursued by the Greeks and the Kemalist movement are represented in the context of the history of the family of the Turkish officer Cevdet, captured by Greeks. The plot of the TV series mixes love and betrayal, old secrets, and unexpected revelations. In this paper is highlighted how Greek and Turkish heroes are opposed in the film, shown the main features of the “demonization” of the Greeks through this opposition, and also present the techniques used to glorify the Turks.

Key words: Turkish TV shows, Izmir, Greeks, Kemalist Movement, soft power.

“ОВЦЫ В ВОЛЧЬЕЙ ШКУРЕ”: ДЕМОНИЗАЦИЯ ГРЕКОВ В ТУРЕЦКОЙ ПРОПАГАНДЕ (НА ПРИМЕРЕ ТЕЛЕСЕРИАЛА “ТЫ МОЯ РОДИНА”)

Наира А. Погосян

Ереванский государственный университет, Армения

Феномен турецких сериалов, которые начиная с 2000-ых годов пользуются большой популярностью во всем мире, изучался как общественно-публицистическими, так и академическими кругами. Исследователи подчеркивают пропагандистскую функцию теленовелл (особенно сериалов на историческую тематику) как инструмент «мягкой силы», направленной на зарубежную аудиторию. Однако сериалы играют не менее значимую роль в передаче определенных меседжей и турецким зрителям. Одним из лучших примеров такого подхода является многосерийный фильм «Ты моя Родина» режиссеров Ягмура и Дурула Тайлана. В контексте истории семьи турецкого офицера Джевдета, оказавшегося в греческом плену, описываются Измир (Смирна) 1919-1922 годов, проводимая греками антитурецкая политика и кемалистское движение. В сюжете сериала смешаны любовь и предательство, старые тайны и неожиданные откровения. В статье выделены основные пласты противопоставления греческих и турецких героев сериала, показаны особенности «демонизации» греков посредством этого противопоставления, а также представлены основные приемы, используемые для героизации турок.

Ключевые слова: турецкие сериалы, Измир, греки, кемалистское движение, мягкая сила.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Նաիրա Հ. Պողոսյան, բանասիրական գիտությունների թեկնածու, արևելագետ (թյուրքագետ), ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ թուրքական միգրանտական գրականություն, ժամանակակից թուրքական գրականություն, հայկական թեմատիկան թուրքական գրականության մեջ, հայատառ թուրքերեն, հուշագրություններ:

Էլ. փոստի հասցե՝ nairapoghosyan@ysu.am

Naira H. Poghosyan, PhD in Philology, orientalist, Assistant Professor at the Department of Turkic Studies, Faculty of Oriental Studies, Yerevan State University.

Research Fields: Turkish Migrant Literature, Modern Turkish Literature, Armenian Subject in Turkish Literature, Armeno-Turkish, Memoirs.

E-mail: nairapoghosyan@ysu.am

Наира А. Погосян, кандидат филологических наук, востоковед (тюрколог), ассистент Кафедры тюркологии факультета востоковедения Ереванского государственного университета.

Область исследований – турецкая мигрантская литература, современная турецкая литература, армянская тематика в турецкой литературе, армянографичный турецкий, мемуары.

Эл. почта: nairapoghosyan@ysu.am

**ԶՄՅՈՒՌՆԻԱՀԱՅ «ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԹԵՐԹԸ
ՀԱՄԱԶԳՅԱՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ֆելիքս Վ. Մովսիսյան

Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոն, Հայաստան

Զմյուռնիահայ «Արշալոյս արարատեան» քաղաքական, բանասիրական և առևտրական լրագիրն ուրույն տեղ ունի հայ պարբերական մամուլի պատմության մեջ: Թերթի հիմնադիր և խմբագիր Ղուկաս Պալղազարյանը 38 տարի շարունակ լուսաբանել է Զմյուռնիայի հասարակական կյանքը և աշխարհում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները՝ դրանց նկատմամբ պահպանելով անկողմնակալ մոտեցում: Հայ պարբերական մամուլի պատմության մեջ «Արշալոյս արարատեան»-ը առանձնանում է Զմյուռնիայի հայ համայնքի կյանքի մասին հրապարակումներով, որոնք լրացնում և ամբողջացնում են Զմյուռնիայի տարեգրությունը: Դրանք բազմաբնույթ են, հանգամանալից, երբեմն չափազանց մանրամասն:

«Արշալոյս արարատեան»-ի ուշադրությունից չէին վրիպում նաև հայաշատ մյուս գաղթօջախների կյանքն ու հասարակական գործունեությունը: Թերթը բազմաթիվ հրապարակումներ էր նվիրում հայ գաղթօջախներում հիմնված կրթական, մշակութային ընկերությունների, միությունների ու կազմակերպությունների գործունեությանը: Այս իմաստով հայ հասարակական մտքի և պարբերական մամուլի պատմության մեջ կարևոր են Կ.Պոլսի Համազգյաց ընկերության մասին թերթի հրապարակումները: Այս ընկերության գործունեությունը հայ պատմագրության մեջ հիմնովին ուսումնասիրված չէ: Համազգյաց ընկերությանը չի անդրադարձել անգամ հիմնադրման պահին Կ.Պոլսում լույս տեսնող միակ հայերեն «Հայաստան» թերթը: Ընկերությանը բազմաթիվ հրապարակումներով անդրադարձել է զմյուռնիահայ «Արշալոյս արարատեան»-ը, որի դիրքորոշումը դրա գործունեության ու հայության կյանքում ունեցած նշանակության մասին առաջին անգամ ներկայացվում է սույն հոդվածում:

Բանալի բառեր՝ «Արշալոյս արարատեան» թերթ, Համազգյաց ընկերություն, Զմյուռնիա, Կ.Պոլիս, Մուրադյան վարժարան, մտավորականներ, ընկերություններ, կրթություն, լուսավորություն, առաջադիմություն, միասնություն, եղբայրություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 30. 11. 2022: Ընդունվել է տպագրության՝ 07. 02. 2023:

The article was submitted on 30. 11. 2022 and accepted for publication on 07. 02. 2023:

Статья поступила 30. 11. 2022 и была принята к публикации 07. 02. 2023:

Ինչպես հղել՝ Ֆելիքս Վ. Մովսիսյան, «Զմյուռնիահայ «Արշալոյս արարատեան» թերթը Համազգյաց ընկերության մասին», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 1 (2023), 115-140:

How to cite: Feliks V. Movsisyan, “Smyrna Armenian Newspaper ‘Arshaloys Araratean’ about Hamazgeats Society,” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 1 (2023), 115-140.

Как сослаться: Феликс В. Мовсисян, “Измирская армянская газета ‘Аршалуйс араратян’ об Обществе Амазгеац,” *Цехаспанagitakan андес* 11, no. 1 (2023), 115-140.

«Արշալոյս արարատեան» թերթը

1840 թ. օգոստոսի 10-ին Չմյոռնիայում՝ Ստեփանոս Պապոյանի տպարանում, լոյս է տեսնում «Արշալոյս արարատեան» քաղաքական, բանասիրական և առևտրական լրագիրը: Թերթի խմբագիրը Մեսրոպյան վարժարանի առաջին ուսուցիչներից Ղուկաս Պալղազարյանն (1810-1878) էր՝ «լեզուագէտ ու զարգացած մարդ մը»: Նա, «ազգասէր բարեկամներէն բաւական քաջակերութիւն ընդունելով», ձեռնամուխ է լինում թերթի հրատարակմանը՝ հուսալով, որ հայությունը «սիրով պիտի ընդունի սա մէր աշխատասիրութիւնը»¹: Նա 38 տարի շարունակ հրատարակում և խմբագրում է թերթը՝ միայնակ կրելով հրատարակչության և տարածման ամբողջ ծանրությունն ու պատասխանատվությունը: Որպէս հասարակական գործիչ՝ Ղուկաս Պալղազարյանը կարևոր դեր է խաղացել Չմյոռնիայի մշակութային կյանքում: Նա երկար տարիներ գաղթօջախի Մեսրոպյան և Սարգսյան (ապա՝ Հռիփսիմյան) վարժարանների հոգաբարձուն էր, Սյունյաց ընկերության գլխավոր վերատեսուչը²: Պալղազարյանն անձնական շփումներ է ունեցել ազդեցիկ մի շարք մարդկանց, այդ թվում՝ Կ.Պոլսում Անգլիայի դեսպան Չառլզ Ստրենտֆորտ Քաննիգի հետ, որը նրան «շտրեհեց իր չնաշխարհիկ բարեկամութիւնը, մարդասիրաբար պատուելով մասնատր հացկերոյթով մը»³: Պալղազարյանը լայն կապերի շտրիկով ազդեցիկ դիրք է ունեցել Չմյոռնիայում, նպաստել մի շարք ազգօգուտ նախաձեռնությունների, բարեգործական քայլերի մղել գաղթօջախի որոշ մեծահարուստների: Մասնավորապէս, նրա հորդորով, տրիեստաբնակ զմյոռնիացի հարուստ վաճառական Պետրոս Յուսուֆյանը և նրա եղբայր Պողոսը Մեսրոպյան վարժարանի համար տպարան են հիմնում, գաղթօջախի դպրոցներում անգլերեն և ֆրանսերեն դասավանդող ուսուցիչներին վարձատրում, գործուն քաղցրություն ցուցաբերում Սյունյաց ընկերությանը, Սարգսյան դպրատանը և հիվանդանոցին⁴:

Պալղազարյանի և նրա խմբագրած «Արշալոյս արարատեան» թերթի մասին հայ պատմագրության և բանասիրության մեջ բազմաթիվ անդրադարձներ են եղել, որոնք բավական հակասական են: Հայ պարբերական մամուլի պատմության ուսումնասիրող Գրիգորիս Գալեմբյարյանի կարծիքով՝ Չմյոռնիայի «Արշալոյս արարատեան» թերթը «ճշմարիտ արշալոյսն էր հայ լրագրութեան»: Նրանից առաջ լոյս տեսած լրագրերը գիշերային աստղերի պէս թոյլ լոյս ունեին և իրենց կարճատ կյանքով լոկ գարդ էին հայ ազգի համար և «Արշալոյս արարատեան»-ի ծագման ժամանակ արդեն նսեմացած էին, և մեկնած լրագրութեան հորիզոնէն: Ի ծագել Արշալոյս արարատեան՝ նոր կեանք սկսի. թէև ի սկզբան աղօտ իմն կը լուսատր էր հայ աշխարհն, սակայն ի սուղ ժամանակի պայծառացաւ հետզհետէ»⁵:

1 Խմբագրական, *Արշալոյս արարատեան* (Չմիոռնիա), 10 օգոստոսի 1840:

2 «Չմիոռնիա», *Արշալոյս արարատեան*, 13 յունիսի 1841:

3 «Չմիոռնիա», *Արշալոյս արարատեան*, 3 յուլիսի 1842:

4 Վահան Զարդարեան, *Յիշատակարան*, հ. Ե (Գահիրե, գրատուն Վ. Զարդարեան, 1939), 20-40, «Չանագան լուրեր», *Արշալոյս արարատեան*, 23 օգոստոսի 1846:

5 Հ. Գրիգորիս, Վ. Գալեմբարեան, *Պատմութիւն հայ լրագրութեան* (Վիեննա, Մխիթարեան, 1893), 52:

Մատթեոս Մամուրյանի բնութագրմամբ՝ Պալղազարյանը «բազմաբղին, անձնաձիր, խոհական ազգային խմբագիր» էր, «հայ խմբագրաց անուանի նահապետը»: Նա «իրբել խմբագիր՝ հայ օրագրության մեջ եզական պատկեր մ'էր, եւ պիտի մնայ միշտ՝ իր գաղափարներովն ու իրեն յատուկ արժանիքովն: Նա 1840-ին ամենեց Արարատայ արշալոյսը և 38 տարի կռուեցաւ իր գրչով այդ արշալոյսը փայլեցնելու Արարատայ վրայ: Միայն Ղ. Պալղազարեանին կ'պատկանի հայ օրագրության ռահահորդ լինելու փառքը... Երբ Արշալոյսն երեցաւ նոր թուական մը բացուեցաւ անշուշտ հայոց համար»⁶:

Զմյուռնիայի գաղթօջախի պատմաբան Հակոբ Քոսյանի կարծիքով՝ «Արշալոյս արարատեանի անունը Զմիւռնիոյ իրենց նախնի գրասիրության պատկառելի յիշատակ մը պիտի մնայ միշտ»⁷:

Միքայել Նալբանդյանը «Արշալոյս արարատեան»-ի խմբագրի նկատմամբ սկզբնապէս դրական վերաբերմունք է ունեցել, նրան համարել «գիտնական Պալղազարեան», որի հրատարակած թերթն իր պարզ ոճով և «ատողջ դատողութեամբ շահեցաւ զսիրտ ազգին»⁸: Հետագայում՝ 1863 թ. հուլիսին, բանտից եղբորը գրած նամակում Նալբանդյանը, սխալ տեղեկություն ունենալով, որ Զմյուռնիայի հայության պատվիրակ Պալղազարյանը Պետերբուրգ է ժամանել Նոր Նախիջևանին կտակված գումարի հարցով, նրան հանիրավի անվանում է «կաշառուած», «սրիկայ», «վարձկան», «թուրքական լրտես», «խրաքանչիւր ամիս մատնութիւններ» անող, հայերին «դաւաճանող», իսկ «Արշալոյս արարատեան»-ը՝ «անարգ թերթ»⁹:

Մնացական Հակոբյանը «Զմյուռնահայ պարբերական մամուլը (1839-1860)» աշխատության մեջ նշում է, որ նա ոչ ազգասեր, ոչ էլ անագնիվ մեթոդներով պայքարող խմբագիր ու գործիչ չի եղել. լայն մտահորիզոն չունեցող միջին ընդունակություններով օժտված, բավականաչափ պարզամիտ, անհամարձակ մտավորական է եղել: Զմյուռնիայում ունեցած դիրքով ու կարողություններով առանձնապէս որոշիչ դեր չի կատարել նույնիսկ իր թերթով¹⁰:

Պալղազարյանը զգուշավոր խմբագիր-հրատարակագիր էր, մտահոգված, որ թերթը պահպանի չափավորություն, պահպանողականություն, չտրվի ծայրահեղությունների, չարտահայտի հետադիմական կամ առավել ևս առաջադիմական այնպիսի գաղափարներ, որոնք կվտանգեն թերթի հրատարակությունը: Նրա հավատամքն այն էր, որ «Արշալոյս արարատեան»-ը երկու ծայրահեղ, անընդունելի բևեռների մեջ ընտրեր միջին գիծ, որը հնարավորություն կտար անցնցում, խաղաղ, հանդարտ ընթացքով հրատարակել թերթը: Այս մոտեցումը նա պահպանում է խմբագիր եղած տարիներին, որով օսմանյան գրաքննության պայմաններում ապահովում է

6 Մատթեոս Մամուրյան, «Մեծ Ղուկաս Գ. Պալղազարեան», *Հայկական մամուլ* (Զմյուռնիա), հունիս, 1878, 65-66:

7 Հ. Յակոբ Վ. Քոսեան, *Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս* (Վիեննա, Մխիթարեան, 1899), հ. Ա, 272:

8 Միքայել Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 2 (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1980), 40:

9 Միքայել Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 4 (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1949), 226-227:

10 Մնացական Հակոբյան, *Զմյուռնահայ պարբերական մամուլը* (1839-1860) (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1984), 30:

թերթի անխափան գործունեությունը: Պալդազարյանը համոզված էր, որ իր թերթի ընթացքը ճիշտ է, և նույնը ցանկանում էր նաև Թուրքիայում լույս տեսնող մյուս հայ լրագրերին: Հրանտ Ասատուրի դիպուկ բնութագրմամբ՝ Պալդազարյանի «Արշալոյս արարատեան»-ն այս իմաստով «հանդարտ ծովակ էր»¹¹:

«Արշալոյս արարատեան»-ի անկողմնակալ ուղեգիծը նկատի ունենալով՝ Ստեփան Ոսկանյանը գրում է. «Ստոյգ է, որ քսան, երեսուն տարի է ի վեր արշալոյս մը կաւետուի հրապարակաւ, բայց որովհետեւ տակաւին ըղձալի օրը չծագեցաւ եւ իր անունը միայն հոտած թերթի մը վրա կտեսնուի, ըսել է թէ իր նշոյլը սուտ է եւ յոյս անգամ չպիտի բերէ թող թէ լոյս»¹²:

Զմյուռնիայի գաղթօջախի պատմության մեջ կարևոր հանգամանքը ոչ այնքան Պալդազարյան խմբագրի անձն ու կարողություններն են, որքան նրա թերթը, որի շատ հրապարակումներ, հատկապես հայ համայնքի կյանքի մասին, առանց չափազանցության սկզբնաղբյուրի դեր են խաղում: Հայ մամուլի պատմության մեջ «Արշալոյս արարատեան»-ի կշիռն ամենից առաջ զմյուռնիահայության կյանքի լուսաբանումն է. նրա հրապարակումները դարձել են տարեգրություն այն ամենի, ինչը տեղի է ունեցել ոչ միայն Զմյուռնիայում, այլև Կ.Պոլսում և մյուս գաղթօջախներում: Այս իմաստով կարևոր է «Արշալոյս արարատեան»-ի դիրքորոշումն ու գնահատականը Կ.Պոլսի հայ հասարակական կազմակերպությունների, մասնավորապես Համազգյաց ընկերության վերաբերյալ:

Համազգյաց ընկերությունը

1846 թ. մարտի 17-ին Բերայում պոլսահայ երիտասարդ կաթոլիկ մտավորականների նախաձեռնությամբ գումարվում է Համազգյաց ընկերության հիմնադիր ժողովը¹³: Ընկերությունը 76 «համազգիք, միաբանասերք» մասնակիցների ստորագրությամբ, որոնց մեջ կային կաթոլիկ և լուսավորչական հայեր, աշխարհականներ և կրոնավորներ, մտավորականներ և արհեստավորներ, կրթված և «լուսաորեալ» երկու-երեք ամիրաներ, հայտարարություն են ընդունում իրենց գործունեության նպատակների մասին¹⁴, որում ասվում էր. «Մեծաց արդերեւ գովութեանց է արժանատր անչափ խնդութեան, տեսանել արծարծեալ ի սակաւ յայտրիկ ամն ի՛սիրտ ամենայն մերոց, փոյթ իմն եռանդեան ի կանգնումն ուսումնարանց, եւ ի զարգացումն ուսումնական ընկերութեանց»¹⁵: Հայտարարությունը կազմված էր եվրոպական լուսավորության և հասարակական առաջընթացի գաղափարների ազդեցությամբ: Երանում նշվում էր,

11 Հրանտ Ասատուր [*Հայ մատենագիտություն և հայ մատենագետներ*], տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին 1, գ. 1, թ. 104:

12 Խմբագրական, *Արեւմուտք* (Փարիզ), 1 փետրվարի 1864, 4:

13 Երեմիա Քյոմուրճեան, *Ստամպոլի պատմութիւն* (Վիէննա, Մխիթարեան տպարան, 1913), 568: Յակոբ Սիրունի, *Պոլիս եւ իր դերը*, Երկրորդ հատոր (Անթիլիաս, 2010), 390-392:

14 Մաղաքիա Օրմանեան, *Ազգասպասում*, հ. Գ, մասն Ա (Պեյրոթ, տպարան Սեան, 1961), 3823:

15 «Յայտարար նախակարգութիւն ընկերութեան Համազգեաց», *Արշալոյս արարատեան*, 19 ապրիլի 1846, 1:

որ ընկերության նպատակն է «ամենայն ազգայնոց մերոց, փոյթ իմն եռանդեան ի կանգնումն ուսումնասիրաց, եւ ի զարգացումն ուսումնական ընկերութեանց.... ի բաց զգիտութեան փարատել քօղ ի մտաց, գիտել ստանալ գիմաստութիւն.... առաւելեալ է բորբոքումն եռանդեան ճգնաց մերոց, զի ոչ մեզէն ի շահ անձանց մերոց, բերիմք յայս գործ, այլ ազգ մեր նախնագոյնն յազգս, իբր անյիշատակ թաղեալ երբեմն ի զգիտութիւն խորս դիպովք արժանի ողբաց.... արդ զգլովս ի վեր ամբարեալ յաւերակաց շիրիմացն, թախիծ մեզ արկանէ որդւոց իւրոց. մի գանգ առնել զիւրք ի կենդանացուցանել գնա յիմաստութիւն գործել որ ինչ ի ձեռս է մեր: Մի ազգ եմք եւ ի մի միաբանութիւն ժողովեալ, երթիցուք ուր ձգիցէ զմեզ ճշմարիտ ազգասիրութիւն եւ առաջի մեզ խորհուրդ, արկցուք ի գործ, այս լինել աղբիւր ամենայն բարեաց խոստովանեցի ամենայն ոք»:¹⁶

Հայտարարությունն առաջնահերթ խնդիր էր համարում «առաւելով ընկերասիրութեան եւ ազգասիրութեան» գաղափարի տարածումը, ազգային համերաշխությունն ու միասնությունը: Հայությանը մաղթելով «կատարելութեան սէր»՝ հորդորում էր «մի միաբանութիւն ժողովեալ, երթիցուք ուր չիցէ զմեզ ճշմարիտ ազգասիրութիւն»¹⁷: Հայտարարության վերջում ընկերության հիմնադիրները «ի զարգացումն ազգին յամենայնի, այսինքն ի հաւատս յուսումն գիտութեան եւ յարուեստս» ներկայացնում են տասը կետ, որ իրենց ապագա գործունեության հիմքում պետք է լինէին: Դրանք էին.

«Ա. Միասիրտ, միակամ, խաղաղասէր շաղկապումն անձանց ի մի միաբանութիւն:

Բ. Յօրինուած եւ թարգմանութիւն գրեաց օգտակարաց, եւ հրատարակումն այնոցիկ տպագրութեամբ:

Գ. Կանգնումն վարժարանաց եւ դպրոցաց ի քաղաքս եւ գիւղս՝ ի դաստիարակութիւն ուստերաց եւ դստերաց:

Դ. Հմտութիւն եւ գործադրութիւն արուեստին երկրագործութեան:

Ե. Հետախոյզ քննութիւն հայրենականացն հնութեանց եւ սովորութեանց:

Զ. Հաւաքումն մատենից նախնեաց եւ դրամոց եւ այլոց նշխարաց հնութեանց:

Է. Հաւաքումն նիւթոց բնական պատմութեան կենդանեաց, բուսականաց եւ ընդերկրեայց:

Ը. Ուսումն ամենազգի արուեստից ծաղկելոյն ազանց:

Թ. Բարգաւաճումն վաճառականութեան ըստ երոպական օրինի:

Ժ. Ուսումն անթերի գիտութեան վաստակելոյ ի մետաղս»¹⁸:

Այս հայտարարությունից հետևում է, որ Համազգայաց ընկերության հիմնադիրներն իրենց առաջ համազգային մի շարք լուրջ խնդիրներ էին դրել՝ ազգը համախմբել, դարձնել միակամ և նրա ուժերը նպատակաուղղել կրթության, դաստիարակության, տպագրության, երկրագործության, արհեստների ու վաճառականության զարգացմանը: Կարևոր տեղ էր հատկացվում նաև ազգային արժեք ներկայացնող տարբեր նյութերի հավաքմանը, արվեստի և գիտության առաջընթացն ապահովելուն: Դա էր Համազգայաց ընկերության հմայքը, որը հայության հանրային գործունեության համար

16 Նույն տեղում:

17 Նույն տեղում, 1:

18 Նույն տեղում, 2:

մեծ ասպարեզ էր բացում: Համազգյաց ընկերության հարուստ, բազմակողմանի և բավական ընդգրկուն ծրագիրը, ըստ էության, ազդարարում էր ընկերության հեռահար նպատակը: Հայտարարության մեջ միաժամանակ ընդգծվում էր, որ ընկերությունն առաջնահերթություն է տալու հետևյալ երեք ուղղություններին: Դրանք նախատեսում էին. «Առաջին. թարգմանել և կամ շարադրել գիատուցած կարեւորս ի զարգացումն մտաց: Երկրորդ. սկսանել մեծաւ ջանիւ արկանել հաստատուն վաճառականութեան: Երրորդ. Լինել զհետ պատրաստութիւն կանգնելոյ վարժարանս ուստերաց և դաստերաց»¹⁹:

Համազգյաց ընկերության առաջնահերթ խնդիրներից մեկն ընկերության կանոնադրություն ունենալն էր: Ընկերության հիմնադիրների խնդրանքով այդ կարևոր գործը ստանձնում ու Կ.Պոլսում ավարտին է հասցնում Պադուայի Մուրադյան վարժարանի ուսումնապետ, Վենետիկի Մխիթարյան միաբանության հայր Պետրոս վարդապետ Մինսայանը²⁰: Երա կազմած կանոնադրությունը բաղկացած էր 41 հոդվածից: Կանոնադրության համաձայն՝ Համազգյաց ընկերության անդամները պարտադիր պետք է լինեին «հայադասն, հռոմէադասն եւ բողոքական ազգայիններ»: Ընկերությունը ղեկավարելու համար ընտրվում է վարիչ մարմին, որի կազմում էին երեք տեսուչ, տասներկու խորհրդական, տասներկու խաղաղարար, չորս գանձապետ, երկու գրագիր և երեք գրաքննիչ, որոնցից երկուսը քննելու էին «աշխարհիկ տերութեան դէմ եղածները», իսկ երրորդը, որ քահանա էր, սրբագրելու էր «ուղղափառ հաւատոյ դէմ գրուածները»: Ընկերության ժողովներում և վարիչ մարմնում որոշումները պետք է ընդունվեին ձայների մեծամասնությամբ²¹:

Համազգյաց ընկերության անդամ դառնալու համար պահանջվում էր վճարել տասը դահեկան: Ըստ կանոնադրության՝ ընկերության յուրաքանչյուր անդամ ամսական պետք է վճարեր հինգ դահեկան: Այդ հասույթով և ստացված նվիրատվություններով նախատեսվում էր դպրոցներ, արհեստանոցներ բացել, գրքեր հրատարակել²²:

Համազգյաց ընկերության անդամները

Համազգյաց ընկերության ոգին ու «գլխատր միաբանասերք» կաթոլիկ հայեր էին՝ Մկրտիչ Սամանճյանը, Հակոբ Տավուտյանը, Ա. Լուիֆյանը, Խաչատուր Գազազյանը, Հովսեփ Վարդանյանը, Կարապետ Թյուլպենտճյանը, Սարգիս Ասկերյանը

19 Նույն տեղում, 2:

20 Հակոբ Ասկերեան, *Հասունեան քաղաքականութիւն* (Տիփսիս, ի տպարանի Համբարձումայ Էնֆիանեանաց և ընկ., 1868), 77: Ավետիս Պերպերեան, *Պատմութիւն հայոց* (Կ.Պոլիս, տպարան Պ. Քիրիշճեան, 1871), 350-351: Սիրունի, *Պոլիս եւ իր դերը*, 392:

21 Ասկերեան, *Հասունեան քաղաքականութիւն*, 78-79:

22 Պերպերեան, *Պատմութիւն հայոց*, 351, Հ. Եփրեմ, Վ. Պողոսեան, *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու, հ. Ա, Պոլսահայ մշակութային ընկերութիւնները* (Վիեննա, տպարան Մխիթարեան, 1957), 52:

և Սերովբե Ազնավուրյանը²³: Այս երիտասարդ մտավորականները հետագայում մեծ դերակատարություն են ունենում պոլսահայության կյանքում և ազգային սահմանադրական շարժման գործում, իսկ ոմանք վերադառնում են հայ եկեղեցու գիրկը: Ընկերության քարտուղարը 1844 թ. Մուրադյան վարժարանի շրջանավարտ, երիտասարդ բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանն էր²⁴: Ընկերության հավաքատեղին Կ.Պոլսի Լալե փողոցի թիվ 13 տունն էր, որը համարվում էր «Խորհրդարան Համազգեսաց ընկերության»:

Համազգյաց ընկերության հիմնադիրներից շատերը «ազգասէր եւ ուսումնասէր անձինք» էին, Մուրադյան և Ռափայելյան վարժարանների շրջանավարտներ, որոնք «համամիտ եւ համակամ խորհրդով եւ հաւանութեամբ կամեցան հաստատել զԸնկերութիւն իմն Լուսաւորչեան հայոց»²⁵: Ուսումնառությունից հետո վերադառնալով հայրենի Կ.Պոլիս՝ այդ երիտասարդները «թէ հանրային եւ թէ կրթական ծառայութիւն կը մատուցանէին ժողովրդին»²⁶:

Համազգյաց ընկերության անդամները եվրոպական երկրներում, հատկապէս Ֆրանսիայում և Իտալիայում «իրապէս կրթուած», լուսավորության, առաջադիմության գաղափարներով տոգորված ու «ազգային ոգով ներշնչուած»²⁷ երիտասարդ մտավորականներ և «եւրոպականացած» վաճառականներ էին: 1840-ական թթ. կեսերին «լուսամիտ մեծահարուստ» հայ ամիրաներ Հովհաննես Տատյանի, Հովհաննես Սերվերյանի, Մկրտիչ Ճեզայիրյանի, Կարապետ Պալյանի և Պողոս Օտյանի հովանավորությամբ աղքատ ընտանիքներից սերած ուշիմ երիտասարդները հնարավորություն են ստանում կրթությունը շարունակելու Փարիզում: Ֆրանսիայի նկատմամբ պոլսահայ երիտասարդների հետաքրքրությունը պայմանավորված էր նրանով, որ մինչ սուլթանի բարենորոգումների հռչակումը «աշխարհի քաղաքականութեան և մանաւանդ մտաւորական շարժման առանցքը Փարիզն էր»²⁸:

Սկսած 1840 թ. Փարիզը դառնում է յուրահատուկ խառնարան 25-30 հայ ուսանողի²⁹ համար, որտեղ դարբնվում էր թուրքահայ մտքի, լեզվի, գրականության, վարչական կազմի և բուն ժողովրդավարական կյանքի հեղաշրջումը: Փարիզում կրթություն էին ստանում պոլսահայ հասարակական, կրթական, ազգային շարժման ապագա դեմքեր Գրիգոր Աղաթոնը, Նահապետ Ռոսիկյանը, Գևորգ Սթինառճյանը, Հակոբ Ամասյանը, Հարություն Սվաճյանը, Իսաչատուր Պարտիզպանյանը և Նիկողայոս Զորայանը: 1844-1848 թթ. նրանց են միանում պոլսահայ նշանավոր ամիրաներ Տատյան և Պալյան գերդաստանների գավակները՝ սկզբում՝ Առաքել,

23 Պերպլերեան, *Պատմութիւն հայոց*, 358:

24 Վահան Զարդարեան, *Յիշատակարան*, հ. Դ (Կ.Պոլիս, 1912), 133:

25 Պերպլերեան, *Պատմութիւն հայոց*, 339:

26 Արշակ Ալպոյաճեան, *Ազգային Սահմանադրութիւնը, իր ծագումը եւ կիրառութիւնը*, Ընդարձակ օրացույց Ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց (Կ.Պոլիս, Տպագրութիւն Յ. Մատթէսեան, 1910), 250:

27 Արշակ Ալպոյաճեան, «Զմիւռնիոյ տպարանները», *Պատմաբանասիրական հանդես* 2 (1964), 78:

28 Ալպոյաճեան, *Ազգային Սահմանադրութիւնը*, 227:

29 «Զանազան լուրեր», *Արշալոյս արարատեան*, 6 փետրվարի 1848, 3:

Հարություն և Գրիգոր Տասյանները, այնուհետև՝ Հարություն և Նիկողայոս Պալյան եղբայրները³⁰:

Մինչ այս պոլսահայերի՝ Ֆրանսիա մեկնելը Փարիզում 1830-ական թթ. կրթություն էին ստանում Սերովբե Վիչենյանը (Սերվիչեն), Գասպար Մինասյանը, Հակոբ Կրճիկյանը, Պողոս Շաշյանը: Կ.Պոլիս վերադարձած Կրճիկյանը և Սերվիչենը ձեռնամուխ են լինում ազգային գործերի վիճակի բարելավմանը և Պատրիարքարանի հետ համագործակցությանը: Նրանք սկսում են «մեղմօրեն տարածիչը հանդիսանալ ֆրանսական յեղափոխության սուրբ սկզբանց եւ ժողովրդապետական գաղափարներուն, որոնք արդեն անզգայաբար պահանջ կը դառնային Կ.Պոլսոյ մէջ»³¹: Շտրիիվ նրանց ազգանպաստ գործունեության՝ «խմորումը հզօր եղաւ», և ամիրաների գործուն աջակցությամբ Փարիզ է ուղարկվում պոլսահայ երիտասարդների երկրորդ խումբը: 1840-50-ական թթ. Փարիզում կրթություն էին ստանում Ճանիկ Արամյանը, Ստեփան Ոսկանյանը, Իսաչատուր Պարտիզպանյանը, Իսաչատուր Միսաքյանը, Կարապետ Յութուճյանը, Հովսեփ Շիշմանյանը (Շերենց), Ավետիս և Թովմաս Խորասանճյան եղբայրները, Աբրահամ Երանյանը, Հովսեփ Պեյրանը և ուրիշներ:

Փարիզում կրթություն ստացած երկրորդ խումբ պոլսահայ երիտասարդները «չկարողացան գերծ մնալ Ռուսիներանի ազդեցութիւնէն»: Դրան նպաստում է նաև «1848 թ. յեղափոխութեան ժամանակը, որ հզօր ներգործութիւն մը կ'ունենար ուղղակի այս երկրորդ խումբին վրայ»³²: Այս խումբը կազմում էին Աստոն և Սարգիս Պալյանները, Կարապետ Յութուճյանը, Հովհաննես (Արզուման) Վահանյանը, Հաբեթիկ Ներուզյանը, Գրիգոր Մոզյանը, Միքայել և Թովմաս Խորասանճյանները, Հովհաննես Թյոյսյուզյանը, Իսաչիկ Կյումյուշյանը՝ բոլորն էլ ազդեցիկ մարդկանց զավակներ կամ խիստ առաջադեմ և ընդունակ պատանիներ: Նրանք «գիտական, ազատական, հասարակական լեցուն պաշարով»³³ վերադառնում են հայրենի Կ.Պոլիս որպէս եվրոպական փայլուն կրթություն ստացած լավագույն բժիշկներ, իրավաբաններ, ճարտարապետներ, գյուղատնտեսներ և առևտրականներ: Պոլսահայ այդ երիտասարդները բարեկամական կամ ազգակցական կապեր ունեցող գերդաստանների զավակներ էին: Նրանք ուսումնառության տարիներին և դրանից հետո միմյանց հետ սերտ շփումների մեջ էին, խանդավառված ու տոգորված լուսավորության և առաջադիմության գաղափարներով: Շտրիիվ այս երիտասարդների՝ 1840-ական թթ. Կ.Պոլսի «մթնոլորտը գերազանցապէս խանդավառիչ էր, յղի անգին գաղափարներով»³⁴:

Եվրոպական կրթություն ստացած պոլսահայ երիտասարդները, լուսավորության, առաջադիմության և բարեփոխումների անհրաժեշտության գաղափարների ազդեցության տակ, նվիրվում են ազգային համերաշխության, միասնության և եղբայրական

30 Ալպոյանճեան, *Ազգային սահմանադրութիւնը*, 230-233:

31 Նույն տեղում, 233:

32 Նույն տեղում, 234:

33 Արմենակ Ֆէսէրճեան, «Ազատ որմադրութիւնը հայոց մէջ», *Հայրենիք* (Բնստոն) 10 (1954), 92:

34 Ալպոյանճեան, *Ազգային սահմանադրութիւնը*, 235:

օգնության նվիրական գործին: Նրանք հայությանը «հոգածություն եւ զոհողութեան հոգի կը ներշնչէին, եւ անոնց հովանատրոթիւնը իրենց աշխատութեանց միացնելով օգտակար հաստատութեանց նախաձեռնարկներ կ'ըլլային»³⁵:

Պոլսահայ երիտասարդ մտավորականներն ու «ելրոպականացուած» վաճառականները մեծապէս ազդում են հայ ընկերային և հասարակական կյանքի վրա՝ հիմնելով մի շարք հասարակական, կրթական, ազգային ու մշակութային ընկերություններ: Կ.Պոլսի հայության շրջանում դրանց հիմնումը վկայությունն է այն բանի, որ այդ ընկերությունները «մի մի նշաններ էին, թէ հասարակութիւնը որքան գեղեցիկ կերպով ըմբռնել է ընկերական սկզբունքը»³⁶:

Այդ ընկերությունների շարքում իր նպատակադրությամբ առանձնանում է հատկապէս Բերայում հիմնված Համազգայաց ընկերությունը, որը, Պեշիկթաշլյանի բնութագրմամբ, հավակնում էր համապատասխանել իր «շքեղ» անվանմանը: Ընկերությունն իր առաջնահերթ խնդիրը համարում էր գավառներում կրթություն տարածելը և «ազգին կրօնապէս անջատեալ մասերը յարաբերութեան դնելը»³⁷ ու նպատակ էր հետապնդում «ազգասիրութիւն եւ ուսումնասիրութիւն եւ յառաջադիմութիւն ի բարոյական մասին եւ բացէ ի բաց հերքումն տարապարտ վիճից... բացցեն նոքօք դպրոցս ի հայաբնակ քաղաքս Ասիոյ, յորս ոչ գոյ դպրոց, ոչ ընթերցանութիւն եւ ոչ ուսումն գանազան արուեստից»³⁸:

Համազգայաց ընկերության առաջին լուրջ ձեռնարկումներից մեկը սեփական վարժարան հիմնելն ու «ազգօգուտ խնդիրներու վրայ արտասանութիւններ ընելն» էր: Սյուներից մեկը Նիկողայոս Զորայանն էր, որն ընկերության միջոցներով թարգմանաբար հրատարակում է Բենջամին Ֆրանկլինի «Հարստության ճանապարհը» գիրքը:

«Արշալոյս արարատեան»-ը Համազգայաց ընկերության գործունեության մասին

Զմյուտնիահայ «Արշալոյս արարատեան»-ը ողջունում էր Համազգայաց ընկերության հիմնումը: Այդ մասին թերթի խմբագիր Պալղազարյանը գրում է. «Ուրախ սրտի կը լսեմք թէ հռովմէական հայէն ուսումնասէր և ազգասէր անձինք ոմանք Ընկերասիրական Համազգեաց անունով միաբանութիւն մը հաստատած են մօտ օրերս ի Կոստանդնուպօլիս, որուն յայտարար նախակարգութեան տետրակը ձեռքերնիս անցնելով, եւ ազգասիրական գովելի եռանդով մը գրուած գտնելով՝ արժան համարեցինք օրագրիս միջոցովը հրատարակել զանիկայ որոնք բանասիրականին մէջ պիտի տեսնեն մեր ընթերցողները, եւ անշուշտ իւրաքանչիւր հայրենասէր անձն յաջողութիւն եւ յառաջադիմութիւն պիտի բարեմաղթէ եւ նպաստամատոյ պիտի

35 Մաղաքիա Օրմանեան, *Ազգասպառում*, հ. Գ, մասն Ա (Պէյրոյթ, տպ. Սեւան, 1968), 3880:

36 Լեո, *Ստեփանոս Նազարեանց*, հ. Բ (Թիֆլիս, տպարան Մ. Մարտիրոսյան, 1902), 180:

37 Ալպոյաճեան, *Ազգային սահմանադրութիւնը*, 250:

38 Պէրպէրեան, *Պատմութիւն հայոց*, 349:

ըլլայ ըստ կարի Համազգեաց ընկերութեանը, եթէ ինչպես որ կը խոստանայ՝ ազգասիրութիւնը և ընկերասիրութիւնը մի միայն առաջնորդ ունենայ միշտ իր ամէն ընթացիցը»³⁹:

«Արշալոյս արարատեան»-ը հաջողություն և առաջադիմություն է մաղթում ընկերության հիմնադիրներին: Թերթը հաջորդիվ տպագրում է Համազգայաց ընկերության տեսուչներից Սերովբե Ազնավուրյանի 1846 թ. մայիսի 25-ով թվագրված նամակը՝ ուղղված «Արշալոյսի առ ազնիւ վերատեսուչ» Պալդազարյանին: Ազնավուրյանը «մտերիմ շնորհակալութիւն» է հայտնում «Արշալոյս արարատեան»-ի խմբագրին՝ Համազգայաց ընկերության հիմնումը կարևորելու, այդ մասին թիվ 257 համարում տեղեկություն տպագրելու և ընկերությանը բարեմաղթանքներ ու հաջողություն ցանկանալու համար: Նա հավատում է, որ իրենց ընկերությունը բացառապես առաջնորդվելու է միմիայն ազգասիրության և ընկերասիրության գաղափարայնությամբ⁴⁰:

Զբավարարվելով Համազգայաց ընկերության հիմնումն ազդարարելով՝ «Արշալոյս արարատեան»-ը տպագրում է «ազգասէր հայ Ն.Ծ.»-ի նամակը, որը նույնպես գոհունակություն է հայտնում ընկերության հիմնադրման կապակցությամբ: Բերայում շրջելիս «մեծ ուրախութեամբ իմացել է», որ թաղամասի քարե շէնքերից մեկը ծառայում է որպէս «մեծաջան եւ ազգասէր Համազգեաց ընկերութեան ժողովարան ու դպրոց»: Նրա կարծիքով՝ այն կնպաստեր այդ ընկերության առաջադիմությանը և դրան «արգելք եղող սխալախորհուրդ անձանց լեզուները ի թմրութիւն հակադրելով... օր ըստ օրէ կըզարգանայ»: Նա Համազգայաց ընկերության հիմնումը համարում է «բարենպաստակ և ազգօգուտ», որի հետագա հաջողությունները կախված են նաև արժանապատիվ լրագրերի հարգարժան հրատարակիչների «բարեհաճ գրուածքներից»: Ազգի առաջադիմությամբ մտահոգ մարդիկ, դրանք կարդալով, կարող են ընկերությանը «ձեռքերէն եկածի չափ օգնեն, ոմանք բարի խորհուրդներով, ոմանք դրամով, ոմանք աշխատելով, եւ ոմանք ըստ պահանջման հովանի ըլլալով»: Նամակագիրը զարմանք է հայտնում, որ ազգային առաջադիմության նպատակ հետապնդող Համազգայաց ընկերության մասին լուրություն է պահպանում Կ.Պոլսում լույս տեսնող միակ հայկական լրագիրը՝ «Հայաստան» թերթը: Ընդգծելով Համազգայաց ընկերության անդամ չլինելը՝ Ն.Ծ. ազգասէր հայը հույս է հայտնում, որ «Արշալոյս արարատեան» թերթում իր նամակի հրապարակումից հետո «առատաբաշխ անձանց եղբայրասէր զգացողութիւնները կշարժվեն» և ոմանք օգնություն ցույց կտան Համազգայաց ընկերության «հիմնարկութեան կատարելագործութեանը»⁴¹:

Կ.Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ «Հայաստան»-ն անմիջապէս արձագանքում է «Արշալոյս արարատեան»-ին թղթակցած Ն.Ծ.-ի նամակին: Թերթի խմբագիր Հովհաննես Չամուռճյան Տերոյենցը գրում է, որ Համազգայաց ընկերության

39 Հայտարար նախակարգութիւն. Ընկերութիւն Համազգեաց, *Արշալոյս արարատեան*, 19 ապրիլի 1846:

40 «Չանագան լուրեր», *Արշալոյս արարատեան*, 31 մայիսի 1846:

41 «Չանագան լուրեր», *Արշալոյս արարատեան*, 6 փետրվարի 1848:

ստեղծման լուրը ստանալուն պես «մենք ալ ուրախացանք»: Այդ լուրը կարդացողներից շատերը կուրախանան, իսկ եթե կգտնվեն նաև տրամողներ, ապա «մեզնե՛ չէ. այսինքն՝ ազգին յառաջադիմութեանը փափաքողներէն չէ»: Չամուռոճյան Տերոյենցը տարակուսում է, որ նամակի հեղինակը գերադասել է անհայտ մնալ և ստորագրել է «ազգասեր հայ մը»: Նա հանդիմանում է Կ.Պոլսում ապրող ազգասերին, որ Համազգայաց ընկերության՝ քարե շենք ունենալու մասին իր զարմանքը, չգիտես ինչու, չի հայտնել «Հայաստան» թերթին, այլ փոստային ծախս կատարելով «իր զարմանքը շոգենաւու մէջ դրեր մինչև Իզմիր դրկեր է»: Նա նամակի հեղինակին հորդորում է փոխել թերթի մասին իր կարծիքը, քանզի «մարգարէ չեմք. մեզի չի գրուած լուրը, չեմք կրնար գիտնալ և հրատարակել»: Ըստ Չամուռոճյան Տերոյենցի՝ Կ.Պոլսում քարե շենքեր շատ կան, և բնականաբար չի կարող իմանալ, թե որ շենքը ինչ նպատակով է օգտագործվում: Ինքը քաղաքային շինարարության վերակացու չէ, որի պաշտոնը հնարավորություն է տալիս քաջատեղյակ լինել կառուցվող շենքերի մասին: Եթե նամակի հեղինակն այդ հարցով դիմեր «Հայաստան» թերթին, ապա «մեզի պատիւ կը համարիմք անոր միտքը հաճեցընել, ինչ կերպով որ ինքը կ'ընտրէ»: Քանի որ նա իր հարցը հղել է «Արշալոյս արարատեան»-ին, ուստի պատասխանը պետք է ստանա այդ թերթի մեծարգո հրատարակչից: Չամուռոճյան Տերոյենցը հեզկում է, որ իր պատասխանը Ն.Ծ.-ն կհասկանա, քանի որ «ազգասէր է և ազգասիրութեան կանոնները գիտէ»⁴²:

Չցանկանալով բանավիճել իր գրչակից գործընկերոջ հետ՝ «Արշալոյս արարատեան»-ի խմբագիրն անանուն հեղինակի նամակը տպագրելը բացատրում է նրանով, որ այն «բարեմտութեամբ և ազգասիրական ոգով գրուած երեսաց», ուստի չտարակուսեց հրատարակել այն՝ առանց ուշադրություն դարձնելու ազգային լրագրերի մասին նրանում եղած մեղադրանքներին, որոնց մի մասը բնականաբար վերաբերում է նաև իր թերթին:

Պալդազարյանի կարծիքով՝ յուրաքանչյուր ոք, որ ուշադրությամբ կարդացել է Համազգայաց ընկերության 1846 թ. մարտի 17-ի հայտարարությունը, պետք է հասկացած լիներ, որ այդ ընկերության «հիմնադրման նպատակը մեծ եւ ընդարձակ է, ազգօգուտ յոյժ և վեհանձնական, ըստ որում ազգին լոթութեան օգուտը, համազգի եղբարաց ուսումնական յառաջադիմութիւնը եւ միաբանական սէրը պիտի ըլլան անոր վախճանը»:

Պալդազարյանը համոզված էր, որ Համազգայաց ընկերությունն իր նպատակին հասնելու համար պետք է բազմաթիվ դժվարություններ ու արգելքներ հաղթահարի, «քանզի դիրին բան չէ հին նախապաշարմունքներու, արմատացեալ փոփոխակի կիրքերու մէկէնի մէկ յաղթելը»: Ելնելով այս մտայնությունից՝ նա Համազգայաց ընկերության ղեկավարներին ցանկանում է «երկար համբերութիւն, յարատևութիւն, անխոնջ աշխատութիւն, խոհեմութիւն, ընկերական կանոնադրութեանց ճիշտ և անաչառ պահպանութիւն, կարծեաց ազատութիւն և վերջապէս եղբայրասիրութիւն. ահա միայն այսպիսի առաքինական միջոցներով Համազգեաց ընկերութիւնը կարող

42 «Ներքին լուրեր», *Հայաստան* (Կ.Պոլիս), 14 փետրվարի 1848:

պիտի ըլլայ իւր նպատակին հասնելու, ընդհանուր ազգին համակրական սերը ստանալու և մէկ խօսքով կարող պիտի ըլլայ իւր գեղեցիկ և ամենացանկալի անունը արժանատրութեամբ ճշմարտութեամբ կրելու»⁴³:

Դիմելով Համազգայ ընկերության երիտասարդներին՝ «Արշալոյս արարատեան»-ը նրանց կոչ է անում հիշել, որ նրանք բոլորն էլ սիրելի հայրենիքի հարազատ գավակներն են և հայ են: Թ-երթը հորդորում էր թողնել երկպառակություն ծնող բոլոր պատճառները. «...միաբանութիւնը և սերը ձեռք առնենք, մէկմէկու օգնական ըլլանք թէ ի մասին ուսումնական յառաջադիմութեան և թէ առևտրական և ուրիշ կերպ ձեռնտութեամբ»: Թ-երթը հույս է հայտնում, որ Համազգայ ընկերության հարգարժան ղեկավարները սրտանց կշարունակեն «այս հայրենասիրական ծանր աշխատութիւնը, որուն անշուշտ պիտի պարտատրին գոհել իրենց զբօսանաց և անձնական զբաղանաց ժամանակին մէկ մեծ մասը»⁴⁴:

Համազգայ ընկերության գործունեության հաջողության նկատմամբ «Արշալոյս արարատեան»-ի հավատը պայմանավորված էր ընկերության ղեկավարների հանդեպ հարգանքով և լավատեսությամբ: Թ-երթն անթաքույց ուրախությամբ հայտնում է, որ երկու տարվա ընթացքում ընկերության անդամների թիվը 76-ից հասել է 600-ի: Գալղազարյանը կասկած չունեւ, որ ընկերության անդամների թիվը կհասնի 1600-ի և նույնիսկ 2600-ի: Նրա կարծիքով՝ այդ հաջողությունը կախված էր բացառապես ընկերության ղեկավարների «խոհեմ և միանգամայն ազատաքայլ ընթացքէն»: Նա ակնկալում էր, որ առաջիկայում «բարեպատեհ առիթներ պիտի պատահին մեզ նորէն խօսելու այս ազգօգուտութեան վրայօք»⁴⁵:

«Արշալոյս արարատեան»-ի լավատեսությունը Համազգայ ընկերությանը սպասվող հաջողությունների հարցում չի արդարանում: Ավելի շատ իրականություն է դառնում թերթի արտահայտած կարծիքն այն մասին, որ ընկերությունը հաջողելու հարցում հարկադրված կլինի հաղթահարել որոշ դժվարություններ և արգելքներ:

1848 թ. վերջին Համազգայ ընկերությունը լուրջ դժվարությունների առաջ է կանգնում. դրանք ներքին բնույթ ունեին և պայմանավորված էին դավանաբանական խնդիրներով: Ընկերության հիմնադիր երիտասարդ հայ կաթոլիկները սուսկ նպատակ չէին հետապնդում ազգին կրթելու, լուսավորելու և դաստիարակելու հայրենասիրության և եղբայրության գաղափարներով: Նրանք ձգտում էին միաժամանակ համերաշխություն, միասնություն և ազգասիրություն սերմանել հայ առաքելական ու կաթոլիկ եկեղեցիների դավանողների միջև: Սա Համազգայ ընկերության գործունեության թերևս գլխավոր նպատակներից մեկն էր: Այն առանձնակի շեշտադրությամբ չէր ընդգծվում ընկերության տարածած հայտարարության տեքստում, սակայն կարևորվում էր եղբայրասիրության գաղափարը, որով նպատակ էր հետապնդվում հաղթահարելու Կ.Պոլսի առաքելական և կաթոլիկ համայնքների կրոնական տարածայնությունները:

43 «Չանագան լուրեր», *Արշալոյս արարատեան*, 6 փետրվարի 1848:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում:

Եվրոպական կրթություն ստացած Համազգյաց ընկերության հիմնադիր անդամների համար գործողության ուղեցույց էր 1848 թ. փետրվարի ֆրանսիական հեղափոխության «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսը: Ֆրանսիական հեղափոխության հաղթանակը, ճնշվող ժողովուրդներին նեցուկ լինելու, ազատություն, հավասարություն ապահովելու, բարեփոխումներ անցկացնելու ֆրանսիական ժամանակավոր կառավարության խոստումները հասնում են նաև Բոսֆորի ափեր և արձագանք գտնում հայերի շրջանում⁴⁶:

Ֆրանսիական հեղափոխության գաղափարներով տոգորված պոլսահայ առաջադեմ երիտասարդությունը լուսավորության, հասարակական առաջընթացի և ազատության նոր հույսեր է փայփայում: Սակայն, բախվելով թուրքական իշխանությունների՝ քրիստոնյա ժողովուրդների իրավունքների և ազգային շահերի ոտնահարմանը, Համազգյաց ընկերության երիտասարդ գործիչներն ի գործու չեն լինում լիարժեք գործունեություն ծավալելու: Դրան անշուշտ խանգարում էր նաև այն իրողությունը, որ Կ.Պոլսի հայ համայնքն այդ պահին լիովին պատրաստ չէր մի կողմ դնելու կրոնական տարածայնությունները կաթոլիկ հայերի հետ, համախմբելու ուժերը և միասնաբար հանդես գալու հասարակության շահերի օգտին: Շուտով մի շարք դեպքեր են արձանագրվում, երբ Համազգյաց ընկերության կաթոլիկ որոշ անդամներ պահանջում են իրենց շարքերից հեռացնել ոչ կաթոլիկ անդամներին:

Այդ իրողությունը չի վրիպում «Արշալոյս արարատեան»-ի խմբագրի ուշադրությունից, որը թերթի ընթերցողներին հետևողականորեն տեղեկացնում էր Համազգյաց ընկերությունում տեղի ունեցող և իրեն հասանելի գործընթացները: Պալղազարյանը տպագրում է 1848 թ. ապրիլի 13-ին իրենց ուղարկված «ոմն հայ ազգասերի» նամակը: Հեղինակը «հավատարիմ աղբյուրից» հայտնում էր, որ Կ.Պոլսի կաթոլիկ եկեղեցու առաջնորդը Համազգյաց ընկերությանն «առաջարկեր է, մանաւանդ թէ խստութեամբ ստիպեր է, որ իրեն ամէն հայկազուան անդամակիցները միջիրնէն հանեն: Իսկ Համազգեաց Ընկերութիւնը, հաւատարիմ մնալով իր ազգասիրական նպատակին, ամենեւին չէ ընդուներ այս առաջարկութիւնը, որ քրիստոնէական եղբայրասիրութեան հակառակ է, այլ վեհանձնաբար պատասխաներ է, թէ մենք միեւնոյն հայոց ազգն ենք, և կրօնի տարբերութիւնը, այս լուսաւորեալ դարուս մէջ, չկրնար ազգերնիս երկուսի բաժանիլ»⁴⁷:

Նամակագիրը շարունակում է՝ նշելով, որ «այս հայրենասիրական պատասխանի համար» Համազգյաց ընկերության դեմ «անակնունելի գրպարտութիւններ եղան, բայց բարեբախտաբար ամենեւին վնաս մը չկրցան պատճառել անոր»: Նրա կարծիքով՝ ընկերության հաստատականությունը «յիրաի գովութեան արժանի է», ուստի «Արշալոյս արարատեան»-ի հրատարակչին խնդրում է իր «սովորական անկողմնասիրութեամբ» ազգօգուտ լրագրի առաջիկա համարում տպագրել իր նամակը: Պալղազարյանը, ընդառաջ գնալով անանուն հեղինակի խնդրանքին, իր համաձայնությունն է արտահայտում Համազգյաց ընկերությանը նրա տված

46 Ալպոյաճյան, «Զմիւռնիոյ տպարանները», 79:

47 «Զանազան լուրեր», *Արշալոյս արարատեան*, 30 ապրիլի 1848:

գնահատականի հարցում: Նա գրում է, որ ընկերության հիմնումից ի վեր միշտ լավ կարծիք է ունեցել այդ «ազգասիրական միաբանութեան» մասին և վստահ է եղել, որ Համազգայաց ընկերությունն «իր ցանկալի անունը արժանատրութեամբ պիտի կրէ բոլոր պարագաներու մէջ»: Թերթը գոհունակություն է հայտնում, որ ընկերության մասին իր «կարծիքը ճշմարտութիւն դարձած է», քանզի միշտ վեհանձնական սեր է դրսևորել ազգի նկատմամբ, նրա պատիվը բարձր է պահել, արհուրջամբ դիմադրել է գանազան անարժան գրպարտությունների: Դրա շնորհիվ ընկերությունը վայելում է «բոլոր ճշմարիտ ազգասիրաց համակրական սէրը» և հետևողականորեն պայքարում «ազգային ուսումնասիրական յառաջադիմութիւնը յառաջ տանելու եւ հին նախապաշարմունքները ջնջելու համար»⁴⁸:

1848 թ. ընկերությունը լուրջ դժվարությունների է հանդիպում հայ համայնքի ներսում դավանաբանական խնդիրների պատճառով: Թերթի անանուն թղթակիցն իրավացի էր, որ Կ. Պոլսի հայ կաթողիկոսների առաջնորդ Անտոն պատրիարք Հասունյանը խոչընդոտում է Համազգայաց ընկերության գործունեությունը: Պատրիարքն ի սկզբանէ չէր հանդուրժում ընկերության ինքնուրույն գործունեությունը, որի ղեկավարների անուններն անգամ իր համար «զգուելի էին»: Նա, ի դեմ Համազգայաց ընկերության, «Մխիթարեան կողմնակցութիւն մը կը տեսնէր՝ որևոր իրեն բոլորովին անտանելի էր»⁴⁹: Նա դավանաբանության հարցում համակարծիք չէր ընկերության մոտեցմանը և 1846 թ. նույնիսկ փորձում է խանգարել հայտարարության ընդունմանը, թեև նախապես ծանոթացել և հավանություն էր տվել կանոնադրությանը: Համազգայաց ընկերության հիմնադիր կաթողիկ հայերը տեղի չտվեցին իրենց պատրիարքի հորդորներին, ինչը շուտով հանգեցնում է ընկերության ազգասեր և պատվավոր անձանց ու պատրիարքի միջև բախմանը դավանաբանական մի շարք հարցերում⁵⁰:

Ընկերության կաթողիկ և ոչ կաթողիկ անդամների միջև կրոնական հարցում տարածայնություններ են առաջ գալիս այն բանից հետո, երբ ընկերության անդամներ Սերվիչենը, Ազնավուրը և Լուիֆյանցը մամուլում իրենց կարծիքն են հայտնում աշխարհիկ ու կրոնական կրթության մասին: Նրանք այն համոզմունքն էին հայտնում, որ եկեղեցական դպրոցի կրթությանը «չեն հատուցաներ հայ ազգի աշխարհական ընդհանուր տղոց ուսումնական իրաւունքները»: Այս մարդկանց կարծիքը վերագրելով Համազգայաց ընկերությանը՝ Հասունյանը, առաջնորդվելով «Ազգին կապը կրոնն» մտայնությամբ, անհաշտ պայքար է սկսում ընկերության դեմ⁵¹: Նա կաթողիկ հայերին գրգռում էր հայ առաքելականների դեմ, պղտորում էր նրանց միտքը և շարունակում էր «քարոզել թէ հոռմեական եկեղեցին արգելու միաբանիլ ընդ հերետիկոս»: Պատրիարքը սպառնում էր «թէ ոչ կարենք ձեզ արձակումն և հաղորդութիւն», քանի դեռ շարունակում եք մնալ Համազգայաց ընկերության անդամ⁵²:

48 Նույն տեղում:

49 Ասկերեան, *Հասունեան քաղաքականութիւն*, 88:

50 Օրմանեան, *Ազգայատում*, 3823:

51 Ռուբեն Բերբերյան, *Համազգայացը*: Համազգային տարեգիրք, Ա տարի (Գահիրե, տպարան Սահակ Մեարոյ, 1936), 222-223, Սիրունի, *Պոլիս եւ իր դերը*, 395:

52 Պերպլերեան, *Պատմութիւն հայոց*, 332:

Ընկերության անդամների տարածայնությունները չեն հարթվում, ուստի Հասունյանը բողոք է հղում Բարձր դռանն ու Վատիկանին: 1847 թ. վերջին Հռոմի Պիոս IX պապը վեճը կարգավորելու նպատակով Կ.Պոլիս է ուղարկում կարդինալ Վինչեցիո Ֆերիերին ու Վեսպասիանի խորհրդականին: Նրանք Համազգյաց ընկերության անդամների հետ չեն հանդիպում, նրանց չեն լսում ու ի սկզբանե անցնում են պատրիարքի կողմը:

1848 թ. մարտի 2-ին և 5-ին Համազգյաց ընկերության անդամներն առանց Հասունյանի ժողով են հրավիրում և Պետրոս Եազլըքճյանին, Անտոն Երամյանին, Սրապ Մանապյանին ու Մկրտիչ Սամանճյանին լիազորում Հասունյանին համոզել՝ չխանգարելու իրենց գործունեությանը: Պատրիարքը դրան հակադարձում է՝ «մենք հիմակուան ազգին ընթացքէն գոհ ենք, նոր կարգադրութիւն և սահմանադրութիւն չենք ուզեր»⁵³:

Համազգյաց ընկերության անդամները մարտի 22-ին ազգային ժողով հրավիրելու խնդրանքով դիմում են Բարձր դռանը, որին հետևում է Հասունյանի կողմնակիցների խնդրագիրը: Ընկերության կանոնադրության կապակցությամբ կրքերը բորբոքվում են, վեճը՝ սաստկանում: Որոշվում է Համազգյաց ընկերության կանոնադրությունն ուղարկել Վատիկան: Կարդինալ Ֆերիերին Հասունյանին առաջարկում է Համազգյաց ընկերության նոր կանոնադրություն մշակել, ինչն ընկերության անդամները մերժում են⁵⁴:

1848 թ. մայիսի 5-ին Բարձր դուռը վեճը կարգավորելու նպատակով հրավիրում է Հասունյանին և Կ.Պոլսի տասը ամիրայի, որոնց հորդորում է հաշտվել՝ առաջարկելով հաշտեցման ավելի մեղմ տարբերակ: Այդ հանդիպումից օրեր անց կարդինալ Ֆերիերին հեռանում է Կ.Պոլսից. դրանից օգտվելով՝ թուրքական իշխանությունները որոշում են բավարարել ոչ թե պատրիարքի, այլ ազգային ժողով հրավիրելու կողմնակիցների խնդրանքը: Դրան Հասունյանն ընդդիմանում է, բայց անտեսելով նրա ընդվզումը՝ Բարձր դուռը 1848 թ. հուլիսին հրավիրում է տասը եկեղեցականից, քսանչորս աշխարհիկ անձանցից և Համազգյաց ընկերության քսանչորս անդամներից կազմված ժողով: Հասունյանի կողմնակից աշխարհիկները պահանջում են փոխել Համազգյաց ընկերության կանոնադրությունը, ըստ որի՝ ընկերության անդամ կարող էին լինել միայն կաթոլիկ հայերը: Ընկերության վարիչ մարմինը պետք է ունենար չորս խորհրդական, երկու խաղաղարար և չորս գրաքննիչ՝ եկեղեցական իշխանությունից: Համազգյայինի անդամները համաձայնում են միայն կանոնադրությունում որոշ փոփոխություններ կատարելուն, ինչը հուլիսի 6-ին հաստատում է ժողովը: Օգոստոսի 10-ին հրավիրված 20 հոգուց բաղկացած ժողովի աշխատանքը Հասունյանը խոչընդոտում է, ինչից հետո մեծ եպարքոս Ռեշիդ փաշան իր օգնական Կրճիկյանի միջոցով Հասունյանից պահանջում է հրաժարվել պատրիարքի պաշտոնից: Նոյեմբերի 26-ին Կ.Պոլսի կաթոլիկ հայերի պատրիարք է ընտրվում Կարինի թեմի առաջնորդ Հովհաննես վարդապետ Մելվյանը⁵⁵:

53 Ասկերեան, *Հասունեան քաղաքականություն*, 73:

54 Նույն տեղում, 86:

55 Ասկերեան, *Հասունեան քաղաքականություն*, 90-92, 108, Օրմանեան, *Ազգայաբանում*, 3830,

1849 թ. ապրիլին «Արշալոյս արարատեան»-ը գոհունակությամբ գրում է, որ Կ.Պոլսի «Համազգեաց ընկերութիւնը վերանորոգելու վրայ է, և անոր ազգօգուտ նպատակը՝ քաջայոյս եմք, որ յառաջ պիտի երթայ», եթե ընկերության տեսուչներն ու խորհրդականները շարունակելով իրենց «ազգասիրական պաշտոնը չեն վիատիր ամեննին հազար ու մէկ արգելքներէն, որոնք բնականապէս միշտ յառաջ կ'ելլեն այս օրինակ գործոց մէջ»⁵⁶:

Համազգայաց ընկերության գործունեության շարունակության նկատմամբ թերթի լավատեսությունն ու հավատը պայմանավորված էին նրանով, որ, շուրջ մեկուկես տարի Հասունյանի արգելքների դեմ պայքարելով, ընկերությունը փաստացի չէր կարողանում զբաղվել իր հիմնական առաքելությամբ: Այդ խոչընդոտը մասամբ հաղթահարելուց հետո մարտի 20-ին Համազգայաց ընկերության ժողովարանը վերջապէս բացվում է. տեսուչներից ու խորհրդականներից բացի՝ մասնակցում էր ավելի քան 20 անդամ: Համաձայն թերթի՝ եթե մինչ օրս «անհրաւարբար կամ ժամանակի պարագաներէն հարկադրեալ» ընկերության որոշ անդամների սիրտը ակամա վիրավորված է եղել, ապա այժմ նրանք «քրիստոնէավայել եղբայրութեամբ մխիթարելու, ընդգրկելու և համազգական սիրով շահելու հոգ կը տանին: Եւ այս գործը, որ է պատելով բժշկել զվերքս, պիտի ըլլայ բացայայտ նշան մը Համազգեաց ընկերութեան հայրենասիրական նպատակին»⁵⁷:

1849 թ. սեպտեմբերին Համազգայաց ընկերության մասին Կ.Պոլսից ստացված լուրն «Արշալոյս արարատեան»-ը համարում է «մխիթարական», քանի որ ընկերության գործույթ անդամները խոհեմությամբ և զովելի հաստատակամությամբ շարունակում են իրենց «ազգասիրական ծանր պաշտոնը» և անձնվեր եռանդով հաղթահարում բոլոր արգելքները: Թերթն ընկերության անդամներին անվանում է հայրենասեր, որ անտրտունց նպատակային աշխատանք են տանում ի նպաստ առաջադիմության: «Արշալոյս արարատեան»-ը հույս է հայտնում, որ ընկերությունն «առանց վիատելու արիութեամբ և երկայնատութեամբ յառաջ պիտի տանի իր վեհանձնական ազգօգուտ նպատակը, աղէկ մը տպաւորելով մտքերնուն մէջ թէ. յաղթող է ամենայնի աշխատութիւն»⁵⁸:

1850 թ. նոյեմբերի 24-ի համարի առաջին էջում «Արշալոյս արարատեան»-ը կրկին անդրադառնում է Համազգայաց ընկերությանը: Հակիրճ ներկայացնելով 1846 թ. Կ.Պոլսում «76 Համազգի պատուաւոր և պատուաւոր և միաբանասեր եղբայրների» հիմնած ընկերությունն ու նրա հայտարարությունը, թերթը գրում է, որ ոչ ոք չի կարող ուրանալ, թե ինչպիսի ազգօգուտ գործունեություն է ծավալում ընկերությունը: Այդ «ուսումնասեր և պատուական ընկերութեան նպատակը տեսնելով, կզարմանայ մարդ թէ ինչպէն կարելի է, որ խղճմտանց տէր անձ մը համարձակի դատապարտել զայն»:

Թերթը փաստում է, որ հիմնադրման պահից՝ Համազգայաց ընկերությունը

Պերպլերեան, Պատմութիւն հայոց, 345-358, Սիրունի, Պոլիս և իր դերը, 594-595:

56 «Ներքին լուրեր», Արշալոյս արարատեան, 29 ապրիլի 1849:

57 Նույն տեղում:

58 «Զանազան լուրեր», Արշալոյս արարատեան, 16 սեպտեմբերի 1849:

«դժբաղդութեամբ անողորելի թշնամիներ ունեցաւ», որոնց պարագլուխը Հասունյան գերապայծառ Անտոն պատրիարքն է, քանի որ նա շատ անարժան քայլեր է ձեռնարկել ընկերության դէմ և ի վերջո, «Հռոմի Հաւատոյ Տարածման ժողովի» որոշմամբ, արգելել սովել «խեղճ ընկերութիւնը»:

«Արշալոյս արարատեան»-ը գրում է, որ բոլոր ազգասերները «մեզի կցաւին այս անիրաւ վճռոյն վրայ», և նշում, որ այդուհանդերձ հուսահատվել պետք չէ, քանի որ վաղուց «փորձուած բան է, թէ հալածանքը՝ միշտ հալածողին նպատակին հակառակ վախճան մը կծնանի»⁵⁹:

«Արշալոյս արարատեան»-ն ամբողջությամբ թարգմանաբար տպագրում է Սուրբ ժողովի նախագահ գերաստիճան ու գերապատիվ կարդինալ Հ. Փ. Ֆուանստնի և ատենադպիր Ա. Բառնարոյի 1850 թ. մայիսի 28-ի ընդարձակ նամակը՝ ուղղված Անտոն վարդապետ Հասունյանին: Կարդինալը հայտնում է, որ Համազգյաց ընկերության մասին Հասունյանի բողոքը ներկայացվել է Հռոմի պապի քննարկմանը: Պապին մի քանի անգամ դիմել են նաև ընկերության ղեկավարները և խնդրել նրա օրհնությունը: Սուրբ ժողովը, քննարկելով Համազգյաց ընկերության վերաբերյալ ստացված տեղեկություններն ու կանոնադրությունը, տհաճությամբ է ընդունել դրանք և որոշակի վտանգներ տեսել, քանզի «ուղղափառ Հայոց Հոգևոր աղէկութեանը կրնան հոնկէջ առաջ գալ»: Ուստի Սուրբ ժողովը Համազգյաց ընկերությանը որևէ կերպ չի աջակցում, նրան ուղղակի կամ անուղղակի ճանապարհով օգնելը, բացարձակ արգելելուց զատ, հորդորում է այդ ընկերությունից հեռու մնալ: «Արշալոյս արարատեան»-ը, ի պատասխան պապական կարդինալի նամակում առաջ քաշված մի շարք հարցերի, տպագրում է «հռոմեական մեր համազգի ազնիւ եղբայրներէն մեկի» ծավալուն մեկնաբանությունները: Անանուն թղթակիցը, ներկայանալով «ազգի առաջադիմութիւնը ցանկացող», զարմանում է, որ նամակի լատիներեն և հայերեն տեքստերը տարբերվում են: Նա նշում է, որ պարզամիտ ժողովրդին Համազգյաց ընկերությունից հեռացնելու համար «Տարածման հաւատոյ թղթի հեղինակ» պապական կարդինալը պետք է բացատրեր, թե ընկերության մասին տեղեկությունները ինչպես են հայտնվել իր ձեռքում, ով է դրանց հեղինակը. ընկերության բարեկամ, թե՛ թշնամի է, խաղաղասէր, թե՛ խռովարար է, հայության բարօրությունն ու առաջադիմությունը ցանկացող, թե՛ թշվառ ու աղետալի վիճակի մեջ դնել ցանկացող: Թերթի թղթակիցը կասկած չունի, որ ընկերության մասին պապական իշխանությանը տեղեկություններ տրամադրողը Վինչենցիո Ֆերիերին է, որը, «ականջ դնելով անմիտ մարդկանց, առանց արդար քննութիւն և դատաստան ընելու հէմ ինքը խաբուեցաւ, սուտը իրաւի տեղ ընդունեց, ու հէմ՝ սուրբ Ժողովին ալ խաբեց այս անտեղի յորդորանքը դրկել տուաւ»: Ըստ նրա՝ Համազգյաց ընկերության մասին կասկածներ ունեցողներն ընկերության կանոնադրությանը ծանոթանալուց հետո խոստովանում են, որ «Ընկերութեան նպատակը ուրիշ բան մը չէ եղեր, այլ միմիայն ազգին բարիք ընել»: Ընկերության երեք տեսուչներից երկուսն աշխարհիկ էին. նրանք զգուշացնում էին, որ պետության ու ազգի քաղաքականության դէմ որևէ բան տեղի չունենա: Երրորդ տեսուչը հոգևորական

59 «Զմիւռնիա», *Արշալոյս արարատեան*, 24 նոյեմբերի 1850:

էր, որը հետևում էր, որ կրոնի դեմ քայլեր չարվեին: Սա էր ընկերության «աննենգ օրինատը ընթացքը, և անժխտելի երաշխատրությունը», որ Հասունյանը, իր բոլոր եկեղեցականները, Կ.Պոլսի ամիրանները, օսմանյան տերության պաշտոնյանները, հավաքվելով ժողովի, ընկերության գործունեության և կանոնադրության մասին անօրինական ոչինչ չեն փաստում: Բարձր դռան պաշտոնյայի ներկայությամբ Աստոն Հասունյանն ընդունում է ընկերության կանոնադրությունը, հաշտություն առաջարկում ու ժողովը ցրում:

Հետաքրքիր է՝ պապական կարդինալն ինչու էր Համազգյաց ընկերությունը վտանգավոր համարում և եկեղեցականներին արգելում դրան օգտակար լինել: Ցանկալի կլիներ, որ Սուրբ ժողովն ընկերության մասին ճիշտ և վավերական տեղեկություններ ստանար Աստծուց վախեցող «բարեպաշտ ու արժանահաւատ մարդկանցից»: Սուրբ ժողովի նամակի կապակցությամբ «Արշալոյս արարատեան»-ի թղթակից «ագնիվ եղբայրը» երկու կեղծիք է նկատում: Առաջին՝ Հռոմի սուրբ ժողովը Հասունյանի տեղեկությունների հիման վրա Համազգյաց ընկերության նկատմամբ միայն իր տհաճությունն է արտահայտել և ոչ թե այն դատապարտել, ինչպես գրված է նամակի լատիներեն տարբերակում: Մինչդեռ Հասունյանը ժողովրդին խաբելու համար ամենուր հայտարարում էր, որ ժողովը դատապարտել է Համազգյաց ընկերությանը: Երկրորդ՝ մայիսի 28-ին Հռոմից ուղարկված նամակը Հասունյանը չէր կարող նույն օրը Կ.Պոլսում ստանալ, որովհետև այդ օրը նա գտնվում էր Հռոմում: Եթե նա մայիսի 28-ին կարդինալի նամակը ստացել է Հռոմում, ապա ինչո՞ւ անմիջապես չի հրապարակել: Այս հարցերի պատասխանը թողնելով թերթի ընթերցողներին՝ հողվածագիրն իր պարտքն է համարում «արդար խորհրդածություններով Համազգեաց Ընկերութեան վրայօք եղած ծուռ կարծիքները հերքելի ձեռն շտրիաց Աստուծոյ»⁶⁰:

«Արշալոյս արարատեան»-ի խմբագիրը չի բավարարվում իր թղթակցի նամակը տպագրելով, ավելին՝ քննադատում է 1850 թ. դեկտեմբերի 25-ին Կ.Պոլսում տպագրված ուն «ճշմարտասէր Հռոմեական ուղղափառի» գրքույկը, որը վերաբերում էր Համազգյաց ընկերությանը: Պալղագարյանի գնահատմամբ՝ «ճշմարտասէր հեղինակը», անդրադառնալով «Արշալոյս արարատեան»-ում տպագրված Համազգյաց ընկերության հայտարարությանը, իր թղթակցի նամակի և առաջաբանի վերաբերյալ դատողություններ է անում: Չգանկանալով հրապարակել հեղինակի անունը՝ Պալղագարյանը «խիստ համառի և անկողմնասիրութեամբ» հակադրվում է Համազգյաց ընկերությանը տված նրա գնահատականին: Նա գրում է, որ «Արշալոյս արարատեան»-ը երբեք կրոնական խնդիրներին ու կոիվներին չի միջամտել, ամենևին «անկրոն հանդուգն չէ», ինչպես դա ներկայացնում է հեղինակը, ինքը չի վախենում Հասունյանից ու չի ամաչում նրան հանդիմանել Համազգյաց ընկերության դեմ «անարժան միջոցներ» կիրառելու համար: Իր «ճշմարտասէր ընդդիմախօսը» հավանաբար տեղյակ չի եղել, թե Հասունյանը Բարձր դռանը Համազգյաց ընկերության մասին ինչ գրապարտություններ է արել:

«Արշալոյս արարատեան»-ը հերթական անգամ ընդգծում է, որ Համազգյաց ընկ-

60 «Զմիռնիա», *Արշալոյս արարատեան*, 24 նոյեմբերի 1850:

երությունը կրոնական միաբանություն չէ և ազգօգուտ գործունեություն է ծավալում, նրա հայտարարությունը և կանոնադրությունը դատապարտելի չեն, հետևաբար «զանիկա ջնջել ուզողներուն ընթացքը դատապարտելի է»:

Պալդազարյանը միաժամանակ շեշտում է, որ դատապարտելի չէ նաև «Արշալոյս արարատեան»-ի դիրքորոշումը «Համազգեաց Ընկերութիւնը պաշտպանելու եւ սէր ու միաբանութիւն քարոզելու համար»: Թերթը հրատարակման օրվանից ազգի մեջ շարունակ քարոզում է «սէր, միաբանութիւն եւ ուսումնասիրութիւն», որը, դատելով Համազգեաց ընկերության հայտարարությունից, նաև ընկերության նպատակն է: «Արշալոյս արարատեան»-ը «չէր կրնար չպաշտպանել այս ազգօգուտ ընկերութիւնը», մանավանդ, որ ընկերության իրավունքները հորդորում են պաշտպանել կաթոլիկ եկեղեցու հպատակ ազգասեր բարձրաստիճան երևելի անձինք, պատկառելի և գիտնական վերապատվելի վարդապետներ, ուսումնական և ուսումնասեր այլ դեմքեր, որոնք Համազգեաց ընկերության անդամներ ու աջակիցներ են: Հետևաբար «այս օրինակ միաբանասէր և Աստուածահաճոյ մեծարգոյ ընկերութիւն մը պաշտպանելը» «Արշալոյս արարատեան»-ի համար հանցանք չէր: Պալդազարյանը գրում է, որ «Հոռմէական լուսաւորեալ հայերը եւ մեր համազգի պատուական եւ արդարասէր եղբայրք» չեն կարող լուռ մնալ և անտարբեր հետևել «այսպիսի ազգասիրական ընկերութեան դէմ եղած թշնամական գործքերուն»: «Արշալոյս արարատեան»-ի խմբագիրը մեկ անգամ ևս հիշեցնում է իր «ճշմարտասէր հակառակորդին», որ նա իզուր է փորձում իրեն վախեցնել, թե «վտանգաւոր է Հոռմայ առաքելական սուրբ Աթոռէն ազգին հոգևոր հովիւ եւ առաջնորդ կարգեալ անձի դէմ խօսիլ»: Հասունյանն իր փոքրաթիվ հավատացյալ ժողովրդի շրջանում այնպիսի կեղծ թղթեր էր տարածում, որոնք «գրեթէ չորս միլիոն ուղղադաւան հայութեանը կը թշնամացնէ եւ յոգի կը վիրաւորէ»: Պալդազարյանը եզրակացնում է, որ «Այս օրինակ գէնքով եւ ճշմարտութիւնը միշտ իրեն պաշտպան ունենալով Արշալոյսը ամենեւին երկիւղ մը չունի Հասունեան արքեպիսկոպոսի ընթացքը պախարակելու»⁶¹:

Համազգեաց ընկերության ազգօգուտ բնույթն ընդգծելու համար «Արշալոյս արարատեան»-ն առանց որևէ մեկնաբանության կրկին ամբողջությամբ տպագրում է ընկերության 1846 թ. մարտի 17-ի հայտարարությունը:

«Արշալոյս արարատեան»-ը ցանկալի է համարում, որ Համազգեաց ընկերության գործունեությունն ազգի լուսավորյալ մասն «արդարութեամբ եւ անաչառութեամբ դատաստան ընէ»: Իր հերթին թերթը պարտավորվում է քրիստոնեական հեզության և սիրո դաս տալ Համազգեաց ընկերությանը քննադատող մարդկանց՝ նրանց ատելությանը հակադրելով եղբայրասիրություն, բարկությանն ու կրքերին՝ հեզություն: «Արշալոյս արարատեան»-ը միշտ առաջնորդվել է այս սկզբունքով և «այս ազգասիրական եւ քրիստոնէավայել սկզբանցը պիտի հետեւի մինչեւ վախճան»⁶²:

Ըստ թերթի՝ «այսպիսի աստուածահաճոյ է քրիստոնէավայել սկզբունքով, հաւաստի եմք թէ ոչ միայն Արարատեան Արշալոյսը, այլեւ ամէն լրագիր յաջողութիւն

61 «Զմիւռնիա», *Արշալոյս արարատեան*, 24 նոյեմբերի 1850:

62 «Զմիւռնիա», *Արշալոյս արարատեան*, 30 մարտի 1851:

պիտի գտնէ»⁶³: Համազգյաց ընկերության անդամները հնարավոր բոլոր միջոցներով դիմադրելուց հետո, այնուամենայնիվ, Վատիկանի պահանջով ստիպված են լինում կանոնադրական որոշ փոփոխություններ կատարելու: 1851 թ. ընկերությունը հրատարակում է կանոնադրության փոփոխված տարբերակը, որը բաղկացած էր 41 հոդվածից⁶⁴: Այդկերպ ընկերությունը կորցնում է համազգային կերպարը, որտեղ ոչ մի խոսք չկար համերաշխության, միաբան գործունեության և եղբայրական զգացմունքի մասին: Նոր կանոնադրությամբ ոչ կաթոլիկ հայերը չէին կարող անդամակցել ընկերությանը: Այս պահանջը չի նպաստում ընկերության գործունեության շարունակմանը: Մտավորականությունը հեռանում է, մյուսները՝ հրաժարվում ընկերությանը նյութապես աջակցելուց: Ընկերությունը որոշ ժամանակ դադարում է գործել: «Արշալոյս արարատեան»-ը գրում է, որ ծագած կրոնական խնդրի պատճառով շատերը «կը փափաքէին Համազգեաց ընկերութիւնը խափանել»: Դա կանխելու համար ընկերության հիմնադիրներից երեքն «իրենց ազգասիրական պարտքը համարեցին առժամանակեայ հրաժարումը անդամակցութենէ... որպէսզի ընկերութեան դէմ չարախօսից բերանը զօցուի: Բայց իզուր»⁶⁵: Դրան անդրադարձած Կ.Պոլսի «Մասիս» թերթը 1852 թ. սեպտեմբերին գրում է, «թէ կը լսենք նաեւ որ Համազգեաց ընկերութիւնն ալ խափաներ է»⁶⁶:

Համազգյաց ընկերությունը թեպետ պաշտոնապես չի փակվում, սակայն թուլանում է և հետզհետեւ անգործության մատնվում. նրա տրամադրության տակ է մնում Լալե փողոցի քարե շենքը և հավաքված գումարի մնացորդը⁶⁷:

Ընկերության գործունեության առժամանակյա դադարեցումով հիմնադիր երիտասարդ կաթոլիկ հայերը չեն հասնում իրենց նպատակին: Ազգային համալսմբման, միասնության, եղբայրության, համերաշխության, կրոնական տարածայնությունների հաղթահարման նրանց գաղափարները հանդիպում են կաթոլիկ հոգևորականության բիրտ դիմադրությանը: Սակայն նրանք չեն հուսահատվում և շարունակում են իրենց գործունեությունը՝ նոր ընկերություններ հիմնելով: 1859 թ. հունվարի 7-ին Կ.Պոլսում Համազգյաց ընկերության մի քանի անդամ, որ Մուրադյան և Ռափայելյան վարժարանների շրջանավարտներ էին, հիմնում են Մուրադյան և Ռափայելյան աշակերտաց ընկերությունը⁶⁸, որի ատենապետ է ընտրվում Պեշիկթաշլյանը, իսկ ատենադպիր՝ բանաստեղծ Թովմաս Թերզյանը: Ընկերության հավաքատեղին Բերայի Լալե փողոցի թիվ 13 տան Համազգյաց ընկերության սրահն էր:

Համազգյաց ընկերության հիմնադիրներից Հովսեփ Վարդանյանն իր խմբագ-

63 «Երկոտասաներորդ տարեդարձ Արշալոյս արարատեան», Արշալոյս արարատյան, 17 օգոստոսի 1851:

64 *Ջատագովութիւն Համազգեաց ընկերութեան* (Կ.Պոլիս, 1851), 34-41, Պերպլերեան, *Պատմութիւն հայոց*, 351-358:

65 «Զմիտնիա», *Արշալոյս արարատեան*, 4 հուլիսի 1852:

66 «Ներքին լուրեր», *Մասիս*, սեպտեմբեր, 1852:

67 Օրմանեան, *Ազգասպատում*, 3927:

68 «Ներքին լուրեր», *Մասիս*, 3 մարտի 1860:

րած «Մեճմուայի հաստիս» թերթում հոդված է տպագրում նոր ընկերության հիմնադրման մասին՝ զետեղելով դրան նվիրված Սրապիոն Հեքիմյանի «Երգ բաժակին» բանաստեղծությունը, Պեշիկթաշլյանի և մյուսների ճառերը: Ընկերության կանոնադրությունը չի պահպանվել. նրա նպատակը հայության լուսավորության, կրթության, համերաշխության վեհ գործին ծառայելն էր: 1871 թ. այս ընկերությունը դադարում է գործել⁶⁹:

1860 թ. սեպտեմբերի 1-ին Համազգյաց ընկերության անդամներ Գրիգոր Աղաթոնը, Մկրտիչ Աղաթոնը, Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Սերովբե Թագվորյանը, Մկրտիչ Մյուհենտիսյանը, Հովսեփ Ծիլմանյանը (Ծերենց) և ուրիշներ ընկերությանը պատկանող սրահում հիմնում են նոր միություն՝ Հայոց բարեգործական ընկերությունը: Հիմնադիրները կազմում են ընկերության կանոնադրությունը, հայտարարություն հրապարակում, որտեղ ասվում էր, որ ընկերության նպատակն է «Ազգին բոլոր նիւթական, մտատրական ու բարոյական զորութիւնները պէտք է միանան ու ի մի ձուլուին»⁷⁰: Ընկերության առաջին ատենապետը Գրիգոր Աղաթոնն էր, իսկ ատենադպիրը՝ Մկրտիչ Պեշիկթաշլյանը: 1860 թ. վերջին ընկերությունն ունեցել է 340 անդամ և մտադիր է եղել հավաքել 200 000 դուրուշ դրամագլուխ՝ գործունեություն ծավալելու համար: 1874 թ. ընկերության դրամագլուխը կազմում է 400 000 դուրուշ, բայց հիմնադիրներն ազգային բարեգործական որևէ շոշափելի գործունեություն չեն ծավալում⁷¹: 1874 թ. նոյեմբերին ընկերության տնօրենությունը դիմում է իր անդամներին՝ ցանկանալով ճշտել, թե ովքեր են ուզում շարունակել իրենց անդամակցությունը և «իրենց բաժանորդագնաց վճարման պարտիքը եւ վայելել իրենց որոշող ձայնի իրատուքը»⁷²: Քողարկվելով Բարեգործականի անվան տակ՝ ընկերության հիմնադիրներն իրականում նպատակ ունեին գաղափարական քարոզչություն տանել Կ.Պոլսի և Զմյուռնիայի լուսավորյալ հայության շրջանում ազգային սահմանադրական շարժում ծավալելու, ինչպես նաև ազատ որմնադիրների՝ «ազատություն, հավասարություն, եղբայրություն» գաղափարի տարածման և մասունական օթյակի ստեղծման ուղղությամբ:

1860 թ. վերջին՝ Համազգյաց ընկերության անդամները «գովելի խորհրդով ազգային կամ մատենադարան կամ ընթերցարան մը բացելու ձեռք զարկեցին»⁷³:

1861 թ. սկզբին նրանք փորձ են անում վերանայելու ընկերության կանոնադրությունը կրկին գործունեություն ծավալելու նպատակով⁷⁴:

1861 թ. ապրիլի 21-ին Լալե փողոցի թիվ 13 տան քարաշեն ժողովարանում ընկերության անդամները նոր կանոնադրություն են մշակում, որը բաղկացած էր 24

69 Պողոսեան, *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու*, 64-66:

70 *Յայտարարութիւն Բարեգործական Ընկերութեան Հայոց* (Կ. Պոլիս, 1861), 14-15:

71 «Ազգային», *Մասիս*, 29 նոյեմբերի, 6 դեկտեմբերի 1861, 24 փետրվարի, 10 մարտի, 1862, 24 հոկտեմբերի 1868:

72 «Բարեգործական ընկերութիւն: Ազդ», *Օրագիր* (Կ. Պոլիս), 13 նոյեմբերի 1874:

73 «Ազգային», *Մասիս*, 29 դեկտեմբերի 1860:

74 «Ազգային», *Մասիս*, 15 մարտի 1861:

հողվածից: Կանոնադրության 2-րդ հոդվածում ասվում էր, որ յուրաքանչյուր հայ, անկախ կրոնական պատկանելությունից, կարող է անդամագրվել ընկերությանը «ամենայն հաւասար իրաւունքով»: Ընկերության անդամ կարող էին դառնալ նաև կանայք, բայց առանց ժողովներին մասնակցելու իրավունքի: Այս կանոնադրությունը երեք տարի անփոփոխ է մնում⁷⁵: Համագրյաց ընկերությունն այս վիճակում երկար չի գործում և «կաղնիկաղ ընթացքէ մը վերջ՝ դադրեց»: 1870 թ. ընկերության անդամները կրկին փորձում են «վերականգնել զայն, զի անոր հիշատակը տակաւին Հայ սրտերը կը բարբախէ»⁷⁶:

1874 թ. Համագրյաց ընկերությունը, ըստ «Օրագիր» թերթի, «քաղաքային մատնութեամբ ցրուած ըլլալով՝ բաժանորդականն անոր յաջորդեց ուրիշ անուան տակ իբրեւ առաջնոյն շարունակութիւնը՝ ազատ առաջնոյն քաղաքական կասկածանքէն»⁷⁷:

Համագրյաց ընկերությունը հայ մշակույթի պատմության մեջ «մնաց իբրեւ նրա փայլուն ու հմայիչ փուլերից մեկը»⁷⁸: «Եթէ բարձրագոյն ձեռք մը, թէ գիտութեամբ, թէ անգիտութեամբ, կրօնքն ազգասիրութեան հետ չշփոթէր, եւ Համագրեաց ընկերութիւնը լուծել չտար, ապահովալալէս հայ ազգն աւելի բախտատուր վիճակի մէջ կը գտնուէր, քան ինչ որ չէ այսօր»⁷⁹:

SMYRNA ARMENIAN NEWSPAPER “ARSHALOYS ARARATEAN” ABOUT HAMAZGEATS SOCIETY

Feliks V. Movsisyan

Vanadzor State University, Chair of History, Armenia

SUMMARY

In the 1840s, a group of young Armenians of Constantinople educated in European universities and influenced by the ideas of enlightenment, progress, and the need for political reforms, dedicated themselves to the enhancement of national unity, solidarity and fraternal support. To that end, they established the Hamazgeats Society in Constantinople in September 1846.

“Arshaloys Araratean” (The Araratian Dawn), a political, philological and commercial newspaper, published in Smyrna and representing the Armenian national-conservative movement, was one of the first to welcome the establishment of the Society. According to the newspaper, the Catholic Armenians who founded the Society are patriots and

75 Պողոսեան, *Պատմութիւն հայ մշակութային ընկերութիւններու*, 54-55:

76 Նույն տեղում:

77 «Բարեգործական ընկերութիւն: Ազդ»:

78 Բերբերեան, *Համագրեացք*, 226:

79 Հ. Սահակ Մովսէսեան, «Մուրատեան-Ռափայելեան վարժարաններու նախկին աշակերտներու հրապարակային գործունեութիւնը», *Բազմալեւոյ* (Վենետիկ), 1936, 202:

nationalists who promise to be exclusively guided by the ideas of patriotism, friendship and brotherhood in their activities.

The newspaper publishes the declaration of the Hamazgeats Society, refers to a number of provisions of the charter and reports that the founders of the Society were initially forced to overcome a number of difficulties and obstacles and gained opponents. “Arshaloys Araratean” justifiably indicates that the dispute within and around the Society is caused by a religious issue. The High Door and the Vatican intervened in order to win the dispute.

“Arshaloys Araratean,” which generally had a cautious and moderate approach to political and public conflicts, this time shows undisguised sympathy towards the Hamazgeats Society. The newspaper criticizes the Pope’s representative Cardinal Vincezzo Ferrieri and Patriarch Anton Hasunyan, the leader of the Armenian Catholics of Constantinople, for taking “unworthy measures” against the activities of the Hamazgeats Society and temporarily suspending the activities of the Society.

According to “Arshaloys Araratean,” the declaration and charter of the Society are not condemnable because they do not have anti-state or anti-religious provisions. According to the newspaper, the “patriotic society” carries out pro-national activities in the field of education, preaches love, unity, solidarity and brotherhood. These ideas are also the creed of “Arshaloys Araratean;” hence, the newspaper cannot look indifferently at the hostile actions taken against the nationalist society and not protect the Hamazgeats Society.

Key words: “Arshaloys Araratean” newspaper, Hamazgeats Society, Smyrna, Constantinople, Muradyan College, intellectuals, societies, education, enlightenment, progress, unity, brotherhood.

ИЗМИРСКАЯ АРМЯНСКАЯ ГАЗЕТА “АРШАЛУЙС АРАРАТЯН” ОБ ОБЩЕСТВЕ АМАЗГЕАЦ

Феликс В. Мовсисян

Ванадзорский государственный университет, Кафедра истории, Армения

РЕЗЮМЕ

В 1840-х годах группа молодежи из числа константинопольских армян, получившая образование в европейских университетах, под влиянием идей просвещения, прогресса и необходимости политических реформ посвятила себя делу национального единства, солидарности и братской взаимопомощи. С этой целью в марте 1846 года они основали в Константинополе Общество Амазгеац. Издающаяся в Измире (Смирне) политическая, филологическая и коммерческая газета “Аршалуйс Араратян” (“Заря Араратская”),

представляющая армянское национально-консервативное течение, одной из первых приветствовала создание общества. По убеждению газеты, армяне-католики, основавшие общество, являются истинными патриотами, которые обещают руководствоваться в своей деятельности идеями патриотизма, дружбы и братства.

Газета публикует манифест Общества Амазгеац, обращается к ряду положений устава и фиксирует, что учредители компании изначально были вынуждены преодолеть ряд трудностей и препятствий, в результате чего приобрели противников. “Аршалуйс Араратян” справедливо подчеркивает, что спор внутри и вокруг общества вызван религиозной проблемой. Для решения конфликта в дело вмешались Высокая Порта и Ватикан.

Газета “Аршалуйс Араратян”, придерживавшаяся, в целом, осторожного и умеренного подхода к политическим и общественным конфликтам, на этот раз проявляет нескрываемую симпатию к Обществу Амазгеац. Газета критикует представителя Папы кардинала Винчещо Феррьери и Патриарха Антона Хасуняна, лидера армян-католиков Константинополя, за принятие “недостойных мер” в отношении деятельности Общества Амазгеац и временное приостановление деятельности общества.

По мнению “Аршалуйс Араратян”, заявление и устав общества не подлежат осуждению, поскольку в них нет антигосударственных или антирелигиозных положений. По данным газеты, Общество Амазгеац осуществляет пронациональную деятельность в сфере образования, пропагандирует любовь, единство, солидарность и братство. Эти идеи также являются кредо “Аршалуйс Араратян”, поэтому газета не может равнодушно смотреть на враждебные шаги, предпринятые против патриотического общества, и не защищать Общество Амазгеац.

Ключевые слова: газета “Аршалуйс Араратян,” Общество Амазгеац, Смирна, Константинополь, гимназия Мурадян, интеллигенция, компании, образование, просвещение, прогресс, единство, братство.

REFERENCES

Fenerchean, Armenak. *Ազատ քրիստոնեությունը հայոց մէջ* [Free Masonry in Armenia]. Hairenik (Boston), No. 10 (1954), 92;

Alpoyachean, Arshak. *Ազգային Սահմանադրությունը, իր ծագումը եւ կիրառությունը* [National Constitution, its Origin and Application], Extensive Calendar of St. Saviour's Hospital. Constantinople: Y. Matteosian Press, 1910, 227;

Alpoyachean, Arshak. «Զմյոռնիսյի տպարանները» [Smyrna Printing Presses]. *Historical-Philological Journal* (Yerevan), 2(25) (1964), 78;

Perperean, Avetis. *Պատմություն հայոց* [History of Armenia]. Constantinople: P. Kirishchean Press, 1871, 350-351;

H. Grigoris, V. Galemkearean, *Պատմություն հայ լրագրության* [History of Armenian Journalism]. Vienna: Mkhitarian Press, 1893;

Movsean, Sahak. «Սուրատեան-Ռափայելեան վարժարաններու նախկին աշակերտներու հրապարակային գործունեութիւնը» [Public Activity of the Former Students of Muratean-Rapayelian Colleges]. *Bazmavep* (Venice), 1936;

Kosean, Yakop. *Հայք ի Ջմիռնիս եւ ի շրջակայս* [Armenia to Smyrna and its Surrounding]. Vienna: Mkhitarian Press, 1899, vol. A, 272;

Askerean, Hovhannes. *Հասունեան քաղաքականութիւն* [Hasunean Politics]. Tpkhis: H. Enfiachyants Press, 1868;

Leo, *Ստեփանոս Նազարեանց* [Stepanos Nazareants]. vol. 2. Tiflis: M. Martirosian Press, 1902;

Ormanean, Maghakia. *Ազգապատում* [History of the Nation]. vol. 3, Part 1. Beirut: Sevan Press, 1968;

Nalbandian, Mikayel. *Երկերի լիակատար ժողովածու* [Complete Collection of Works]. vol. 2. Yerevan: Academy of Sciences of Armenian SSR, 1980;

Nalbandian, Mikayel. *Երկերի լիակատար ժողովածու* [Complete Collection of Works]. vol. 4. Yerevan: Academy of Sciences of Armenian SSR, 1949;

Hakobyan, Mnatsakan. *Ջմիռնիսի պարբերական մամուլը (1839-1860)* [Smyrna Periodical Press (1839-1860)]. Yerevan: Academy of Sciences of Armenian SSR, 1984;

Poghosean, *Պատմություն հայ մշակութային ընկերություններու* [History of Armenian Cultural Societies]. vol. 1. Vienna: Mkhitarian Press, 1957;

Berberian, Ruben. «Համազգեսցը»: *Համազգային տարեգիրք* [The Hamazgeats. In: Worldwide Yearbook]. Year 1. Cairo: Sahak Mesrop Press, 1936;

Zardarean, Vahan. *Յիշատակարան* [Memorial Book]. vol. 4. Constantinople, 1912;

Zardarean, Vahan. *Յիշատակարան* [Memorial Book]. vol. 5. Cairo: V. Zardarean Printing House, 1939);

Kyomurchean, Yeghia. *Ստամպոլի պատմություն* [History of Istanbul]. Vienna, 1931;

Ջատագովություն Համազգեսց ընկերության [Apologetics of the Nationwide Company]. Constantinople, 1851;

Յայտարարություն Բարեգործական Ընկերության Հայոց [Announcement of the Armenian Charitable Company]. Constantinople, 1861;

«Խմբագրական» [Editorial]. *Arshaloys Araratean* weekly, Smyrna, August 10, 1840;

Arshaloys Araratean, Smyrna, August 13, 1841, July 3, 1842, August 23, 1846. May 31, 1846, February 6, 1848, April 30, 1848, April 29, 1849, September 16, 1849, November 24, 1850, March 30, 1851, August 17, 1851, July, 4, 1852;

Mamuryan, Mateos. Մեծ Ղուկաս Գ. Պալղազարեան [Mets Ghukas G. Paldazarean]. *Հայկական մամուլ* [Armenian Press] (Smyrna), June 1878, 65-66;

«Խմբագրական» [Editorial], “Arevmutk”; Paris, February, 1, 1864, 4;

“Armenia”, Constantinople, February 14, 1848;

“Masis”, November, 28, December, 6, September 1852; March 3, December 29, 1860; March 15, 1861; February 24, 1861; March 10, 1862; October 24, 1868;

Բարեգործական ընկերություն: Ազդ [Charitable Company: Announcement], Azd, Or-agir [Diary], Constantinople, November 13, 1874;

“Mamul”, Weekly Journal, Constantinople;

Յարտարար նախակարգություն ընկերության Համազգեստ [Procedure Announcer of the Hamazgeats Company], “Arshaloys Araratean,” (Smyrna), April 19, 1846, 1.

Հեղինակի մասին

About the author

Об авторе

Ֆելիքս Վ. Մովսիսյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ 18-19-րդ. ամերիկյան, եվրոպական հեղափոխություններ, ազգային-ազատագրական շարժումներ և դրանց վերաբերյալ հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի գնահատական, արևմտահայ հասարակական կազմակերպություններ, մասնության պատմություն:

Էլ. փոստի հասցե՝ felmov@mail.ru

Felix V. Movsisyan, PhD in History, Professor, Head of the Chair of History of Vanadzor State University after Hovh. Tumanyan.

Research fields: American and European revolutions of the 18th - 19th centuries, national-liberation movements and their estimation in the Armenian press media, Western-Armenian public organizations, and history of Masonry.

Email address: felmov@mail.ru

Феликс В. Мовсисян, доктор исторических наук, профессор, заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета им. Ов. Туманяна.

Область исследований - американские и европейские революции 18-19-го веков, национально-освободительные движения и их оценка в армянской общественной мысли и периодической печати, западноармянские общественные организации, история масонства.

Эл. почта: felmov@mail.ru

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(երթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարելավորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առվագն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Յեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Յեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ոմ պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Յեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Յեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Յեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների

բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marutyan, Harutyun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rp'e'ran, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թ-էշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-ı

Mahsusay)” in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut’yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնություն «ամրացման» երկու հնարաորություններ Հայաստան-Սփիւրք յարաբերությունների համատեքստում», *Սփիւրք եւ ինքնություն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in *Diaspora and Identity* (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքոս. Ալթունյան» [Dr. Altunyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. *Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները, հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի

քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.,” “et. al.,” որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական,

հողվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin’s Press, 1992), 280.
2. Վերծինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հողվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
3. Сурен Манукян, “Наказание за верность.” От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Dadrian, “*Ottoman Archives*,” 471.
2. Սվազյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:
3. Манукян, “*Наказание за верность*,” 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ` DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
- Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.
2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռ-աֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:

2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:

3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”

2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:

3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:

2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:

2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:

3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - Ě ě
Թ թ - T' t'
Ժ ժ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Մ մ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Ձ ձ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ ճ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ յ - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Ք կ - Q q
Եվ և Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - Ĭ ĭ
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթ՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 100:

Համակարգչային ձևավորումը՝ Բրիստինե Վարդանյանի

Տպագրությունը՝ «ՀՈՎՍԵՓՅԱՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Վաղարշյան 24/3
Հեռ.՝ +374 43 10-70-90
hovsepyanprint@gmail.com